




1905-1906

Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու Գրքարանից
հրատարակված է Երևանում
1991 թվականին

ՀՐԱՄԱՆԱԲ

ԳԱՐԵԳՆԻ ԱՌԱՋՆՈՅ

ՎԵՎՈՓԱԿ ԵՒ ՍՐԲԱՋՆԱԳՈՅՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ



905-2000

Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու Քրիստոնեական
դաստիարակության և քարոզչության կենտրոն

491.99-5

P-42

ՊԵՏՐՈՍ ԲԵԳԻՐՅԱՆ

ԼԵՉՈՒ ՆԱԽՆԵԱՅ

Գրաբարի դասագիրք

(Ինքնուսույցի սկզբունքով)



Սբ. Էջմիածին - 1997

Սր. Էջմիածնի Հոգևոր Դեմարանի մասնագիտական
հանձնաժողովի կողմից 1984-ին հաստատված է որպես
Դեմարանի դասագիրք:

Petros S. Bedirian, Ph. D., Linguist

THE ANCESTORS' TONGUE

A textbook of Classical Armenian
(On teach-yourself principles)

Տ՛. Echmiadzin, 1997

Бедирян Петрос Саркисович

ЯЗЫК ПРЕДКОВ

Учебник древнеармянского языка
(На принципах самоучителя)

Տ՛. Զ՛չմիաճզին, 1997

Նվիրում եմ հոգևոր կրթօջախների սաներին՝
Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու
սղազա սղասավորներին:

ՀԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԵՑ

Դասագիրքն ի ն ք ն ո ս ո յ յ յ ի ս կ գր ո ն ք ո վ են ք կ ա զ մ ե: Հ ա մ ո զ վ ա մ լ ի ն ե լ ո վ, ո ղ ք լ թ զ վ ի ո ս ու յ ճ ա ն զ ո ն ե ն ա խ ն ա կ ա ն փ ու լ ու մ ք եր ա կ ա ն ա կ ա ն կ ա ն ո ն ն եր ի, ա ղ յ ո ս ա կ ն եր ի եւ ա յ լ ն մ ա տ ու յ ու մ ն ի ք եր եւ լ ա կ ե տ ու վ ա խ-ճ ա ն ա կ ե տ ը ն դ ու մ ե լ ն ա մ ե ն ե ի ն է լ ա ղ յ ու մ ա վ ե տ ճ ա ն ա ս ա ղ ա ղ ի չ է, - ա յ ս տ ե ղ, մ ա ն ա վ ա ն ղ ս կ գր ն ա կ ա ն 25 դ ա ս եր ու մ, ք եր ա կ ա ն ա կ ա ն բ ա ց ա տր ու ք յ ու մ ն եր ի ն շ ա տ ք ի չ տ ե ղ են ք հ ա տ կ ա ցր ե լ, ա յ լ գ ի խ ա վ ուր ա ղ ե ս ու շ ա ղ ուր յ յ ու մ են ք դ ա ր ձ ր ե լ ք ա ր զ մ ա ն ա կ ա ն վ ա ր ժ ու ք յ ու մ ն եր ի մ ի ջ ո յ ո յ լ լ թ զ վ ի զ զ ա ց ո ղ ու ք յ ա ն մ շ ա կ մ ա ն ը: Մ ա ա ա ն ձ ճ ն ա ղ ե ս կ ա ր ե ա ղ ք է ն ր ա ն ճ հ ա մ ա ր, ո վ ք եր ա շ խ ա ր-հ ա ր ա ղ ի ք եր ա կ ա ն ա կ ա ն ը մ ք ն ու մ ն է լ բ ա վ ա ր ա ք չ ա փ ո վ չ ու մ ն ե ն:

Դասագրքից օգտվողը գրաբարի քերականական իրականություններին բնագրերի մեջ է նախ ծանոթանում, ինքնաբերաբար, մի տեսակ «ենթագիտակցաբար»։ 25-րդից հետո եկող դասերում է որ դրանք, խիստ ամփոփ, ներկայանում են իբրև զգացողությամբ ընկալված երևույթների հանրագումար (հղղվման, խոնարհման աղյուսակներ եւ այլն)։

Յուրաքանչյուր դաս բաղկացած է հիմնական բնագրից, նրանում հանդիպող յուրահատուկ բառերի ու արտահայտությունների բառարանից, նախորդավոր կամ նախադրավոր կապակցությունների, լեզվական տարածված կառույցների, գրաբարի ոճական յուրահատկությունների բացատրություններից եւ վարժություններից (գրաբարից աշխարհաբար ու հակառակ քարզմանություններ, ինչպես նաեւ, երկրորդ կեսը կազմող դասերում, որոշ քերականական առաջադրանքներ)։

Այս դասագրքով պարապողները, դասախառնի հսկողությամբ քե ի ն ք ն ու-լ ու յ ն ա ր ա ր, բ ն ա գ ղ ի ք ա ր զ մ ա ն ու ք յ ու մ ը բ ա ա ր ա ն ի յ ու բ ա ց ա տր ու ք յ ու մ ն եր ի յ օ գ տ վ ե լ ո վ են կ ա տ ա ր ու մ, ի ս կ վ ա ր ժ ու ք յ ու մ ն եր լ է լ ն ե լ ո վ բ ն ա գ ղ ու մ հ ա ն ղ ի-ս ղ ա մ ո ճ եր ի, կ ա ա ու յ ճ ն եր ի ու ձ ե ն եր ի: ն մ ա ն ո ղ ու ք յ ու մ ն ի յ: Թ ե ի ն ճ ձ ե ն եր ի ն մ ա ն ո ղ ու ք յ ա մ ք է ք ա ր զ մ ա ն ու ք յ ու մ ը կ ա տ ա ր վ ե լ ու՝ ի ու շ ու մ են փ ա կ ա զ ձ եր ի մ ե ջ գ լ խ ա գր եր ո վ տ ր վ ո ղ բ ա ն եր ղ կ ա մ կ ա պ ա կ ց ու ք յ ու մ ն եր ղ, որ ո ն ք տ լ յ ա լ

դասի բնագրում կամ մինչ այդ են հանդիպել: Օր.՝ առաջին դասի մեջ **խաբեցից, ածից** բառաձևերը (բայաձևերը) կան, որոնք «կխաբեն», «կբերեն» են նշանակում: Այստեղ չի ասվում, որ դրանք ստորադասական եղանակի երկրորդ ապառնիի ձևեր են, Ա. դեմքի, եզակի թվի եւ այլն: Այլ համապատասխան վարժության մեջ պահանջվում է դրանց նմանությունը բարգմանել, ասենք, **վազեցից, կազմեցից** ու այդպիսի ձևեր («կվազեն», «կկազմեն»), կամ գրաբարի վերածել «կերզեն», «կշարժեն» արտահայտությունները (**երզեցից, շարժեցից**): Այսպիսով ապառնիի այս ձևերի զգացողության հիմքը դրված է լինում. մյուսները լեզվական գիտակցության մեջ ուրիշ դասերի առնչությամբ կմտնեն: Այնպես որ դրանք հետագայում մեկ աղյուսակի մեջ ի մի բերելը դժվարություն չի հարուցի: Դասագիրքն օգտագործողը, ուրեմն, պիտի կարողանա առաջին մեկ-երկու դասերի ընթացքում արդեն զլխի ընկնել, թե ինչպես կարելի է փակագծերում զխագրերով տրվող հուշումներից օգտվել ու դրանով վարժությունները հեշտ ու արդյունավետ կատարել: Այս նույն նպատակին են ուղղված նաեւ շատ դեպքերում նախորդ դասերին հղումները (սրանք կարծես թե ամեն ինքնուսույցի համար անհրաժեշտ են):

Գրաբարից աշխարհաբար քարգմանություն պահանջող վարժություններում երբ բառեր կամ արտահայտություններ են հանդիպում, որոնք տվյալ կամ նախորդ դասերից ծանոթ չէին կարող լինել, դրանց կողքին իմաստները փակագծերում սուկ հատուկ դեպքերում են տրվում: Ըստ որում, եթե բառն իմաստով էլ, ձևով էլ անծանոթ է, լրիվ է քարգմանվում. օր.՝ **ի ձեռք** (ձեռանից): Իսկ եթե ձևը պետք է արդեն յուրացված լինի, բառի (արտահայտության) ու ի դ ձ է ի իմաստն է նշվում: Օր.՝ **արարից** (անել). որովհետեւ **-ից**-ով վերջացող բայաձևի քարգմանությունն առաջին դասից պետք է յուրացված լինի: **Մնացած դեպքերում անծանոթ բառերն ու արտահայտությունները պետք է դասագրքին կցված «Բառարանում» փնտրել** (ապարքերում է նաեւ անկանոն բայերի, դերանունների՝ բնագրերից ու վարժություններից չյուրացված ձևերին):

Հոգեւոր կրթօջախի սանին մեծապես օգնում է (պետք է որ օգնի) այն հանգամանքը, որ նա իր ուսումնառության առաջին իսկ օրերից «գրաբարյան միջավայրում» է (ժամերգություն, աղոթքներ, շարականներ, սաղմոսներ, աստվածաշնչյան ընթերցումներ...): Ուստի դասերում հանդիպող բառեր ու արտահայտություններ, բառաձևեր, դրանց նմաններ կարող է հեշտությամբ հիշել այս իսկ աղբյուրներից:

Ինչպես դասերի բնագրերի, այնպես էլ վարժությունների գրաբար նախադասությունները քարգմանելիս աշխատում եք բնագրին որքան կարելի է մոտ մնալ, նրանից սուկ այն դեպքերում շեղվել, երբ բառացի քարգմանությունն աշխարհաբարին խորք կլինի կամ միտքը ճիշտ չի վերարտադրի: Թող որ սկզբում բառերի շարադասությունը գրաբարյանին մոտ լինի, հոգ չէ: Սակայն անհրաժեշտ է կամաց-կամաց սովորել դա էլ փոխել, շարադասությունն էլ աշխարհաբարի համար ներդաշնակ հնչեցնել: Սա հատկապես կարեւոր է, եթե նկատի ունենանք, որ զանազան ռեֆերատների, ավարտաճառերի համար մեջբերումներ էլ գրաբարից աշխարհաբար քարգմանելու հարկ կլինի:

Դասագրքից օգտվողը կամ նրանով դասավանդողն առանց դժվարության կարող են նկատել, որ ամեն դասի բնագիր գրաբար նոր բառեր, արտահայտություններ, կառույցներ, ոճական-շարահյուսական երևույթներ մեջ բերելու համար է ընտրված՝ աստիճանական դասավորությամբ: Եւ, որպես կանոն, դրանք նախորդ մեկ կամ մի քանի դասերում առանց բացատրության հանդիպում են, ապա նոր համապատասխան դասի առնչությամբ բացատրվում: Այսպես, «Ի + հայցական = շարժման ուղղություն» եւ «Ի + հայցական = տրական» կառույցները հենց Ա. դասի մեջ հանդիպում են (**յակնառու, ի մահ**), սակայն Գ. դասի առնչությամբ են բացատրվում (**ի բանակն, ի սեանն**): Կամ՝ բացառականի ձևեր հանդիպում են Ա. (**ի ձեռաց իմոց**), Բ. (**ի բոցոյն**), Դ. (**յայլ եւ գայլոց, ի բազմաց**), Ե. (**ի շարէ**), Ը. դասերի բնագրերում (**ի վտանգէ, ի յովեաց ծովէ, ի մեղաց**), եւ սրանք լեզվական զգացողության մեջ մուծված կարեւոր հիմք են, որպեսզի եզակի բացառականի կազմությունը հեշտությամբ բացատրվի Թ. դասի բնագրի **յանտառէ-ի**, հոգնակին՝ ԺԱ. դասի **յուկեգործաց-ի** ու **յայլոց-ի** առնչությամբ (եւ երկուսը մեկտեղ կրկնվեն ԺԲ. ու հետագա դասերի ընթացքում):

Լավ կլինի, որ դասագիրքն օգտագործողը գրաբարով ասույթների հատուկ մի տեսոր պահի, ուր տարբեր դասերից (ներառյալ վարժությունները) քաղելով արտահայտություններ արտագրի, որոնք հետագայում կարող է իրբեւ շարաղլությունների, ելույթների կամ քարոզների, հոլովածների բնաբան, թեւավոր խոսքեր, դիպուկ բանաձևումներ օգտագործել: Օր.՝ **Բազումք են կոչեցեալք, եւ սակաք ընտրեալք** կամ **Տո՛ւք զԿայսերն Կայսեր եւ զԱստուծոյն Աստուծոյ...** Դասագրքում նման ասույթներից (նախադասություններից) առաջ աստղանիշ [*] է դրվում (դրանց մեջ եւ այնպիսիք կան, որոնք ասույթի ձև չունեն, բայց ապագա հոգեւորականների բանավոր ու գրավոր խոսքի կառուցմանը պետք կզան. մյուսները կայող են դրանք

անտեսել: Օր.՝ **Ջո՛ր՝** լերուք յամենայն անիրաւութեանց կամ եւ գուրախութիւնն ձեր ոչ որ հանիցէ ի ձէնց:

Ամեն դասի՝ համապատասխան խոսքերն արտագրվում են ու անգիր սերտվում:

Հատուկ ուշադրություն եք դարձնում նաեւ կարդալու տեխնիկային, որի ճիշտ մշակման շնորհիվ կարելի կլինի հայերենի բարեհնչյունությունը, եթէ կուզեք՝ երաժշտականությունը հարազատորեն պահել: Այս նպատակով է ահա որ առաջին 10 դասերի բնագրերում եւ վարժություններում օգնող նշաններ են դրված՝ «Նախապատրաստական դասի» թիվ 10 կետում բացատրված ընթերցանության կանոնների կիրառումն ապահովելու համար:

«Առարկայացանկը» պետք է օգնի գտնելու եւ հարկ եղած դեպքում կրկնելու այն բազմազան օրինաչափությունները, որոնք դասագրքով մեկ սփռված են:

Իսկ «Հավելվածի» հարցարանները նմուշներ են ի պետս թե՛ սովորողների, թե՛ սովորեցնողների:

Այս դասագրքին ամեն, անգամ հպանցիկ ծանոթություն, վստահ ենք, պետք է մի՛ համոզման հանգեցնի՝ որ այն ստեղծվել է, որպէսզի դեպի մեր ոսկեդինիկ գրաբարը հետաքրքրություն ու սեր առաջացնի, ուղեցույց դառնա՝ մեր մեծ ու շռայլ նախնիներից ժառանգություն մնացած այս հարուստ ու շքեղ լեզվին, այլեւ խորունկ ու պայծառ մտքերին հաղորդակից լինելու:

Ավելի մեծ վարձատրություն չենք էլ պատկերացնում մեզ համար, քան այս նպատակի հաջողվելը:

Պ. Բ.

ՆԱԽԱՊԱՏԲԱՍՏԱԿԱՆ ԴԱՍ

Ընթերցանության կարեւորագույն կանոններ

1) **ՈՒ**-ն ուրիշ ձայնավորից առաջ «վ» է կարդացվում: Օր.՝ **նուէր** [նվէր], **բուի** [բվի] «բվում է», **պատուարժան** [պատվարժան], **հաշուրկեր** [հաշվրկեր] «հաշվի ընկեր. մրցակից», **տուիչ** [տվիչ] «տվող», **ձայնատուութիւն** [ձայնատվութիւն] եւ այլն:

2) **Յ**-ն բառավերջում **Ա**-ից ու **Ո**-ից հետո գրեթէ միշտ գրվում է, սակայն չի կարդացվում (եզակի բացառություններով): Օր.՝ **քահանայ** [քահանա], **արքայ** [արքա], **գետոյ** [գետո], **ի բոցոյ** [ի բոցո] եւ այլն:

Յ-ն բառասկզբում, ձայնավորից առաջ «հ» է կարդացվում, ինչպես՝ **յառաջ** [հառաջ], **յանուն** [հանուն] «անունով. անունից», **յենուլ** [հենուլ] «հենել. հինվել», **յերկինս** [հերկինըս] «երկնքում», **յընթացս** [հընթացըս] «ընթացքում», **յլլստակ** [հստակ], **յիշել** [հիշել], **յորդի** [հորդի] «որդուն. որդու մեջ», **յուսման** [հուսման] «ուսման կամ ուսմունքի մեջ», **յօզուտ** [հօզուտ] եւ այլն:

Յ-ով գրվող արմատներից կազմված բառերում **Յ**-ի «հ» արտասանությունը պահպանվում է: Օր.՝ **յիշել-անյիշելի** [անհիշելի], **յօն** [հոն] «հոնք»-**մրայօն** [մրահոն], **յարգ** [հարգ] «արժեք. հարգանք»-**մեծայարգ** [մեծահարգ] «մեծ հարգանքի արժանի» եւ այլն:

3) **Ի** (ւ) տառը, որ հայերեն այբուբենում Փ-ին է նախորդում, **Ա**, **Ե** եւ **Ի** ձայնավորներից, ինչպես նաեւ բաղաձայնից հետո «վ» է կարդացվում: Օր.՝ **աւետել** [ավետել], **հաւ** [հավ], **արեւ** [արեվ], **երեւիմ** [երեվիմ], **հաշիւ** [հաշիվ], **հովիւ** [հովիվ], **հիւանդ** [հիվանդ], **հոգւոյ** [հոգվո], **Քանանացոց** [քանանացվոց] եւ այլն:

Ի-ի հետ երկբարբառ կազմելով՝ **Ի** (ւ)-ն յուրահատուկ արտասանություն ունի, որի մասին քիչ հետո կասվի:

4) **ԵԱ**-ն «յա» է կարդացվում: Օր.՝ **մատեան** [մատյան] «գիրք», **յաւիտեան** [հավիտյան], **քրիստոնէութեան** [քրիստոնէության] եւ այլն:

5) **ԻԻ** (իւ)-ը բառերի վերջում կամ ձայնավորից առաջ «իվ» է կարդացվում (**հովիւ**, **հիւանդ**), սակայն բաղաձայնից առաջ այն պետք է «յու» արտասանել: Օր.՝ **ծիւն** [ծյուն], **արիւն** [արյուն], **քրիստոնէութիւն** [քրիստոնէութիւն], **ճառագայթիւք** [ճառագայթյուք] «ճառագայթներով» եւ այլն:

Ծ ա ն. **Ս**, **Պ**, **Ն**, հոգնակի ուղղականի **Ք** եւ հոգնակի հայցականի **Ս** մասնիկներից առաջ **ԻԻ**-ը դարձյալ «իվ» է կարդացվում, ինչպես՝ **հովիւ** - **հո-**

վիս [հովիվըս], հովիդ [հովիվըդ], հովին [հովիվըն], հովիք [հովիվք], գհովիս [ըգհովիվըս] եւ այլն:

6) ՈՅ-ը բառավերջում «օ» է կարդացվում (ինչպես արդեն ասվել է, Ռ-ից եւ Ա-ից հետո բառավերջում Յ-ն մեծ մասամբ զրվում է, բայց չի կարդացվում – գետոյ, քահանայ): Մակայն բաղաձայնից առաջ այն պետք է «ույ» արտասանել: Օր.՝ գոյն [գույն], ոյք [ույք] «ուլքեր», ոյր [ույր] «ուս», ի գետոյն [ի գետույն] «գետից», Յոյնք [հույնք] «հույներ, հույն ժողովուրդ, Հունաստան» եւ այլն:

Ծ ա ն. Եզակի դեպքերում ՈՅ-ը «օյ» էլ կարդացվում է, ինչպես՝ գոյն [գոյնը] «գոյն, գոյություն ունեցողը, առարկան», զխոյն [ըզխոյնը] «խոյն», Նոյն [Նոյնը] «Նոյը, Նոյ նահապետը»:

7) ԵԱՅ-ը բառավերջում «յա» է կարդացվում, իսկ բաղաձայնից առաջ՝ «յայ», ինչպես՝ պաշտօնեայ [պաշտոնյա], բայց՝ պաշտօնեայք [պաշտոնյայք]:

8) ԻՈՅ (տյ)-ը բառավերջում «վո» է կարդացվում, իսկ բաղաձայնից առաջ՝ «վույ», ինչպես՝ հոգույ [հոգվո] «հոգու. հոգուն», բայց՝ ի հոգույն [ի հոգվույն] «(այն) հոգուց»:

9) Չ նախյիւրն իրեն հաջորդող բաղաձայնից առաջ «ըզ» է կարդացվում, իսկ ձայնավորի հետ՝ միաձուլել: Օր.՝ [ը]զբազում, [ը]զսիրելիս, [ը]զգետով «գետի շուրջը», բայց՝ գիս, գագականս [գագականըս], գորդին [գօրդին], գեղեզնիկ [գեղեզնիկ], զընկերէ «ընկերոջ մասին», զ[Ը]սպասաւոր «սպասավորին» եւ այլն:

10) Երբ բառը բաղաձայնով է վերջանում եւ Մ, Գ կամ Ն մասնիկներն ունի, սրանց եւ բառի վերջին բաղաձայնի միջեւ «ը» է արտասանվում: Օր.՝ զբաղաքն [ըզբաղաքըն], մարմնաւորս [մարմնավորըս], Չերդ [ձերդը] Սրբութիւն, յակամաւոս [հակամաւորըս] «(դեպի) բակարդները», զղլունսն [ըզղլունսն] «ղռները», զխոստմունսդ [ըզխոստմունսըդ] «այդ կամ քո խոստումները», զձեռս [ըզձեռըս], զձեռսն [ըզձեռսն] եւ այլն:

Ծ ա ն. 1.- Երբ այս վերջավորություններն ունեցող բառերին ձայնավորով սկսվող բառ է հաջորդում, այնու «ը» չի արտասանվում: այլ այդ երկու բառերը միաձուլել են կարդացվում, ինչպես՝ զբաղաքն [ըզբաղաքըն], բայց՝ զբաղաքն այն [ըզբաղաքնայն], զապարանս [զապարանըս], բայց՝ զապարանս արքունի [զապարանսարքունի], արքայն [արքայըն], բայց՝ արքայն Արտաշէս [արքայնարտաշէս], հաւատացեալքդ [հավատացյալքդդ], բայց՝ հաւատացեալներդ, քրիստոնյաներդ», վասն նորա [վասըն նորա] «նրա մասին. նրա համար», բայց՝ վասն այնորիկ [վասնայնորիկ] «նրա համար», վասն որոյ [վասնօրո] «որի համար»...

Ծ ա ն. 2.- Գրաբարի ընթերցանության բարեհնչյունությունն առհասարակ պահանջում է, որ բառի վերջին բաղաձայնը եւ հաջորդող բառի սկզբի

ձայնավորն արտասանությամբ չկտրվեն, ինչպես՝ այս է մարմին իմ [այսն մարմինիմ], եւ ասէ [եւասէ], տեսանէր զդուստրն [տեսանէրըզդուստրըն]... Նույն բարեհնչյունությունը պահանջում է, որ միաձուլ կարդացվեն նաեւ հետեւյալ կարգի կապակցությունները՝ ի սկզբանէ [ոչ թե «ի ըսկըզբանէ», այլ «իսկըզբանէ»], մինչ ի ստորոտն [մինչիստորոտըն] եւ այլն:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

Հետեւյալ նախադասությունները կարդացեք.

*Ճանաչել զիմաստութիւն եւ զխրատ, իմանալ զբանս հանճարայ: (Ճանաչել իմաստությունն ու խրատը, իմանալ հանճարի խոսքերը)

Որպէս սուր հատանէր զախտացեալսն, որպէս աղ ընտիր համեմէր զամհամեալսն, որպէս արեգակն պայծառ լուսատրէր զխաւարեալսն: (Սրի պես կտրում էր ախտավորներին՝ հիվանդներին, ընտիր աղի պես համեմում էր անհամացածներին, պայծառ արեւի պես լուսավորում էր խավարյալներին)

Յո՞ երթաս, Տէր: (Ո՞ր ես գնում, Տե՛ր)

Այլ մեք ոչ կարենք գոր տեսաքն եւ լուսաք՝ չխօսել: (Բայց մենք չենք կարող լսանել այն, ինչ տեսանք ու լսեցինք)

Եւ զտագնուածս եւ զինչս վաճառէին...: (Եվ ունեցվածքը վաճառում էին)

Կույին անդ ծառայքն եւ սպասաւորք խարոյկ արկեալ...: (Այնտեղ ծառայներ ու սպասավորներ կային, որոնք խարոյկ էին վառել)

...Յրուեսջիք յիրաքանչիւր տեղիս...: (Պիտի ցրվեք յուրաքանչյուր դեր տեղերը)

* Մարգարէ յիւրում զաւառի պատիւ ոչ ունի: (Մարգարեն իր գավառում պատիվ չունի)

...Սոյնպէս եւ անենայն ծնեալն ի Հոգւոյն: (Այսպես նաեւ [Մորք] Հոգուց ծնված ամեն արարած)

Կ ա թ ե ո թ ը.- Դասագրքիս մեջ գետեղված այն նախադասությունները, որոնցից առաջ աստղանիշ [*] կա, պետք է գրաբար ասույթների տետրի մեջ արտագրել եւ անգիր սովորել:



Ա. դ ա ս

ՈՐՄՈՐԳՆ ԵՒ ԿԱՔԱՆ

Որտորդն կալաւ կաքաւ մի եւ կամէր զենուլ: Եւ ասէ կաքաւն.

«Մի սպանաններ զիս, զի ես խաբեցից զբազում կաքաւս եւ ամից յականատս քո»:

Եւ ասէ որտորդն.

«Այժմ ստուգիս մեռցիս ի ձեռաց իմոց, զի զսիրելիս եւ զազգականս քո մատնես ի մահ»:

(Գրաբարի դասագրքերից)

Կ ա ր ե ո թ .- Այժմ ստուգիս պետք է «սլոյժմբարուզիվ» կարողալ, մեռցիս ի ձեռաց իմոց՝ «մեռցիսիս չեռուցիմոց»:

Բ ա ռ ա ր ա ն

կալաւ - բռնեց

զենուլ - մորթել

զի - 1. որովհետեւ 2. որպեսզի 3. որ. քե ամեն - բերել. ամից, խաբեցից - կրերեմ, կխաբեմ (այս ձևերն այլ դեպքերում կարող են բարգմանվել նաեւ՝ պիտի բերեմ, պիտի խաբեմ, բերելու եմ, խաբելու եմ, բերեմ, խաբեմ)

ականատ - բակարդ. յականատս - (ղեպի) բակարդները

ստուգիս - իսկապես, իրոք

մեռցիս - կմեռնես

ի ձեռաց իմոց - իմ ձեռքից, իմ ձեռքով

Բ ա գ ա ս Ր ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

Ատ - «Ատում է» է նշանակում (ներկա ժամանակ է), բայց քանի որ պատմությունն անցյալ ժամանակով է սկսվում, «ասաց» ենք բարգմանում: Գրաբար ոճի համար պատումի մեջ բայի ժամանակների փոփոխությունը սովորական է: Թարգմանելիս պետք է միտքիմակայանել:

2...կաքաւս, յականատս, զսիրելիս, զազգականս - Վերջին Ս-երը հոգնակի հայցականի նշանն են: Չ ն ա ի ո թ ը հայցականին որոշյալ առժամ իմաստ է հաղորդում - «սիրելիներին», «ազգականներին»: Իսկ առհասարակ գրաբարի որոշիչ հոդը Ն-ն է, որ կարող են բ ո լ ո թ հոլովներն էլ ստանալ: Միայն քե հատուկ անունները, ինչպես նաեւ վերնագրերում գոյականները սովորաբար անորոշ առումով են գործածվում (ուղղական հոլովում):

ՎԱՐՇՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Աշխարհաբար բարգմանեցեր.

ա) նստաւ, ծնաւ, բնակեցաւ (ԿԱԼԱԻ). նետե, փրկե, ածե, գտանե, սպանանե (ԱՄԷ. միշտ իր բուն իմաստով). ժողովեցից, գործեցից, ասացից, զգացից, շինեցից, գտից (ԽԱԲԵՅԻՅ, ԱԾԻՅ. յուրաքանչյուրի հնարավոր 4 բարգմանությունները տվեք):

բ) Վկայութիւն իմ ճշմարիտ է, զի գիտեմ ուստի եկի եւ յո երթամ: * Այլ է որ սերմանե եւ այլ է որ հնձե: Իսկ ուղիղք իմաստունս (իմաստնաբար) խորհեցան, եւ խորհուրդն այն կայ՝ մնայ: * Սկիզբն իմաստնութեան երկեւ (= երկիւտ) Տեառն: Մի՛ երկնչիր, եւ օգնեցից քեզ: Գիտեմ զինչ արարից (անել). քակեցից զ[ը]շտեմարանս իմ, եւ եւս մեծանեծս շինեցից, եւ անդր ժողովեցից՝ զցորեան եւ զամենայն բարութիւնս իմ: «Զի՞նչ կամիս դու զի արարից քեզ». եւ մա ասե. «Տէ՛ր, զի բացցիմ (բացվել) այք իմ եւ տեսից»: (ԽԱԲԵՅԻՅ, ԱԾԻՅ):

Կ ա ր ե ո թ .- 1) Փակագծում գլխագրերով դ ա ս ի բ ն ա գ թ ու մ հ ա ն դ ի պ ա ծ ձ եւ ե թ ն ե ն տրվում, որոնց ն մ ա ն ն ո ղ ու թ յ ա մ ք էլ պետք է վարժության համապատասխան ձևերը բարգմանել: Օր.՝ դասի կալաւ-ը «բռնեց» եք բարգմանել, ուրեմն նստաւ, ծնաւ պետք է «նստեց», «ծնեց (կամ ծնվեց)» բարգմանել: Այսպես էլ մյուս դեպքերում:

2) Այստեղ եւ ամենուրեք՝ ընդգծված բառերը հատուկ ուշադրություն են պահանջում. հիշեցնում են, որ դասի (դասերի) բնագրում հանդիպել են, եւ պետք է դրանց իմաստը կամ ձևը ճիշտ ճանաչել: Օր.՝ զի-ն, ինչպես այս դասի բնագրում, անհրաժեշտ է «որովհետեւ» բարգմանել:

3) Եթե բառաձևեր դասից պետք է որ իմանաք, բայց բառն իմաստով անձանոր է, նրա կողքին փակագծում բառի գրաբարյան իմաստն է նշվում, իսկ ձևը պետք է դասից արդեն սովորածի հիման վրա բարգմանվի, նրա նմանողությամբ: Օր.՝ արարից (անել). սա նշանակում է, որ բայի իմաստն «անել» է, իսկ արարից ձևը ԽԱԲԵՅԻՅ-ի ու ԱԾԻՅ-ի նմանողությամբ պետք է «կանեմ» բարգմանել (ինչպես ընդգծված մյուս բայերը):

2. Հետեւյալ արտահայտությունները գրաբար բարգմանեցեր.

ա) վազում է, գործում է, մատնում է. (ԱՄԷ)

բ) կվազեմ, կգործեմ, կմատնեմ (ԽԱԲԵՅԻՅ). կրերեմ, կխանեմ, կօծեմ (ԱԾԻՅ):

Կ ա ր ե ո թ .- Խաբեցից-ից առաջ եղած բայերը նրա նմանողությամբ պետք է բարգմանել, իսկ ամից-ից առաջ եղածները՝ սրա:



Բ. դ ա ս

ԾՆՈՒՆԴ ՎԱՀԱԳՆԻ

Երկնէր երկին, երկնէր երկիր,
 Երկնէր եւ ծովն ծիրանի.
 Երկն ի ծովուն ունէր եւ զկարմրիկն եղեգնիկ.
 Ընդ եղեգան փող ծուխ ելանէր,
 Ընդ եղեգան փող բոց ելանէր.
 Եւ ի բոցոյն վազէր խարտեաչ պատանեկիկ.
 Նա հուր հեր ունէր,
 (Ապա թէ) բոց ունէր մօրուս,
 Եւ աչկունքն էին արեգակունք:

(Ճողովողական, Մովսես Խորենացոյ)

Ծ ա ն. Գրաբար բնագրում միջակետը [.] շատ հաճախ վերջակետին [:] է համագոր:

Բ ա ռ ա ր ա ն

երկներ - երկնում էր, երկունքի ցավե-
 րով էր բռնվել
 երկն - երկունքը)

ուճիմ (3-րդ տողում) - բռնել, պատել
 (կարայ - բռնեցի)

Բ ա գ ա ս ռ ո յ յ ո Ն Ն Ե Ր

Ի ծովուն - Ի (նախդիր) + եզակի տրական (ծովուն) = «ներգոյական» - «ծովում»: Ի + հոգնակի հայցական (ծովս) = «ներգոյական» - «ծովերում»: Ուրեմն Ի նախդիրը միեւնոյն՝ ներգոյականի իմաստը եզակի տրականի եւ հոգնակի հայցականի հետ է արտահայտում: Չայնավորով սկսվող բառից առաջ Յ է գործածվում: յագարակի, յեղբօր, յորոգայքի - «ագարակում», «եղբոր մեջ», «որոգայքում»:

Չկարմրիկն եղեգնիկ, ընդ եղեգան փող - Չ եւ ԸՆԴ-ը նախդիրներ են. առաջինը պատկանում է եղեգնիկ, երկրորդը՝ փող բառին: Գրաբարում, որպէս կանոն, նախդիրը գոյականին նախորդող առաջին լրացմանն է անցնում: (Այդպէս է ման աշխարհաբարում: Հմտ. դեպի տուն - դեպի մեր տուն - դեպի մեր հարազատ տունը):

Ընդ...փող - ԸՆԴ (նախդիր) + հայցական (փող) = «միջով, միջից. -ով» - «փողի միջից կամ միջով», «փողով»:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Բարձրաձայն կարդացեք.

Վիշապագունք գողացան զմանուկն Արտավազը, եւ դե փոխանակ եղին: (Վիշապագունքը գողացան մանուկ Արտավազին եւ փոխարենը դե որեցին)

Մինչ դու գնացեր, եւ զերկիրս ամենայն ընդ քեզ տարար, եւ աւելակացս ո՞ւմ քազատրեմ: (Մինչ դու գնացիր ու իմ ամբողջ երկիրը քեզ հետ տարար, եւ այս ավերակներին ո՞ւմ քազավորեմ)

Գլորեցաւ վեմն կենդանի եւ հզօր, եւ պարիսպն ամրութեան խորակեցաւ: (Կենդանի ու հզօր վեմը՝ ապառաժը գլորվեց, եւ ամուր պարիսպը խորտակվեց)

Տեղ ոսկի տեղայր ի փեսայութեանն Արտաշիսի, տեղայր մարգարիտ ի հարսնութեան Սաթինկանն: (Տեղատարափ ոսկի էր տեղում Արտաշեսի փեսայութեան ժամանակ, մարգարիտ էր տեղում Սաթենիկի հարսնութեան ժամանակ)

Հատուած գնացեալ Վարդգես մանուկն ի Տուհաց գաւառէն, գՔասաղ գետով, եկեալ մտնեալ ՂՇրէշ բլրով, գԱրտամէղ քաղաքաւ, գՔասաղ գետով, կռել կոփել զդռւմնն Երուանդայ արքայի: (Գաղթեց երիտասարդ Վարդգեսը Տուհաց գավառից, Քասախ գետի մոտ, եկավ մտնեց Շրէշ բլրի, Արտամէղ քաղաքի, Քասախ գետի շուրջ՝ Երվանդ արքայից աղջիկ ուզելու)

2. Հետեւյալ արտահայտութիւններն աշխարհաբար քարգմանեցեք.

ա) վաճառէ, բաշխէ (Ա., ԱՍԷ). վարէր, գտանէր, հասանէր, մտանէր (ԵՐԿՆԵՐ, ՈՒՆԵՐ, ՎԱԶԵՐ).

բ) ընդ տունն, ընդ գետն, ընդ գետս (ԸՆԿ...ՓՈՂ). ի վերմատան, յերկրի, ի խաղաղութեան, յաշխարհի, ի ճշմարտութեան, յարդարութեան, ի հանդիման սպիտակս, ի քաղաքս, յաշխարհս (Ի ԾՈՎՈՒՆ, ի ծովս).

գ) * Իմաստուն կանայք շինեցին տունս, իսկ անգգասք ձեռօք իրեանց (իրենց ձեռքով) կործանեցին: * Վա՛յ որ (վա՛յ նրան, ով) պահէ զագահութիւն յար՛ի տան իւրում: Եւ մայր նորս (նրա) պահէ զամենայն բանսն ի սրտի իւրում: Եւ յուշկապարիկք (առասպելական ոգի) բնակեցեն ի մնա, եւ ոգնիք ձագս հանցեն յապարանս նորս: Եւ աւասիկ ծառայ քո (ես) ի ձեռս քո կան (եմ): (Ի ԾՈՎՈՒՆ, ի ծովս): * Երկիւղ՝ քերահատատութեանն Աշանակ:

3. Հետեւյալ արտահայտութիւնները գրաբար քարգմանեցեք.

ա) կոչում էր, ժողովում էր, մտնում էր (մտանել), իջնում էր (իջանել), հարցնում էր (հարցանել), խոսում էր (խօսել), ուզում էր (Ա. դասից գտեք). (ԵՐԿՆԵՐ...)

բ) պայծառ լույսը, պատանի Գյուտին, զեղեցիկ քաղաքները, հեռավոր երկրները, քուստը Սաթենիկին (բոլորն էլ հայցական հոլովով, Չ նախդիրով):

Կ ա ր ե տ ո թ . Գրաբարում հայցականը (եզակի թե հոգնակի, անձ թե իր ցույց ավող) հոլովիչ չունի, մնան է ուղղականին. ուղղ. քար - հայց. գքար, ուղղ. Պողոս - հայց. գՊողոս, հոգն. ուղղ. եղբարք - հոգն. հայց. զեղբարՄ:



Պ. դ ա ս

ԱՌԵՒԱՆՔՈՒՄՆ ՍԱԹԻՆԿԱՆ

Հեծաւ արի արքայն Արտաշէս ի սեան գեղեցիկ,
 եւ հանեալ զոսկէօղ շիկափոկ պարանն,
 եւ անցեալ որպէս զարծուի սրաթեւ ընդ գետն,
 եւ ձգեալ զոսկէօղ շիկափոկ պարանն՝
 Ընկէց ի մէջք օրիորդին Ալանաց.
 եւ շատ ցաւեցոյց զմէջք փափուկ օրիորդին,
 Արագ հասուցանելով ի բանակն իւր:

(Տողովորդական, Մովսես Խորենացոյ)

Ք ա ռ ա Ր ա ն

ձգեմ - զգել, նետել

ընկենում - զգել. ընկեց - զգեց (հմմտ. աշխարհաբար գահընկեց)

Ք ա գ ա Տ Ր Ո Ւ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

Արքայն Արտաշէս - Հատուկ անվանը նախորդող մակդիրը (որոշիչը՝ արքայն) վերջում միշտ Ն հոդ է ստանում. քաջՆ Վարդան, արիՆ Վարդան, ՄեծՆ Տիգրան, ՏիտանեանՆ Քէլ եւ այլն: Ուրեմն նախորդ դասի Յք վարժության մեջ ավելի ճիշտ պիտի լիներ գրել՝ զպատանին Գիւտ, զդուարն Սաբեմիկ:

Ի սեան - Ի (նախդիր) + հայցական (սեան) = այստեղ՝ տրական - «սեւտկին», այսինքն՝ «սեւ ծիւղ»: Նույնն է նաեւ ի մէջք «մեջքին», միայն քե հայցականը Ս-ի փոխարեն այստեղ Ք ունի: Ուրիշ օրինակներ՝ ի ծառայութիւն «ծառայության», ի խորհուրդ «խորհրդի», ի մահ «մահական» (Ա. դասից) եւ այլն:

Հանեալ, անցեալ, ձգեալ - -եԱԼ-ով վերջացող դերբայածեւերը սովորաբար -եԼՈՎ, -ԱԼՈՎ ձեւերով են թարգմանվում. հանեալ... - «հանելով»... զգացեալ - «զգալով», գիտացեալ - «, իջեալ - «, զնացեալ - « (այս կերպը դուր թարգմանեցիր):

Որպէս զարծուի - «Որպէս կամ ինչպէս արժիվ», «արժիվ պէս կամ նման»: Արծուի ձեւը սեռական չէ, այլ ուղղական-հայցական. այսպիսի բառեր էին՝ տեղի «տեղ» (հմմտ. աշխարհաբար տեղին-անտեղի, տեղի տալ, տեղիք տալ, հավաքատեղի...), պատասխանի «պատասխան», հիսխսի «հյուսիս», կարասի «կարաս. կարասի» (հմմտ. աշխարհաբար կահ-կարասի): Դրանց սեռականները կլինեն՝ արծուոյ, տեղւոյ (կամ տեղւոջ) եւ այլն:

Ալանաց - «Ալանների (= ալանաց)»: Գոյականների, ածականների, թվականների, դերանունների եւ այլոց հոլովածեւերում Յ մասնիկը հոգնակիի (սեռականի, տրականի, բացառականի) նշան է:

ՎԱՐՇՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հետեւյալ նախադասության ընդգծված բառերում Ն հոդի գործածությունը բացատրեցեք.

...Միայն զմերս զրաւեաց զմիտս եւ զտեսութիւն հրաշակերտն եւ քան զբազումս նորանշանն եւ զարմանալին Աղթամար: (Միայն մեր միտքն ու տեսողությունը գրավեց հրաշակերտ, շատերից ավելի նորանշան ու զարմանալի Աղթամարը)

2. Հետեւյալ արտահայտություններն աշխարհաբար թարգմանեցեք.

ա) Փութալ ի զղջումն: Ահաւասիկ պատրաստ եմ ի մտանել: Մատնեաց ի գերութիւն՝ զգօրութիւն նոցա (նրանց, սեռական): Ի սուր մատնեցին զնոսա (նրանց. հայցական) եւ անողորմաբար ոչ խնայեցին ի ծերս եւ ի մանկունս: Կոչեցին զնա յընթերիս արքունի: (Ի ՍԵԱԻՆ)

բ) Ի գլխոյ լերինն (լեռան գագաթից) հոսեալ իջանեն գետք յորդահոսք: Սուր ի վեր կալեալ սկսան յանխնայ կոտորել զքրիստոնեայսն: Եւ շինեալ զԱղթամար կղզի՝ անդ ապրեցուցանել զբազում զատառս: Եւ ելեալ արտաքս՝ փակեցին զդուռնն: (ՀԱՆԵԱԼ...): Անցոյց (ՅԱԻԵՅՈՅՅ) զնոսա ընդ անդունդս որպէս ձի ընդ անապատ, եւ իբրեւ զգրաստ ինչ (մի) ընդ դաշտ եւ (բայց) ոչ վաստակեցին: (Ք., ԸՆԴ... ՓՈՂ)

գ) Ձնա յերկիր ընկեց: Չայլս ապրեցոյց (փրկել), զանձն (ինքն իրեն) ոչ կարէ ապրեցուցանել: Աւերեաց զքունք գետոց եւ ցամաքեցոյց: Յայնժամ մեծացոյց յոյժ թագաւորն զՏրդատիոս..., թագ կապեաց ի գլուխ (Ի ՍԵԱԻՆ) նորա: (ՅԱԻԵՅՈՅՅ): Եւ նա զկլուտողսն կոտորել, որպէս զհար զեղեզն: Յնոխիք որպէս զհաց կերի: (ՈՐՊԷՍ ՉԱՐԾՈՒԻ)

3. Հետեւյալ արտահայտությունները գրաբար թարգմանեցեք.

ա) վազելով, գործելով, ժողովելով, բերելով (2), տառապելով, բարձրանալով, զգալով.

բ) կատարելության, վախճանին, դատապարտելով մահվան, հասնելով սահմանին, մատնելով կրակի (հուր). (Ի ՍԵԱԻՆ)

գ) հասցրեց (հասուցանել), փախցրեց (փախուցանել), բնակեցրեց (բնակեցուցանել), սարսափեցրեց (զարհուրեցուցանել), մատուցեց (մատուցանել). (ՅԱԻԵՅՈՅՅ)

դ) (դեպի) տուն, (դեպի) երկիր, (դեպի) երկիրն (հոգնակի հայցական ձեւով), (դեպի) աշխարհը, (դեպի) մուտքը (հոգնակի հայցական ձեւով): (Ի ՈՒՆԱԿՆ)

Ղ. դ ա ս

ԳԱՅԼ ԵՒ ՈՉԽԱՐՔ

Գայլոյ ծերացեալ՝ զնաց ան ճօտն, եւ ասէ.

«Ապաշխարող աշտն եմ, եւ շատ զձեզ տրտմեցուցի, եւ վասն այնորիկ կամիմ գալ, եւ աւել տան ձեր անձել, զի թողութիւն լիցի, եւ զմանկունս ձեր պահել յայլ եւս գայլոց»:

Եւ ուրախացեալ շանցն ասեն.

«Մի՛ եւս մեղանչել նմա»:

Եւ կայր եւ սպասէր՝ մինչեւ եղեն զատինքն մեծ, եւ սկսաւ յուտել եւ ի պատառել, մինչեւ տեսաւ ի բազմաց՝ եւ սատակեցաւ:

(Մխիթար Գոշ. Առակ 2Թ.)

Բ ա ռ ա ր ա ն

ապաշխարեմ - ապաշխարել, կատարած մեղքի համար զոջալ
վասն այնորիկ - այն կամ այդ պատճառով, նրա՝ դրա համար
աւել անձն - ավել անել, ավել (հմմտ. աշխարհաբար ավելածու)

մեղանչեմ - այստեղ՝ նեղություն տալ
եւ - 1. էլ (առաջին դեպքում) 2. այլեւս (երկրորդ դեպքում)
կամ - 1. կանգնել 2. մնալ

Բ ա գ ա ս ր ո թ յ ո լ ն ն Ե ր

Գայլոյ ծերացեալ, շանցն ուրախացեալ - Գայլոյ, շանցն սերականով դրված ենթականեր են. պետք է ուղղականով թարգմանել - «գայլը ծերանալով», «շներն ուրախանալով»: ԵԱԼ-ով վերջացող դերբայածների կողքին սա գրեթե պարտադիր օրենք է:

Առ հօտն - Առ (նախդիր) + անձի հայցական (հօրն) = «մոտ» - «հոտի մոտ»: Այլ օրինակներ. դիմաց առ մայրն - «մոր մոտ դիմեց», եհաս առ արքայն - «արքայի մոտ հասավ»:

Յայլ եւս գայլոց - «Որիչ գայլերից էլ»:

Մի՛ եւս մեղանչել նմա - «Այլեւս նրան չմեղանչենք»: Դերանունների հոլովածներում -Մ-ն եւ -ՈՒՄ-ը եզակի տրականի նշան են. նՄա - «նրան», սՄին - «սրան», որՈՒՄ - «որին»:

Տեսաւ, սատակեցաւ - Կրավորական են - «տեսնվեց», «սատկեցվեց» կամ «սպանվեց»:

Ի բազմաց - «Շատերից, շատերի կողմից»:

ՎԱՐՇՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հետեւյալ նախադասություններում ընդգծված դերբայներն ու նրանց սնտականով ենթակաները հատուկ ուշադրությամբ թարգմանեցեք.

Եւ այնուհետեւ ժողովեալ ի դուռն արքայի իշխանաց եւ տերանց, ազատաց եւ ռամկաց, եպիսկոպոսաց եւ կրօնատրաց՝ եկին, զի ամենքեան օմ անողր փութապէս շինուածս եւ ձեռակերտս հաստատեցն... (...շտաս, փութաջանորեն շինություններ ու ձեռակերտներ հաստատեն՝ կառուցեն):

Իսկ Իսմայելեցոցն տեսեալ զայն՝ մեծաւ զարմացմամբ թողին անվնաս զգօրն իմ եւ զմացին...:

Գնացեալ սորա առ երանելի եպիսկոպոսն Սիւնեաց Մովսէս (Առ ՀՕՏՆ)՝ աշակերտի մնա...:

2. Հետեւյալ ձեւերը թարգմանեցեք.

ա) կազմեցաւ, գործեցաւ, կոչեցաւ, սերմանեցաւ, ընթերցաւ, գտաւ, հատաւ (կտրել), վճռեցաւ. (ՏԵՄԱԷ, ՍԱՏԱԿԵՅԱԻ)

բ) հայտնվեց (յայտնեմ), փնտրվեց (խնդրեմ), խրատվեց, թարգմանվեց (ՍԱՏԱԿԵՅԱԻ). զգվեց (արկանեմ), կտրվեց (հատանեմ), օծվեց (ՏԵՄԱԷ):

Կ ա ր ե ո թ ր . Գրաբարը կրավորականի համար -Վ- չունի:

4. Հետեւյալ արտահայտությունները զրաբար թարգմանեցեք.

հայրը ծերանալով, մայրն ուրախանալով, ընկերը կանչելով (Գ. դասի 2ա վարժության մեջ գտեք), հրամանատարը պաշտպանելով, շունը հռչակելով (յօշոտեմ): (ԳԱՅԼՈՅ ԾԵՐԱՅԵԱԼ)



Ե. դ ա ս

ՎՐՈՋԸ ՏԵՐՈՒՆԱԿԱՆՔ

Հայր մեր որ յերկինս [ես]. սուրբ եղիցի անուն քո: Եկեսցէ արքայութիւն քո. եղիցին կամք քո որպէս յերկինս՝ եւ յերկրի: ԶՀայր մեր Հանապազորդ տուր մեզ այսօր: Եւ թող մեզ զպարտիս մեր, որպէս եւ մեր թողումք մերոց պարտապանաց: Եւ մի՛ տանիր զմեզ ի փորձութիւն. այլ փրկեա՛ զմեզ ի չարէ: Զի քո է արքայութիւն եւ զօրութիւն եւ փառք յաւիտեանս. ամէն:

(Մատթ. Զ 10-13)

Կ ա ր ե ո թ . - «Կամք քո»-ից հետո դադար մի՛ տաք, կանգ մի՛ առնեք, այլ նախադասությունը մի շնչով մինչեւ վերջ արտասանեցեք:

Ք ա ռ ա ր ա ն

հանապազորդ - հանապազօրյա, ամենօրյա. մշտական
պարտիք - պարտք (փոխարեւական առումով)

թողում - 1. բողոնել 2. բողոքյուն տալ կամ շնորհել 3. շնորհել, զիջել

Ք ա գ ա ս ռ ո թ յ ու ն ն Ե

Յերկինս, յերկրի - Բ., Ի ԾՈՎՈՒՆ:

Եղիցի(ն), եկեսցէ - Նման ձեւերը (-ից, -սցես, -իցէ...) ապառնի են: Դրանք հեշտությամբ կարելի է ճանաչել. վերջավորությունների մեջ Յ (կամ Ջ) կա: Եղիցի, եկեսցէ - «բող լինի», «բող գա»: Նաեւ՝ զնացտ, զնայցէ - «բող զնա», զրիցէ - «բող գրի», տեսչիք - «բող տեսնեք» (բոլորը կարող էին նաեւ թարգմանվել՝ «կլինի, պիտի լինի, լինելու է», «կգա, պիտի գա, գալու է» եւ այլն):

Եղիցին կամք քո - Կան բառեր, որոնք գրաբարում միայն հոգնակի են գործածվում. դրանք աշխարհաբարին են անցել հենց -Ք-ով, որ գրաբարում հոգնակիի նշան է: Այդպիսիներից են՝ կամք, միտք, խօսք, աչք, խելք, տառապանք, փառք, կառք եւ այլն: Մրանց հետ, բնականաբար, բայերն էլ են հոգնակի գործածվում: Թարգմանելիս, ըստ նախադասության բովանդակության, նման ձեւերը կարող ենք հոգնակի կամ եզակի դնել: Օր.՝ Եղիցին կամք քո - «քո կամքը բող լինի». տայ ի ձեռս - «ձեռքն է տալիս», զձեռս ի վեր անբարձեալ - «ձեռքերը վեր բարձրացնելով»:

Որպէս յերկինս եւ յերկրի - Այստեղ պետք է թարգմանել՝ «ինչպես երկնքում, այնպես էլ երկրի վրա»:

ՎԱՐՈՒՅՈՒՆՆԵՐ


1. Հետեւյալ նախադասություններն աշխարհաբար թարգմանեցեք.

Մուգ՝ առ (առաւ)՝ կործանեցաւ երկիր, կործանեցան եւ՝ ապականեցան տիեզերք, սուգ՝ առին բարձուք երկրի: Վասն՝ այսորիկ նգովք կերիցեն գերկիր, զի մեղան (մեղանչել) բնակիչք նորա. վասն՝ այսորիկ տնանկք եղիցին բնակիչք նորա, եւ մնասցեն մարտք սակաւաարք: Եւ գալարեսցին երկիմք իբրեւ՝ զմագաղաք: Յայնժամ աչք կուրաց բացցին (բացվել) եւ՝ ալանջք խլից լուիցեն (լսել): Ի բերանոյ (բերանից) նորա բոխտ արդարութիւն, զօրէնս եւ զողորմութիւն ի լեզուի իւրում կրէ: Ճանապարհք նորա նանապարհք բարեաց, եւ՝ անճնայն շալիոք նորա խաղաղութեամբ: (ԵՄԻՅԻՆ ԿԱՄՔ ԶՈ)

2. Հետեւյալ ձեւերն աշխարհաբար թարգմանեցեք.

ա) ի բանէ (խոսք), ի տանէ, ի շանէ, յերկրէ, ի քաղաքէ, յաշխարհէ, ի ծովէ, ի գաղղուէ, յազգէ. (Ի ՉԱՐԷ)

բ) կոչեսցէ, կարգեսցէ, վազեսցէ, գործեսցէ, լիցի, բուսանիցի, ասասցէ, գգասցէ, բուսցին, սպանցէ, թողէ, թողուցուն, մտանիցէ, իջանիցեն: (ԵԿԵՍՏԷ, ԵՂԻՑԻ...)



Չ. դ ա ս

Ա Յ Չ Ի

Ի պարզել ոգւոցն՝ ասէր Հայրն ցերեսին որդիս իւր.

«Որդեա՛կք իմ, չունիմ այլ ինչ թողուլ ձեզ, բայց միայն՝ զՀիւզս զայս, եւ զայգին որ շուրջ՝ զնովաւ, եւ՝ անդ կայ գանձ ծածկեալ: Սկիզբն՝ արասջի՛ք վարելոյ զերկիրն եւ գտջիք՝ զգանձն:»

Յետ մահուան Հօրն, որդիք նորա փութացան յառաջ քան զամենայն խարխարել զայգին ողջոյն, այլ չգտին՝ անդ ոսկի կամ՝ արծաթ: Եւ զի չէր նոցա երբէք պատահալ յակօսս զայգին՝ որպէս՝ արարինն, ի նմին՝ ամի երեք՝ առատ ողկոյզս խաղողոյ:

Յայնժամ՝ ի միտ՝ առին՝ թէ՛ զի՛նչ Հայր իւրեանց տայր նոցա իմանալ զանձինն ծածկելով:

(Եղիշէն արք. Դուրյան)

= Գանձին բարձր «գանձիվրն» կարդացեք:

Բ ա ռ ա ր ա ն

պարզեմ զոգին - հոգին ավանդել, մեռնել

անդ - այնտեղ

սկիզբն առնեմ - սկսել. սկիզբն՝ արասջի՛ք - սկսեցե՛ք

երկիր - 1. երկիր 2. հող 3. գետին

խարխարել - բորբել

ողջոյն - այստեղ՝ ողջ, ամբողջ

այլ - վեցերորդ տողում՝ բայց

պատահեմ յակօսս - վարել (բառացի՝ «ակոսների պատահել»)

ի միտ առնում - հասկանալ. կռահել, գլխի ընկնել

Բ ա գ ա ս Ր ո յ յ ո Ւ Ն Ն Ե Ր

Ի պարզել ոգւոցն - Ի (նախդիր) + անորոշ դերբայի հայցական (պարզել) = «ժամանակ» - «հոգին ավանդելու ժամանակ», «հոգին ավանդելիս», «եքք հոգին ավանդում էր» (այս երրորդ ձեռով թարգմանելն ավելի հեշտ է լինում): Այս կառույցում ենթական, որպես կանոն, սեռականով է դրվում. ՅԸՄԲՈՆԵԼ ստացողին իրոյ (Ի) - «եքք իր տերը բռնում էր», ՅԸՆԹԱՆԱԼՆ Շահաբասայ (ԺՁ) - «Շահաբասը (= Շահաբասի) անցնելիս», «Շահաբասի անցնելու ժամանակ», «եքք Շահաբասն անցնում էր»:

Յերեսին որդիս - Յ (նախդիր) + հայցական (երեսին որդիս. հիշենք՝ Ս-ն հոգնակի հայցականի նշանն է) = տրական - «երեք որդիներից»: Յ նախդիրն ավելի հաճախ ասեմ, հարցանեմ, պատասխանի տամ եւ տամ բայերի կողքին

այսպիսի կիրառություն ունի - ասեմ ցնա, հարցանեմ ցնա, պատասխանի տամ ցնա, տամ ցնա (= նրան):

Շուրջ զնովաւ - Շուրջ (նախադրություն) + Ձ (նախդիր) + գործիական (նովաւ) = «շուրջը» - «նրա շուրջը». որ շուրջ զնովաւ - «որ նրա շուրջն [է]»: Ձ նախդիրն առանց շուրջ բառի էլ կարող է գործիականի հետ նույն իմաստն արտահայտել. զնովաւ - «նրա շուրջը»:

Գանձ ծածկեալ - «Ծածկված գանձ»: -ԵԱԼ-ով վերջացող դերբայը, երբ գոյականի վրա է դրվում (զանչ), «-ված» կամ «-ած» է թարգմանվում: Այսպես նաև՝ դրախտ կորուսեալ - «կորսված կամ կորած դրախտ»:

Չէր նոցա...պատահեալ յակօսս - «Նրանք ակոսների չէին պատահել՝ չէին վարել»:

Որպես արարինն - «Ինչպես որ արեցինն»:

Ի նմին ամի - «Նույն տարում», «նույն տարին»:

Երեք - «Բերեց», այստեղ՝ «տվեց»:

Տայր...իմանալ - «Իմացնում՝ հասկացնում էր»:

Գանձին ծածկելով - «Ծածկված գանձ» ասելով:

Վ Ա Ր Ժ ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն Ե Ր

1. Հետևյալ նախադասություններն աշխարհաբար թարգմանեցեք.

Որ (ով որ) բժշկեացն զիս, նա ասաց ցիս: Չոր լինչ (ինչ որ) ոչ զիտեին, հարցանեին ցիս: Պատասխանի տայր ցարքայն եւ՝ ասէր ցնա: (ԱՄԷՐ ... ՅԵՐԵՍԻՆ ՈՐԴԻՍ): Պատեցին շուրջ զեկեղեցեան: Բոլխեն եւ՝ աղբերք (= աղբիք) բարեխառնք շուրջ՝ զքաղաքան: Յայնժամ ամենայն մեծամեծքն (= մեծամեծացն) առաջի անկեալ (ընկնել) աղաչէին մի՛ եւս տալ պատերազմ (հմտ. Դ. դաս), այլ շուրջ զամրոցան՝ աւերել: Բնակեալ էին շուրջ՝ զնոքօք: (ՇՈՒՐՁ ԶՆՈՎԱԿ): Յետ նեղութեանն՝ արեգակն խաւարեսցի: Յետ շարաթուն կիսանդացաւ որդի տիկնոջ: (ՅԵՏ ՄԱՀՈՒԱՆ): Այսպէս ամենայն ծառ բարի պտուղ բարի առնէ (տալիս է): Ասաց ցիս զամենայն որ լինչ իմ գործեալ է: Թո ոչ է տեսեալ զիս: (ՉԷՐ ՆՈՅԱ...ՊԱՏԱՌԵԱԼ ՅԱԿՕՍՍ): Գործեա՛ (մշակել) զերկիր քո, զի այստե՛տե՛տ ոչ եւս զան նաւք ի Կարբեղոմայ (Կարբեղոմից):

Կ ա բ ե ո թ .- Նոքօք՝ նա դերանվան հոգնակի գործիականն է:

2. Հետևյալ արտահայտությունները գրաբար թարգմանեցեք.

ա) Ասում է նրան: Հարցրեց (եհարց) եղբորը: Տալիս է (տայ) հորը: Պատասխան է տալիս մորը: Կասեմ (Ա. դասից օգտվեցեք) նրան.

բ) գետի շուրջը, գործի շուրջը, տան շուրջը (տամք), մեր շուրջը (մեօք), ձեր շուրջը (ձեօք):

= Փորձեցեք յուրաքանչյուրի դիմաց 2-ական չեւ գրել:

Է. դ ա ս

ՈՒՊՏ ԵՒ ԳԱՐՄԱՆԻՉ ԻՌ

Զուղտ եհար դարմանիչ իւր. եւ յոյժ ցասուցեալ ասաց.

«Տե՛ս, մի՛ հարկանիցես զիս, յորժամ տրտում իցեմ, ապա թէ՛ ոչ՝ մեռանիս ի ձեռաց իմոց»:

Եհարց, թէ՛ «Զի՛նչ նշան իցէ տրտութեան քո՛ զի գիտացեալ ոչ հարից»:

Եւ ասէ. «Յորժամ տեսանես զներքին չրթունս իմ կախեալ եւ զոտս իմ զի ձայն ոչ ածէ, նշան տրտութեան է»:

Պատասխանեաց, թէ՛ «Յամենայն ժամ այդպէս է, որպէ՛ս գիտացից»:

(Միսիբար Գոչ, Առակ ԵԲ.)

Ք ա ո ա Ր ա ն

դարմանիչ - այստեղ՝ խնամող, պահող.
տեր
հարկանեմ - խփել

յորժամ - երբ
ներքին - այստեղ՝ ներքեի, ստորին
ձայն ածեմ - ձայն հանել

Ք ա գ ա Տ Ր Ո Ւ Բ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

Գրաբարում շարահյուսական-ոճական տարածված երեսույթ է. նախադասությունից նախադասություն կարող է ենթական փոխվել, բայց չհիշվել. մտքից, խոսքի շարունակությունից պետք է կտանել: Այս բնագրի առաջին տողից կարելի էր կարծել, թե ուղտին խփող տերն է բարկացել, մինչդեռ շարունակությունը ցույց է տալիս, որ բարկացողն ուղտն է: Ամբողջ բնագրում փոփոխվող ենթակաները (ուղտը, տերը, դարձյալ ուղտը, դարձյալ տերը) զեղչված են:

Եհար, եհարց - Երբ ի՞նչ արեց հարցին պատասխանող (անցյալ կատարյալ, Գ. դեմք, եզակի թիվ) բայածեր միավանկ է, նրա սկզբում մեծ մասամբ Ե կամ Է է ավելանում. բաղաձայնով սկսվող բայի վրա՝ Ե, ձայնավորով սկսվողի վրա՝ Է: Այսպես՝ հարկանեմ - հար - ե+հար (ի՞նչ արեց - խփեց), հարցանեմ - հարց - ե+հարց (հարցրեց), բերեմ - բեր - ե+բեր (Չ.), առնում - առ - է+առ (առավ), արկանեմ - արկ - է+արկ (զցեց) եւ այլն:

Մի՛ հարկանիցես - Երբ մի՛ ժխտական մասնիկն ապառնի բայածեի վրա է դրվում (հարկանիցես), սովորաբար Չ... (կամ թող Չ...) ենք բարգմանում - այստեղ՝ «չխփես»: Իսկ առհասարակ գրաբար բայի ժխտական մասնիկը ոչ-ն է: Հմմտ. ներքետեմ՝ ոչ հարից, ձայն ոչ ածել:

Իցեմ - Եմ բայի ապառնին է:

Մտանիս, տեսանես - Ներկա ժամանակի ձեեր են, բայց այստեղ ապառնիի իմաստով են գործածվել - «կմտնես», «տեսնես» (հմմտ. Ա., մեղիս):

Ի ձեռաց իմոց - Ինչպե՛ս է բարգմանվում (Ա. դասից հիշեցեր):

Եհարց, բէ. պատասխանեաց, բէ - Գրաբարում ուղղակի (չակերտյալ) խոսքից առաջ կարելի էր բէ (կամ սրան հոմանիչ եթէ) շաղկապները գործածել: Թարգմանելիս դրանք պետք է զեղչել եւ միջակետ [...] դնել ու չակերտները բաց անել:

Կախեալ - Այստեղ՝ «կախված»:

Պատասխանեաց - «Պատասխանեց»: Գրաբարը, սակայն, նախընտրում էր պատասխանի ետ հարադրությունն օգտագործել:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հետեյալ նախադասություններն աշխարհաբար բարգմանեցեր.

Յուցից ձեզ՝ ո՛ւմ մմամ է: Ոչ վնասեցից ընկերիս իմում: (ԳԻՏԱՏԻՑ, ՈՉ ՀԱՐԻՑ): Եւ հայեցեալ ետես զմեծատունսն: Էառ ի նոցանէ հազար քառասուն ուղտ: Եկաց (կանգնել) եւ ետես նա գորդին իւր: Չայն եբարձ (բարձրացնել) կին մի: Եւ ելեալ արտաքս՝ ելաց (լաց լինել) դառնապէս: Եւ զայս ասացեալ նորա (Դ., ԳԱԼՈՅ ԾԵՐԱՅԵԱԼ)՝ եցոյց նոցա զձեռսն եւ զոտս: Ով կրաց զաչս դորա (դրա), մեք ոչ զիտեմք: Եւ եմուս (մտնել) անդ ընդ նոսա (նրանց հետ): Եզեմ (բառն Ա. դասից հիշեցեր) հայր քո զեզմ: (ԵՀԱՐ, ԵՀԱՐՑ)

2. Հետեյալ հասովածն աշխարհաբար բարգմանեցեր.

*Մի՛ յապաղեր բարի առնել կարօտելոյ (կարոտյալ), յորժամ ձեռնհաս իցես (ի վիճակի լինել) օգնել նմա: Մի՛ ասիցես թէ «Ե՛րբ եւ եկեսջի՛ր, եւ վաղիտաց», զի կարող ես իցես բարի առնել. բանզի ոչ զիտես զինչ վաղիսն ծնանիցի քեզ: *Մի՛ նխքեր բարեկամի քում չարիս՝ որ յեցեալ (ապավինած) եւ յուսացեալ իցէ ի քեզ: Մի՛ եղիցի անդ՝ առեմ, եւ մի ի զազանաց չարաց ընդ՝ այն մի՛ անցանիցէ: *Մի՛ քչնամասեր լինիր մարդոյ ի տարապարտուց զի մի՛ չար ինչ գործիցէ քեզ: (ՄԻ՛ ՀԱՐԿԱՆԻՑԵՍ): *Մի՛ ստամար նախատինս յարանց չարաց, եւ մի՛ նախանձիր ընդ ճանապարհս (ճանապարհներին, վարքին) նոցա:

(Առակը Գ 27-31)

= Վաղիսն - «վաղիկըն» կարդացեր:

3. Գրաբար բարգմանեցեր.

հասավ, հանեց, սպանեց, ստեղծեց, մտավ (ԵՀԱՐ...), առավ, ածեց = փրեց, օժեց, անցավ:

Բ. դ ա ս

ՕՐՏՆՈՒԹԻՒՆ ԱՊԱՍՏՈՍԱՐՈՒԹԵԱՆ

Մով կենցաղոյս Հանապազ զիս ալեկոծէ: Մրրկեալ ալիք թշնամին ինձ յարուցանէ: Նաւապե՛տ բարի, լե՛ր՛ անձին իմոյ ապաւէն:

Մերձ եմ յընկղմիլ, օգնեա՛ ինձ, նաւապե՛տ բարի, քանզի ծանրացան ի վերայ իմ բեռինք մեղաց: Աստուա՛ճ, յօգնել ինձ փութա, քանզի խորք չարեաց ընկղմեն զիս յանդունդս, այլ դու, նաւապե՛տ, լե՛ր՛ եւ ինձ ձեռնտու: Փրկեա՛ ի փտանդէ՛ զնաւաբեկս ի յայեաց ծովէ. քանզի կորնչիմ ի մեղաց անօրէնութեան իմոյ:

(Մեսրոպ Մաշտոց)

= Մրրկեալ - «մրրորկյալ» կարդացեր:

Բ ա ո ա Ր ա ն

կենցաղ - կյանք. կենցաղոյս - ԱՅՍ կյանքի
հանապազ - միշտ. շարունակ
խորք - այստեղ՝ խորութիւն, վիհ

ձեռնտու լինիմ - ձեռք մեկնել՝ երկարել,
օգնել
կորնչիմ - կորչել

Բ ա գ ա Տ Ր Ո Ւ Ք Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

Մերձ եմ յընկղմիլ - Մերձ (նախադրություն) + Յ = Ի (նախդիր) + հայցական (ընկղմիլ) - «ընկղմվելու մոտ եմ»: Մերձ-ը կարող է կամ Ի-ի, կամ Ան-ի ու հայցականի հետ գործածվել. մերձ ի տուն կամ մերձ առ տուն - «տան մոտ» (հմմտ. աշխարհարարում գործածական մերձիմաս բառը):

Լե՛ր - «Եղի՛ր» (լինիմ բայի հրամայականն է): Լե՛ր...ձեռնտու - «ձեռնտու՛՛ օգնական եղիր, ձեռք մեկնիր, օգնիր»:

Յօգնել - Ի (Յ) նախդիր + հայցական (օգնել) = տրական - «օգնելու» (հմմտ. Գ., Ի ՍԵԱԲ):

ՎԱՐՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հետևյալ կազմություններն աշխարհաբար քարգմանեցեր.

ա) յաիէ, ի Տեառնէ, ի մօրէ, ի ճառագայթէ, ի ծովէ, ի գանձուէ, ի դստերէ, յաւարէ, յաւազակէ, յամենայնէ. (Ի ՎՏԱՆԳԷ)

բ) ի մտաց, ի քաղաքաց, ի հեռաւորաց, ի ճառագայթից, ի ծովուց, ի դստերց, յաւազակաց, յաշխարհաց, ի գործոց. (Ի ՄԵՂԱՅ. ՅԱԼԵԱՅ)

գ) ի բակել, ի տանել, ի խնդրել, ի տեսանել, յիջանել, յաւաքել, յօժանել, յսծել: (ՅՕԳՆԵԼ)

2. Հետևյալ կազմությունները գրաբար քարգմանեցեր.

ա) զնելու, ժողովելու, ասելու, գանելու (գտանել), ընթանալու, բանալու, գործելու. (ՅՕԳՆԵԼ)

բ) խրատից, գանձից, սրտից, հարկից, երկրից, աշխարհից, ելբորից, Հորից: (Ի ՎՏԱՆԳԷ)



Թ. դ ա ս

ԾԵՐ ՈՄՆ ԵՒ ՄԱՀ

Ի միում աւուրց ծեր ոմն հատեալ փայտ յանտառէ եւ բարձեալ յուս իւր բերէր ի տուն, այլ պարտասեալ զճանապարհայն՝ հարկեցաւ զնել յերկիր զբեռն իւր, եւ սկսաւ յօգնութիւն կարդալ զՄահ: Եւ ահա յանդիման եկն ել երեւցաւ Մահ, եւ եհարց ցնա՝ եթէ առ ինչ կոչէր զնա: Յայնժամ զահի հարեալ՝ պատասխանի ետ նմա (= ցնա) ծերն եւ ասէ.

«Զի տացես (= տայցես) յուս զբեռն իմ»:

Յուցանէ առակս զի * ամենայն մարդ սիրէ զկեանս, թէպէտ հէք իցէ եւ թշուառ:

(Եղիշէ արք. Դուրյան)

Բ ա ո ա Ր ա ն

հատանեմ - կտրել, հատեալ - կտրելով (կտրած)
բառնամ - այստեղ՝ բարձել, բարձեալ - պարտասիմ - հոգնել
զճանապարհայն - ճանապարհին
հարկիմ - հարկադրվել, հարկադրված լինել
երկիր - այստեղ՝ գետին

կարդամ - կանչել, (կանչելով) դիմել (ընթերցում - կարդալ)
յանդիման - դիմացք, առաջը
եթէ - 1. եթէ 2. թե. որ
առ ի՞նչ - ինչո՞ւ, ինչի՞ համար
զահի հարկանիմ - սարսափել, զարհուրել

Բ ա ց ա Տ Ր Ո Ւ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

Ծեր ոմն - «Մի ծերունի»: Անորոշ մի-ի գաղափարն արտահայտելու համար գրաբարում ա մ ճ ց ո յ յ ց տ վ ո ղ բառերից հետո դրվում է ոմն, որ չի շեշտվում (բահանա՛յ ոմն - «մի բահանա», տանուտէ՛ր ոմն - «մի տանուտեր», այգեգո՛րծ ոմն - «մի այգեգործ» եւ այլն), ի ր ց ո յ յ ց տ վ ո ղ բառերից հետո՝ ինչ, որ դարձյալ չի շեշտվում (գո՛րծ ինչ - «մի գործ», քո՛ւղք ինչ - «մի նամակ», գործո՛վ իւր - «մի գործով, ինչ-որ գործով»), իսկ շ ա Ր ժ մ ա ն ո յ ղ ղ Ո Ւ Յ Ո Ւ Ն ց ո յ յ ց տ վ ո ղ բառերից հետո՝ ուրեք (ի քաղաք ուրեք - «ղեպի մի քաղաք», ի գիւղ ուրեք - «ղեպի մի գյուղ» եւ այլն): Սակայն բոլոր դեպքերում կարող է նաեւ մի-ն գործածվել (ծեր մի, գործ մի, ի քաղաք մի):

Ի տուն - Ի (նախդիր) + հայցական (յումն) = շարժման ուղղություն, որ կարելի է ղեպի բառի օգնությամբ բարգմանել, բայց նախընտրելի է դրա դիմաց

աշխարհաբարի պարզ հայցականը դնել, առանց կապի - «յումն (= ղեպի տուն)»: Երբայր ի քաղաք ուրեք - «մի քաղաք էր գնում», արագ հասուցանելով ի բանակն իւր (Գ.) - «արագ հասցնելով իր բանակը» եւ այլն: Նույն կիրառությունն է նաեւ յերկիր - «գետին»:

Սկն ել երեւցաւ - «Եկաւ, ելավ, երեւաց»: Հոմանիչ արտահայտություններ են: Գրաբարը նման համատեղ գործածություններ սիրում է:

Սկսը ցնա, պատասխանի ետ ցնա - Ինչպե՞ս են բարգմանվում (հմտ. Ձ., ԱՄԷ...ՅԵՐԵՍԻՆ ՈՐԴԻՍ):

Երէ առ ի՞նչ կոչէր զնա - Այստեղ զնա զինքն դերանվան իմաստով է օգտագործված - «Ինչո՞ւ էր կանչում իրեն» (ոչ թե «նրան»): Գրաբարում նա եւ ինքն դերանուններն իրենց կիրառությամբ այնպես սահմանազատված չէին, ինչպես արեւելահայ աշխարհաբարում:

Յուցանէ առակս - «ԱՅՍ առակը ցույց է տալիս»: Յուցանէ առակս արտահայտությունը հայ առակագրությունից որպես թեավոր խոսք անցել է ընդհանուր լեզվին: Ասում են՝ Առակս զի՞նչ ցուցանե, այսինքն՝ «Ի՞նչ ես ուզում ասել»:

ՎԱՐՃՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հետեւյալ նախադասություններն աշխարհաբար բարգմանեցեք.

ա) Նման է մանկտոյ (մանուկներին), որ մտիցին (մտում են) ի իրապարկս, եւ կարդայցեն զընկերս իւրեանց: Եկն առ մեզ նամակ յանտառէ: *Ոչ օգնեսցեն զանձք անօրինաց, այլ արդարութիւն փրկէ ի մահուանէ: Թաժանեսցի (բաժանվել) հայր յորդոյ, եւ որդի՝ ի հօրէ, մայր՝ ի դստերէ, եւ դուստր՝ ի մօրէ, սկեսուր՝ ի հարսնէ, եւ հարսն՝ ի սկեսրէ իրմէ: * Ամենայն յարիք մտանեն ի միտս (ի ՏՈՒՆ) մարդոյ յանուսումնութենէ: (ՅԱՆՏԱՌԷ): * Բրդեա՛ քաղցելոց՝ զհաց քո, եւ զաղբատն անյարկս տա՛ր ի տուն քո:

բ) Եւ գնաց ի նմանէ ի տուն հօր իւրոյ: Եւ Թեոդոս Խոռխոռունի անկեալ ի բերդն ամբանայր: Եւ փութայ երթալ հասանել յերկիրն Հայոց, ի վերայ Արայի: Հրամայէ հանել զնոսա ի նաւ եւ արսորել ի կղզիս հեռաւորս: Մեծաւ պատուով անաքէ զնա յիւր աշխարհն: Իսկ Վահանայ ատեալ զգօրսն, իչուցանէ զնոսա ի ձորն: (Ի ՏՈՒՆ): * «Սահմանք քաջաց, ասէ, զէնն իւրեանց, որքան հատանէ՛ այնքան ունի»: Յայնժամ կարդացես, եւ Աստուած լուիցէ (յետ) քեզ:

2. Հետեւյալ արտահայտությունները գրաբար բարգմանեցեք.

ա) իջնում էր, կտրում էր, հարցնում էր (հարցանել), պատասխանում էր, ասում էր, սիրում էր: (ԲԵՐԷՐ, ԿՈՉԷՐ)

բ) (ղեպի) բանակը, (ղեպի) քաղաք, (ղեպի) քաղաքները, (ղեպի) աշխարհը, (ղեպի) այգիները, (ղեպի) արքունիք: (Ի ՏՈՒՆ)

Ը. դ ա ս

ԹՁԵՆԻՆ ԱՆՊՏՈՒՂ

ԹՁԵՆԻ մի էր ուրումն տնկեալ յայգւոջ իւրում, եւ եկն խնդրել պտուղ ի նմանէ եւ ոչ եզիտ: Ասէ ջայգեզործն.

«Ահա երեք ամբ են՝ յորմէ Հետէ զամ խնդրել պտուղ ի թզեն-ւոջդ՝ եւ ոչ զտանեմ. արդ կտրեա՞ղզա, ընդէ՞ր եւ զերկիրդ խա-փանէ»:

Նա պատասխանի ետ եւ ասէ.

«Տէ՛ր, թո՞ղ զզա այս ամ եւս, մինչեւ շուրջ զզովաւ բրեցից եւ արկից աղբ. թերեւս արասցէ պտուղ. ապա թէ ոչ՝ յամէ եւս Հատցես զզա»:

(Ղուկ. ԺԳ 6-9)

Բ ա ռ ա ր ա ն

խնդրեմ - 1. փնտրել 2. խնդրել. պահանջել
ամ - տարի
յորմէ հետէ - որից հետո, այստեղ՝ ինչ
ընդէ՞ր - ինչո՞ւ, ինչի՞ համար

խափանեմ - այստեղ՝ իզուր զբաղեցնել, խանգարել
բրեմ - փորել
արկանեմ - գցել, այստեղ՝ փռել, ցանել
առնեմ - անել. առնեմ պտուղ - պտուղ տալ, պտղաբերել

Բ ա գ ա ս Ր ո յ յ ո Ն Ն Ե Ր

Էր ուրումն տնկեալ - Ուրումն-ը ոմն-ի սեռականն է, որ տնկեալ էր-ի կողքին իբրեւ ենթակա է դրվել (հմմտ. Դ., ԳԱՅԼՈՅ ԾԵՐԱՅԵԱԼ, Ձ., ՉԷՐ ՆՈՅԱ ... ՊԱՏԱՌԵԱԼ): Նախադասությունն այսպես է քարգմանվում՝ «Մեկը տնկել էր»:

Ի բզենւոջը - Նույն կազմությունն է, ինչ որ յայգւոջ իւրում-ը, բայց «այդ բզենու վրա» է քարգմանվում: Այսպես «ներգոյականը» հաճախ է հարկ լինում ոչ թե «մեջ, -ում» քարգմանել, այլ «վրա». Ի լերին - «լեռան վրա», Ի տախտին - «քախտի վրա» եւ այլն (հմմտ. Ե., որպէս յերկինս եւ ՅԵՐԿՐԻ):

Ի բզենւոջը, զերկիրդ - Դ հողը երկու դեպքում էլ ԱՅԳ-ին է փոխարինում (ուրեմն ց ու ց ա կ ա մ հ ո ղ է) - «ԱՅԳ բզենու վրա», «ԱՅԳ հողը»: Հմմտ. Ը., ԿԵՆՏԱՂՈՅԱ, Թ., ԱՌԱԿԱ, ուր Ս-ն նույնպէս ցուցական հող էր, եւ բառածներն «ԱՅՍ կյանքի», «ԱՅՍ առակը» քարգմանվեցին:

...եւ ոչ զտանեմ - Այստեղ եւ-ը, ինչպէս հաճախ է պատահում, «բայց, սակայն» (այլ դեպքերում՝ «խսկ») իմաստով է գործածվել - «բայց՝ սակայն չեմ գտնում»: Եւ-ն այսպես պետք է քարգմանել, երբ նախադասության մասերի մտքերը հ ա կ ա - դ ի թ են: Օր.՝ երբայ, եւ ոչ հասանել, երկնել, եւ ոչ ծնանել (Նարեկացի) - «զնալ, բայց չհասնել, երկնել, բայց չծնել»:

Իրկից, արկից - Ինչպե՞ս պետք է քարգմանել: Արասցէ պտուղ - Առնեմ բայն առանձին «անել» է նշանակում, սակայն պտուղ բառի հետ նոր (հարադրական) բայ կազմելիս ուրիշ իմաստ է արտահայտում՝ «պտուղ տ ա լ պտղաբերել» (հմմտ. Ձ., սկիզբն առնեմ «սկսել»): Այդ նույն ձևով ածեմ (բերել) բայն է աւել ածեմ (Դ., «ավել ա ն ե լ, ավիել»), ձայն ածեմ (Է., «ձայն հ ա ն ե լ») հարադրական կազմություններում նոր իմաստներ ձեռք բերել: Այդպես նաե՛ր հարկանեմ (խփել) - զահի հարկանիմ (Թ. - սարսափել, զարհուրել), լինիմ (լինել) - նախատ լինիմ - (ԺԱ. - նախատվել):

ՎԱՐՃՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հետևյալ ձևերն աշխարհաբար քարգմանեցեր.

ա) գտից	գտցես	գտցե
հանից	հանցես	հանցե
բերից	բերցես	բերցե
մտից	մտցես	մտցե
բողից	բողցես	բողցե
կազմեցից	կազմեսցես	կազմեսցե
գործեցից (անել)	գործեսցես	գործեսցե
խնդրեցից	խնդրեսցես	խնդրեսցե
կարդացից	կարդասցես	կարդասցե
զգացից	զգասցես	զգասցե
(ԲԵՐԵՅԻՑ, ԱՐԿԻՑ) (ՀԱՏՅԵՍ)		(ԱՐԱՍՏԷ պտուղ)

բ) կազնեա՛, գործեա՛, գրեա՛, շարժեա՛, համարեա՛, կոչեա՛, խնդրեա՛ (ԿՑՐԵԱ՛). հա՛ն, հա՛տ, մո՛տ, արզե՛լ, ար՛կ, ա՛ծ (ԹՈՂ):

2. Հետևյալ հատվածն աշխարհաբար քարգմանեցեր.

Յորժամ դարձցիս եւ յոզոց հանցես (= յոզոց հանցես), յայնժամ կեցցես (ապրել), եւ զիտասցես թէ ուր իցես. զի յուսացեալ էիր դու ի սնոտիսն (սնտի՛ դատարկ բաների վրա էիր հույսդ դրել), սնոտի եղել եւ զօրաբխն ձեր. եւ ոչ կամէիք լսել. այլ ասէիք, «Երիվարօք մերովք փախիցուք (կփախէնք)». վասն՝ այսորիկ փախտականք լինիցիք. եւ ասէիք, «Երազ երիվարօք մերովք փախիցուք». վասն՝ այսորիկ երազագոյնք (պփելի...) քան՝ զձեզ ելիցիք որ (ովքեր որ) հալածենն՝ զձեզ: Ձի ի միջոէ (մեկ) բարբառոյ հազարք փախիցեն, եւ ի բարբառոյ հնգից բազումք փախիցեն. մինչեւ մնասցիք իբրիս՝ զձոյ ցցեալ ի վերայ լերին, եւ իբրեւ՝ զկոթոյ կանգնեցեալ ի վերայ յլոյ):

(Եւ. Լ 15-17)

3. Հետեւյալ նախադասութիւններն աշխարհաբար թարգմանեցեք.

Եւ վաղվաղակի սրբեցաւ (հսկույն մաքրվեց) ի նմանէ բորոտութիւնն: Եւ գոլին զվէմն թաւալեցուցեալ (զլորված) ի գերեզմանէ: Ոչ էմք էրբէր դադարեալ ի թարգմանութենէ: * Ի հաւատոյ եւ յուսմանէ տգէտք երեւին, եւ ի գործս՝ ծոյր: Յեպիսկոպոսէն եւ յեկեղեցոյն մեծապէս մեծաբեալ լինէր: Առաքեաց ծառայ ոմն, զի ի պտղոյ այգոյն տացեն նմա (= ցնա): Եւ զկնի (հետո) հնգից ամաց յորմէ հետէ սկսաւ շինել՝ պայծառացեալ բարձրացաւ շինութիւն բաղարին: Ձի՞ աշխատ անէք (ինչո՞ւ եք չարչարում՝ նեղացնում) զկինո՞: Ո՞վ ետ քեզ զիշխանութիւնո՞: (Ի ԹՁԵՆԻՈՋԴ): * Ի վերայ այսր ամենայնի ոչ դարձաւ բարկութիւն նորա, այլ տակաւին ձեռն իւր բարձրացեալ է: * Երանի (երանի նրանց) որոց ոչ իցէ տեսեալ եւ հաւատասցեն: (ԷՐ ՈՒՐՈՒՄՆ ՏՆԿԵԱԼ)

4. Հետեւյալ բայերի գրաբար համապատասխան ձեւերը գրեցեք.

ա) սիրի՛ր, վազի՛ր, կարգի՛ր, հրամայի՛ր, նորոգի՛ր, փնտրի՛ր, արձակի՛ր, պատրաստի՛ր, պահի՛ր, պահպանի՛ր, ողորմի՛ր: (ԿՏԵԱ)

5. Հետեւյալ նախադասութիւններից եզակի բացառականով դրված բառերը դուրս գրեցեք.

Չիք մեր թագավոր բաց ի Կայսերէ: Ելցեն վաղվաղակի ի տեղուջէ իւրեանց: Էած անտի կին ի կայսերական տոհմէն: Ելեալ լրտեսցին զերկիրն յանապատէն Սիմայ: Յամենայն հողմոյ շարժի, եւ յամենայն բանէ խռովի...: Ժողովեաց զԱսորիսն յայնմ կողմանէ գետոյն: Հանի զքեզ յերկրէն Եգիպտացոց, ի տանէ ծառայութեան:

= Նախադասութիւնները բանավոր թարգմանեցեք:

6. Հետեւյալ ձեւերից եզակի բացառական կազմեցեք: Բանավոր թարգմանեցեք.

նետ, անգեղ, շուն, կողման, ուխտ, մօր, ատուր, որոգայթ, անուն, տուն:



ԺԱ. դ ա ս

ԽԱՂԱՅՈՐԴ ԵՒ ՄՈՐԹԷՂՈՐԾ

Սաղախորդ ոմն Հանց ընդ դուռն մորթէգործի, եւ սկսաւ այպանել եւ յարահոտ զնա կոչել: Եւ նորա ելեալ թշնամանէր ասելով.

«Եթէ յակեգործաց եւ կամ յայլոց եւս նախատ լինէի՝ ի դէպ էր. դու ժահահոտ քան զիս, զիս՞ որ Համարձակիս»:

(Մխիթար Գոշ, Առակ ԾԿԹ.)

= Այս դասից սկսած՝ արդեն ինքներդ կապակցութիւններն իրար հետ կամ ստանձին կարդալու (արտասանելու) խնդիրները լուծեցեք:

Թ ա ռ ա ս

խաղախորդ - կաշեգործ, մորթեգործ
այպանեմ - ամորանք տալ, ամորահարել
թշնամանեմ - այստեղ՝ հանդիմանել,
նախատել

նախատ լինիմ - նախատվել
ի դէպ է - հարմար է, պատշաճ է. տեղին է
ժահահոտ - զարշահոտ, ժանտահոտ
գիս՞ որ - 1. ինչո՞ւ 2. ինչպե՞ս

Թ ա գ ա ս ռ ու թ յ ու ն ն ր

խաղախորդ ոմն - Ինչպե՞ս պետք է թարգմանել (իմմտ. Թ., ԾԵՐ ՈՄՆ):
Թնդ դուռն - «Դռնից, դռնով»: Նախորի կիրառությունը հմմտ. Գ., ԸՆԴ ԳԵՏՆ:
Նորա ելեալ - Ինչպե՞ս պետք է թարգմանել:
Նախատ լինէի, ի դէպ էր - Անցյալ անկատար ժամանակով են դրված. սպասելի էր «նախատվում էի», «հարմար՝ պատշաճ էր» թարգմանել, սակայն այստեղ պետք է անցյալ ապառնիով՝ «նախատվեի», «հարմար՝ պատշաճ կլինեք» թարգմանել (իմմտ. Է., ՄԵՈՒՆԻՍ, ՏԵՍԱՆԵՍ):
Ժահահոտ քան զիս - Ժահահոտ ածականի բ ա դ դ ա տ ա կ ա ն աստիճանն է կազմում - «(դու) ավելի ժահահոտ՝ զարշահոտ [ես], քան ես»: Այս կազմության մասին ավելի մանրամասն տես ժԴ., ՅԱՆԴԳՆԱԳՈՅՆԸ:

ՎԱՐՇՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հետեւյալ նախադասութիւններն աշխարհաբար թարգմանեցեք.

Եկն առ մեզ նամակ յանտառէ, յեղանց, յեղջերուաց եւ ի բոլոր գազանաց: Ելաք (ելանք) ի դրախտէն: * Ոչ է բարոք առնուլ զհաց ի մանկանց եւ արկանել շանց: * Փրկեաց զանձն իմ ի մահուանէ, զաչս իմ յարտասուաց, եւ գոտս իմ ի գայթակհութենէ: * Այսօր տեսանի (տեսնվում է, երեւում է) թափուր, դատարկ ի բնակչաց, մերկ ի զարդուց, փոշուով եւ սարդոստայնի պեալ եւ ի ծնողաց եւ յեղբարց եւ յազգականաց եւ ի բարեկամաց զրկեալ:

Եւ մարտն **յերկօցունց կողմանց** մնայր անպարտելի: Եւ եթէ դիմեսցես
յերկիրն **Քաղդէացոց**, սակայն եւ այն աւերեալ է **յԱսորեստանեայց**
(ասորեստանցի): (ՅՈՍԿԵԳՈՐԾԱՅ, ՅԱՅԼՈՅ): Մերկացայ զպատմունան իմ,
զիա՞րոյ ազանիցիմ զնա. լուացի գոտս իմ, զիա՞րոյ աղտեղացուցից զնոսա:
Խնդրեցի զնա՝ եւ ոչ գտի. կոչեցի՝ եւ ոչ ետ ինձ ձայն:

2. Հետեւյալ նախադասութիւններից հոգնակի բացառականով դրված բառերը դուրս գրեցեք: Նախդիրն ու վերջավորությունն ընդգծեցեք.

Յամենայն հողմոյ շարժի, եւ յամենայն բանէ խռովի, եւ յամենայն իրաց դողայ: Ապրեցո՛ (ազատի՛ր) զմեզ ի ձեռաց թշնամեաց մերոց: * Կոյր զրկի ի ճառագայթից արեգական, եւ տգիտութիւն (տգետը) զրկի ի կատարեալ կենաց: * Չզոյ՜ջ լերուք յամենայն անիրատւեանց: Անձամբ իւրով (անձամբ ինքը) վրժ՜ առնոյր յոսոյսաց իւրոց: Եւ ցամաքեսցին ձկուրք մոցա ի ջուրցն պակասութենէ, եւ մեռցին ի ծարաւոյ:

Ն մ ու շ՝ ի գործեալ մեղաց:

= Նախադասությունները բանավոր քարգմանեցեք:

3. Հետեւյալ ձեւերից հոգնակի բացառական կազմեցեք: Բանավոր քարգմանեցեք.

ջուրց, Հելլենացոց, ատուրց, կանանց, ճանապարհաց, իշխանաց, անձանց, ծովուց, հօրեղբարց, տեղեաց, ոմանց, կարծեաց, որսոց, երէից (երե, որսի կենդանի):



ԺԲ. դ ա ս

ՇԻՂ ԵՒ ԳԵՐԱՆ ՅԱԿԱՆ

Ձի՞ տեսանես զշիղ յական եղբոր քո, եւ ի քում ական զգերանդ ոչ կշմարես: Կամ զիա՞րոյ կարես ասել ցեղբայր քո. «Եղբա՛յր, թո՛ղ հանից զշիղդ յականէ քումմէ», եւ դու ի քում ական զգերանդ ոչ տեսանես. կեղծաւո՛ր, հա՛ն նախ զգերանդ յականէ քումմէ, եւ ապա հայեսցի՛ր հանել զշիղ յականէ եղբոր քո: Ձի * ոչ է ծառ բարի որ առնէ պտուղ չար, եւ ոչ դարձեալ ծառ չար՝ որ առնէ պտուղ բարի: Ձի * իւրաքանչիւր ծառ ի պտուղ իւրմէ ճանաչի, զի * ոչ եթէ ի փշոց քաղեն թուղ, եւ ոչ ի մորենուոյ կթեն խաղող: * Մարդ բարի ի բարի գանձուց սրտի իւրոյ բղխէ զբարի, եւ մարդ չար ի չարէն բղխէ չար. քանզի * ի յակուածոյ սրտին խօսի բերան նորա:

(Դուկ. Ձ 41-45)

Բ ա ո ա ր ա ն

շիղ - շիղ
զի՞ - ինչո՞ւ
կարես - կարողանալ, կարող լինել
կրեմ - քաղել (հմտ. այգեկութ = այգեբաղ)

հայիմ - նայել
բղխեն - այստեղ՝ բխցնել
յակուած - ավելացած, ավելցուկ

Բ ա գ ա ր ո յ ո յ ո յ ն Ե ր

Ոգիրանդ, զշիղ - Այս ձեւերն ինչպե՞ս պետք է քարգմանել:
Ի քում ական - Ինչպե՞ս պետք է քարգմանել:
Իսկ ցեղբայր քո - Ինչպե՞ս պետք է քարգմանել:
Հայեսցի՛ր - Հմտ. Ձ., ՄԿԻԶԲՆ ԱՐԱՄԶԻԲ:
Մանաչի - «Ճանաչվում է»: Գրաբար շատ բայածեւերում (ներկայի, ապառնիի) վերջավորութեան Ե-ն (կամ Է-ն) Ի-ով փոխարինելով կրավորականն ենք ստանում. **ճանաչեմ** «ճանաչում եմ» - **ճանաչիմ** «ճանաչվում եմ», **ճանաչէ** «ճանաչում է» - **ճանաչի** «ճանաչվում է», **գտանէ** «գտնում է» - **գտանի** «գտնվում է», **տեսանիցես**, **տեսցես** «կտեսնես, պիտի տեսնես» - **տեսանիցիս**, **տեսցիս** «կտեսնվես, պիտի տեսնվես» եւ այլն:
...եւ ոչ ի մորենուոյ կրեն խաղող - «Ոչ էլ մորենուց խաղող են քաղում»: Եւ-ը երբեմն պահանջվում է «էլ» քարգմանել:

ՎԱՐՃՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հետեւյալ հատվածն աշխարհաբար քարգմանեցեք.
Ձի ոչ են խորհուրդք իմ իբրեւ զխորհուրդս ձեր, եւ ոչ ճանապարհք (վարք, կյանքի ընթացք) իմ իբրեւ զճանապարհս ձեր՝ ասէ Տէր: Այլ որպէս **հեռի են**

երկինք յերկր, այնպես հեռի են ճանապարհը իմ ի ճանապարհաց ձերոց, եւ խորհուրդը իմ ի խորհրդոց ձերոց: Չոր օրինակ եթէ իջանիցէ անձրեւ կամ ձիւն յերկնից, եւ անդրէն ոչ դառնայ՝ մինչեւ արքուստէ (խմեցնել, ոռոգել-հագեցնել) զերկիր, ծնցի եւ բոխեսցէ, եւ տացէ սերմն սերմանողի եւ հաց ի կերակուր,- այնպես եղիցի բանն իմ որ ելանէ ի բերանոյ իմմէ. մի՛ դարձցի (Ե. ՄԻ՝ ՀԱՐԿԱՆԻՑԵՍ) դատարկ՝ մինչեւ կատարեսցէ զոր ինչ կամիցիմ. եւ դիւրեցից (հարթ դարձնել, հարթել. հեշտացնել) զճանապարհս քո, եւ զճանապարհս իմ պահեսցես: Չի ուրախութեամբ ելջիք, եւ ցնծութեամբ ուսանիջիք. զի լերինք եւ բլուրք կայտռեսցեն ընդունել զձեզ ուրախութեամբ, եւ ամենայն ծառք ծափս հարցեն ռատովք իրեանց:

(Ես. ԾԵ 8-12)

2. Բնագրից եւ թիվ 1 վարժությունից առանձին սյունակների տակ եզակի եւ հոգնակի բացառականները դուրս գրեցեք: Նախդիրն ու վերջավորություններն ընդգծեցեք: Յուրաքանչյուր ձեռք բանավոր քարզմանեցեք:

Ն մ ու շ՝

Եզակի բաց.	Հոգն. բաց.
յանտառէ	ի գործոց

3. Հետեւյալ մախադասությունները գրաբար քարզմանեցեք.

² ¹ ³ ⁵ ⁴
Մենյակ մտավ, որպեսզի զիրքը տա (տացէ):

² ³ ¹
Քարը ծովն ընկավ (անկաւ):

³ ² ¹
Շնից շատ է վախենում (երկնչի):

³ ² ¹
Քո մորն ասացիր (ասացեր):

³ ² ⁵ ⁴ ¹
Իր զուխը տան պատուհանից հանեց:

³ ² ¹
Թռչունների (թռչոց) ձագերն բռնեց (Ա. դաս):

² ¹ ² ¹ ² ¹
Այգի մտավ, պտուղներ քաղեց. տունն բերեց:

Կ ա ր ե ո թ . - 1) Բայերի մեջ այնտեղ, ուր աշխարհաբարը -ԵՅ ունի, գրաբարը սովորաբար -ԵԱՅ ունի:

2) **Գիրքը, զուխը, ձագեր, պտուղներ** հայցական հոլով են, **քարը՝** ուղղական:

- 3) Գրաբար մախադասություններում բառերը նշված բվերի հաջորդականությամբ պետք է դրված լինեն:
- 4) Աշխատանքը հեշտ (եւ ճիշտ) կատարելու համար մախ յուրաքանչյուր բառի, ձեռք գրաբարը գտեք, հետո դրանք համապատասխան դասավորությամբ ի մի բերեք:

4. Ճանաչել-ճանաչի-ի նմանողությամբ բնագրի հետեւյալ բայերի կրա-կարականները կազմեցեք (յուրաքանչյուր չեւր բանավոր քարզմանեցեք).
տեսանես, ոչ նշմարես, առնէ, քաղեմ, կրեմ, բոխէ:



ՃԳ. դ ա ս

ԳԱՅԼ ԵՒ ԿՈՌՆԱՆ

Մխեալ կայր ոսկր ի կոկորդ գայլոյ՝ որ վարձս խոտացաւ կռնկան, եթէ Հանիցէ զոսկրն յորկորոյն: Երկայնաձիգ ուլամբն յաջողեաց կռնկան խել զայն ի բաց, եւ խնդրեաց ի նմանէ զպայմանեալ վարձսն: Նախ ծիծաղեցաւ գայլն, ապա կրճեալ զատամունս իւր ասէ.

«Շատ եւս Համարեսջի՛ր քեզ վարձ զի ողջանդամ գերծուցեր յորկորոյ եւ յատամանց գայլոյ զգլուխ քո եւ առանց իրիք վնասու»: (Եղիշէ արք. Դուրյան)

Ք ա ո ա Ր ա ն

ույն - վիզ. ուլամբ - վզով
յաջողեմ, յաջողիմ - այստեղ՝ հաջողվել
ի բաց - 1. դուրս 2. հեռու
կրճեմ գատամունս - ատամները
կրճտացնել (+ փխբ.)

շատ - այստեղ՝ բավական, բավարար
ողջանդամ - ողջ անվնաս
գերծուցանեմ - ազատել, փրկել
(գերծանիմ - ազատվել, փրկվել)

Ք ա գ ա Տ Ր Ո Յ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

Մխեալ կայր - «Մխեալ՝ մխրճված էր»: Կայր-ն այստեղ օժանդակ բայի դեր է կատարում: -ԵԱԼ-ով վերջացող ներգործական բայի հետ կ ը ա վ ո թ ա կ ա ն ի իմաստ է ձեռավորում. տեսեալ կայ - «տեսնվել է. երեւացել է», հանեալ կայր - «հանված էր» եւ այլն:

Համարեսջի՛ր - Չեղ հմմտ. Ձ., ՍԿԻՉԲՆ ԱՐԱՍՁԻՔ, ԺԲ., ՀԱՅԵՍՁԻՐ:
Առանց իրիք վնասու - «Առանց մի վնասի»: Իրիք-ն ինչ-ի սեռականն է («մի» իմաստով այս բառի գործածության մասին տես Թ., ԾԵՐ ՈՄՆ):
Առանց իրիք վնասու եւ ողջանդամ՝ երկուսն էլ գերծուցեր-ի նույն կարգի լրացումներն են (ինչպէ՞ս ազատեցիր), բայց նախադասության տարբեր մասերում են: Պետք է թարգմանելիս մոտեցնել - «ողջ, առանց մի վնասի ազատեցիր»: Գրաբար ոճի մեջ սա հազվադեպ երևույթ չէ (հմմտ. Ը., ՓՐԿԵԱՒ Ի ՎՏԱՆԳԷ...Ի ՅԱԼԵԱՏ ԾՈՎԷ):

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հետեւյալ նախադասություններն աշխարհաբար թարգմանեցեք.
Իսկ արդ ո՞ պատմեսցէ ձեզ եթէ հուր բորբոքեալ կայ: Ջուրք գետոյն ոտկան տուեալ (ուտկան կազմած) կանգնեալ կան յեզր ծովու: (ՄՍԵԱԼ ԿԱՅՐ):
* Վկայ սուտ՝ առանց պատժի ոչ լիցի: Եւ թագաւորն Հայոց դառնայր ի մեծ

կոտորածէն մեծաւ յաղթութեամբ ի Հայս (Հայաստան), յԱյրարատ գաւառ, ի Վաղարշապատ քաղաք: * Եւ զուրախութիւնն ձեր ոչ որ հանիցէ ի ձեզ (ձեզանից): * Ոչ որ կարէ (հմմտ. ԺԲ., ԿԱՐԵՍ) երկուց տերանց ծառայել. կան զմին ատիցէ եւ զմեան (= զմիսն) սիրիցէ, կամ զմին մեծարիցէ եւ զմեան արկամարհիցէ: (ՀԱՆԻՅԷ): Իբրեւ ասաց թէ Ես եմ, յետս յետս չոզան (զնացին): Եւ ի տան դարձեալ աշակերտքն զնոյն հարցին ցնա: Յերկրէ հեռաստանէ եկին առ իս ի Բաբելոնէ: (ՈՂՋԱՆԴԱՄ...ԱՌԱՆՅ ԻՐԻՔ ՎՆԱՍՈՒ)

- = Ի Հայս - «ի հայրս» կարդացեք:
- 2. Բնագրից եզակի եւ հոգնակի բացառականով դրված բառերը դուրս գրեցեք եւ նախդիրն ու վերջավորություններն ընդգծեցեք (նմուշը տես ԺԲ., թիվ 1 վարժուրան մեջ): Չեւերն առանձին-առանձին թարգմանեցեք:
- 3. Հետեւյալ ձեւերը գրաբարի վերածեցեք.
 - ա) պիտի կորչի (Ը.), պիտի վազի, պիտի գործի, պիտի գցի, պիտի կտրի, պիտի ընկնի (անկանեմ). (ՀԱՆԻՅԷ)
 - բ) կոչեցիր, վազեցիր, գործեցիր, գզեցիր, կատարեցիր, հաղթեցիր (յաղթեմ). (ՁԵՐԾՈՒՅԵՐ)
 - գ) կոչեց, վազեց, գործեց, փնտրեց, կործանեց, ուղարկեց (առաքել): (ՍԱՋՈՂԵԱՏ)



ԺԳ. դ ա ս

ՉԿՈՒՆԲ ԵՒ ԹՎՊԱՒՈՐ ԻՐԻՄԱՆՅ

Մեղադրեցան ձկուներ ի թագաւորէն իւրեանց, եթէ «Ընդ է՞ր զայլս ուտէք զմանուխան»:

Համարձակեալ ասեն.

«Վասն զի ի քէն ուտաք. եկեալ բազմաց յերկրպագութիւն քեզ, եւ կլանելով կերակուր քեզ արարերը». ըստ այսմ եւ ինքեանք եւս յանդգնագոյնք եղեն:

(Մխիթար Գոշ, Առակ ՀԵ.)

Ք ա ռ ա ր ա ն

ընդ է՞ր (ընդէ՞ր) - ինչո՞ւ, ինչի՞ համար կլանեմ - կու տալ

եւս - այստեղ՝ էլ ավելի

Ք ա գ ա ս ռ ու թ յ ու ն ն Ե Ր

Մեղադրեցան - «Մեղադրվեցին»: Կրավորական է. ներգործականը մեղադրեցին կլինի: Այսպես նաեւ՝ կոչեցին՝ «կանչեցին» - կոչեցան՝ «կանչվեցին», տեսն՝ «տեսան» - տեսան՝ «տեսնվեցին», սատակեցին՝ «սատկեցրին» - սատակեցան՝ «սատկեցվեցին» եւ այլն: Ներգործական բայերի անցյալ կատարյալ ժամանակաձեւերում այսպես է:

Չմանունսն - «Մանրերին»:

Ի քէն - «Քեզնից»:

Եկեալ բազմաց - «Շատեր եկան»:

Յանդգնագոյնք - Յանդուզն անակամի բ ա դ դ ա տ ա կ ա ն աստիճանն է - «ԱՎԵԼԻ հանդուզն»: -ԳՈՅՆ անանցն աշխարհաբարում անակամի գ ե ր ա դ ր ա կ ա ն աստիճանն է կազմում, իսկ գրաբարում՝ բ ա դ դ ա տ ա կ ա ն : Այսպես՝

	Գրբ.	Աշխ.
լաւագոյն	«ԱՎԵԼԻ լավ»	«ԱՄԵՆԱլավ»
մեծագոյն	«ԱՎԵԼԻ մեծ»	«ԱՄԵՆԱմեծ»
յոռեգոյն	«ԱՎԵԼԻ վատ»	«ԱՄԵՆԱվատ»
բարձրագոյն	«ԱՎԵԼԻ բարձր»	«ԱՄԵՆԱբարձր»

Այս «ավելի»-ի (բաղդատականի) գաղափարը գրաբարում կարելի է եւս երկու ձեւով արտահայտել՝

ա) անակամի կողքին քան գ... դնելով: Օր.՝ լաւ քան գ[նա], մեծ քան գ[[եան], յոռի քան գ[ատուրիւն], բարձր քան գ[[եան], ժահահոտ քան գիս (ԺԱ.),

բ) անակամին -գոյն ավելացնելով, բայց եւ նրա կողքին քան գ... գործածելով (այսինքն՝ երկու հ ո մ ա ն ի շ միջոցները համատեղելով): Օր.՝ լաւագոյն քան գ[նա], մեծագոյն քան գ[[եան], յոռեգոյն քան գ[ատուրիւն], բարձրագոյն քան գ[[եան]:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Թարգմանեցեք՝

ա) ա շ խ ա ր հ ա բ ա ր.

մկունք, ափունք, մասունք, ծաղկունք, հարսունք, դրունք, մատունք, դիւցազունք, զգացմունք, հարցմունք. (ՉԿՈՒՆԲ)

բ) գ ր ա բ ա ր (բաղդատականներից յուրաքանչյուրը՝ վերետուժ բացատրված լական ձեւով).

ավելի համեղ	ամենահամեղ
» չար	ամենաչար
» ատելի	ամենատելի
» ծանր	ամենածանր
» մտերիմ	ամենամտերիմ
» քաղցր	ամենաքաղցր
» խիստ	ամենախիստ
» հզոր (հզօր)	ամենահզոր
» ամուր	ամենամուր

Կ ա ր ե ո թ .- «Ամենա-»-ի, «ամենից»-ի (գ ե ր ա դ ր ա կ ա ն ի) իմաստը յոյժ, կարի, սաստիկ կամ անհնարին բառերի միջոցով է արտահայտվում: Օր.՝ յոյժ (կամ կարի կամ սաստիկ կամ անհնարին) խոնարհ - «ամենախոնարհ, ամենից խոնարհ»: Վարժուրյունը կատարելիս երկրորդ սյունակի ձեւերի համար այս բառերից մեկնումեկն ընտրեցեք: Իմացեք նաեւ, որ բնագրերում յոյժ-ը եւ մյուսներն ավելի հաճախ «սաստիկ, չափազանց» են քարգմանվում:

2. Հետեւյալ անակամների գրաբար բաղդատական (3 ձեւով) եւ գերադասական սաստիճանները կազմեցեք: Բանավոր առանձին-առանձին քարգմանեցեք.

մանր, համարձակ, բազում, հսկարտ, ընտանի, ողորմելի, վայելուչ, պատուական, արժանատր, անարգ:

ՃԵ. դ ա ս

ՀԱԻ ԸՆՏԱՆԻ

Հաւ ընտանի յրմբունել ստացողին իւրոյ յոյժ աղաղակէր, եւ ոմանք մեղադիր լինէին, եթէ «Զմէ՞ վայրապար կոխնչս ամբառնաս»: Որոց ասաց, թէ «Զարհուրիմ, զի ոչ յամենայն ժամու վասն բարւոյ ըմբունէ. զի երբեմն գլխիվայր կախէ եւ բազում աւուր ճանապարհ տանի, եւ երբեմն ի վերայ կայծականց խորովէ եւ ուտէ»:

(Մխիթար Գոշ Առակ ՃԻԵ.)

Բ ա ռ ա ր ա ն

ըմբունեմ - 1. բռնել 2. ըմբունել
ստացող - այստեղ՝ խնամող, պահող.
տեր
զմէ՞ - ինչո՞ւ, ինչի՞ համար

վայրապար - իզուր, գուր տեղը
ամբառնամ - բարձրացնել կոխնչս
ամբառնամ - կոխնչ բարձրացնել
կայծակն - այստեղ՝ կայծ. կրակ

Բ ա գ ա ս ռ ո յ յ ու ն ն Ե Ր

Յըմբունել ստացողին իւրոյ - «Երբ իր տերը բռնում էր» կամ «իր տիրոջ բռնելու ժամանակ» կամ «իր տերը բռնելիս»: Կազմութեան համար հմմտ. Զ., Ի ՊԱՐՁԵԼ ՈԳԻՈՅՆ:

Որոց - Այստեղ կարելի է «նրանց» քարգմանել: Այս որ-ը (հարաբերականը) կարող է գրաբար նախադասութեան սկզբում լինել, ինչ որ աշխարհաբարին խորք է: Ըստ հարմարութեան անձնական (նա) կամ ցուցական (դա) դերանուններով ենք փոխարինում:

Մեղադիր լինէին, եթէ. ասաց, թէ - Ուղղակի խոսքից առաջ (ե)թէ-ի գործածութեան մասին տես Է., ԵՀԱՐՅ, ԹԷ...

Վասն բարւոյ - Վասն (նախադրություն) + սեռական (բարւոյ) = «համար» - «բարի բանի համար»: Ուրիշ տեղերում վասն կարող է «մասին» իմաստով գործածվել, «Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին» - «Վարդանի եւ հայոց պատերազմի մասին»:

ՎԱՐՃՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հետեւյալ նախադասություններն աշխարհաբար քարգմանեցեք.

ա) Չայսպիսի գործս գործեր (անել, կատարել) վասն ազահուրեան: * Այր պակասամիտ արիամարիե զընկերս: Ելանէ ի բլուր մի (= ուրեք), եւ անտի փախչի եղչերու մի: * Ամենայն մարմին որպէս հանդերձ մաշի: (ԺԲ., ՃԱՆԱ-ՉԻ): Եւ նորա վաստակեալ ի մարտին՝ նստեր ի վերայ առիծուն: * Ի ծագել

արեգական կորնչին աստեղք: (ՅԸՄԲՈՆԵԼ): * Սիրելն զընկերն իբրեւ զանձն, առաւել է քան զողջակէզս եւ զգոհս:

բ) Եւ իբրեւ գտանէ, դնէ զնա ի վերայ ուսոց իւրոց: Նորա ի վերայ քրիստոնէիցն ածին (բափել): Շատք յահէ մեռանէին ի վերայ ձիոց: * Թոյլ տուր ինձ եւ զննեցից զսիւնՍ՝ յորոց վերայ տունՍ հաստատեալ է: (Թ., ԱՌԱԿՍ): Ո՞ ի ձէնջ (ձեգանց) յանդիմանէ զիս վասն մեղաց: * Ես եմ հովիւն քաջ, եւ ճանաչեմ զիման (իմոնց) եւ ճանաչիմ յիմոցն: * Ծանեալ (ճանաչել) եզն զստացիչ իւր, եւ էշ զմտուր տեառն իւրոյ. եւ Իսրայել զիս ոչ ծանեալ, եւ ժողովուրդ իմ զիս ի՛միա ոչ առ (Զ.):

2. Գրաբար քարգմանեցեք.

երբ նա կանչեց, երբ մայրը հասավ (հասանել), երբ քահանան բլրից իջավ (իջանել), երբ մենք տուն գնացինք (երթալ): (ՅԸՄԲՈՆԵԼ)

Կ ա բ ե լ ո թ. - Չմոռանաք, որ նա, մայրը, քահանան, մենք ենթակաները սեռականով պետք է դրվեն:

3. Գրաբարի վերածեցեք.

ա) Վարդանի համար, մեղքերի համար, քաջութեան համար (քաջութիւն, արութիւն), աշխարհի համար, հայերի համար, մեղքերի բողոքեան համար, ազգերի համար.

բ) քաղաքի վրա, մեզ վրա, բլրի վրա, ԱՅՍ սեղանի վրա, ԱՅԴ աշխարհի վրա, նրանց վրա, մեր աշխարհի վրա:

Կ ա բ ե լ ո թ. - Այս-ի եւ այդ-ի գաղափարները համապատասխան հողերի միջոցով արտահայտեցեք:

ԾՁ. դ ա ս

ՇԱՀԱՐԱՍ ԵՒ ՍՐՈՒԱԿ ՍԻ ԳԻՆԻ ԵՒ ՍԻՋՆՈՐԳՆ

Յաւանդութենէ պատմի, թէ յանցանելն Շահարասայ՝ Հայ ոմն արքեպղ ընթանայ եւ կայնու զսանձն երիվարի նորա եւ ասէ.

«Քանու՞յ վաճառես զայս երիվար՝ զոր ես զնել կամիմ»:

Շահարաս հրամայէ տանել զնա ի տուն իւր եւ վաղիւն դարձուցանել առ ինքն: Ծառայքն տանին զնա ի տուն, մինչև սթափեալ յարբեցութենէն՝ իրազեկ անցիցն լինի եւ յահէ սրտին՝ մնայ վարանեալ: Խրատ տայ կինն իւր՝ սրուակ մի զինի տանել ընդ ինքեան առ Շահարասն եւ պատուիրէ զինչ խօսել անդ: Տանին զնա ծառայքն առ արքայ. եւ Շահարաս հարցանէ նմա (= ցնա).

«Քանու՞յ կամիս զնել զերիվար իմ»:

Նա հանէ զսրուակն զինուոյ եւ զնէ առաջի թագաւորին եւ ասէ.

«Տէ՛ր իմ, սա զնօղ երիվարիդ է, եւ վեհափառութիւնն ձեր՝ վաճառող այնր, իսկ ես միջնորդ մի եմ յայդմ տուր եւ առութեան. վերջաւորեսջի՛ք զգին երիվարին եւ եթէ միջնորդիս շնորհեսջիք ինչ՝ այն ձե՛ր է բարեշնորհութիւն»:

Հաճեալ Շահարասայ ընդ բանս պատասխանուոյ նորին՝ խիլայէ զնա եւ արձակէ:

(Հայկական միջնադարյան գրույց)

Բ ա ռ ա ր ա ն

կալնում - բռնել
վաղիւն [«վաղիվըն»] - մյուս՝ հաջորդ օրը. վաղը
իրազեկ լինիմ - տեղեկանալ
անցք - իրադարձութիւն(ներ) դեպք(եր).. անցիցն - դեպքերին..., այստեղ՝ պատահածին

տուր եւ առութիւն - առետուր
վերջաւորեմ - վերջացնել
ինչ - այստեղ՝ մի բան
հաճիմ - այստեղ՝ հաւանել
խիլայեմ - խիլայել, պատվո՝ փառքի
պատմուճան նվիրել՝ հագցնել

Բ ա գ ա ս ռ ո թ յ ո Ւ ն ն Ե Ր

Պատմի - Հմմտ. ԺԲ., ճԱՆԱԶԻ:
Յանցանելն Շահարասայ - Հմմտ. Զ., Ի ՊԱՐՁԵԼ ՈԳԻՈՅՆ, ԺԵ., ՅԸՄԻՌՆԵԼ ՍՏԱՅՈՂԻՆ ԻԲԻՐՈՅ:
...կինն իւր - Նորա-ի իմաստով իւր է գործածվել - «նրա (եւ ոչ թն իր) կինը»: Այս մասին մանրամասն տես Թ., ...եթէ առ ի՞նչ կոչէր ՁՆԱ:
Ընդ ինքեան - ԸՆԴ (նախդիր) + ե գ ա կ ի տրական (ինքեան) = «հետ» - «իր հետ»:
Ընդ մմա - «նրա հետ». ընդ թշնամույն - «թշնամու հետ»: Այս նույն իմաստն է

ընդ նախդիրն արտահայտում հ ո գ ն ա կ ի հայցականի կողքին. ընդ ինքեանՍ - «իրենց հետ», ընդ մոՍա - «նրանց հետ», ընդ թշնամիՍ - «թշնամիների հետ»:

Երիվարիդ - Հմմտ. Ժ., Ի ԹՁԵՆԻՈՋԻ:

Այնր - Այն-ի սեռականն է - «նրա (կամ դրա)»:

Վերջաւորեսջի՛ք - Հմմտ. Զ., ՍԿԻՁԲՆ ԱՐԱՍՁԻ՛ք:

Նորին - Նոյն ց ո թ գ ա կ ա ն դերանվան սեռականն է. պետք էր «նույնի» քարգմանել, սակայն գրաբարում այս դերանունը հաճախ է ա ն ձ ն ա կ ա ն ի իմաստով գործածվում - «նրա»:

ՎԱՐՃՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Աշխարհաբար քարգմանեցեք.

ա) տեսանես	իջանես	արձակես
գտանես	զնես	շրջես
մատուցանես	հատանես	արկանես
մերձեմաս	երթաս	զգաս
զբօսնուս	թողուս	արգելուս
խօսիս	բնակիս	հաճիս

(ՎԱՃԱՌԵՍ)

բ) Եւ արքայից այրայ կոչէ առ ինքն զԲաբիկ եւ տայ վճիռ քազաւորական՝ կնքեալ վարազագիր մատանեաւ: Այդ՝ պատգամ յղէ առ Սմբատ արքայ Քուշանաց: Եւ ետ տանել զգլուխն Միւրանայ առ քազաւորն Պարսից: Յայնժամ հրեշտակք անտաւորք հասանէին առ արքայն Խոսրով: Շուայտացեալ շունն առ տէր իւր մատչի: (ԱՌ ԻՆՔՆ...): Ինքնին Տէր ի դատ եկեաց ընդ ծերս ժողովրդեան իւրոյ եւ ընդ իշխանս նոցա. դուք զի՞ հրկեզ արարեք զայցի իմ, եւ յափշտակութիւն տնամկին է ի տունս ծեր: Եւ եթէ անցանիցես ընդ ջուրս՝ ընդ քեզ եմ, եւ գետք գրեզ մի՛ ոլորեացեն: (ԸՆԴ ԻՆՔՆԱՆ)

= Վարազագիր մատանի - վարագի զինանշան կրող քազավորական կամ իշխանական մատանի-կնիք:

գ) Հողմ ուր կամի շնչէ (փչէ), եւ զձայն նորա լսես, այլ ոչ զիտես ուստի զայ կամ յո երթայ: Վասն այնորիկ ամի զդա առաջի ծեր եւ մանաւանդ առաջի քո, զի վերստին քննեցես: Յայնժամ ասէ ցաշակերտսն իւր, եթէ * «Հունձք բազում եմ եւ մշակք՝ սակաւ»: Եւ կոչեցեալ առ ինքն զաշակերտսն իւր՝ ասէ ցնոսս, եթէ * «...Այրին այն տառապեալ շատ արկ բան զամեմտեան...»: Հազարք հազարաց (հազար-հազար, հազարավոր) հրեշտակաւիտք պաշտէին զնա, եւ բիւրք բիւրաց հրեշտակք կային առաջի նորա: Թարեկամ իմ եկեալս իս յաղայ, եւ ոչինչ ունիմ դնել առաջի նորա:

...կինն իւր - Նորա-ի իմաստով իւր է գործածվել - «նրա (եւ ոչ թն իր) կինը»: Այս մասին մանրամասն տես Թ., ...եթէ առ ի՞նչ կոչէր ՁՆԱ:

ԺԵ. դ ա ս

«ԹԷՊԷՏ ԵՒ ԵՄՔ ԱԾՈՒ ՓՈՔՐ...»

...Թէպէտ եւ ենք ածու փոքր, եւ թուով յոյժ ընդ փոքու սահմանեալ, եւ զօրութեամբ տկար եւ ընդ այլով յոլով անգամ նուաճեալ թագաւորութեամբ, սակայն բազում գործք արութեան գտանիս գործեալ եւ ի մերում աշխարհիս, եւ արժանի գրոյ յիշատակի...:

(Մովսէս Խորենացի, Պատմութիւն Հայոց)

Բ ա ճ ա Ր ա ն

ածու - անկարան. այստեղ՝ փոխաբերաբար՝ ժողովուրդ յոլով - շատ

արութիւն - քաջութիւն. գործ արութեան - քաջագործութիւն

Բ ա գ ա Տ Ր Ո Ւ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

- Ընդ փոքու սահմանեալ - «Փոքր ծավալի մեջ սահմանված», «փոքրաբիւլ»:
- Ընդ այլով...քաջաւորութեամբ - ԸՆԴ (նախդիր) + գործիական (այլով քաջաւորութեամբ) = «տակ» - «ուրիշ կամ ուրիշների քաջավորության՝ իշխանության տակ»: Այսպէս նաեւ՝ ընդ տանեօք - «տանիք(ներ)ի տակ», ընդ ծառով - «ծառի տակ» եւ այլն:
- Ի մերում աշխարհիս - Գրաբարը սիրում է միաժամանակ թե՛ ստացական դերանունը (մերում) եւ թե՛ հոդը (աշխարհիս) օգտագործել: Ի մերում աշխարհիս - ինչպէ՞ս պետք է քարգմանել: Ի մերում աշխարհիս - ?:
- Գտանիս գործեալ - «Գործված են կամ կան» (բառացի՝ «գործված գտնվում են»): Գտանի-ն այստեղ -ԵԱԼ-ով վերջացող բայի (անցյալ դերբայի) կողքին օժանդակ բայի դեր է կատարում, կրավորական իմաստ ձեւավորում (հմտ. ԺԳ., ՄԵԵԱԼ ԿԱՅՐ):

ՎԱՐՃՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Աշխարհաբար քարգմանեցեք.

ա) Դ-ըքա յերկրի խրեանց լինիցին: * Որպէս զիս ժողովէ զձագս իւր ընդ թեովք: * Ոչ որ լուցանէ ճրագ եւ քաքուցանէ ընդ կարասեալ կամ դէն ընդ մահճօք. այլ ի վերայ աշտանակի: Տէ՛ր, մի՛ ինչ աշխատ լինիր, զի չեմ բաւական (արժանի) եթէ ընդ յարկաւ իմով մտանիցես: (ԸՆԴ ԱՅԼՈՎ ... ԹԱԳԱԻՌՌՈՒԹԵԱՄԲ): Յանկարծակի խտացաւ ամայովք երկին եւ յորպոխնք անձրեաց (հորդ անձրեւներ) յերկիր հեղան: * Ոչ կարէք Աստուծոյ ծառայել եւ մամոնայի: Չի յատուս պահոց ձերոց գտանիս կամք ձեր կատարեալք, եւ

կսկծեցուցանէք զամենեսեան որ ընդ ձեռամբ ձեր (= ձերով) են: Հերովդէս, յառ քազում գործոց արութեանց, ձեռնամուխ լինի ի բարեգործութիւնս, շինուածս քազումս առնելով (.սարքել) յոլով քաղաքաց, սկսեալ ի Հոռովմէ միջեւ ցԴ-ամասկոս:

բ) Չի ահա ձմեռն անց (= էանց), անձրեւք անցին եւ զնացեալ մեկնեցան, ծալիկք երեւեցան յերկրի (= յերկրիս) մերում, ժամանակ եհաս յատանելոյ, ժայն տատարակի լսելի եղէ յերկրի մերում. բզենի արծակեաց զբողոք իւր, սրբք մեք ծաղկեալք ետուն (տվեցին) զիտս խրեանց. արի եկ, մերձատր իմ, վեղեցիկ իմ, աղանձի՛ իմ, եւ եկ դու:

Աղանեան իմ, ընդ հովանեալ վիմիլ առ պատուարաւ (պատվարի մոտերք) պարսպիդ երեւեցո՛ ինձ զերեսս քո, եւ լսելի՛ արա ինձ զբարբառ քո. զի քարբառ քո քաղցր է եւ տեսիլ քո զեղեցիկ:

(Երգ Բ 11-14)

2. Գրաբար քարգմանեցեք.

ա) մեր տան մեջ, մեր քաղաքում, մեր երկրում, քո ազարակում. (Ի ՄԵՐՈՒՄ ԱԾՈՒՄ ԱՐԿԻՍ)

բ) Իր իշխանության տակ շատ (քազում) երկրներ ունի: (ԸՆԴ ԱՅԼՈՎ ԹԱԳԱԻՌՌՈՒԹԵԱՄԲ)

6 5 4 3 2 1
Իր ձեռքի տակ շատ գորքեր ունի:

1 2 1 2
Չորեղ (գորեղ) ենք: Հավատարիմ ենք:

Կ ա Ր Ե Ո Ր.- Իւր բառը պետք է հոլովով համաձայնեցնել. նրա գործիականն է իւրով: Երկրներ եւ գորքեր հոգնակի հայցական են:

3. Փորձեցեք նագելի, փոքր, տկար, արժանի ամսկանների քաղաքատական եւ գերադրական աստիճանները կազմել (տե՛ս ԺԴ.):

ԸՔ. դ ա ս

«ԷՋ ՄԻԱԾԵՒՆՆ Ի ՀՕՐԷ...»

Էջ Միածինն ի Հօրէ եւ լոյս փառաց ընդ նմա, ձայնք Հնչեցիլ սանդարամետք անդնորոց: Տեսեալ զլոյս մեծ Հայրապետին Գրիգորի, պատմէր ցնծութեամբ հաւատացեալ արքային: Եկա՛յք շինեսցուք սուրբ զխորանն լուսոյ, քանզի ի սմա ծագեաց մեզ լոյս ի Հայաստան աշխարհի:

(Սահակ Չորսփորեցի)

Ք ա ռ ա ր ա ն

հնչեմ - հնչեցնել
սաղարամետ(ք) - այստեղ՝ դժոխք

անդունդք - դժոխք

Ք ա ց ա ս ր ու թ յ ու ն ն Ե ր

Ընդ նմա - Ինչպե՞ս պետք է քարգմանել:

Էջ - Իջանեմ քայն է - «իջավ»:

Չայնք հնչեցին - Չայնք-ն իբրև հայցական (= ձայն) պետք է ընդունել:

Սուրբ զխորանն - Չ նախիրը պետք է սուրբ բառից առաջ դրվեր (*զսուրբ խորանն*): Տեղափոխությունն ըստ երեսույթին շարականի եղանակի պահանջով է կատարվել (հմմտ. Բ., Ջկարսրիկն ԵՂԵԳՆԻԿ, ԸՆԴ եղեգան ՓՈՂ):

Վ Ա Ր Ը Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

Աշխարհաբար քարգմանեցեր.

ա) Վա՛յ այնցիկ որ գրեն զչարիս, գրելով գրեն զչարիս իւրեանց. խտտորեն գրատաստանս աղքատաց, եւ զիրատունս տմանկաց ժողովրդեան ինոյ յափշտակեն. զի լինիցի նոցա այրին ի յափշտակութիւն, եւ որքն յաւար: Եւ զի՞նչ գարծեսցեն յատուրն այցելութեան. զի նեղութիւն ձեր ի հեռաստանէ եկեսցէ. եւ առ ո՞ր փախստեայ անկանիցիք յօգնականութիւն, եւ ո՞ր թողուցուք զփառս ձեր:

(Եւ. Ժ 1-3)

բ) Չի ահաասիկ թագաւոր արդար թագաւորեսցէ, եւ իշխանք իրաւամբք տիրեսցեն: Եւ եղիցի մարդն որ թաքուցանիցէ զբանս իւր, թաքիցէ (պիտի թաքնի) իբրև ի ջուրցն սաստկութենէ. եւ եղիցի Միոն իբրև զգետ յոյղեալ փառատոր ի ծարատուտ երկրի: Եւ ոչ եւս եղիցին յուսեցեալ ի մարդիկ, այլ

ուսցին զականջս առ ի լսել: Եւ սիրտք տկարաց անսայցեն ի լսել. եւ լեզուք թրովք՝ արագ արագ ուսցին խօսել զխաղաղութիւն: Եւ ոչ եւս ասասցեն ցիմարն՝ լինել նոցա իշխան. եւ ոչ եւս ասասցեն պաշտօնեայք քո՛ թէ «Լուս իբր»:

(Եւ. ԼԲ 1-5)

գ) Արդ ո՞ւմ նմանեցուցէք (= նմանեցուցիք) զՏէր, եւ որո՞ւմ նմանութեան նմանեցուցէք զնա: Միթէ պատկե՞ր կոփեաց զնա հիւսն. կամ ոսկերի՞չ ձպեաց ոսկի եւ պատեաց զնա ոսկով, ի նմանութիւն (նմանողութեամբ) պատկերի կերպարանեաց զնա: Չփայտ անփուտ ընտրեաց հիւսն, եւ իմաստութեամբ հնարս խնդրէ՞ զխաղալ կանգնեսցէ զնա զի մի՛ շարժեսցի: Ո՞չ լիք եւ ո՞չ իմանայք, եւ ո՞չ պատմեցաւ ձեզ ի սկզբանէ. ո՞չ զփուսցէք (= զխոսցիք) թէ ո՛ր հաստատեաց զիմունս երկրի: Որ ունի՞ զձիր երկրի, եւ իմակիչք նորա իբրև զմարախ, որ կանգնեաց զերկինս իբրև զկամար, եւ ձպեաց իբրև զխորան (վրան) եւ հաստատեաց զերկիր բնակել ի նմա:

(Եւ. Խ 18-23)

ՃԹ. դ ա ս

ԿԻՆ ԻՆՔՆԱՀԱԽԱՆ ԵՒ ԿԱՄԱՊԱՇՏՑ՝ ԳԵՏԱՏԱՐ

Այր ոմն ունէր կին խիստ ինքնահաւան եւ կամապաշտ. եւ յորժամ անկաւ ի գետ եւ խեղդեցաւ, այրն խնդրէր զնա ընդդէմ ջրոյն զնալով (զնա ցեալ): Հարցին ցնա մարդիկ, թէ՛ «Վասն է՞ր ընդդէմ ջրոյ խնդրէր»:

Պատասխանի ետ.

«Կին իմ հանապազ էր ինձ հակառակ բերանով եւ արեամբ. արդ զոր օրինակ առնէր ի կենդանութեանն, նոյնպէս, կարծեմ թէ, զկին մահուանն արար. եւ այնպէս հաւատալով (= հաւատացեալ), դի զնացի ընդդէմ ջրոյս»:

(Հայկական միջնադարյան զրոյս)

Բ ա ռ ա ր ա ն

այր - 1. մարդ 2. տղամարդ 3. ամուսին կամապաշտ - կամակոր անկանիմ - ընկնել վասն է՞ր - ինչո՞ւ, ինչի՞ համար (այս իմաստով ուրիշ ի՞նչ բառեր եք սովորել)

զոր օրինակ - այստեղ՝ ինչպէս որ առնեմ - անել. արար - արեց (տարբեր առնում - առնել. ստանալ, որի անյալը կլինի էստ - առալ) զկնի - 1. ետելից 2. հետո

Բ ա գ ա ս Ր Ո Ւ Յ Ն Ե Ր

Յորժամ տնկաւ ի գետ... - Փոխված, բայց չարտահայտված ենթական կլինն է (տն է., առաջին բացատրությունը):

Խեղդեցաւ - Երբ ներգործական բայն անցյալ կատարյալում -այ, -ար, -աւ եւ ցնա վերջավորություններ է ունենում, պետք է կրավորական՝ -վ-ով թարգմանել «խեղդվեց»: Հմմտ. Դ., տեսաւ - «տեսնվեց», սատակեցաւ - «սատկեցվեց», սպանվեց, ԺԴ., մեղադրեցան - «մեղադրվեցին» եւ այլն:

Ջրոյն, ջրոյդ, ջրոյս - Այստեղ Ն, Դ, Ս ց ո լ ց ա կ ա ն հող են եւ ԱՅՆ, ԱՅԴ, ԱՅԸ դերանուններին են փոխարինում. «ԱՅՆ ջրի(ն)», «ԱՅԴ ջրի(ն)», «ԱՅԸ ջրի(ն)»: Հմմտ. Ժ., Ի ԹՁԵՆԻՈՋԴ:

Հարցին ցնա - Ինչպե՞ս պետք է թարգմանել:

Ի կենդանութեանն - Արդեմ գիտեք, որ Ի (նախդիր) + եզակի տրական կա հոգնակի հայցական = «մեջ, -ում» կամ «վրա» (նիշեցեք՝ ի ծովուն - «ծովու ծովի մեջ», ի ճանապարհին - «ճանապարհի վրա»): Այստեղ, սակայն, այդ նույն կառույցը «ժամանակ» է նշանակում - «կենդանության կամ կենդան ժամանակ»: Այսպես նաեւ՝ ի փեսայութեանն - «փեսայության ժամանակ»:

կարծութեան - «հարսնության ժամանակ», ի կեանս - «կյանքի ընթացքում, կյանքում. կենդանի ժամանակ»:

ՄԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Այսարհարար թարգմանեցեք.

«Հայր, ի ձեռս քո աւանդեմ զհողի իմ». իբրեւ զայս ասաց, եհան զոգի: * Երբ զմարմնոյ ակն է. յորժամ ակնն առաւ է, ամենայն մարմին լուսաւոր եղիցի. եւ երբ ակն չար է, եւ մարմինն խաւարին եղիցի: Բազում անգամ կանգնոյց (հանգստացնել) զիս եւ ի հալածմանն (Ի ԿԵՆԴԱՆՈՒԹԵԱՆՆ) կենսակրի իմ եղեւ: Երբայր զկնի գորացն յերկիրն Քուշանաց: Պատասխեցան անոցն այսոքիկ զկնի թագաւորութեանն Արշակայ Հայոց արքայի: Եւ ել առ Կոստ Լուլտ արտաքոյ (դուրս) դրանն, եւ զլուսն ձգեաց զկնի իւր: (ԶԿՆԻ ՄԱՐԿՈՒԹՅՈՒՆՆ)

2. Պարար թարգմանեցեք.

1 2 3 4 5 6
Պետին ընկալ: Նրա ետելից գնաց (չոգաւ):

1 2 3 4 5 6
Իր հորն ասում էր. «Ինչո՞ւ ես այսպես զարմանում»:

1 2 3 4 5
Երբ ուզում էր (Ա. դաս) պատասխան տալ, չէր կարողանում (ոչ կարէր):

4 5 3 2 1
(Ինձ հաճույքով (մեծաւ հաճութեամբ) իր գործերն էր անում):

1 2 4 1
Մի զինվոր քաղաք հասալ:

Մ ա Ր Ե Ն Ո Ր. - Գործերն հայցական է, մի զինվոր՝ ուղղական:



Ի. դ ա ս

ԷՇՔ ՍԱՌՈՒՂԱՅ

Արք երեք յուզի անկեալ ի միասին երթային ի զիւղ ուրեք վաս գործոյ իրիք: Տեսանեն զճանապարհայն շինական մի որ դիմեալ գալաւ առ նոսա շտապաւ, եւ յերեսացն տեսնեն թուէր տխմարագոյն քաղամենայն մարդիկ: Ասեն արքն երեքին ցմիմեանս.

«Եկա՛յք ծաղր արասցուք զդա»:

Եւ հեռացեալ կան ի վերայ ճանապարհին բացագոյն ի միմեանս իբրեւ քարընկէց մի: Իբրեւ մերձեցաւ շինականն առ առաջինն՝ լուսանմանէ զայս բան. «Ո՛ղջ լեր, հա՛յր Աբրահամ». եւ շինականն շինականին) ընկալեալ զողջոյն նորա՝ ասաց նմա ողջ լինել: Երկրորդ ի նոցանէ՝ որ կայր սակաւ ինչ հեռագոյն անտի՝ ասաց ցշինականն «Ո՛ղջ լեր, հա՛յր Իսահակ». եւ զնոյն պատասխանի արար նմա (= ցնա) Ապա յառաջ մատուցեալ ետես զերրորդն՝ որ ասաց ցնա. «Ո՛ղջ լեր հա՛յր Յակոբ»:

Յայնժամ ի միտ առեալ շինականին՝ եթէ արքն այնորիկ կատակէի ընդ նմա՝ զայրացաւ եւ ասէ.

«Ոնարիք, տեա՛րք, չեմ ես Աբրահամ, ո՛չ Իսահակ եւ ոչ Յակոբ, այլ Սաւուղ եմ՝ որդին Կիսեայ, եւ ելեալ եմ խնդրել զէշս հօր իմ զկորուսեալս. այլ բարէ՛, մերքն մատակը էին, իսկ զորս եսն զտիրարուք են»:

(Եղիշեն արք. Դուրյան)

Ք ա ո ա Ր ա ն

յուզի անկանիմ - ճանապարհ ընկնել
ի միասին - միասին
տեսիլ - այստեղ՝ տեսք
ծաղր առնեմ - ծաղրել, ծաղրի ենթարկել
բաց - այստեղ՝ հեռու
քարընկէց - քարընկէց, քար գցելու չափ տարածություն (չափի միավոր)
իբրեւ - 1. երբ 2. իբրեւ, որպէս 3. մոտավորապէս 4. իբր(եւ) թև

ո՛ղջ լեր - ո՛ղջ եղիր, ողջո՛ւյն. ո՛ղջ լերու - ո՛ղջ եղեր...
անտի - այնտեղից
պատասխանի առնեմ - պատասխան տալ, պատասխանել
յառաջ մատուցիմ - առաջանալ, առաջ գալ կամ գնալ
բարէ՛ - ավա՛ղ

Ք ա ց ա Տ Ր Ո Ւ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

Ի զիւղ ուրեք - Տե՛ն Թ., ԾԵՐ ՈՍՆ-ի բացատրությունը:

Վասն գործոյ իրիք - «Մի գործի համար» (իրիք ձեռի մասին տես ԺԳ., ԱՌԱՆՅ ԻՐԻՔ ՎՆԱՍՈՒԻ):

Այ նոսա - Այստեղ՝ «դեպի իրենց կամ նրանց»:

Պերեսացն տեսնել - «Դեմքի՛ երեսի տեսից»: Յ (Ի) նախդիրը տեսնել-ին է պատկանում եւ բացառական է կազմում: Երեսք գրաբարում եզակի չունի. ըստ նախադասության բովանդակության կարելի է եզակի կամ հոգնակի թարգմանել (այստեղ՝ եզակի): Հմմտ. Ե., ԵՂԻՅԻՆ ԿԱՍՔ ԶՈ:

Պիտարագոյն քան զ...մարդիկ, բացագոյն, հեռագոյն - Տե՛ն ԺԴ., ՅԱՆԴԳՆԱՎՈՅՆԶ:

Մերձեցաւ...առ առաջինն - Մերձեցում բայը (ինչպես նաեւ մերձ նախադրությունը) ԱՌ կամ Ի (Յ) + հայցականի հետ է գործածվում - «առաջինին մոտեցավ»: Այսպես նաեւ՝ մերձեցաւ յառաջինն (թարգմանությունը նույնն է). մերձ առ նա կամ մերձ ի նա = «նրա մոտ»: Հմմտ. Ը., ՄԵՐԶ ԵՄ ՅԸՆԿԿՄԻԼ:

Լսեմ անկանոն բայի անցյալ կատարյալն է - «լսեց»:

Ինչ մնա - Ինչպե՞ս պետք է թարգմանել (հմմտ. ԺԶ., ԸՆԴ ԻՆՔԵԱՆ):

Խարիք - «Խարբ-Լուս եք» (կրավորական թարգմանության համար հմմտ. ԺԲ., ՃԱՆԱԶԻ):

Կիսայ - Կիս (Կիսիսա) անվան սեռականն է - «Կիսի, Կիսիսաի»:

Խնդրել - Այստեղ՝ «փնտրելու»: Նույն իմաստով անորոշ դերբայը կարող է ուրիշ երկու կերպ էլ գործածվել՝ Ի + խնդրել կամ ԱՌ Ի + խնդրել, եւ այս երեք ձևերն էլ «փնտրելու» (կամ «փնտրելու համար») են թարգմանվում:

ՎԱՍԱԶԱՅՆՈՒԹՅՈՒՆ

Գրաբարում գոյականը եւ ածականը, ինչպես նաեւ իմ, քո, մեր, ձեր, իւր դերանուններն իրենց զանազան հոլովներով շատ հաճախ հոլովով ու թվով համաձայնվում են: Վերելի բնագրում, օրինակ, համաձայնվել են արք երեք, արքն երեքին, արքն այնորիկ (քանի որ արք գոյականը հ ո գ ն ա կ ի ո լ ղ ա կ ա ն ո վ է դրված, երեք(ին) եւ այն բաներն էլ նույն թվով ու հոլովով են դրվել. Զ-ն հոգնակի ողղականի նշանն է), ինչպես նաեւ գործոյ իրիք, հօր իմոյ (երկուսն էլ ե ո գ ա կ ի ո լ ղ ա կ ա ն են), զէշս...զկորուսեալս (երկուսն էլ հ ո գ ն ա կ ի հ ա յ ց ա կ ա ն են): Ա դասից ի ձեռաց իմոց կապակցությունը հիշեցեք, որտեղ քանի որ ի ձեռաց հ ո գ ն ա կ ի բ ա ց ա ն ա կ ա ն է, իմոց-ն էլ նույն թվի նույն հոլովով է, այսինքն՝ համաձայնվել է գոյականի հետ:

Ավելացնենք, որ դերանունը (իմ եւ այլն) գոյականի հետ գ ր ե թ ե մ ի շ տ է համաձայնվում, իսկ ածականի համաձայնությունը հետևյալ օրինաչափությունն ունի. երբ այն (ածականը) մ ի ա վ ա ն կ է, դարձյալ գ ր ե թ ե մ ի շ տ համաձայնվում է, իսկ երբ բ ա գ մ ա վ ա ն կ է, գոյականից հետո (ետադաս) գործածվելու դեպքում է համաձայնվում (առաջադասի դեպքում՝ ոչ): Օր.՝ ՄԵԾ տուն - ՄԵԾԻ տան, ի ՄԵԾԷ տանն. ԻՄԱՍՏՈՒՆ ծառայ - ԻՄԱՍՏՈՒՆ ծառայի, յԻՄԱՍՏՈՒՆ ծառայէ (չի համաձայնվել, որովհետեւ բազմավանկ է, առաջադաս), բայց՝ ծառայի ԻՄԱՍՏՆՈՅ, ծառայիք ԻՄԱՍՏՆՈՎԶ (արդեն համաձայնվել է, որովհետեւ ետադաս է). զԿՈՐՈՒՍԵԱԼ էշս (չի համաձայնվել) - զէշս...զԿՈՐՈՒՍԵԱԼՍ (համաձայնվել է):

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հետեւյալ նախադասութիւններն աշխարհաբար թարգմանեցեք.

ա) Ընդէ՞ր սա զմեղատրս ընդունի եւ ուտէ ընդ նոսա: Եւ նա ասէ ցնա. «Տէ՛ր, ընդ քեզ պատրաստ եմ ե՛ւ ի մահ ելլթալ»: Քաջք ընդ քաջս ելեալ երկոքին կողմանքն ի պարտութիւն մատնեցան: Բայց քաղցրագոյն ես էր ընդ քեզ մեռանել: Եւ էին որք կերանն իբրեւ հիւնզ հազար: **Հատու** գոյն երեսաց իշխանին, եւ ծունկք նորա զմիմեանս բարախէին: * Ոչ հացի միայն կեցցէ մարդ, այլ բանի որ ելանէ ի բերանոյ Աստուծոյ: Յերկրի ժողովրդեան իմոյ փուշ եւ խառ բուսցի եւ յամենայն ասպարանից ուրախութիւն **բարձցի**. քաղաքիդ մեծացելոյ ասպարանք լքեալք. զմեծութիւն քաղաքիդ լքցնէ եւ (նաեւ) գտունս ցանկալիս:

Կ ա ր ե ո թ ր. **Քաղաքի մեծացելոյ**, ինչպես նաեւ «բ» վարժութեան **սրտի բերկրելոյ** կապակցութիւններուն մեծացեալ եւ բերկրեալ համաձայնվել են. պետք է ուշադիր թարգմանել:

բ) * Խնդալ ընդ խնդացողս, լալ ընդ լացալս: * Յորժամ երբայցես ընդ ոտիսի քուն ամ իշխանն, ի ճանապարհի տո՛ւր զհաշխն զերծանել (ԺԳ.) ի մտանէ: Եւ էր մերձ գատիկն Հրէից, եւ բազումք ելին յերուսաղէմ ի գաւառէ անտի (այն) յառաջագոյն քան զգատիկն: * Բաժանեցին զհանդերձս իմ **յիւրեանս**, ի վերայ պատմութեանի իմոյ վիճակս արկանէին: Եւ ինքն մեկնեցաւ ի նոցանէ իբրեւ քարընկէց մի, եղ ծունր (ծունր դրեց, ծնրադրեց, ծունկ չորեց): * Սրտի բերկրելոյ երեսք ծիծաղին, եւ ողի որ ի տրտմութեան է՝ թախմեալ շրջի: Անդ պատահեցան միմեանց եղջերոք եւ տեսին զերեսս իրերաց:

գ) Եւ սկսան մարտնչել ընդ միմեանս: Թագաւոր երթեալ տայցէ պատերազմ ընդ այլամ թագաւորի: Եւ անտի անցեալ տային պատերազմ ընդ բերդին: Ընդէ՞ր ընդ մեղատրս եւ ընդ մաքսատրս ուտէ վարդասպետն ձեր: Եւ Պետրոս երթայր զկնի նորա հեռագոյն: Վէ՛նս առին զի արկցեն ի վերայ նորա: * Սպառին եւ պակասին որպէս մոյ յերեսաց իրոյ, եթէ թագաւոր իցէ եւ եթէ իշխան (թագաւոր լինի թէ իշխան):

2. Վերեւի վարժութիւնների բնագրերից այն գույգ բառերը դուրս գրեցեք, որոնց մեջ հոլովով ու թվով համաձայնութիւն կա: Դրանցից յուրաքանչյուրը կրկին թարգմանեցեք (բանալոր):

Ն մ ո լ շ՝ սրտի բերկրելոյ - «ուրախացած կամ ուրախ սրտի»:

3. Նույն բնագրերից եզակի կամ հոգնակի բացատրականով դրված բառերը գտեք եւ դուրս գրեցեք: Նախդիրն ու վերջավորութիւններն ընդգծեցեք:

Ն մ ո լ շ՝

Եգ. բացառ. Հոգն. բացառ.
ի նմանէ ի նոցանէ

4. Հետեւյալ ածականների բ ա դ դ ա տ ա կ ա ն աստիճանը կազմեցեք (3-ական չեով): Դրանք առանձին-առանձին աշխարհաբար թարգմանեցեք (բանալոր).

խոնարհ, լաւ, բարի, պիտանի, մերձ, մտերիմ, չար, սիրելի:

5. Գրաբար թարգմանեցեք.

ա) մոր հետ, մայրերի (հոգն. ուղղ. մարք) հետ, եղբոր հետ, եղբայրների (հոգն. ուղղ. եղբարք) հետ, բշնամու հետ (բշնամոյ), բշնամիների հետ, պատանու հետ (պատանույ), պատանիների հետ, արեւի հետ (արեւու, արեգական), աստղերի (հոգն. ուղղ. աստղք) հետ. (ԸՆԴ ՆՍԱ, ԸՆԴ ՆՈՍԱ)
բ) թագավորի մոտ, իշխանի մոտ, աշակերտների մոտ, Քրիստոսի մոտ, իւր մոտ, մոր մոտ (ԱՌ ՆՈՍԱ, ԱՌ ԱՌԱՋԻՆՆ), այգու մոտ, այգիների մոտ (մերձ-ի օգնութեամբ, 2-ական չեով):



ԻԱ. դ ա ս

Շ ՈՒՆ Ք

Շանց առաջի եկեալ՝ ասեն թաղաւորին խրեանց.

«Ամենեցուն ետուր պատճառ կենաց, մեր զիա՞րդ ապրեսցուք»:

Եւ ասէ.

«Ի դուռն մարդկան սպասաւորեսջի՛ք եւ ապրեսջի՛ք»:

Եւ ասեն.

«Այդ մեզ բաւական է, ապա եթէ Հիւր որ մեզ եկեսցէ, զի՞նչ արասցուք»:

Ասէ ցնոսա.

«Այնքան զգեսջի՛ք, զի դարձեալ մի՛ եկեսցէ»:

(Մխիթար Գոշ, Առակ Ղ.)

Ք ա ո ա ռ ա ն

պատճառ(ք) - այստեղ՝ հնար, միջոց

Ք ա գ ա ս Ր ո թ յ ու ն ն Ե Ր

Շանց առաջի եկեալ - Ինչպե՞ս պետք է քարգմանել:

Ասեն քազաւորին - Թազաւոր բառը, նույն իմաստը պահելով, ուրիշ ի՞նչ ձեւով կարելի էր դնել (փորձեցեք նախիր օգրագործել):

Ամենեցուն - «Ամենքին՝ բոլորին էլ»: Այսպես նաեւ՝ բոլորեքեան - «բոլորն էլ», բոլորեցուն(ց) - «բոլորին էլ», յերկոցունց - «երկուսից էլ» եւ այլն: Մի խոսքով, այս ձեւն ունեցող բառերը (բժական կամ դերանուն) քարգմանելիս սովորաբար էլ բառն ենք ավելացնում:

Հիւր որ - Ոք այստեղ պետք է «մեկը» քարգմանել - «մեկը հյուր (գա մեզ)»:

Մի՛ եկեսցէ - Տե՛ս է., ՄԻ՝ ՀԱՐԿԱՆԻՑԵՄ:

Մի՛ եկեսցէ - Տե՛ս է., ՄԻ՝ ՀԱՐԿԱՆԻՑԵՄ:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հետեւյալ նախադասութիւններն աշխարհաբար քարգմանեցեք.

ա) Տեղաց հուր եւ ծծումք յերկնից եւ կորայս (կորցնել, կորստյան մատնել) գամենեսին: Ո՞ յերկոցունց մերձաւոր է Սահակայ: Եւ ձուլեաց տապաւնակին չորս օղամանեակս ոսկիս ի չորեցունց կողմանց նորս: Բայց զոր (ինչ որ) ձեզդ ասեմ՝ ամենեցուն ասեմ. «Արքուն կացէք»: * Իմաստութիւն ծածկեալ եւ գանձ անյայտ [...] ո՞ր օգուտ է յերկոցունց: * Այլոյ մեռանիցի (մեռնում է) յոյժ սիրելի մանուկ, եւ միւսոյն կենայ անառակութեամբ. ողորմելիք են երկոքեան.

մինն զմահ որդոյ, եւ միւսն զկեանս ողբան: * Եթէ որ կարի առաւելեալ իցէ մարմնական մեծութեամբ, եւ մտօքն աղբատագոյն, այնպիսին ողորմելի է քան գամենեսեան:

բ) Խրատեսցէ զիշխանս նոցա որպէս զինքն, եւ զծերս նոցա՝ իմաստուն արասցէ: Ժողովեսցէ զգորեանն ի շտեմարանս իւր, եւ գայողն այրեսցէ անշէջ կրով: Մի՛ կորիցեն յախտեան, եւ մի՛ որ յափշտակեսցէ զնոսա ի ձեռաց ինոց: (ՄԻ՝ ԵԿԵՍՅԷ): * Եւ որպէս կամիք թէ արասցեն ձեզ մարդիկ, այնպէս արասջիք եւ դուք նոցա: **Գաւթի զայրացեալ՝** ի բաց վարեաց (հեռու վռնդել) զիրեշտակս այլազգեաց: **Ջօրավարին տեսեալ** զայնորթին ամբարտաճան բերդին՝ հրամայեաց նահանջել: Եւ ոչ կամեցեալ իշխանին մտանել ի ծառայութիւն օտարաց՝ ապստամբեր հանդերձ զօրօք իւրով:

2. Վերելի վարժութիւնների բնագրերից իրար հետ համաձայնված բառերը դուրս գրեցեք: Բանավոր բացատրեցեք, թե դրանք ո՞ր հոլովով ու րովով են համաձայնվել:

Ն մ ո շ ՝ ի կողմանցն յայնցանէ - հոգնակի բացառական:

3. Հետեւյալ նախադասութիւնները գրաբար քարգմանեցեք.

1 2
Եկալ տեսնելու: (Հմմտ. Ի., ԽՆԴՐԵԼ)

1 3 2 5 4 7 6

Երբ քազավորը լսեց այս խոսքերը (զբանս զայստիկ)՝ շատ զարմացալ: (Հմմտ. ԺԵ., ՅԸՄԲՈՆԵԼ ՍՍԱՑՈՂԻՆ ԻԻՐՈՅ)

3 2 1
Նրա հետ խոսեցինք (խօսեցար):

3 2 1
Նրանց հետ խոսեցիք (խօսեցայք):

5 4 2 1 3
Թշնամու հետ առյուծի պէս էր մարտնչում:

5 4 2 1 3
Թշնամիների հետ առյուծի պէս էր մարտնչում:

1 4 2 1
Բոլոր զնդերին պատերազմի կանչեց (կոչել):

Կ ա ր ե ո թ . Գնդերին հայցական է: Պատերազմի ձեւը պետք է նախորդի օգնութեամբ արտահայտել:

ԻՔ. դ ա ս

«ՀԱՄԱՏՈՎ ԽՈՍՏՈՎԱՆԻՄ...»

Հաւատով խոստովանիմ եւ երկիր պազանեմ քեզ, Հա՛յր եւ Որդի՛ եւ Սո՛ւրբ Հոգի. անեղ եւ անմա՛հ բնութիւն. արարի՛չ հրեշտակաց եւ մարդկան եւ ամենայն եղելոց, ողորմեա՛ քո արարածոց եւ իմ բազմամեղիս:

Հաւատով խոստովանիմ եւ երկիր պազանեմ քեզ, անբաժանելի լոյս, միասնական սո՛ւրբ Երրորդութիւն եւ մի՛ Աստուածութիւն. Արարի՛չ լուսոյ եւ հալածի՛չ խաւարի. հալածեա՛ ի հոգւոյ իմմէ՛ զխաւար մեղաց եւ անգիտութեան. եւ լուսաւորեա՛ զմիտս իմ ի ժամուս յայսմիկ՝ աղօթել քեզ ի հաճոյս եւ ընդունիլ ի քէն զխնդրուածս իմ, ողորմեա՛...:

Հա՛յր երկնաւոր Աստուած ճշմարիտ, որ առաքեցեր զՈրդիդ քո սիրելի ի խնդիր մոլորեալ ոչխարին. մեղայ յերկինս եւ առաջի քո, ընկա՛լ զիս որպէս զանառակ որդին. եւ զգեցո՛ ինձ զպատմուճանն զառաջին՝ զոր մերկացայ մեղօք. եւ ողորմեա՛...:

(Ներսէս Շնորհալի)

= Ի հաճոյս պետք է «ի հաճոյքս» կարդալ:

Բ ա ռ ա ր ա ն

երկիր պազանեմ - երկրպագել
անեղ - չստեղծված, ինքնագո (Աստուծո մակդիրներէց է)
բնութիւն - էութիւն
ի խնդիր - փնտրելու, ի խնդիր

առնչին - այստեղ՝ մակսկին
զգեմում - հագնել. զգեցուցանեմ
հազցնել. զգեցո՛ - հազցրու
մերկանամ - մերկացնել, այստեղ՝ հանել

Բ ա գ ա Տ Ր Ո Ւ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

Եղելոց - «Եղածների, այսինքն՝ ստեղծվածների, գոյակների, արարածների»:
Եղեալ դերբայի հոգնակի սեռականն է:

Ի ժամուս յայսմիկ - «Այս ժամին՝ պահին»: Երբ այս (այդ, այն) ց ու ց ա կ ա ն դերանունը գոյականից հ ե տ ո է գործածվում (ետադաս է), տվյալ հոլովի -իկ մասնիկով ձեւն է հանդես գալիս. սր. այսմ, -իկ մասնիկով՝ այսմիկ: Այս դեպքում, որպես կանոն, մախդիրն էլ կրկնվում է (Ի ժամուս Յայսմիկ), իսկ գոյականը, լրացուցիչ կերպով, համապատասխան հոդն է ստանում (ի ժամուս յայսմիկ. կարող էր լինել նաև՝ ի ժամու՛ր յայ՛միկ, ի ժամու՛ն յայ՛նմիկ): Եթէ դերանունը գոյականից ա ռ ա ջ գար (մախդաս լիներ), կլիներ յայսմ ժամու, յայրմ ժամու եւ այլն, այսինքն՝ ո՛չ -իկ մասնիկը կավելանար, ո՛չ մախդիրը կկրկնվեր, ո՛չ էլ գոյականը հոդ կստանար: Հմտ. գայս (գայդ, գայն) քաղաքս - զքաղաքսՍ գայՍոսիկ (զքաղաքս՛ գայ՛ոսիկ, զքաղաքս՛ գայ՛ոսիկ):

Պղօթի - Այստեղ՝ «աղոթելու»: Նույն իմաստն արտահայտելու համար կարելի էր նաև ասել՝ Յաղօթել կամ ԱՌ-Յաղօթել (հմտ. Ի., ԽՆԴ-ԲԵԼ):

Մեղայ յերկինս - Ի (ճախդիր) + հայցական (երկինս) = այստեղ՝ «հանդեպ, նկատմամբ. դեմ» - «Երկնքի հանդեպ՝ դեմ մեղանչեցի»:

Բնկալ - «Ընդունիր»: Ունիմ անկանոն բայ է. նրա անցյալը կալայ կլինի: Նույնից է կազմված եւ ընդՈՒՆԻՄ-ը. ուրեմն սրա անցյալն էլ ընԿԱԼԱՅ կլինի - «1. յնորմեցի 2. ստացա»: Ընկալ՝ հրամայականն է:

Վ Ա Ր Ժ ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն Ե Ր

1. Հետեւյալ մախաղասութիւններն աշխարհաբար թարգմանեցեր.

ա) Լերինքն երկուք, մի դո՛ւ էիր, եւ մի՛ քազատրն Յունաց: * Որ փորէ խորխորատ ընկերի իւրում՝ ինքն լցցէ զնա: Սուրբքն Վաղդանանք մահատակեցան ի նմին (նույն) Յազկերտէ հազար երեսուն եւ վեց արք ընտիրք: * Որոյն նենգատրի բարի ինչ մի՛ լինիցի: * Շրթունք ճշմարիտք հաստատեն զվկայութիւն: * Ծառայ իմաստուն տիրեսցէ տերանց անմտաց: Քաղեցէք նախ գարունԴ (մոխստ) եւ կապեցէք զայդ ի խրճուսն՝ առ ի յայրել: Իբրեւ կրանիցէք ի տանէն կամ ի քաղաքէն յայնմանէ, քօթափեսչիք (քափ տա) գիտչին յոտից ձեռոց: Այլ յատրսն յայնոսիկ յետ նեղութեանն այնորիկ արեզակն խաարեսցի: Ո՞ւմ նմանեցան բնակիչք կղզայդ այդորիկ (Ի ԺԱՄՈՒՍ ՈՒՍՍՄԻԿ). վաճառականք Փիւնիկեցոց որ անցանեն ընդ ծով, ընդ ջուրս քազումս:

բ) Գնացին յեզր գետոյն Երասխայ առ յանցանել զգետն: Եւ նուազեաց քոր ի տնկէ անտի (այն), եւ ընկէց զմանուկն ի ներքոյ միայ եղեւին ծառոյ: Փայլակն փայլատակեալ ի ներքոյ երկնից, ընդ երկնիւք (ԺԷ., ԸՆԴ ԱՅ-ԼՈՒ. ԹԱԳԱՌՈՒԹԵԱՄԲ) ծագիցէ: Ի միւսն մարմնի անդամս քազումս ունիմք, եւ անդամքն ամենայն զնոյն գործ ունին: * Ի սկզբանէ արարածոց քազում ոճիրս գործեաց նախանձ՝ յաշխարհի: Եթէ սարտուցեալ (խրտնել) փախնուցու ծառայ քո, յորո՞ւմ ճանապարհի խնդրեսցես զնա: Տէ՛ր, կեցո՛ (սպրնցնել, կենդանի պահել) դու զՀայս: Դարձո՛ գտուր քո ի տեղի իւր. զի *ամենեքեան որ սուր առնուցուն՝ սրով անկանիցին: (ԶԳԵՅՈ): Ո՞ որ (ո՞ր մեկը) յաստուածոց ազգացն այնցոյիկ (Ի ԺԱՄՈՒՍ ՅԱՅՍՄԻԿ) կարաց փրկել վերկիր իւր:

2. Հետեւյալ բայերի հրամայականները կազմեցեր.

ա) պահեմ, գործեմ, փառատրեմ, փառաբանեմ, ընտրեմ, խնդրեմ, աղօթեմ, առաքեմ, յղեմ, օրհնեմ. (ՈՂՈՐՄԵԱ՛...)

բ) բարձրացուցանեմ, անցուցանեմ, կեցուցանեմ, դարձուցանեմ, նստուցանեմ, անեցուցանեմ, հատուցանեմ, մատուցանեմ, հասուցանեմ, սատակեցուցանեմ: (ԶԳԵՅՈ)

= «Բ» մասի բայերից յուրաքանչյուրի ձեւը բանավոր թարգմանեցեր:

ԻԳ. դ ա ս

ԱՍՏԵՂՔ ԵՒ ԼՈՒՄԻՆ ԵՒ ԱՐԵՒ

Փողովեալ երբեմն աստեղաց՝ ասեն ի նոցանէ ծերագոյնքն.

«Մեք բազումք եմք՝ զիա՞րդ զտիւ եւ զգիշեր ոչ լուսաւորեմք նման արեգական եւ լուսնի»:

Ասէ ոմն.

«Զի ոչ միաբանութեամբ վարիմք»:

Եւ խորհեալ միաբանութեամբ նախ հերքել զարեգական. եւ ի ծագել լուսնի՝ պարտեցան եւ ասեն.

«Այսպէս ի սմանէ աղօտացաք, զի՞նչ եւ յարեգական ծագելն լիցուք»:

Եւ զղջացեալ զպարտութիւն խոստովանեցան:

(Մխիթար Գոշ, Առակ Ե.)

Բ ա ո ա Ր ա ն

երբեմն - մի անգամ
տիւ - ցերեկ. գտիւ եւ զգիշեր - գիշեր-ցերեկ (հմմտ. աշխ. տիվ ու գիշեր)

միաբանութիւն - համերաշխություն

Բ ա գ ա Տ Ր Ո Ւ Ք Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

Եւ խորհեալ...նախ հերքել զարեգակն - Խորհեալ ըստ «սովորոյթյան» պետք է «խորհելով, մտածելով» քարգմանեինք, բայց քանի որ այդ նախադասութեան մեջ ուրիշ բայ չկա (դիմաւոր), իբրեւ դիմաւոր բայ ենք քարգմանում - «խորհեցին, մտածեցին»: Գրաբարը նման դերբայածելերով նախադասութիւններ շատ է ձեւավորում, աշխարհաբարը՝ ոչ: Հմմտ. ԵԿԵԱԼ ԲԱԶՄԱՅ (ԺԳ.), ՄԿԱՆՅՆ ՀԱՄԱՐՉԱԿԵԱԼ (ԻԶ.):

Ոչ միաբանութեամբ վարիմք - Ոչ ժխտականը վարիմք բային է պատկանում - «համերաշխութեամբ չենք վարվում»: Գրաբարի համար յուրահատուկ է, որ ժխտական մասնիկը (ոչ մի՛ կամ ոչինչ) բայից կարող է հեռու, նույնիսկ շատ հեռու լինել:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հետեյալ նախադասութիւններն աշխարհաբար քարգմանեցեք.
ա) Ուրախ եղերո՛ւք ընդ իս, զի գտի զոչխարս իմ գկորուսեալ: * Ուր նախանձ, անդ է անկարգութիւն եւ ամենայն իրք (գործ) չարք: Ամենայն որ ըմպէ ի քրոյ (= ի քրոյդ) յայդմանէ միսանգամ ծարաւէ (= ծարաւեսցէ): Եւ լուեալ Անանիայի զբանսս զայտասիկ՝ անկաւ եւ եհան զոգի: Ոչ գոք

վիասեցաք (ԱՂՕՏԱՅԱԼ) մարմնական պատուհասիք: Հա՛յր, ապրեցո՛ զիս ի ժամ (= ի ժամես) աստի յայսմանէ. այլ վասն այնորիկ եկի ի ժամս յայս: * Դրպէս քոչում որ քոսանի ի բունոյ իւրմէ, նոյնպէս եւ մարդն ստրկանայ, քրժամ օտարանայցէ յիւրոց տեղեաց: * Եթէ ոչ հատն ցորենոյ անկեալ իրկիր մեռանիցի, ինքն միայն կայ, ապա եթէ մեռանիցի, բազում արդիւնս ասնէ (կտա): (ՈՉ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՄԲ ՎԱՐԻՄՔ)

բ) Յայնժամ ասէ քազաւորն ցապասաւորսն. «Կապեցէ՛ք գորա գոտս եւ զձեռս, եւ հանէ՛ք զդա ի խաւարն արտաքին»: * Ուր գանձն ձեր է, անդ եւ վիրտ ձեր եղիցին: Տասն լուծ եզանց (եզներով) գործեցաք եւ սափոր մի մեզ եւ, սերմանեցաք, եւ ոչ հնձեցաք, տնկեցաք, եւ ոչ կրեցաք: (ԱՂՕՏԱՅԱԼ): * Խարոք սնուցանէ այր արդար, եւ ի վերայ որդոյ իմաստնոյ ուրախ լինի վիրտ նորա: Եւ մեր զսական յիշատակեալ (ԺՈՂՈՎԵԱԼ...ԱՍՏԵՂԱՅ)՝ ահա սոսցաք որ ինչ յաղագս Ոստանն աւանին է: Եւ յելանելն նորա (Ի ԾԱԳԵԼ ԼՈՒՄԻՆ) ի տաճարէ անտի (այն), ասէ ցնա մի յաշակերտաց նորա. «Լարդապէ՛տ, տե՛ս, * որպիսի՛ են քարիմքՍ, եւ որպիսի՛ շինուածք»:

2. Հետեյալ արտահայտութիւնները գրաբար քարգմանեցեք.

3	2	1	2	1
արեգակը ծագելու ժամանակ			արեգակը փայլելով	
նրա գալու ժամանակ			նա գալով	
նրանց իմանալու ժամանակ			նրանք իմանալով	
քարն ընկնելու (անկանել) ժամանակ			քարն ընկնելով	
մեր ելնելու ժամանակ			մենք ելնելով	
(Ի ԾԱԳԵԼ ԼՈՒՄԻՆ)			(ԺՈՂՈՎԵԱԼ... ԱՍՏԵՂԱՅ)	

3. Վերեւի վարժութիւնների բնագրերից իրար հետ հօլովով ու թվով համաձայնված գույգ բառերը դուրս գրեցեք:



ԻՊ. դ ա ս

ԱՐՏԱՇԷՍ ԵՒ ՍԱԹԵՆԻԿ

**Քեզ ասեմ, ա՛յր քաջ Արտաշէս,
 Որ յաղթեցեր քաջ ազգին Ալանաց,
 Ե՛կ, Հաւանեա՛ց բանից
 Աչազեղոյ դստերս Ալանաց՝
 Զի վասն միոյ քինու ոչ է օրէն զիւցազանց՝
 Զայ գպատանիդ.
 Զայլոց զիւցազանց դարմից
 Բառնալ զկենդանութիւն,
 Կամ ծառայեցուցանելով
 Ի ստրկաց կարգի պահել,
 Եւ թշնամութիւն յախտենական
 Ի մէջ երկոցունց ազգաց քաջաց Հաստատել:**

(Ժողովրդական, Մովսէս Խորենացոյց)

Ք ա ղ ա ռ ա ն

հաւանիմ - համաձայնվել. **հաւանեաց** - համաձայնվիլի (հմմտ. աշխ. հավանություն - համաձայնություն)
ոչ է օրէն - այստեղ վայել չէ, պատշաճ չէ

բառնամ - վերացնել. **բառնամ զկենդանութիւն** - կենդանությունը վերացնել, սպանել

Ք ա գ ա ռ ու թ յ ու ն ն Ե Ր

Այր - Այստեղ որպէս ձայնարկություն է օգտագործվել - «ո՛վ»:
Աչազեղոյ դստերս - «Գեղայա դստերս»: **Աչազեղոյ եւ դստերս, միոյ եւ քինու, երկոցունց, ազգաց եւ քաջաց բառերի միջև** ի՞նչ եք նկատում:
Զպատանիդ - Դ հողի իմաստն այստեղ ի՞նչ բառով պետք է արտահայտել:
Վասն միոյ քինու - Վասն (նախադրությունն) այստեղ «համար» իմաստն ունի - «մի քննի՛ ոյսի համար կամ պատճառով»:
Զայլոց զիւցազանց զարմից բառնալ զկենդանութիւն - Այլոց-ը զկենդանութիւն բառի լրացումներից առաջինն է եւ բանի որ նրանից շատ հեռու է, Չ նախդիրը կրկնվել է:
Ի ստրկաց կարգի - Ի (նախդիրն) այստեղ կարգի բառին է պատկանում: Ուրեմն կապակցությունն ինչպե՞ս պետք է բարգձմանէ:

ՀՈՒՈՎԻԶՆԵՐ ԵՒ ՀՈՒՈՎՈՒՄՆԵՐ

Հոլովիչներն ա՛յն ձայնավոր մասնիկներն են, որոնց օգնությամբ բառը (կոյական, ածական, բովական, դերանուն, դերբայ) հ ո լ Ո Վ Ո Ւ Մ է:

Գրաբարում դրանք բառի վրա սեռական հոլովից սկսած են դրվում եւ գրեթե միջև վերջ, եզակի ու հոգնակի: Ուղղականից բացի՝ միայն հայցականում է որ հոլովիչներ չեն լինում (որովհետեւ, ինչպես գիտենք, այս հոլովն ուղղականին է ձևով նման):

Դասի բնագրում հանդիպած բառերից **ազգի՛ն, բանի՛ց, զարմի՛ց, կարգի՛** Ի հոլովիչն ունեն: Ընդ որում, դրանցից առաջինն ու վերջինը եզակի են, մյուս երկուսը՝ հոգնակի: **ԱլանԱց, դիւցազԱնց, ազգԱց, քաջԱց** Ա հոլովիչն ունեն (բոլորն էլ հոգնակի): **Դստերս** Ե հոլովիչն ունի (եզակի), **աչազեղՈյ, միՈյ, (զ)այլՈց, ծառայիւցանելՈվ՝ Ո** (այլոց-ը հոգնակի, մնացածները եզակի): **ՔինՈՒ** եւ **երկոցՈՒնց** (Ի հոլովիչն ունեն (ուղղ. **քէն, երկոքեան**. պարզ է, առաջինը եզակի, երկրորդը հոգնակի):

Հոլովիչն է բառի ո՛ր հոլովման պատկանելը ցույց տալիս:

Ծ ա ն. Այս կամ այն բառի՝ ի՛նչ հոլովիչով հոլովվելը որոշելը մեծապես կհեշտանա, եթե հաշվի առնեն մինչեւ հիմա բնագրերում արդեն հանդիպած ձեւերը, ինչպես նաեւ ուրիշներ, որոնք ծանոթ են ընթերցված գրականությունից, աղոթքներից, շարականներից եւ այլն: Այսպես, դայրոցից ծանոթ գլուխգործոց բառը բնականաբար կհուշի, որ **գործ** Ո-ով է հոլովվում, **ակն ընդ ակն, աստմն ընդ ատամն** ամածը՝ որ **ակն** եւ **ատամն** բառերն Ա հոլովիչով են հոլովվում եւ այլն: Մնացած դեպքերում, դժվարանալիս, բառարան պետք է նայել:

ՎԱՐՃՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հետեւյալ նախադասություններն աշխարհաբար քարգմանեցեք.

ա) Գտանեն գԱրայն մեռեալ ի մէջ քաջամարտկացն, եւ հրամայէ դնել զմա ի վերնատան ապարանիցն: Դու հաստատեցեր զօրսքեամբ քով զծով, զու խորտակեցեր (ՅԱՂԹԵՅԵՐ) զգլուխ վիշապաց ի վերայ ջուրց: * Անգգամն անգոսնէ զխրատ հօր իւրոյ: * Ոյք (ովքեր որ) ուտեն զիս՝ տակաւին քաղցիլին, եւ ոյք ըմպեն զիս՝ տակաւին ծարաւեսցին: Եւ մինչ շունչ նոցա կենդանի էր ի նոսա, արկանէին յերկիր եւ քարշէին: Բայց վասն փութով եւ յանկարծակի ելանելոյ ոչ գտանէին զբաստ եւ բեռնակիր անասուն: (ՎԱՄՆ ՄԻՈՅ ԹԻՆՈՒ)

= Ոյք - «ույք» կարդացեք:

բ) Հարցէք զիս վասն որդւոցն ինոց եւ դստերաց, եւ վասն գործոց ձեռաց ինոց պատուէր տո՛րք ինձ: Ես արարի զերկիր եւ զմայրն ի վերայ նորա, եւ ձեռամբ ինով հաստատեցի զերկինս, եւ ամենայն աստեղաց ետու հրաման: Ես յարուցի (բարձրացնել, կանգնեցնել) զմա այլապայությամբ քազաոր, եւ

ամենայն ճանապարհք նորա ուղիղ են. նա շինեսցէ զքաղաքն իմ, զգերութիւն ժողովրդեան իմոյ դարձուցէ, ոչ կաշառօք եւ ոչ պատարագօք աստ Տէր գորութեանց:

(Եւ. ԽԵ 11-1)

* Անձք Տեանն ի տունս ամպարշտաց, յարկք արդարոց օրհնին: * Տամբարտաւանից հակառակ կայ, տայ շնորհս խոնարհաց: * Չփաս իմաստունք ժառանգեսցեն, իսկ ամպարիշտք բարձրացուցին զանարգանս:

(Առակք Գ 33-3)

2. Մյուս սյունակները լրացրէք: Յուրաքանչյուր ձեւը բանավոր բարգմանեցէք.

Ա. դեմք

Բ. դեմք

Գ. դեմք

(ՅԱՂԹԵՑԵՐ)

(Այնտեղ, ուր աշխարհաբարն -եց ունի, գրաբարում սովորաբար -եաց է)

- գործեցի
- կոչեցի
- շարժեցի
- կանգնեցի
- զգացի
- հեղի
- խաղացի
- ապրեցուցի
- հանգուցի
- ազուցի

(Այս դեմքի ձեւն ուշադիր)

} (Գ., ՅԱԻԵՅՈՅՑ)

3. Հետեւյալ արտահայտությունները գրաբար բարգմանեցէք («ներգրուկանով», ինչպես Բ., Ի ԾՈՎՈՒՆ, եւ Ի ՄԷՋ-ով, ինչպես այս դասի մեջ).

խոսքի մեջ, ազգի մեջ, աշխարհում, քարի մեջ, երկրում, տան մեջ, ԱՅ՝ խոսքի մեջ, ԱՅՍ խոսքի մեջ, ավերակում:

Ն մ ո լ շ՝ վերնատան մեջ - ի վերնատան, ի մէջ վերնատան:

Կ ա թ ե ի ո թ. Եթե բառի կողքին փակագծում գրաբարյան յուրահատուկ ձեւն ճշված չէ, նշանակում է՝ այն աշխարհաբարի նման է:

4. Ընդգծված ս ե ո ա կ ա ն ձեւերն ուղղականների հետ համեմատելով որոշեցէք, թե որոնք են հոլովիչները: Յուրաքանչյուրի թիւլը (եզակի կամ հոգնակի) բանավոր ցույց տվէք.

Ուղղ. հող - սեռ. հողոյ, կայսր - կայսեր, որդի - որդւոց, զարդ - զարդոյ, Մահակ - Մահակայ, աստղ - աստեղց, բերան - բերանոյ, դուռն - դրան, թիկունք - թիկանց, լեռան - լերին, լերանց, հոգի - հոգւոյ, հոգւոց, աշխարհ

աշխարհի, աշխարհաց, ազգ - ազգի, ազգաց, ճառագայք - ճառագայթի, ճառագայթից, Ծովք - Ծովիաց, Վիրք - Վրաց, այգի - այգւոյ, այգեաց, պատանի - պատանոյ, պատանեաց, քազաւոր - քազաւորի, քազաւորաց, մետ - մետի, մետից, գիրք - գրոց, զանձ - զանձու, զանձուց, եկեղեցի - եկեղեցւոյ, եկեղեցեաց:

Ն մ ո լ շ՝ անձն - անձին (Ի, եզակի), անձԱնց (Ա, հոգնակի):

5. Փորձեցէք որոշել, թե թիվ 4 վարժուքյան բառաձեւերում հոլովիչները բառի վերջի՞ց են ավելացել, թե՞ նրա ներսում:

Ն մ ո լ շ՝ երկիր - երկրի (Ի, վերջից), երկրԱց (Ա, վերջից. Յ-ն նույնպէս վերջավորութիւն է). կողմն - կողմնԱն (Ա, ներսում), կողմնԱնց (Ա, ներսում):



ԻՆ. դ ա ս

ՆԱԽԱՐԱՔ ՀԱՅՈՑ

Քանզի ի բառնալ աղզին Արչակունեաց, տիրեցին աշխարհիս Հայոց աղզն Սասանայ պարսկի, որ վարէր զիւր իշխանութիւնն օրինօք մոզուց. եւ բազում անգամ մարտնչէր ընդ այնոսիկ՝ որք ոչ ընդ նովին օրինօք մտանէին, սկիզբն արարեալ յամացն Արչակայ արքայի որդւոյն Տիրանայ, եւ կուէր մինչեւ յամն վեցերորդ Արտաշիսի արքայի Հայոց, որդւոյն Վառաշապուհոյ: Եւ իբրեւ զնա եւս մերժեաց ի թագաւորութենէն, ի նախարարսն Հայոց անկանէր թագաւորութիւնն. զի թէպէտ եւ զանձն յարքունիս Պարսկաց երթայր, սակայն այրուձին Հայոց բովանդակ ի ձեռն նախարարացն առաջնորդէր ի պատերազմի:

(Եղիշէ, Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին)

Ք ա ո ա ր ա ն

բառնամ - այստեղ՝ վերանալ
ազգ - այստեղ՝ տոհմ. հարստություն (թագավորություն)

օրէնք - այստեղ՝ կրօն. ուսմունք
մերժեմ - այստեղ՝ զրկել
զանձ - այստեղ՝ հարկ, տուրք

Ք ա գ ա ս ր ո յ յ ո Ւ Ն Ն Ե ր

Քանզի - Այստեղ իր բուն՝ «որովհետեւ» իմաստով չի օգտագործված, այլ պարբերությունն սկսելուն, խոսքը ոճավորելուն է ծառայում: Այսպես գրաբարում ընդունված է գործածել նաեւ՝ **արդ, այլ, զի:** Թարգմանելիս **արդ**-ը կարելի է նույնությամբ բողոքել, իսկ մյուսներն անտեսել:

Ի բառնալ ազգին Արչակունեաց - Ինչպե՞ս պետք է թարգմանել (հմտ. Զ., Ի ՊԱՐԶԵԼ ՈԳԻՈՑՆ):


Տիրեցին...ազգն - Ազգ բառը, քանի որ իր բ ո վ ա ն դ ա կ ո յ յ ա մ ք ՝ ի մ ա ս տ ո վ հ ո գ ն ա կ ի է (հավաքական գոյական է), հոգնակի բովոլ դրված բայի հետ է գործածվել: Աշխարհաբարում նման դեպքերում բայը եզակի է դրվում - «ազգը տիրեց»:

Ընդ այնոսիկ - Ինչպե՞ս պետք է թարգմանել: Նման կիրառությամբ կարող է նաեւ «դեմ» թարգմանվել:

...որք ոչ ընդ նովին օրինօք մտանէին - «...որոնք նույն կրօնը չէին դավանում» (բառացի՝ «որոնք նույն կրօնի տակ չէին մտնում»): Նովին-ը նոյն դերանվան գործիականն է: Հիշեցեք, քե ընդ + գործիական ինչի՞ է հավասար (հմտ. ԺԷ, ԸՆԴ ԱՅԼՈՎԷ...ԹԱԳԱԻՌՌՈՒԹԵԱՄԲ):

Սկիզբն արարեալ - «Սկսած» (հմտ. Զ., ՍԿԻԶԲՆ ԱՐԱՍԶԻՔ):

...յամացն Արչակայ արքայի որդւոյն Տիրանայ, ...մինչեւ յամն վեցերորդ Արտաշիսի արքայի Հայոց, որդւոյն Վառաշապուհոյ - Գրաբարը, աշխարհաբարի համեմատությամբ, նախադասության անդամների շրջված դասավորություն ունի: Այդ բանն այստեղ առավել ցայտուն է երևում: Դրանում համոզվելու համար թարգմանությունը համեմատեցեք. «Տիրանի որդի Արչակ արքայի տարիներից», «...մինչեւ Վառաշապուհի որդի հայոց Արտաշես արքայի վեցերորդ տարին»: Հմտ. նաեւ՝



Դժվար չէ նկատել, որ այս վերջին դեպքում բառերը լիովին հակառակ դասավորությունն ունեն:

Մինչեւ յամն - Մինչեւ նախադրությունը միայն Ի կամ Յ նախդիրների եւ հայգականի (ամն) հետ կարող է գործածվել. մինչեւ յամն կամ մինչեւ ցամն - «մինչև տարին»:

Ի ձեռն նախարարացն - Ի (նախդիր) + հայցական (չեռն) = այստեղ՝ **գործիական** - «նախարարների ձեռքով» (կարող է նաեւ «կողմից» թարգմանվել):

Ի պատերազմի - Ինչպե՞ս պետք է թարգմանել (2 լուծում է հնարավոր):

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հետեւյալ նախադասություններն աշխարհաբար թարգմանեցեք.

ա) Յայնժամ հասանէր համբաւ ի դուռն արքունի: Կինն իմ մանէր եւ գործեր ձեռովք իւրովք, եւ տայր տերանցն (= ցտեարս): (ՎԱՐԷՐ): Ո՛վ ազգ անհաւատ եւ թիւր, մինչեւ ցե՞քք իցեմ ընդ ձեզ, մինչեւ յե՞քք անսայցեմ ձեզ: Եւ մինչեւ ի մուտս (ՄԻՆԶԵԻ ՅԱՄՆ) արեգականն անդադար լինէր գործ դառնութեանն (դառն, ցավալի): Աղաղակեալ ի ձայն մեծ՝ խցին (փակել) զականջս իւրեանց, եւ դիմեցին առ հասարակ ի վերայ նորա: Նյլսիւք ի մարմին (Ի ՉԵՆՆ), այլ հոգայն արքնութեամբ վարէր զկանս զԱրեսի ի մէջ աստեղացն: Կամ ո՞ր թագաւոր երթեալ տայցէ պատերազմ ընդ այլում թագաւորի, եւ ոչ նստեալ խորիցի, եթէ կարօ՛ղ իցէ տասն հազարաւ զդեմ անկ զայնորիկ որ գայցէ ի վերայ նորա քսան հազարաւ: Եւ յարիցեն Եզիպտացիք ի վերայ Եզիպտացոցն, եւ տայցեն պատերազմ այր ընդ եղբօր եւ այր ընդ ընկերի, քաղաք ընդ քաղաքի եւ օրէնք ընդ օրէնս: (ԸՆԴ ԱՅՆՈՍԻԿ)

բ) Եւ գտնացուածս եւ զինչս վաճառէին, եւ բաշխէին զայն ամենեցուն ում զխարդ պիտոյ ինչ լինէր (պետք լինէր): * Մինչեւ յե՞քք յորսայտեալ կաս, ո՛վ վատ, կամ ե՞քք ի քնոյ զարթիցես: Գնաց անտի յերկիր մի որ մերձ էր յամապատ, ի քաղաք մի որում անուն Եփրայիմ, եւ անդ լինէր աշակերտօքն

հանդերձ: * Իւրաքանչիւր որ ի մէնջ (մեզանից) ընկերին հաճոյ լիցի **ի բարիս:** Շինէ եւ գիւր մի եւ անուանէ **յիւր անուն** Հայկաշէն: Արգել **ի սուր** զժողովուրդ իւր, եւ զժառանգութիւն իւր անտես արար: Օրհնեցէ՛ք զՏէր **յօրհնութիւն** նոր: Չկես փայտին այրեցին **ի հուր**, եւ ի վերայ կայծականց նորա հաց արարին, եւ միս խորովեցին եւ կերան: (Ի ՉԵՈՆ)

գ) Բայց առ ժամն ծածկեալ նորա գրոյնսն՝ առ երեսս բարի երեւեցուցանէր զանձն (իրեն): Չայն նշան տուեալ էր նորա, թէ «Ընդ որում ես համբուրեցից, նա է, զնա ունիցիք (Բ.)»: * Իսկ որ ճանաչէ զյանցանսն եւ զարհուրեալ սրտիս կարող լինիցի փութալ ի գոջումն՝ վաղվաղակի պատահի (պիտի արժանանա) քողութան: * Ի՞նչ (ինչո՞վ) ուղղեսցէ երկոտասարդ զճանապարհ իւր, այլ (եթե ոչ) ի պահել (Ի ՉԵՈՆ) զբանս քո: Միթէ զօ՞րն ամենայն հերկիցէ որ (նա, ով) հերկէն զերկիր. միթէ ասիցէ՞ կանց ցբբուտն, «Չի՞ կաս՝ զի՞ ոչ գործես. չի՞ք քո (դու չունե՞ս) ձեռք». միթէ ասիցէ՞ ստեղծուածն ցատեղծիչն իւր՝ թէ «Ընդէ՞ր այսպէս ստեղծեր (Ի՞նչ, ՅԱՂԹԵՅՏԵՐ) զիս, եւ ցմայր իւր՝ թէ «Ընդէ՞ր երկնցեցեր զիս»: Առ քեզ, բարեգոյ՛ք, ապաւինեալ կարդամք (Թ.), մի՛ մերժեր զձեզ յողորմութենէ քումմէ:

2. Դասի բնագրում ընդգծված բառերն արտագրեցեք եւ դրանցից յուրաքանչյուրի հոլովիչը ցույց տվեք: Թարգմանությունից օգտվելով՝ փորձեցեք յուրաքանչյուրի հոլովն ու թիվը որոշել:

Ն մ ու ի շ՝ ՊարսկԱց - Ա հոլովիչ (հոգն. սեռ.):

3. Թիվ 1 վարժության նախադասություններից ինքներդ հոլովիչ ունեցող բառերը գտեք ու դուրս գրեցեք եւ նույն ձևով վերլուծեցեք:

4. Երբ հոլովված բառերից յուրաքանչյուրի հոլովիչն արպեն գտել եք, փորձեցեք պարզել, թե այն ամեն մի կոնկրետ դեպքում բառի ո՞ր մասում է ավելացել (վերջի՞ց, թե՞ ներսում):

Ն մ ու ի շ՝ ՊարսկԱց - Ա հոլովիչ (ավելացել է վերջից, Կ-ից հետո), սերմԱնց - Ա հոլովիչ (ավելացել է ներսում, Ն-ից առաջ):



ԻՉ. դ ա ս

ՄԿՈՒՆՔ ԵՒ ԿԱՏՈՒ ԵՒ ԵՐԿՈՒՄՆ ՆՈՐԻՆ

Մկունք համանգամայն հրեշտակս առաքեն առ կատուն եւ ասեն, «Չի՞նչ քեզ մեղանչեմք, որ այդքան զմեզ հալածես, զի՞նչ քո ստեմք»:

Ասէ ցնոսա.

«Ո՞չ զիտէք եթէ յայն սակս զմեզ մարդիկ դարմանեն, զի զամբարս երկա մեք պահեսցուք. արդ եթէ դուք այնմ ոչ մեղիցէք, համարձակ լրջիսջիք, ոչինչ ձեզ վնասեցից, եւ զայս երդմամբ հաստատեցից»:

Եւ ձեռն եղեալ ի գլուխ երդուաւ: Եւ մկանցն համարձակեալ զանկիալ հատան առնուլ, եւ յարուցեալ կատուն զբազումս սաստակեաց: Եւ ասեն.

«Ո՞չ ապաքէն երդուար անկեալ հատի ոչ առնուլ վրէժ»:

Եւ նա ասէ.

«Ոչ երդուայ, այլ ըստ սովորութեան զգլխով զձեռս արկի»:

(Մխիթար Գոշ, Առակ ՂԱ.)

Ք ա ռ ա ր ա ն

համանգամայն - 1. միասին	2. միանգամից	դարմանում - պահել, սնուցանել, խնամել (հմմտ. է., ՈՒՂՏ ԵՒ ԴԱՐՄԱՆԻՉ ԻԻԲ)
հրեշտակ - 1. սուրհանդակ, պատգամավոր	2. հրեշտակ	յառնեմ - վեր կենալ, ելնել
այն սակս - նրա համար		սաստակեմ - ստուկեցնել, սպանել
		ո՞չ ապաքէն - չէ՞ որ. մի՞թե չ...

Ք ա ց ա ս ր ո թ յ ո յ ն ն ր

- Երդումն նորին - Տես ԺՁ., ՆՈՐԻՆ:
- Ոչինչ...վնասեցից - Ոչինչ (ոչ ինչ) նաեւ ժխտական մասնիկի դեր է կատարում - «պիտի Չվնասեմ» կամ «Չեմ վնասելու»:
- Եղեալ - «Դնելով»:
- Ի գլուխ - Ինչպե՞ս պետք է թարգմանել:
- Եւ մկանցն համարձակեալ - Ինչպե՞ս է թարգմանվում: Հմմտ. ԻԳ., ԵՒ ԽՈՐՀԵԱԼ ... ՀԵՐՔԵԼ:
- Թարուցեալ կատուն - Կարող էր նաեւ յարուցեալ ԿԱՏՈՒԻՆ լինել: Ինչո՞ւ:
- Թղլխով զձեռս արկի - Արկանեմ, ինչպես նաեւ անկանիմ բայերի կողքին գործածվում է Ձ (նախդիր) + գործիական (զգլխով) եւ «վրս» է թարգմանվում -

«ձեռքս գլխիս վրա գցեցի»: Մա բառացի բարգձմանությունն է կարող ենք ասել «ձեռքս գլխիս դրեցի»: Այսպես նաեւ՝ **արկանեմ զուսովք** - «ուսերի վրա կամ ուսերին գցել», **զմիմեամբբ արկանէին** - միմյանց վրա էին գցում», **անկաւ զպարանոցաւ** - «պարանոցի՝ վզի վրա կամ վզին կամ վզով ընկաւ»:

ՎԱՐՃՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. **Հետեւյալ նախադասություններն աշխարհաբար բարգձմանեցեք՝ բաների շարադասության փոփոխություններին ուշադրություն դարձնելով:**

ա) Դեպով յդէր զիշխանն առ Գղիհոն: * Միքէ կարիցէ՞ կոյր կորի առաջնորդել, ո՞չ ապաբէն երկորին ի խորխորատ անկանիցին: Չոր ինչ զիտեմք՝ խօսիմք, եւ զոր տեսաք՝ վկայեմք, եւ զվկայութիւն մեր ոչ ընդունիք: * Ոչ որ **արկանէ ձեռն զմաճով** եւ հայիցի յեսս: Եւ բազումք զհանդերձս իրեանց տարածանէին (փռել) ի վերայ ճանապարհին, եւ այլք ոստս ի ծառոց հատանէին եւ **արկանէին զճանապարհան:** (ԶԳԼԽՈՎ... ԱՐԿԻ)

բ) Մեք զմերն ըստ կարի համառօտեցաք: * Աչք զոն եւ ո՞չ տեսանէք, ականջք զոն եւ ո՞չ լսէք, ո՞չ իմանայք տակալին, եւ ո՞չ յիշէք: Մի խռովեսցին սիրոք ձեր եւ մի՛ զանգիտեսցին: Հարցից եւ ես զձեզ բան մի, զոր քէ ասիցէր ինձ, եւ ես ձեզ ասացից՝ որով իշխանութեամբ առնեմ զայս: * Արդ արթում կացէ՞ք, զի ոչ զիտէք երբ տէր տանն զայցէ, յերեկորեա՞յ, եթէ (թե՞) ի մէջ զիշերի, եթէ ի հաւախօսի, եթէ ընդ առաւօտս:

գ) Ո՞չ անպաբէն եւ մաքսատոք զնոյն զործեն: Եղեալ զսուրն ի ձեռն՝ ետ սպանանել զսուրբն: * Մի՛ տայք զսրբութիւն շանց, եւ մի՛ արկանէք զմարգարիտս առաջի խոզաց: **Ոչ ինչ գտի** ի դմա վնաս արժանի մահու. դուք առէ՞ք եւ ըստ ձեր օրինաց դատեցարո՞ւք: Յահէ սպառնալեաց ոչինչ **դադարեցին** Ջուղայեցիքն: (ՈՉԻՆՉ...ՎՆԱՍԵՑԻՑ): Բայց եկ յանդիման լիցուք միմեանց ի քաղաքն Պողոսմեացաց, զի տեսցուք զմիմեանս: (ՊԱՇԵՍՑՈՒԹ): Եւ յամին երրորդում **սերմանեսջիք** եւ **ինձեսջիք**, տնկեսջիք այգիս եւ **կերիջիք** զպտուղ նորս (ՇՐՋԵՍՁԻԹ):

2. **Մյուս սյունակները լրացրէք:** Յուրաքանչյուր ձեւը բանավոր բարգձմանեցեք.

Ա. դեմք (ՊԱՇԵՍՑՈՒԹ) **Բ. դեմք** (ՇՐՋԵՍՁԻԹ) **Գ. դեմք** (ՇՐՋԵՍՑԵՆ)

տեսցուք
գործեսցուք
կոչեսցուք
յանդիմանեսցուք
կարգեսցուք
խօսեսցուք (խօսիմ)

(Այս ձեւում ուշադիր)

զգասցուք
զիտասցուք
բողցուք
անցցուք
արկցուք
անկցուք (անկանիմ)
հատցուք

(Այս ձեւում ուշադիր)

3. **Հետեւյալ հատվածն աշխարհաբար բարգձմանեցեք.**

Եւ եղիցի յաւուրս յետինս յայտնի լեառն Տեառն, եւ տուն Աստուծոյ ի վրայ զլիտց լեբանց, եւ բարձրասցի ի վերայ բլրոց, եւ եկեսցեն ի նա աննայն հեթանոսք: Եւ երթիցեն ժողովուրդք բազումք, եւ ասասցեն, «Եկայք եւ կցուք ի լեառն Տեառն, ի տուն Աստուծոյ Յակոբայ, եւ պատմեսցէ մեզ զճանապարհս իւր, եւ զնացուք ընդ նա». զի ի Մյոնէ ելցեն օրէնք, եւ բան եկան յԵրուսաղեմէ. եւ դատեսցի ի մէջ հեթանոսաց, եւ յանդիմանեսցէ զժողովուրդս բազումս. * Եւ ձուլեսցեն զուսերս իրեանց ի խփս, եւ զսոխնս իրեանց ի մանգաղս. ոչ առնուցու ազգ յազգի վերայ սուր, եւ ոչ ետ ասանիցին տալ պատերազմ:

(Եւ. Բ 2-4)

4. **Հետեւյալ բառերի հոլովիչներն ընդգծեցեք եւ յուրաքանչյուրի թիվը որոշեցեք:** **Նաեւ որոշեցեք, թե՞ այդ հոլովիչները բառի վերջի՞ց են ավելացել, թե՞ ներսում.**

երդմամբ, մկանցն, հատի, սովորութեան, զգլխով, ի վարուց, ամպոց, վրելեաց, ուղտու, քաջի, քաջաց, յաստեղէ, յաստեղց, մարմնոց, իշխանի, իշխանաց, թզենոյ, ի թզենեաց, ասիին, յասիանց:

5. **Հետեւյալ նախադասությունները գրաբար բարգձմանեցեք.**

2 5 4 3 1
Նրան իր հոր մտ պիտի ուղարկենք:

3 2 4 1
Իր քաշկինակը գլխին (զլխի վրա) գցեց:

2 1
Ամունդ զիտենք:

4 3 2 1
Պարսից աշխարհի վրա պիտի իշխեն:

2 1 3 6 5 4
Այնտեղից ելնում ենք ու մեր տեղը չենք գնում:

1 3 4 5 2
Չէ՞ որ դուք մեզ հեռվից (ի հեռաստան) եք տեսնում:

Կ ա ր ե ո թ . Նրան, քաշկինակը, ամունդ, մեզ հայցական հոլով են:

ԻԷ. դ ա ս

ՍԷՐ ԲԱՐԵԿԱՍՈՒԹԵԱՆ

Իբրև Դամոն եւ Փիւթիաս բարեկամք միմեանց դարձ առնէին ի Սիրակուսա, դէպ եղև Դիոնիսեայ բռնաւորի ամբաստանութեան լոկով դատապարտել զՓիւթիաս ի մահ: Իսկ մահապարտն խնդրեաց պարապ, մինչև երթեալ ի քաղաք մի (= ուրեք)՝ որ մերձ էր անդր հրաման տայցէ վասն իրաց իւրոց կարեւորաց. եւ խոստացեալ դանապ ըստ ժամադրութեան՝ մեկնեցաւ, թողեալ երաշխաւոր զԴամոն ի վտանգ մահու:

Յերկարացան իրք Փիւթիասայ, եւ ժամանեաց օրհաս սպանութեանն: Ամբոխն խոնեալ, կէսք պարսուէին զԴամոն եւ կէսքն աւաղէին զնա. իսկ նա խաղաղութեամբ երթայր ի մահ, վստահ ի դարձ բարեկամին իւրոյ, յօժարագոյն եւս ի տալ զանձն փոխանակ նորա:

Եւ իբրև եկն եհաս ժամն դառնութեան, ահա ամբոխ աղաղակիւ ապր առնէր զգայուստ Փիւթիասայ: Դիմեաց սլացսւ նա ի տեղի պատուհասին, մինչ շողայր սուսեր զգլխով բարեկամին, եւ յափշտակելով խն յիրերաց զբախտ մեռանելոյ ընդ սիրելոյն: Ընդ որ տեսողացի ամենեցուն յարտասուս հարեալ, եւ նոյն ինքն բռնաւորն վազեալ յաթոռոյն՝ խնդրեաց չքնաղ բարեկամութեան նոցա լինել հաղորդ:

...«Մեծ եւս քան զայս սէր ոչ որ ունի, եթէ զանձն իւր զիցէ ի վերայ բարեկամաց իւրոց» (Յովհ. ԺԵ 13):

(Եղիշէ արք. Դուրյան)

Բ ա ռ ա ր ա ն

դարձ առնեմ - վերադառնալ
դէպ եղև - այնպես պատահեց, որ
պարապ - պարապ՝ ազատ ժամանակ,
այստեղ՝ պայմանաժամ
անդր - այնտեղ
հրաման տամ - այստեղ՝ կարգադրու-
թյուն անել. տնօրինել
իւր - այստեղ՝ գործ,
յերկարիմ - երկարել. ձգձգվել
աւաղեմ - ափնոսալ

տամ զանձն - անձը՝ իրեն տալ՝ զոնել
ամբոխ - 1. (առաջին դեպքում) ամբոխ
2. (երկրորդ դեպքում) աղաղակ
իրարանցում (ամբոխ եւ աղաղակ
այստեղ հոմանիշներ են)
ազդ առնեմ - ազդարարել
յարտասուս հարկանիմ - արտասվել
արտասվելու աստիճան հուզվել
հաղորդ լինիմ - հաղորդակից լինել
զանձն դնեմ ի վերայ - անձը գոնել

Բ ա գ ա ս ռ ո յ յ ու ն ն Ե Ր

Պէլ եղև Դիոնիսեայ բռնաւորի...դատապարտել - «Այնպես պատահեց, որ Դիոնիսիոս բռնավորը դատապարտի կամ դատապարտեր»: Սա գրաբարին հատուկ ոճ է. դէպ եղև-ի հետ իբրև ե ն ք ա կ ա գործածվում է արական հոլովը (Դիոնիսեայ բռնաւորի. սրանց միջև համաձայնություն կա), իսկ հաջորդող անորոշ դերբայը (դատապարտել) բարգձմանվում է իբրև դիմավոր բայ՝ «դատապարտի, դատապարտեր»: Այսպես նաև՝ դէպ եղև ինձ տեսանել - «այնպես պատահեց, որ ես տեսա», դէպ եղև նմա մտանել - «այնպես պատահեց, որ նա մտավ», դէպ եղև նոցա իջանել - «այնպես պատահեց, որ նրանք իջան», դէպ եղև արքային տալ հրաման -²:

Ի մահ, (վստահ) ի դարձ, ի տալ - Ինչպե՞ս պետք է բարգձմանել:
Յօժարագոյն, մեծ...քան զայս սէր - Ինչպե՞ս պետք է բարգձմանել:

Ժամն դառնութեան - «Դամն ժամը»: Գրաբար ոճը սիրում է ա ծ ա կ ա ն գործածելու փոխարեն - ուրիշ անհնգով գ ո յ ա կ ա կ ա ն օգտագործել՝ նույն իմաստով. փոխանակ ժամն ԴԱՆ-ն ասելու, ժամն դառնութեան է ասում (սեռական հոլովով): Այսպես է նաև վերնագրի մեջ՝ սէր բարեկամութեան, որ պետք է «բարեկամական սեր» բարգձմանել. քան իմաստութեան - «իմաստուն խոսք», յիշատակք բաղդոնութեան - «բաղդր հիշատակներ», գործք արձութեան -²:

Պղլտով - Ինչպե՞ս պետք է բարգձմանել (Ձ. դասից ՇՈՒՐՁ ՋՆՈՎԱԿ-ը հիշեցեք):

...եւ յափշտակելով իմն...- Յափշտակելով դերբայը (գործիական հոլովով) իբրև դիմավոր՝ բայ է բարգձմանվում՝ «հափշտակում էին» (տե՛ս ԻԳ., ԵԻ ԽՈՐՀԵԱԼ...ՀԵՐՔԵԼ, հմմտ. ԻՁ., ԵԻ ՄԿԱՆՅՆ ՀԱՄԱՐՁԱԿԵԱԼ): Իմն անորոշ դերանունը նման կիրառությամբ սովորաբար «ձեռով» է նշանակում, բայց այստեղ հարմար է «ասես, կարծես» կամ «մի տեսակ» բարգձմանել - «եւ կարծես՝ ասես՝ մի տեսակ հափշտակում էին»:

Ընդ սիրելոյն - ԸՆԴ (նախդիր) + սեռական (սիրելոյն) = «փոխարեն, դիմաց, տեղը» - «սիրելիի փոխարեն տեղը»: Այսպես նաև. Եւ ուսոյ՝ տացէ քաջն Արտաշէս հազարս ի հազարաց եւ բիրս ի բիրոց ընդ քաշագոյն կոյս օրիորդիս Ալամաց - «Եւ քաջն Արտաշէսը հազար-հազարներ ու՝ բյուր-բյուրեր Ալամաց քաջագրի կույս օրիորդիս փոխարեն՝ դիմաց որսեղի՞ց պիտի տա», Ես իբրև գորդի սիրեցի զնա, եւ նա ինձ չար ընդ քարոյս հատոյց - «Ես նրան որդու պես՝ որպես որդու սիրեցի, բայց նա բարու փոխարեն՝ դիմաց չարք հատուցեց»:

Հաճախ փոխանակ եւ ընդ միասին են գործածվում, այնպես որ ընդ աշխատութեան, փոխանակ աշխատութեան եւ փոխանակ ընդ աշխատութեան համապարապես «չարչարանքի դիմաց» են նշանակում:

Ընդ որ - «Դրա վրա»:
Տեսողացն ամենեցուն յարտասուս հարեալ - Ինչպե՞ս պետք է բարգձմանել (հմմտ. վերևի յափշտակելով իմն-ը): Տեսողացն ամենեցուն-ն զգույշ բարգձմանեցեք:

Ոչ որ ունի - Ոչ որ, նաև ոչինչ = ոչ ինչ բաների (ժխտական դերանունների) հետ բայերը դ ր ա կ ա ն ձեռով են գործածվում - «ոչ որ չունի»: Հմմտ. ՈՉ ՈՔ ՀԱՆԻՅԵ, ՈՉ ՈՔ ԿԱՐԷ (ԺԳ., վարժ. 1), ՈՉ ՋՈՔ ՎՆԱՍԵՅԱԼՔ (ԻԳ., վարժ. 1ա), ՈՉԻՆՉ ՈՒՆԻՄ (ԺԶ., վարժ. 1գ), ՈՉԻՆՉ ԳՏԱՆԻՅԻ (ԼԶ.), * Ջայն գիտեմ, զի ՈՉԻՆՉ ԳԻՏԵՄ (Սոկրատես): (Հմմտ. նաև արևմտահայերեն՝ Ոչ որ քսաւ, հէք տղայ... - Պ. Դուրյան):

ՎԱՐՇՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Աշխարհաբար քարզմանեցեք.

ա) Թոյնք քարբից հեղցին զնովաւ (ԻԶ., ԶԳ.ԼԵՍՈՎ.Լ.ԱՐԿԻ): Չախ նորա ընդ գլխով ինով, եւ աջ նորա պատեցէ զինե: Եւ կացի ես եւ արքն շուրջ զինե՝ եւ պահեին զիս եւ ոչ ոք հանէր զզէն իւր յինքնեմ: Ողջոյն տո՛րք միմեանց ի համբոյր (ԻԵ., Ի ԶԵՆՆ) **սրբութեան:** Ո՛հ եթէ (երանի՛ քե) խունկ **անուշութեան** բուրեալ լինէաք ի վերայ զերեզմանին քո: Այլ (ԻԵ., ՔԱՆԶԻ) լո՛յժ զկնճիւն անիրաւութեան, քակեա՛ զխաղախութիւն բռնութեան վաճառաց քոց, արծակեա՛ զհեղեալս բողոքեամբ, եւ զամենայն մտրիակս **անիրաւութեան** պատառեա՛: (ԺԱՄՆ ԴԱՌՆՈՒԹԵԱՆ): Եւ ոմն անկաւ ի վերայ հողոյ բարոյ, եւ ետ **ընդ միոյ** երեսուն, եւ **ընդ միոյ** վաքսուն, եւ **ընդ միոյ** հարիւր: Ետ զայգին իւր ցայահապանսն. բերցէ այր իւրաքանչիւր **ընդ** պտղոյ նորա հազարս արծաթոյ: (ԸՆԴ ՍԻՐԵԼԻՈՅՆ): Միթէ **փոխանակ ձկանն** (ՓՈՒՍԱՆԱԿ ՆՈՐԱ) օ՞ճ տայցէ որ նմա (= ցնա):

Կ ա ր ե ո թ . **Ինեւ-ը** եւ դերանվան գործիականի եզակին է:
բ) Այլ արասցէ իրատունս տնանկին, եւ յանդիմանեցէ զխոնարիս երկրի եւ հարցէ զերկիր բանիս բերանոյ իւրոյ, եւ հոգով շքբանց իւրոց սատակեցէ զամպարիշտս: Եւ եղիցի արդարութիւն ածեալ ընդ մէջ իւր, եւ ճշմարտութեամբ պատեալ զկողս իւր: Եւ ճարակեցէ զայլ ընդ զառիւն, եւ ինճ առ ուլու (ուլի կողքին) մակաղեսցի, եւ որք եւ ցուլ եւ առեւժ ի միասին ճարակեսցին, եւ մանուկ մատաղ ածցէ զնոսա: Եզն եւ արջ ի միասին ճարակեսցին, եւ որդեակք նոցա խառն շրջեսցին, եւ առեւժ իբրեւ զեզն յարդ կերիցէ: Եւ մանուկ մատաղ ի ծակ իժից, եւ ի բոյն կորեանց (ձագ) իժից արկցէ զձեռն իւր. եւ ոչ մեղիցեն եւ ոչ կարասցեն հարկանել զոք ի լերին **սրբութեան** ինոյ. զի լցաւ երկիր ամենայն՝ զիտութեամբ Տեառն իբրեւ զջուրս բազումս որ ծածկեն զծովս:

(Եւ. ԺԱ 4-9)

գ) * Եւ ծառայ որ ոչ պատրաստիցէ ըստ կամաց նորա՝ արբցէ զան բազում: Ապա կաց (= եկաց) պատմեաց բազաւորն իշխանացն (= ցիշխանս) զամենայն պատգամս բազաւորին Գբաց (գործերի): Ոչ լուսբ (լսել, անալ) նմա մինչ ի խաղաղութեան էաք: * Որ շլջի յարդարութեան՝ երանելի որդիս բողգէ: Եւ ահա երկուք ի նոցանէ երբային ի նմին ատուր ի զեօղ ուրեք որ հետի էր յԵրուսաղեմէ հաիւր եւ վաքսուն ասպարիսաւ: Եւ եղիցին գործք **արդարութեան** ի հանգիստ: Եւ բնակեցէ ժողովուրդ իմ ի քաղաքին **խաղաղութան:** * Որ համբերեսցեն ի սպառ՝ նա կեցցէ: Ո՛վ գերաիրաջ ծաղիկ բուրեալ յԵղեմայ՝ հոտ **անմահութեան** ծննդոցս Եւայի:

ԱՅՐՆ ԱՐԾԱԹԱՍԵՐ

դ) Ամենեցուն իսկ ընթերցասիրաց յայտնի են պատմեալքս՝ զի այր արծաթաւք սիրով գերով զպարանոցն լաւագոյն համարի, քան եթէ դանձ մի տուժել յարծաթոյն. եւ եթէ զարեզակն տեսանիցէ արծակելով զճառագայթս ի խնամս տիեզերաց (որպէս տիեզերքի խնամք)...ընդդէմ նորա ասէ. «Ընդէ՞ր փոխանակ լուսոյ՞ ինճ ոսկի ոչ բղխեսցես». եւ եթէ աղբիւր ակնավճիտ տեսանիցէ՝ ասէ. «Չեմ ծարաւի եւ ոչ երբէք արբից ի քէն ջուր. մատո՛ (մատուցի՞ր, տո՛ր) ինճ արծաթ»:

(Հայկական միջնադարյան գրույց, Թովմա Արծրունուց)

2. **Գասի բնագրում ընդգծված բառերը դուրս գրեցեք եւ դրանց հարվիչները ցույց տվեք: Յուրաքանչյուր ձեռք բանավոր քարզմանեցեք: Փորձեցեք նշել, քե հողովիչը բառի վերջի՞ց է ավելացել, քե՞ ներսում:**

3. **Նույն բնագրից այն գույգ (կամ եռյակ) բառերն արտագրեցեք, որոնք իրար հետ հողովով ու թվով համաձայնվել են:**

4. **Հետևյալ կապակցությունները գրաբար քարզմանեցեք (3-սկսւմ յիւմ).**

դստեր փոխարեն, իմ փոխարեն, քո փոխարեն, քաջության դիմաց, յարեկամի փոխարեն, գործերի փոխարեն, **խոսքերի** փոխարեն, լեռան (լերին) փոխարեն, մարդու փոխարեն: (ԸՆԴ ՍԻՐԵԼԻՈՅՆ)



ԻԸ. դ ա ս

ԲՈՒ ԽՆԱՍԱՆՈՍ

Բու հրեշտակ առաքեաց առ արծուի եւ խնդրեաց զդուստր նորս Հարսն, ասելով.

«Դու տուրնջեան քաջամարտիկ ես, եւ ես զիշերոյ. պատշաճիմք ի խնամութիւն»:

Եւ յետ բազում թախանձանաց յանձն առ (= էառ.) տալ: Եւ ի լինել Հարսանեացն, ի տուէ լոյս ոչ կարէր տեսանել փեսայն. եւ ծաղր առնէին բազմեալքն: Եւ իբրեւ եղեւ զիշեր՝ եւ ոչ Հարսն ետես լոյս, յաճախեաց եւ անդ այսպանումն: Եւ վասն այսորիկ փութով լուծան Հարսանիքն:

Զմիտս իւր առակս նմանեցուցանէ այնոցիկ Հաւատացեալ թագաւորաց եւ իշխանաց, որ(ք) զդատերս իւրեանց ըստ իմիք պատճառի յաճուանութիւն տան այլասեռից (= այլասերից)՝ խաւարելոց ի լուսոյ Հաւատոց. ուստի եւ ոչ է մխարանութիւն, այլ Հարկաւոր բաժին:

(Մխիթար Գոշ, Առակ ԸԻԳ.)

Բ ա ռ ա ր ա ն

բազմեալ - այստեղ՝ նստած, բազմական, հրավիրյալ
յաճախեմ - սաստկանալ. հաճախանալ
փութով - շտապ. արագ
լուծանիմ - քանդվել, լուծարվել. քայքայվել

այլասեռ (այլասեր) - այստեղ՝ այլազգի հարկաւոր - անհրաժեշտ. արկադրական
բաժին - այստեղ՝ բաժանում. բաժինՄ -

Բ ա գ ա Տ Ր Ո Ւ Ք Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

Ի խնամութիւն, յամուսնութիւն - Ի նախորի ո՞ր կիրառութիւնն են:
Ի լինել հարսանեացն - Ինչպե՞ս պետք է բարգմանել (իմմտ. ԻԳ., Ի ԾԱԳ.ԵԼ. ԼՈՒՄՆԻ, ՅԱՐԵԳ.ԱԿԱՆՆ ԾԱԳ.ԵԼ.):
Ըստ իմիք պատճառի - «Մի որեւէ պատճառով»:
Ոչ է - Այստեղ՝ «չկա, չի լինում»:

ԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հետեւյալ նախադասութիւնները բարգմանեցե՛ք՝

ա) ա շ խ ա ր հ ա բ ա ր.

Այսպէս * եղիցին յետինք առաջինք, եւ առաջինք՝ յետինք, զի * բազում եմ կոչեցեալք, եւ սակաւք են ընտրեալք: Հաճոյ բուեցաւ Հերովդի, ուստի կլլյմամբ խոստացաւ տալ նմա զինչ եւ (ինչ էլ որ) խնդրեսցէ: * Որ թարծրացուցանէ զանձն՝ խոնարհեսցի, եւ որ խոնարհեսցուցանէ զանձն՝ թարծրացի: Եւ զգեցուցանեն նմա քղամյալ կարմիր եւ ծիրանիս, եւ եղին (որեցին) ի գրվիս նորա պսակ արարեալ (պատրաստված) ի փշոց: * Դ՛ո՛ւստր, խաւարք քո կեցուցին զքեզ, ե՛րբ ի խաղաղութիւն (ԻԵ., Ի ԶԵՌ.Ն) եւ եղիջիք ողջ ի տանջանաց քոց: Իսկ վիշապն անյնդային Շահաբաս ի սկզբանէ զբարս օձի ունէր քնատրեալ յինքեան: Ամոն (անուն է) ո՞չ ապաքէն վասն անհանճար խօսիցն՝ քինակալութեամբ սպանաւ յեղբորէն.

բ) գ ր ա բ ա ր.

4 3 2 1
Իշխանի աղջկան կնութեան առավ: (Նախորդով)

2 3 1
Իսկույն (վաղվադակի) ծառայութեան մտավ: (Նախորդով)

1 3 2 4 5 6
Երբ թագաւորը մտավ, բոլորն էլ ոտքի կանգնեցին (կացին): (Նախորդով)

2 1 3 4
Չար մայրը (այր) ծաղրում է ընկերոջը:

3 2 5 4 7 6 1
Մի ծերունի իր առջեւ (առաջի) երեք (գերիս) մարդիկ տեսավ:

3 2 5 4 6 1
Մի որսորդ որսից (որսոյ) հետո տուն էր իջնում:

Կ ա ր ե ի ո ր. - Աղջկան, ընկերոջը, մարդիկ հայցական են, բոլորն (էլ), ծերունի՝ ուղղական:

զնայր ի քաղաքն իւր: * Հաց՝ զմեր կերիցուք, եւ հանդերձ՝ զմեր զգեցցուք քայց միայն անուն քո կոչեսցի ի վերայ մեր. բարձ ի մէջ զնախատինս մեր:

գ) «Որոյեալ, զի՞նչ գործ գործեցեր (անել) դու ընդ մեզ...»: * Հալածեսցես զմեղաւորս մրրկաւ քով, եւ բարկութեամբ քով խռովեցուցես զնոսա: Եւ կոչլի զնա ի դռն մեծաւ պատուով եւ շքեղութեամբ: Կարգեաց շահն ի գորացն Պարսից չունցուցանողս ազգին Հայոց, եւ առաքեաց յամենայն երկիրն Հայոց արս, որք հանին եւ չունցուցին: Վստահ է նա ի սիրտ առն իւրոյ: Զի * ոտք նոցա ի չարիս ընթանան, եւ երագունք են ի հեղուլ զարիւն:

2. Հետեւյալ բառերից պարզ եւ խառն հոլովումների պատկանողներն առանձին սյունակների մէջ դուրս գրեցեք (եզակի եւ հոգնակի սեռականներն են տրվում, որպէսզի հեշտ կողմնորոշվեր): Յուրաքանչյուրի հոլովիչն ընդգծեցեք.

աշխարհի - աշխարհաց, ճառագայթի - ճառագայթից, վազեր - վազերց, փոքու - փոքունց, սիրելոյ - սիրելեաց, հաու - հաուուց, անձին - անձանց, անգեղ - անգեղց, մանկան - մանկանց, քաջի - քաջաց, նետի - նետից, պիտանոյ - պիտանեաց, գայլոյ - գայլոց, կողման - կողմանց, հարսին - հարսանց, քրիստոնէի - քրիստոնէից, Եգիպտացոյ - Եգիպտացոց, պատասխանոյ - պատասխանեաց, կայսեր - կայսերց, որդոյ - որդոց, տիտանայ - տիտանաց, տէրութեան - տէրութեանց, ափին - ափանց, տերուջ - տեղեաց:

Ն մ ու շ .

Պարզ հոլովում Խառն հոլովում
աստեղ - աստեղ չարի - չարաց

3. Գրաբար քարգմանեցեք.

ազգի հետ - ազգերի հետ, ընկերոջ հետ - ընկերների հետ, քազավորի հետ - քազավորների հետ, նրա հետ - նրանց հետ, քեզ հետ - ձեզ հետ, մոր հետ - մայրերի հետ:



Լ զ ա ս

ԿԱՅՍՐԸ ԹԷՈՂՈՍ

Ի սկ' երանելին Թէոդոս կայսր, քանդի էր խաղաղասէր ի Քրիստոս, ոյ կամեցաւ ընդ առաջ նորա [Յաղկերտի] ելանել պատերազմաւ. այլ այր մի Անատոլ անուն, որ էր նորա սպարապետ արեւելից, առաքեաց առ նա բազում գանձիւք (= գանձուք): Եւ արք պարսիկք, որ փախուցեալ էին վասն քրիստոնէութեան եւ էին ի քաղաքի կայսեր, կալաւ եւ հտ ի մոս նորա: Եւ զամենայն զոր ինչ ասաց ի ժամանակին՝ կատարեաց թաղ կամաց նորա, եւ արգել զնա ի բազում բարկութենէն. եւ դարձաւ անորէն յիւր քաղաքն Տիզբոն: (Եղիշէ, Վասն Վարդանայ եւ Հայոց պատելազմին)

Բ ա ռ ա ր ա ն

արգելում - այստեղ՝ ետ պահել. կանխել | անորէն - կրկին, նորից

Բ ա ց ա ս Ր ո յ յ ո ն ն ե Ր

երանելին Թէոդոս կայսր - Երանելին բառի Ն հողը բացատրեցեք: Ի Քրիստոս - Ինչպե՞ս պետք է քարգմանել: Անատոլ անուն - «Անատոլ անունով»: Այսպես նաև՝ Արամ անուն - «Արամ անունով», Գարեգին անուն - «Գարեգին անունով» եւ այլն: Այր մի, արք պարսիկք - Ուղղականի ձեռով են դրված, բայց բնագրում հարմար է գալիս, որ հայցական քարգմանվեն - «մի մարդու», «պարսիկ մարդկանց»: Վասն քրիստոնէութեան - Ինչպե՞ս պետք է քարգմանել: Էին - Այստեղ՝ «կային, գտնվում էին»: Եւ դարձաւ... - Փոխված, բայց չարտահայտված ենթական Յաղկերտն է (այս մասին տես Է., առաջին բացատրությունը):

Ա ՀՈՒՎԱՄԻՄ

Այս հոլովման ենթարկվող բառերն ս կ զ ք ի ց մ ի ն չ եւ Վ ե ր ջ Ա հոլովիչն են ստանում. եզակի ք ա ց ա ն ա կ ա ն ն այդ Ա-ից հետո (այսինքն՝ արտաքին հոլովման ժամանակ) Է մասնիկը չի ստանում:

Մ ա ն .- Հոգնակի գործիականի -ԱԻԶ-ը -ՕԲ-է դարձել:

Ն մ ու շ .

Է-զակէ Հ-գնակէ Հ-գնակէ
Ո- տիտան տիտանք Վիրք
Ո. տիտանԱյ տիտանԱց ՎրԱց

S.	տիտանԱյ	տիտանԱց	ՎրԱց
Հ.	(զ)տիտան	(զ)տիտանս	(զ)Վիրս
Բ.	ի տիտանԱյ	ի տիտանԱց	ի ՎրԱց
Գ.	տիտանԱւ	տիտանԱւք (= տիտանօք)	ՎրԱւք (= Վրօք)

Այսպես են հոլովվում, գրեթե բացառապես, հատուկ անուններ, ինչպես՝ **Արշակ Վարդան, Տիրան...** (միայն եզակի), **Մուկը, Տուփը...**: «Մեջ»-ի (ներգոյականի) իմաստը եզակիում էլ Ի + հայց.-ի միջոցով է արտահայտվում. **ի տիտանայ** - բացառ. **ի տիտան** - «տիտանի մեջ»:

	Ե-դ-ն-է	Հ-գ-ն-է	Ե-դ-ն-է	Հ-գ-ն-է
Ո-	եղեզն	եղեզունք	բաջութին	բաջութինք
Ս.	եղեզԱն	եղեզԱնց	բաջութեԱն	բաջութեԱնց
S.	եղեզԱն	եղեզԱնց	բաջութեԱն	բաջութեԱնց
Հ.	(զ)եղեզն	(զ)եղեզունս	(զ)բաջութին	(զ)բաջութինս
Բ.	յեղեզԱնէ	յեղեզԱնց	ի բաջութենէ	ի բաջութեԱնց
Գ.	եղեզԱմք	եղեզԱմքք	բաջութեԱմք	բաջութեԱմքք

Այսպես հոլովվող բառերի տարբերությունը նախորդներից այն է, որ այնտեղ (**տիտան** եւ այլն) Ա հոլովիչը բ ա ռ ի վ է բ ջ ի ց է ավելանում, իսկ այստեղ՝ բ ա ռ ի (արմատի, հիմքի) ն է բ ս ու մ, վերջին բաղաձայնից առաջ (եղեզն - **եղեզԱն**, բաջութին - **բաջութեԱն**): Դրա համար էլ առաջին տիպը (տիտան - տիտանԱյ...) ա բ տ ա ք ի ն հոլովում (թեքում) է կոչվում, երկրորդը (եղեզն - եղեզԱն...)՝ ն է բ ք ի ն:

Այս երկրորդ եղանակով են հոլովվում՝ **դուռն** (եզ. սեռ. **դրԱն**, հոզն. ուղղ. **դրունք**, սեռ. **դրԱնց**), **քիրտն** (հոզն. ուղղ. **քրտինք**), **շուրթն** (հոզն. ուղղ. **շրթունք**), **երդումն** (հոզն. ուղղ. **երդմունք**), **անուն** (հոզն. ուղղ. **անուանք**), **շուն**, **տուն** եւ այլն: Իսկ **բաջութին** բառի մնանդությունը հոլովվում են **-ութին** ունեցող բոլոր բառերը, ինչպես նաեւ՝ **արիւն**, **անկիւն**, **սիւն**, **ձիւն** (միայն եզակի) եւ այլն:

Ծ ա ն.- Ինչպես տեսնում եք, սրանց (եւ ընդհանրապես) սեռականն ու տրականը, եզակի թե հոգնակի, ձեռով նույնն են:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հետեւյալ նախադասություններն աշխարհաբար թարգմանեցեք.

ա) Եւ հարիւրապետն, քանզի կամեցաւ ապրեցուցանել զՊօղոս՝ արգել զնոսա ի խորհրդոյն: * Եթէ գտցի անդ քսան արդար, ոչ կորուսից զբաղարկ վասն քսանիցն, եւ եթէ գտցի անդ տասն, ոչ կորուսից վասն տասանցն: Չիտ ոչխարսն կոչէ յանուանէ եւ հանէ զնոսա: Անայարտ եմ ես յարենէ առնԴ- (այր, մարդ), զի ոչ ինչ գտի ի դմա վնաս արժանի մահու: * Լաւ է սակաւ ինչ

սակաւ արդարութեամբ, քան զբազունս՝ աներկիւղութեամբ: * Որ ոչ լսէ թկանք (ականջ), լուիցէ թիկամբ:

բ) Ջոր ինչ գիտեմք՝ խօսիմք, եւ գոր ինչ տեսաք (տեսանք)՝ վկայեմք, եւ վկայութիւն մեր ոչ ընդունիք: Երթեալ հասանէր ի կողմանս Արամի, ի բաղարս երկուս Ասորոց, որոց առաջինն Եղեւիա կոչի, եւ երկրորդն քաղաք մի Ամիղ անուն: Լցաւ երկիր ապականութեամբ ի նոցանէ: Ո՛ր սիրտ թարեղէն [է], որ ոչ լքանի հառաչմամբ եւ բեկանի հեծեծալով: Եւ զերեսս իմ ոչ դարձուցի յամօքոյ ընդ երեսս քբանելոյ:

2. Հետեւյալ նախադասությունները գրաբար թարգմանեցեք.

2 4 3 1
Ինչ որ **քեզ** ասաց՝ կատարիք: (Նախորդով)

6 5 4 3 2 1
Իր հոյ մոտ երեք (երիս) **մարդ** ուղարկեց:

2 3 5 4 1
Թագմաթիվ գերյալներին թագավորի **ձեռքը** տվեց: (Նախորդով)

3 4 2 1 6 5
Գրիգոր անունով մի մենակյաց քրիստոնեություն էլ բարոզում:

4 3 2 5 1
Քաղաքի բնակիչները նորից անձանոթներին (Ի + հայցական) նայեցին (սայեցան):

2 3
Պարտվածները (պարտեալ) զանազան կողմեր (ի կողմանս կողմանս) էին վախել (փախուցեալ):

Կ ա բ ե ո թ .- Երեք մարդ, գերյալներին, քրիստոնեություն հայցական հոլով են, մի մենակյաց, բնակիչները, պարտվածները՝ ուղղական:

3. Հետեւյալ բառերը հոլովեցեք՝ Արշակ (միայն եզակի), Մուկը, դուռն, անուն:



ԼԲ. դ ա ս

ՍԵՐՄԱՆԱՅԱՆՆ

...Եւ ասէր նոցա (= ցնտա) ի վարդապետութեան իւրում.

«Լսէ՛ք, ահաւասիկ ել սերմանող սերմանել: Եւ եղև ի սերմանելն, ոմն անկաւ առ ճանապարհաւ, եւ եկն թռչուն եւ եկեր զնա: Եւ այլն անկաւ յապտոածի, ուր ոչ գոյր հող բազում. եւ վաղվաղակի բուսաւ, քանզի ոչ գոյր հիւթ երկրին. եւ յորժամ ծագեաց արեւ, ջնուաւ, եւ զի ոչ գոյին արմատք, ցամաքեցաւ: Եւ այլն անկաւ ի մէջ փշոց. ելին փուշքն եւ հեղձուցին զնա, եւ պտուղ ոչ ետ: Եւ այլն անկաւ յերկիր բարւոք, եւ ելեալ անեցեալ տայր պտուղ, եւ բերէր ընդ միոյ երեսուն եւ ընդ միոյ վաթսուն եւ ընդ միոյ հարեւր»:

Եւ ասէր. * «Որ ունիցի ականջս լսելոյ՝ լուիցէ»:

(Մարկ. Գ 2-9)

Ք ա ռ ա ւ ն

վարդապետութիւն - այստեղ՝ քարոզ. խրատ
զոմ (զոս, գոյ...) - լինել. գոյություն ունենալ
վաղվաղակի - 1. իսկույն. անմիջապէս
2. շտապ

ջնունում - տաքանալ
հեղձուցանեմ - խեղդել (հեղձում - խեղդվել)
բարւոք - այստեղ՝ բարեբեր, բերրի, պարարտ

Ք ա գ ա Տ Ր Ո Ւ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

Եւ եղև - Ոճ է, սովորաբար «այնպէս եղավ, որ» է քարգմանվում (հմմտ. Իէ., ԴՊ ԵՂԵԻ):

Առ ճանապարհաւ - ԱՌ (նախդիր) + գործիական (ճանապարհաւ) = «մտտերքը» - «ճանապարհի մտտերքը»: Այսպէս նաեւ՝ առ գետով - «գետի մտտերքը», առ նովաւ - «նրա մտտերքը»:

Ոչ գոյր հիւթ երկրին - Սեռականի կողքին (երկրին) զոմ բայն «ունենալ» իմաստն է արտահայտում (այսպէս է նաեւ ԵՄ-ը) - «հողը հյութ՝ կենսահյութ չուներ»: Հմմտ. ԱՌՆ ՄԻՈՋ ԷԻՆ երկու որդիք (ԼԷ.):

Ընդ միոյ երեսուն... - Ինչպե՞ս պետք է քարգմանել (հմմտ. Իէ., ԸՆԴ ՄԻՐԵԼԻՈՅՆ): Լուիցէ - «Կսի» կամ «թող լսի»:

Ո Տ Ո Ւ Վ Ո Ւ Մ

Այս հոլովման պատկանող բառերն ս կ գ ք ի ց մ ի ն չ ե յ վ ե ր ջ Ո հոլովիչով են հոլովվում: Եզակի բ ա ց ա ք ա կ ա ն ց ա յո Ռ-ից հետո է չի ստանում: Հմմտ. յայգոյ (բայջ՝ յայգոջէ):

Ն մ ո շ .		
Ե շ ւ կ է	Հ ֆ ւ կ է	
Ո - երագ	երագք	
Ս - երագոյ	երագոց	
Տ - երագոյ	երագոց	
Հ - (գ)երագ	(գ)երագս	
Ի - յերագոյ	յերագոց	
Պ - երագով	երագովք	

Այսպէս են հոլովվում՝ գետ, գետին, բերան, բուրք, մարմին, հաշի (սեռ. հաշում), պատի (սեռ. պատում), արծաթ, հող, արմատ, պտուղ, փուշ, ծառ, քոչուն, ամբար, էջ, գործ, ամառնային, անասուն, կալուած, հողի, քաղաքացի, վերջին, հարօն (միայն եզակի), Կարին (միայն եզակի), Հայք, Վայք. նաեւ անորոշ դերբայները (սերմանել, տեսանել... միայն եզակի), անցյալ դերբայները (եղեալ - սեռ. եղելոյ, եղելոց, մեռեալ - սեռ. մեռելոյ, մեռելոց...): «Մեջ»-ի (ներգոյականի) իմաստը եզակիում էլ Ի + հայց.-ի միջոցով է արտահայտվում. յերագոյ - բացառ., յիրագ - «երագում» (կամ մի քանի յուրահատուկ կազմություններ՝ ի մարմնի, ի բերանի, ի փորի, ի քրքի - «նամակում» եւ այլն):
Ծ ա ն .- Այս հոլովման պատկանող Ի-ով վերջացող բառերի Ի-ն Ո-ից առաջ Ի-ի է փոխվում. որդի - որդիոյ, որդիոց:

Վ Ա Ր Ժ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

1. Հետեւյալ նախադասություններն աշխարհաբար քարգմանեցեք.
* Որ ոչ մտանէ ընդ դուռն ի գալիք ոչխարացն, այլ ընդ այլ ելանէ՝ նա գող է եւ անազակ: Իսկ որ մտանէ ընդ դուռն՝ հովի է ոչխարաց: } Երկիր էր ամայի եւ անպատրաստ. վասն զի մարդ չէր (չկար) զի գործէր գերկիր: Եւ անհա գայք, եւ անցանէր առ նոքօք երեց գեղջն (գյուղի) այնորիկ՝ որում անուն տէր Աւետիս (ԻԹ., ՈՐ ԸՆԴ ՉԵՌԱՄԲ ՆՈՐԱ): Նստէր առ ծովեզերքն: (ԱՌ ՈՒՆԱՊԱՐԷԱԲ): Եւ եղև մինչ երթայր նա յերուսաղէմ, եւ ինքն անցանէր ընդ մէջ Սամարիայ եւ Գալիլէացոց: * Մարտոյ իբրեւ խոտոյ են ատուրք:
2. Բնագրում ընդգծված բառերի եզակի եւ հոգնակի սեռականները գրեցեք (պարզ է, Ռ-ով: Սերմանել-ի հարցում զգո՛ւյ՛ջ):
3. Գասի նմուշի օրինակով հետեւյալ բառերը հոլովեցեք՝ արդար, անասուն, բուրք, կախեալ, մտանել, Հայք, որդի:
4. Հետեւյալ նախադասությունները գրաբար քարգմանեցեք.
5 4 3 2 1
Իր աշխատության փոխարեն (ԸՆԴ ՄԻՈՅ) վարձ առաւ:

4 2 3 1
Ուշանալու ուրիշ պատճառներ կային:

4 3 6 5 2 1
Տան մուտքը, խոտերի մեջ, ոչխարներ էին արածում: (ԱՌ ՃԱՆԱՊԱՐՀԼԱ)

1 4 3 2 6 5
Այնպես պատահեց, որ նրա մտնելու ժամանակ (Ի ՍԵՐՄԱՆԵԼ) քարն ընկավ:

Կ ա ր ե լ ո ր . Վարձ հայցական է, պատճառներ, ոչխարներ, քարն՝ ուղղական: Տուն բառի գործիականը տամբ է:



ԼԳ. դ ա ս

ՈՍԿԻ ԵՒ ՅՈՐԵԱՆ

Ի թագաւորելն ոսկի խնդրէր երկրպագութիւն յամենայն նիւթոց, եւ թագաւոր զանձն կոչէր, զի պատկեր եղեւ թագաւորի. եւ նովաւ ամբարտաւանէր գործողն եւս ի վերայ արծաթագործաց եւ այլոց: Եւ ի վայն ամենեցուն՝ ոչ եկն ցորեան ասելով.

«Կա՛մ, մինչեւ նա ինձ եկեալ երկիր պագանիցէ»:

(Մխիթար Գոշ Առակ ԾԿԸ.)

Բ ա ռ ա ր ա ն

գործող - այստեղ՝ պատրաստող (այսինքն՝ արհեստավոր)

Բ ա գ ա ս ռ ո թ յ ո ՞ ն ն Ե Ր

Ի րագաւորելն, ի գալն ամենեցուն - Ինչպե՞ս պետք է քարգմանել: Թագաւոր զանձն կոչէր - Անձն բարը (գոյականը) բնագրերում հաճախ «ինքն» (Գ. դեմքի անձնական դերանվան) իմաստով է գործածվում - «(ինքն) իրեն քազավոր էր կոչում՝ անվանում» (հմմտ. աշխ. անձամբ, որ բառացի նշանակում է «հենց ինքը», անձնիշխան = ինքնիշխան):

Ի վերայ արծաթագործաց - Այստեղ՝ «արծաթագործների նկատմամբ»:

ՎԱՐՃՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հետեւյալ նախադասութիւններն աշխարհաբար թարգմանեցէր.

ա) Այլ (տե՛ս ԻԵ., ԶԱՆԶԻ) ձեր եւ ամենայն իսկ հեր գլխոյ բուեալ (հաշվել) է: Դառն է պատմութիւնս, եւ բագում ուղոց արժանի: * Չարիւն խաղողոյ՝ արբ զինի: Եկ առ իս, եւ տաց զմարմին քո թոչնոց երկնից եւ զագանաց երկրի: Չգեցեալ էր քազաւորն զպատմութեանն՝ որ էր ընդելուզեալ ոսկով եւ մարգարտով եւ ակամբք (ակներ) պատուականօք: Յայնժամ ի միտ առին (Զ.) եթէ ոչ ասաց զգուշանալ ի խմորոյ, այլ՝ յաղանդոց Փարիսեցոցն եւ Սաղուկեցոց:

բ) * Մի՛ սպանաներ, զի որ սպանանիցէ՝ պարտական լիցի դատաստանի: * Ոչ ոք արկանէ կապերտ անբափ ի վերայ հնացեալ ձորձոյ: Եւ լնտրեցին յիրեանց արս հարիւր եւ յղեցին ընդ նմա: Ետ պատասխանի քազաւորն եւ ասէ. «Իմ իսկ առաջի ընթերցան (կարդացին) զգիրս

մուտքի մտքով: (Ի՛է., ԺԱՄՆ ԴԱՌՆՈՒԹԵԱՆ): Եւ ոչ ըմպէ զհինն եւ կամիցի զմորն, քանզի աստ թէ «Հինն քաղցրագոյն է»:

գ) * Եւ որ բորբոքէ զչարութիւն ընկերաց եւ յուզէ զչարութիւն՝ կորիցէ: * Որ փորէ խորխորատ ընկերի իւրում՝ ինքն լցցէ զնա, եւ որ զլէ վէ՛մ՝ յամն իւր զլեսցէ: * Ամենայն քազաւորութիւն բաժանեալ յամն իւր՝ ոչ կացցէ: Եւ այսպիսի կեղծեօք հմարեն կարծեցուցանել (հաջողեցնում են ցույց տալ) աշխարհի զանձինս արդարս: * Կործանումն արանց անօրինաց չար է: Այս ճանապարհք են ամենեցուն, որ գործեն զանօրէնս, զի ամպարչտութեամբ զանձինս իւրեանց սատակեն:

2. Հետեւյալ նախադասութիւնները գրաբար բարգմանեցեք.

2 4 3 1
Ինքն իրեն մեծ (մեծի) գործի է նվիրում:

2 1 3 4 6 5
Չորք էր փնտրում եւ չգտնելով՝ հայերից խնդրեց (հայցել):

1 3 2 4 5
Երբ ամենքն էլ հասկացան (իմանալ)՝ սկսեցին ծիծաղել (սկսան ի խնդալ):
(Ի ԳԱԼՆ ԱՄԵՆԵՑՈՒՆ)

2 1 4 5 3
Տուն գալով՝ բոլորին էլ ողջ (ողջս) գտավ:

2 1 4 5 6 3
Վրձինն առնելով՝ լեռներ ու դաշտեր պիտի նկարի:

Կ ա բ ե ո թ ռ . - Ինքն իրեն, գորք, բոլորին (էլ), վրձինն, լեռներ, դաշտեր հայցական են:

3. Բնագրում ընդգծված բառերի հոլովն ու թիվը որոշեցեք:

4. Հետեւյալ բառերը հոլովեցեք՝ ցորեան (միայն եզակի), մնջեցեալ, եկեալ, երկրպագութիւն (ո՞ր հոլովիչով. միայն եզակի):



ԼԳ. դ ա ս

ՄՇԱԿՔ ԱՅՉԻՈՅՆ

Այր մի էր տանուտէր, որ տնկեաց այգի եւ ցանդով պատեաց զնա, եւ փորեաց ի նմա Հնձան եւ շինեաց աշտարակ. եւ ետ զնա ցմշակս, զնաց ի տարաշխարհ: Իբրեւ մերձեցաւ ժամանակ պտղոյ, առաքեաց զճառայս իւր առ մշակսն՝ առնուլ զպտուղս նորա: Եւ կալեալ մշակացն զճառայս նորա, զոմն տանջեցին, զոմն սպանին, զոմն քարկոծեցին: Դարձեալ տարեաց ա՛յլ ճառայս բազումս քան զառաջինսն, եւ արարին նոցա նոյնպէս: Յետոյ առաքեաց առ նոսա զորդի իւր, եւ ասէ.

«Թերեւս ամաչեսցեն յորդոյն աստի իմմէ»:

Իսկ մշակքն իբրեւ տեսին զորդին, ասեն ընդ միտս.

«Սա է ժառանգն, եկա՛ք սպանցուք զսա եւ կալցուք զճառանգութիւն սորա»:

Եւ առեալ զնա արտաքոյ քան զայգին եւ սպանին:

Արդ յորժամ եկեսցէ տէր այգւոյն, զի՛նչ արասցէ մշակացն այնո- յիկ: * «Զչարսն չարաւ կորուսցէ, ի եւ զայգին տացէ այլոց մշակաց, որք տացեն նմա (= ցնա) զպտուղս ի ժամու իւրեանց»:

(Մատթ. ԻԱ 33-42)

Բ ա ռ ա ր ա ն

ցանգ = ցանկ - ցանկապատ | արտաքոյ - դուրս
տարաշխարհ - օտար աշխարհ՝ երկիր

Բ ա գ ա Տ ր ո թ յ ո Ս ն Ե Ր

Էր - Այստեղ՝ «կար»:
Կալեալ մշակացն - Ինչպե՛ս պետք է բարգմանել:
Ոմն տանջեցին, զոմն սպանին... - «Որին տանջեցին, որին սպանեցին...»: Նույնը կարելի էր նաեւ այսպէս արտահայտել՝ էր գոր տանջեցին, էր գոր սպանին...
Յորդոյն աստի իմմէ - «Իմ ԱՅՍ որդոց»: Աստի, այտի, անտի մ ա կ բ ա յ ն ե թ ը առանձին գործածվելիս, համապատասխանաբար «այստեղից», «այդտեղից», «այնտեղից» են բարգմանվում: Բայց երբ բացառական հոլովով դրված բառերի են հաջորդում, դրանք պետք է «այս», «այդ», «այն» բարգմանել: Այս բնագրում յորդոյն իմմէ բացառական է, դրա համար էլ աստի «այս» ենք բարգմանում: Ավելացնենք նաեւ, որ մման դեպքերում բացառական հոլովով դրված բառերը սովորաբար համապատասխան հոդ են ստանում. ի քաղաքէՄ աստի - «ԱՅՍ քաղաքից», ի քաղաքէԳ այտի - «ԱՅԴ քաղաքից», ի քաղաքէՆ անտի - «ԱՅՆ քաղաքից»:

Իբրև տեսի՞ն - Նշանակում է «երբ տեսան»: Այս գաղափարն Ի նախորդի օգնությամբ արտահայտեցեք:

Արտաքոյ քան գայգին - «Այգուց դուրս»:

Յորժամ եկեցե՞տ տէր - Նշանակում է «երբ տերը գա»: Այս գաղափարը ես Ի նախորդի օգնությամբ արտահայտեցեք (նաեւ տէր բառի ձեւի փոփոխությանն ուշադրություն դարձրեք):

ՈՒ ԽՄԱՆ ՀՈՒՆՎՈՒՄ

Բառեր էլ կան, որոնք սկսում են Ո հոլովիչով հոլովվել, սակայն ե գ ա կ ի գ ո թ ծ ի ա կ ա ն ի ց Ա հոլովիչին են անցնում. ուրեմն **ՈՒ ԽՄ** խառն հոլովման են պատկանում: Այս բառերն իրենց ձեւով շատ հայտնի են. Ի-ով են վերջանում եւ բազմավանկ են (բացառությամբ որդի, ոգի = հոգի, ոսկի, այլև -ԱՅԻ մասնիկն ունեցող բառերի, որոնք Ո պարզ հոլովման են պատկանում):

Ն մ ո շ ն ե թ.

Խ-ակն	Հ-գնակն	Խ-ակն	Հ-գնակն
Ո՜ւ. մատանի	մատանիք	ատելի	ատելիք
Ո՛ւ. մատանույ	մատանեԱց	ատելույ	ատելեԱց
Տ. մատանույ	մատանեԱց	ատելույ	ատելեԱց
Հ (գ)մատանի	(գ)մատանիս	(գ)ատելի	(գ)ատելիս
Բ. ի մատանույ	ի մատանեԱց	յատելույ	յատելեԱց
Գ. մատանեԱւ	մատանեԱք (-եօք)	ատելեԱւ	ատելեԱք (-եօք)

Ծ՛ա ն. Ուղղականի Ի-ն Ո հոլովիչից առաջ Ի (i)-ի է հնչյունափոխվում. մատանի - մատանիոյ, ատելի - ատելիոյ, տեղի - տեղիոջ, այգի - այգիոջ եւ այլն: Բայց Ա հոլովիչից առաջ նույն Ի-ն դառնում է Ե. մատանի - մատանեաւ, մատանեաց, ատելի - ատելեաւ, ատելեաց, տեղի - տեղեաւ, տեղեաց, այգի - այգեաւ, այգեաց եւ այլն: Հոգնակի գործիականի -ԵԱԻԶ-ը -ԵՕԶ է դարձել (ԱԻ-ը բաղաձայնից առաջ ընդհանրապես Օ է դարձել. Հմտ. Ա (նաեւ Ի-Ա) հոլովման պատկանող բառերի հոգնակի գործիականը): Ո-ից հետո եզակի բացառականում է չի ավելանում: «Մեջ»-ի (ներգոյականի) իմաստը եզակիում էլ Ի + հայց-ի միջոցով է արտահայտվում. **ի քնամտոյ** - բացառ., **ի քնամի** - «քշմամու մեջ»:

Վերետմ տրված նմուշների նման են հոլովվում՝ պատանի, պատասխանի, արծուի, կարասի, թզնի, սիրելի, տիրուհի, արմատնի, հովանի, Արշակունի, ընտանիք, հարսանիք, կարծիք եւ այլն:

ՎԱՐՇՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հետեւյալ նախադասություններն աշխարհաբար քարգմանեցեք.

ա) Խորտակեցին գնոսա եւ վիրաորեցին, եւ պակեաւ սիրտ ժողովրդեանն: Հարին երեք զօրավարքն զբանակն այլազգեաց, եւ հանին ջուր ի ջրհորոյն, առին եւ եկին առ Դաւիթ: Եկին հասին ի տեղի մարտին եւ ճակատեցան դէմ յանդիման միմեանց: Վերացաւ մեր քազ, վերացաւ արքոս,

եւ փառք վայելչութեան (ԻԷ., ԺԱՄՆ ԴԱՌՆՈՒԹԵԱՆ) ընդ քեզ քաղեցան: * Ջաւազ ծովու եւ զշիքս անճրեաց եւ զաւրս ժամանակաց ո՞ք քուեցէ երբէք: «Ճերմակածին զինի արբցէ»: * Ջեղէզն ջախջախեալ ոչ փշրեցէ, եւ զպատրոյկն (= զպատրոյզն) առկայծեալ (վառված, առկայծող) ոչ շիջուցէ:

բ) Բայց դուք ի թզնույ անտի ուշիք գառակն. յորժամ տակաւ ոսարն նորա կակղանայցեն եւ տերեւ արծակիցի ի նսա, զիտք քէ մերձ է ամառն: Յօժարեցան ոմանք ի ժողովրդեան անտի երբալ յանդիման լինել քազաւորին: Արիք եւ ելէք ի տեղուջէ աստի յայսմանէ, զի սատակէ Տէր զբաղաբս: * Ի քա՛ց լեր յանիրաւէ անտի, եւ ոչ երկիցես (փախենալ). եւ դողումն ի քեզ ոչ մերձեցի: Ի քա՛ց կացէք, ի քա՛ց կացէք, ելէ՛ք այտի եւ ի պիղծս մի՛ մերձեանայք: (ՅՈՐԴԻՈՅՆ ԱՄՏԻ ԻՍՄԷ)

գ) * Ջուգութիւն է մայր բարեաց, անգուգութիւն՝ ծնող չարեաց: Բոխեր սորիւր բարեաց: Ոչ ոք յայնց կոչեցելոց ճաշակեցէ յընթրեաց խնոց: Դատ տոնէր որբոց եւ տայր իրաւունս այրեաց: Եւ զբանալին եկեղեցոյն՝ գոր Վերին Կաթան ասեն՝ առին քահանայքն:

դ) Չայն ելրօրորոյտ իւրոյ բախէ ի դրանն. «Բա՛ց ինձ, քո՛յր իմ, զի գլուխ իմ լցաւ ցօղով եւ վարսն իմ՝ ի շաղից զիշերոյ»: Նման է հատոյ մանանխայ, գոր առեալ մարդոյ արկ (Ժ.) ի պարտեզ իւր. աճեաց եւ եղև ծառ, եւ թռչունք երկնից բնակեալ էին յոստս նորա:

2. Թզնի, պատասխանի, հովանի եւ Արշակունի բառերը հոլովեցեք:

3. Ժառանգութիւն, առաջին (Ո. եզ. տր. առաջնում, բացառ. յառաջնմէ), որդի, արմատնի, հարսանիք բառերը հոլովեցեք:

4. Հետեւյալ բառերի եզակի եւ հոգնակի սեռականները կազմեցեք. մշակ, ծառայ (Ի), հոգի, ժառանգ (Ի-Ա), ժամ (ՈՒ), Բագրատունի, քանի՞, տիրուհի, ընկուզենի, ծերունի, կարծիք:

ԼԵ. դ ա ս

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՔ ԵՐԿՈՒՔ

Արք երկու(ք) ճանապարհորդ էին ի քաղաք ուրեք երթալ Հեոի, եւ ոմն յըսկզբանն արիաբար երթայր, սակայն ետ զետէ Հեղգայր, եւ աստ եւ անդ անկանէր ի ճանապարհին եւ մերձ ի քաղաքն բնաւին Հեղգացեալ, եւ յաւազակաց մեռանի:

Իսկ միւս՝ ծոյլ յըսկզբանն էր, եւ առաւել քան դատաւել փութայր, եւ մերձ ի քաղաքն ամենեւիմբ արագէր, եւ մտանէր, եւ ի հանգիստ վայելէր:

(Միւիթար Գոշ Առակ ԾՁԲ.)

Ք ա ռ ա ր ա ն

եւ զեւե - հետզհետե, աստիճանաբար
հեղգամ (հեղգամամ) - 1. ծովանալ 2. ծանր շարժվել

բնաւին - բոլորովին
առաւել քան զառաւել - ավելի ու ավելի
ամենեւիմբ - ամբողջովին. բոլորովին

Ք ա գ ա ս ռ ու թ յ ու ն ն Ե Ր

Ի քաղաք ուրեք - Ինչպե՞ս պետք է քարգմանել (իմմտ. Թ., ԾԵՐ ՈՄՆ):
Բնաւին հեղգացեալ - Այստեղ ինչպե՞ս պետք է քարգմանել (իմմտ. ԻԳ., ԵՒ ԽՈՐՀԵԱԼ...ՀԵՐՔԵԼ, ԻԶ., ԵՒ ՄԿԱՆՅՆ ՀԱՄԱՐՉԱԿԵԱԼ):

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Բնագրի հոլովված բառերից յուրաքանչյուրի հոլովն ու հոլովումը որոշեցեք՝ չմոռանալով անշուշտ նշել նաեւ թիվը:

Ն մ ու շ՝ վախճանիմ - եզ. տր. (Ի-Ա):

2. Գրաբար քարգմանեցեք.

ա) Նրան մի գյուղ ուղարկեց:

Աղջիկն իր մոր մոտ պիտի գնա:

Գետի միջից բազմաթիվ ձիավորներ անցան:

Տան մոտ ընկուզենիների մի անտառ կա (է): (Մերձ նախադրությամբ)

Հեռավոր աշխարհներից մարդիկ դեպի հայրենիք էին շտապում:

Կ ա ր ե ո թ ը.- Աղջիկն, ձիավորներ, անտառ, մարդիկ ուղղական են, նրան՝ հայցական:

1 2 4 6 5 3
բ) Ամեն տարի այստեղ հորդահոս (յորդահոսանք) անձրեւներ են տեղում:

3 2 1 4 7 6 5
Թզենուց պտուղներ քաղեց ու իրենց տուն տարավ:

2 4 3 1
Ժողովուրդն այն եկեղեցուց էր ելնում:

3 2 6 5 4 1
Մի մարդ հեծյալի (հեծելոյն) ետեւից քաղաք էր մտնում:

1 3 2
Ինչո՞ւ քշնամիներից վախենանք (զանգիտել):

Կ ա ր ե ո թ ը.- Անձրեւներ, ժողովուրդն, մի մարդ ուղղական են, պտուղներ՝ հայցական: Վախենանք ապառնի ժամանակ է:

3. Սկիզբն, թզենի, աւազակ (Ի-Ա) բառերը հոլովեցեք:



ԼԶ. դ ա ս

ՄԱՐԳ ԵՒ ԾՐՇԱՆՆ

Մի՛ որ կարի յոյժ տրտմեացի վասն աղքատութեանն, եւ մի՛ որ անչափ մոռացի՛ զանձին հատանել զյոյս, յորժամ ոչ ինչ գտանիցի ի տան: Նայեսցի ընդ ծիծառն անջատ եւ միանձն. տեսանե՞ս զհարող դալակիցի, տկար գորութեամբն առնիցէ դաղարս անձին: Զի յորժամ զտառապանաց բունիկն կամիցի շինել, բերանացի քաղէ տանի շիւս. եւ քանզի ոտիւքն ոչ կարէ կրել կաւ, զճայրս մազլացն ի ջուրսն լծանայ, եւ երանէ ընդ մանր փոշի գնայ, եւ յայսպիսի տառապանաց՝ Հնարիւք ընու զկարօտութիւն կաւոյն կրելոյ: Եւ առ սակաւ սակաւ Հնարի շինել զվարանացն բունիկն. դնէ նախ զկաւն, եւ ապա զշիղն ի վերայ իբրիս զպահանգս կապէ, եւ այնպէս կատարէ զշինուած բունոյն, զի հանէ ի նմա ձագս եւ սնուցանէ ի սմա զձագսն:

Եւ եթէ զէպ տացէ ցաւել աչաց միոյ ուրուք ի ձագուց անտի եւ կամ Հարցի ընդ իմիք եւ վնասեացի, զիստս բժշկութեան ունի բնութեամբ՝ մատուցանել աչաց ծննդոց իւրոց եւ բժշկել:

Չայս ամենայն Հնարս այսր տկար թոչնոյս աուցէ մարդ աղքատ ի մխիթարութիւն իւր, զի մի՛ վասն աղքատութեանն անկցի ի գործս չարեաց. եւ յորժամ վիչտք ինչ անհնարինք Հարանիցեն ի վերայ մեր(ոյ) աշխարհի(ս), մի՛ վհատեալք եւ լքեալք անյոյս լինիցիմք:

(Բարսեղ Կեսարացի, Վասն վեցօրեայ արարչութեան)

= Շիւս - «շիվրս» կարդացեք:

Բ ա ո ա ռ ան

դալակիւմ - աշխատել չարչարվել
առնեմ - այստեղ՝ շինել սարքել
դաղարք - հանգստաւայր. բույն
բերանացի - այստեղ՝ բերանով (ատամ-
նացի - ատամներով)
քանամ - քրջել
լնում - 1. լցնել 2. բավարարել 3. լրացնել
կարօտութիւն - այստեղ՝ կարիք

առ սակաւ սակաւ - քիչ-քիչ. կամաց-
կամաց, աստիճանաբար
վարանք - վարանում
պահանգ = պահանկ - պահանգ, պա-
տերի փայտե ամրակապ
կատարեմ - այստեղ՝ ավարտել, վեր-
ջացնել
մատուցանեմ - մոտեցնել
ծնունդ - այստեղ՝ ձագ

Բ ա գ ա ս ռ ու թ յ ու ն ն ե Ր

Մի՛...տրտմեացի, մի՛...մոռացի, մի՛...անկցի, մի՛...լինիցիմք - Ինչպե՞ս պետք է թարգմանել (տես է., ՄԻ՝ ՀԱՐԿԱՆԻՅԵՄ, հմմտ. ԻԳ., ՈՉ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՄԲ ՎԱՐԻՄՔ):

Վասն աղքատութեան - Այստեղ՝ «աղքատության համար՝ պատճառով»:
Պանծին հատանել զյոյս - «Իր հույսը կտրել»:
Ձ նախորդի կրկնության համար հմմտ. ԻԳ., ՁԱՅԼՈՑ ԴԻԲՑԱԶԱՆՑ ՁԱՐՄԻՅ ԲԱՌՆԱԼ ԶՎԵՆԴԱՆՈՒԹԻԻՆ:

Պալակիցի, առնիցէ... - Այս եւ նույն՝ ապառնիի ձեւով դրված մի շարք այլ բայեր ներկայի իմաստով են գործածվել:

Ոչ ինչ գտանիցի - Տես է., ՈՉ ՈՔ ՈՒՆԻ:

Նայեսցի ընդ ծիծառն - Նայիմ (հայիմ) բայն ըՆԳ կամ Ի (նախդիր) + հայցական (ծիծառն)՝ է վերցնում - «թող նայի ծիծեռնակին» (կարող էր լինել նայեսցի ի ծիծառն):

Ընդ...փոշի գնայ - «Փոշու վրայով է գնում»: ԸՆԳ (նախդիր) + հայցական (փոշի) կարող է «վրայով, մակերեսով» իմաստն արտահայտել: Հմմտ. նաե՛ ընդ ճանապարհ - «ճանապարհով, ճանապարհի վրայով»:

Լնու զկարօտութիւն կաւոյն կրելոյ - «Կավը կրելու կարիքն է բավարարում (լնու)»:
Հնարի - «Հնարը գտնում է. հաջողեցնում է»:

Եթէ դէպ տացէ - «Եթե պատահի, որ»: Այս կառույցը՝ դէպ տացէ + տրականով ենթակա (աչաց) + ամոդոչ ղեքրայ (ցաւի), ԻԷ., ԴԷՊ ԵՂԵԻ ԴԻՈՒՆՍԵԱՅ ԲՈՒԱՒՈՐԻ...ԴԱՏԱՊԱՐՏԵԼ-ի հետ համեմատեցեք:

Միոյ ուրուք - Մի որ դերանվան սեռականն է - «մեկի. մեկնումների».

Ի ձագուց անտի - Ինչպե՞ս պետք է թարգմանել (հմմտ. ԼԴ., ՅՈՐԴԻՈՅՆ ԱՍՏԻ ԻՄՄԷ):

Հարցի ընդ իմիք - «Մի բանի (բառացի՝ մի բանի հետ) խփվի՛ բախվի»: Իմիք - ինչ-ի եզակի տրականն է:

Գիստս բժշկութեան, ի գործս չարեաց - Ինչպե՞ս պետք է թարգմանել (հմմտ. ԻԷ., ԺԱՄՆ ԴԱՌՆՈՒԹԵԱՆ):

Ի մխիթարութիւն - Ի (նախդիր) + հայցական (մխիթարութիւն) = այստեղ՝ «որպէս» - «որպէս մխիթարություն»:

ՈՒ ՀՈՒՆՎՈՒՄ

Այս հոլովման պատկանող բառերն ս կ գ բ ի ց մ ի ճ չ ե ի վ ե ր ջ ՈՒ հոլովիչով են հոլովվում: Եզակի բ ա ց ա ն ա կ ա ն ո ի մ, Է վերջավորությունից առաջ, ՈՒ հոլովիչը կարող է ընկնել կամ մնալ: ՈՒ հոլովիչից հետո եզակի գ ո թ ի ա կ ա ն ո ի մ վերջավորություն չի ավելանում, որի հետևանքով այս հոլովման պատկանող բառերի եզակի սեռականը, տրականն ու գործիականը ձ է ո լ վ մույնանում են. տարբերվում են կիրառության մեջ: Այսպես՝ գեղ զարդու թարգմանվում է «զարդի գեղեցկությունը» (սեռ.), արժանատրեալ զարդու՝ «զարդի արժանացնելով (արժանանալով)» (տր.), իսկ զարդարեաց զարդու՝ «զարդով զարդարեց» (գործ.):

Ա. դ ա ս

Հ Ա Ս Կ Ք

Առն միոջ էին երկու որդիք: Մին ի նոցանէ յոյլ էր եւ սնափառ, միսն (= մեւսն)՝ վաստակասէր եւ հեզ: Եւ մինչ անդրանիկն ամբարտաւան զկծեցուցանէր յոխորտ բանիւք զսիրտ կրտսեր եղբօրն, լուաւ զայն հայր նոցա եւ արկ (= էարկ) առակ մի այսպէս.

«Ի ժամանակի յորում հնճողք պատրաստէին զմանգաղս ի հունձս, մի ի հասկացն ամբարձեալ զգլուխ իւր ի վեր՝ սնափառութեամբ իւր ծաղր առնէր զայս՝ որոց զլուխքն խոնարհեալ կային յերկիր:

Յայնժամ ոմն ի նոցանէ խօսեցաւ եւ ասէ.

* «Թէ էր քո զլուխ ասողք ի ցորեան՝ ոչ այնքան ի վեր ամբառնայիր զայն»:

* Ի սնամէջ խելապատակս լայնանիստ բնակէ Հպարտութիւն»:

(Եղիշէ արք. Դուրյան)

Բ ա ռ ա ր ա ն

յոյլ - ծուլ
վաստակասէր - աշխատասեր
զկծեցուցանեմ - ցավեցնել, կսկծացնել
արկանեմ առակ - առակ քերել՝ պատմել

ասողք - լեցուն. հասած, հուռքի
խելապատակ - 1. գանգ, գլխի՝ ուղեղի
պատյան 2. խելք. ուղեղ

Բ ա գ ա ս Ր ո յ յ ու ն ն Ե ր

Առն միոջ էին երկու որդիք - «Մի մարդ երկու որդի(ներ) ուներ»: Երբ եմ (էական) բայն «ունենալ» իմաստով է գործածվում, նրա հետ ենթական սեռականով է դրվում (ասն միոջ), որը թարգմանելիս ուղղական ենք դարձնում՝ «մի մարդ»: Այլ օրինակներ՝ Անդովկայ ուրումն էր դուստր մի - «ոմն Անդովկ մի դուստր ուներ», իմ են երեք դստերք - «ես երեք դուստր ունեմ»: Հմմտ. չիք մեր թագաւոր (Ժ., վարժ. 5), ՈՉ ԳՈՅԻ հիւք ԵՐԿԻՆ (ԼԲ.):

Սնափառութեամբ իիք - «Ինչ-որ սնափառութեամբ»:

Խոնարհեալ կային - «Խոնարհվել՝ խոնարհված էին»: Հմմտ. ԺԳ., ՄԽԵԱԼ ԿԱՅԻ:

Էր...ասողք, ոչ...ամբառնայիր - Բայերի անցյալ անկատար ձևեր են, որոնք այստեղ անցյալ ապառնի իմաստով են գործածվել - «լեցուն լիներ», «չէիր բարձրացնի»:

Ի ցորեան - Ինչպէ՞ս պետք է թարգմանել:

ՍՐ ԲՆԻ ԲԱՈՇՐԻ (գարբուղի) ՀՈՒՎՈՒՄՆԸ

	Ե-չւնէ	Հ֊գնւնէ	Ե-չւնէ	Հ֊գնւնէ
Ո-	այր	արք	տէր	տեարք
Ս.	առն	արԱնց	տեառն	տերԱնց
Տ.	առն	արԱնց	տեառն	տերԱնց
Հ.	(զ)այր	(զ)արս	(զ)տէր	(զ)տեարս
Բ.	յառնէ	յարԱնց	ի տեառնէ	ի տերԱնց
Գ.	արԱմբ	արԱմբք	տերԱմբ	տերԱմբք

Ծ ա ն .- Առաջին բառի հոլովածներից աշխարհաբարում մնացել են՝ **ԱՌՆական... ԱՐԱՄԲի** (ամուսնացած կին), երկրորդից՝ **տյարք** (= տիարք) եւ տիկնայք:

	Ե-չւնէ	Հ֊գնւնէ	Ե-չւնէ	Հ֊գնւնէ
Ո-	եղբայր	եղբարք	քոյր	քոբք
Ս.	եղբօր	եղբարց	քեռ	քերց
Տ.	եղբօր	եղբարց	քեռ	քերց
Հ.	(զ)եղբայր	(զ)եղբարս	(զ)քոյր	(զ)քոբս
Բ.	յեղբօրէ	յեղբարց	ի քեռէ	ի քերց
Գ.	եղբարք	եղբարքք	քերք	քերքք

Ծ ա ն .- **Եղբօր** ձեւն առաջացել է հնագույն **եղբւր** ձեւից (ինչպես նաեւ՝ **հօր** < **հԱւր**, **մօր** < **մԱւր**): Այնպես որ այդ ձևերի մեջ կարելի է Ա հոլովման համակարգը նկատել: Երկրորդ բառի հոլովածներից աշխարհաբարում մնացել են՝ **Քեռ-որդի** (քրոջ որդի), **Քեռի**...

Տէր բառի նման է հոլովվում **տանուտեր** (եզ. սեռ. **տանուտեառն**), **եղբայր** բառի նման՝ **հայր**, **մայր**, **հօրեղբայր**, **մօրեղբայր**, **նախահայր**, **նախամայր**, **Տիրամայր**, իսկ քոյր բառի նման՝ **հօրաքոյր**, **մօրաքոյր**:

ՎԱՐՃՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. **Հետեւյալ նախադասություններն աշխարհաբար թարգմանեցէք.**

ա) * Իբրեւ ցեց՝ հանդերձի եւ որդն փայտի, նոյնպէս տրամութիւն վնասակար է սրտի առն: * Միւրեսցես զեղբարս քո, եւ մի՛ դարձուցանիցես զսիրտ քո յեղբարց քոց: Արդ դուստր մօրն դու ես, որ մերժեաց զայր իւր, եւ քոյր քերցն քոց՝ ոչք մերժեցին զարս իւրեանց եւ զորդս իւրեանց: * Խրաքանչիւր (յուրաքանչյուր ոք) ի հօրէ եւ ի մօրէ երկնչլիցիք: Եւ մեկնեցաւ անձն իմ (անձս, հոգիս) ի մնացէ, որպէս մեկնեցաւ անձն իմ ի քեռէ նորս:

բ) Եւ առաքեաց զժառայ իւր ի ժամու ընթրեացն կոչել զիրաւորեալսն: Ընդ ակամբ (խեթ) հայէր Մատուլ յօրէ յայնմանէ եւ առ յապա, եւ թշնամութեամբ եղեւ ընդ Դաւթի զամենայն ատուրս նորս: * Այն որ արհամարհէ զհայր եւ անարգէ զժերութիւն մօր, խլեացն զնա ագոսար ձորաց եւ գէ՛ջ գէ՛ջ պատառեսցեն զնա ձագք արժուեաց: Են իմ երկու դստերք որ զայր

ոչ զիտեն: Է՞ որ քո աստ փեսայ կամ որդիք կամ դստերք, կամ այլ որ քո խոսքի քաղաքի աստ, հանձն գնուա ի տեղաջէ(ս) յայսմանէ: Եւ մի՛ եւս եղիցի Եգիպտացոցն գործ՝ մի՛ յետս եւ մի՛ յառաջ, մի՛ ի սկզբան եւ մի՛ ի կատարածի: Չի՞ եկեալ ես այսք, եւ զի՞նչ խնդիր է քո աստ. զի փորեցեր դու քեզ աստ գերեզման, եւ արարեր քեզ յարկ ի վիմիդ: Մեծ է իշխանութիւն նորա, եւ խաղաղութան նորա չիք սահման: Որդոյ մարդոյ ոչ գոյ ուր դիցի զզուլս իւր: (ԱՌՆ ՄԻՈՋ ԷԻՆ...)

2. Գրաքար քարգմանեցեր.

² ¹
Նրանցից խնդրում էր (հայցել):

³ ² ¹
Գործի փոխարեն վճարեց: (ԻՒ. դասից գտեր)

³ ⁵ ⁴ ¹ ² ⁸ ⁷
Դեպի մի քաղաք ճանապարհ ընկնելով՝ երեկոյան (զերեկորին) այնտեղ հասավ:

³ ² ⁵ ⁴ ¹
Այդ խոսքերը (բանքոյ աշտոպիկ) նրա քրոջ կողմից էին գովել: (Պետք է քոյր բառի բացատրականով ասել)

⁵ ⁴ ³ ² ¹
Քաղաքից եկածներին քաղցր խոսքերով ընդունեց (ընկալաւ):

Կար եւ որ. - Եկածներին հայցական է: ճանապարհ-ի դիմաց ուղի հոմանիշի պետք է գործածել:

3. Հայր, մայր, սօրերդայր, տանուտեր, սօրաքոյր բառերը հոլովեցեր:

ԼԵ. դ ա ս

Տ Ա Տ Ա Ս Կ Ք

Սովացեալ բուսոց թէ՛ «Ռ՛ արդեօք յառաջապահ մեզ կացցէ՞». եւ խորխտացեալ կառին եւ նորին նմանեաց՝ ասեն, թէ՛ «Մեք՝ Հարկանող գողով»: Եւ ի կարգիլն՝ եկեալք էչք եւ ուղտք՝ կերեալ եւ առ աթուր Հարեալ, գօսացեալ տարեալք ի հողմոց եղեն:

Ընդդէմ կայ առակս Հպարտ մտաց, որք յուսան ի լեզուանութիւն իրենանց. զի * Հզօր է զօրութիւն, քան զլէզու:

(Միփքար Գոշ Առակ ԼԴ.)

Ք ա ո ա Ր ա ն

կտո(ն) - կանկառ, փշոտ թուփ, տատասկ	առ արուր հարկանեմ - ոտնակոխ անել,
մմանի = մման	ոտքի տակ կոխկրտել
	գօսանամ - չորանալ, սմբել

Ք ա գ ա Տ Ր Ո Յ Պ Ո Ն Ն Ե Ր

Սովացեալ բուսոց, խորխտացեալ կառին եւ նորին նմանեաց - Ինչպե՞ս են քարգմանվում (նկատի ունեցեք, որ առաջին դեպքում - խոկացեալ բուսոց - նախադասութեան մեջ ուրիշ բայ չկա):

Նորին նմանեաց - Տես ԺՁ., ՆՈՐԻՆ եւ հմմտ. ԻՁ., երդումն ՆՈՐԻՆ:

Ի կարգիլն - Ինչպե՞ս պետք է քարգմանել:

Եկեալք էչք եւ ուղտք՝ կերեալ եւ առ արուր հարեալ - Ինչպե՞ս պետք է քարգմանել (երբ այս նախադասություններում էլ դիմավոր բայ չկա):

Տարեալք...եղեն - -ԵԱԼ-ով բայածեի (անցյալ դերբայի) հետ լինիմ բայը (այստեղ՝ եղեն) կր ա վ որ ա կ ա ն իմաստ է մեկտրում - «տարվեցին»:

Յուսան ի լեզուանութիւն - Յուսամ բայը, մի քանի ուրիշների մման, Ի (նախդիր) + հայցական (լեզուանութիւն) է պահանջում - «հույս(ներ)ը դնում են լեզվանության վրա» (բառացի՝ «հուսում են լեզվանությանը»):

Վ Ա Ր Ժ Ո Ւ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

1. Հետեւյալ նախադասությունները քարգմանեցեր՝

ա) ա շ խ ա բ հ ա բ ա բ .

* Որ խնդրե՛ առնու, եւ որ հայցել (ԿԱՅՅԷ)՝ գտանիցէ: Եւ եկեալ ծառային պատմեաց զայն տեառն իւրում: Ո՞ եցոյց մեզ փախչել ի բարկութենէն: * Երբամբք կիւլեալ լիցի (ՏԱՐԵԱԼԲ...ԵՂԵՆ) մեղաւորն, եւ հայիոյիչն եւ անբարտաւանն գայթակղեսցի նորիմբք (նրանցով, դրանցով): Ոչ է անասուն

ինչ հաստատարիմ քան զ՛ումն եւ զ՛ծի: Յուսացեալդ էր յԵզիպտոս, ի հեծեալս
եւ յերիվարս նոցա (ՅՈՒՄԱՆ Ի ԼԵԶՈՒԱՆՈՒԹԻԻՆ):

= **Տեանն չեւը** (երկրորդ նախադասությունից) նախդրավոր **ի՞նչ չեուվ կարող
էր փոխարինել** (անշուշտ, նույն իմաստը պահելով):

բ) **գ ր ա բ ա ր.**

2 1 5 4 3

Այն մարդիկ բարեկամների օգնության վրա էին հույսները դրել: (ՅՈՒՄԱՆ
Ի ԼԵԶՈՒԱՆՈՒԹԻԻՆ)

Առյուծն ավելի հզոր է, քան վագրը:

2 3 1 5 4
Երբ նա ինձ տեսավ (Ի ԿԱՐԳ-ԻԼՆ), սաստիկ ուրախացավ:

3 2 1
Թշնամիներից (= թշնամիների կողմից) երկրներ պիտի գրավվեն;

2 5 4 3 1 8 7
Նա իր եղբոր մոտ հասնելով (ԽՈԿԱՅԵԱԼ ԲՈՒՄՈՑ...)՝ նրա հետ
համբուրվեց (համբուրեաց):

Կ ա Ր Ե Ւ Ո Ր. Մարդիկ, առյուծը, երկրներ ուղղական հողով են, ինձ
հայցական:

2. **Հետեւյալ բառերը հիշուցեք՝ խրախատացեալ, բոյս, մոգ:**

(Handwritten signature/initials)

ԼԹ. դ ա ս

ԼԵԱՌՆ ԵՒ ՍԱԳԼՅՈՂՔ

**Լեանն մի էր յերկրի յոյժ ամբարձեալ եւ անմատոյց. ի նմա ամրանալ
կամեցան բնակիչք աշխարհի, զի լի էր ամենայն բարութեամբ, եւ
ստողջութեամբ ընդ ամբոթեանն, սակայն դժուարեւանելի էր,
թէպէտ եւ բազում ունէր շաւեղ: Եւ յեւանել այնոցիկ, որ գոտս
դաղարեցուցանել հանգչել կամեցան, ոստեալք մինչ յատակն
հասանէին. եւ բազում անգամ նոյն պատահէր: Իսկ որք ոչ կամեցան
հանգչել, այլ ի գաւաղան յեցեալ յընթանալն փութային, ելին եւ
հանգիստ գտին:**

(Մխիթար Գոռ, Առակ ԸԶԵ.)

Բ ա ղ ա ր ա ն

բարութիւն - այստեղ՝ բարիք(ներ)
շաւեղ = շափղ
դաղարեցուցանել - դաղար՝ հանգիստ
տալ

ոստնում - ցատկել
յենում - հենվել, յեցեալ - °

Բ ա գ ա ս ր ու թ յ ու ն ն ե ր

Լեանն մի էր - Ինչպե՞ս պետք է բարգձմանել:
Ընդ ամբոթեանն - Այստեղ՝ «իր ամբոթյան պատճառով՝ շնորհիվ»:
Ռազում ունէր շաւեղ - **Քազում** բառը վերաբերում է շաւեղ-ին (բազմաթիվ
շավիղներ): Նրանց միջեւ է ընկել **ուներ** բայը: Սա գրաբարում սիրված ոճ է (երբ
բայն ընկնում է իրար հետ սերտորեն կապված բառերի միջեւ) եւ **հունարան ոճ**
կամ **էլիզիգզմ** է կոչվում: Այսպէս հունարան ոճեր (էլիզիգզմներ) են նաեւ՝ **ընդ**
այլով յորով անգամ **ն ու ա ճ ե ա լ** **բագաւորութեամբ** (ԺԷ. **այլով** եւ
բագաւորութեամբ իրար հետ կապված բառերի միջեւ ընկել են **նուաճեալ** բայը
եւ նրա լրացումը), **մանունս ու ց ց և լ ո վ** յիներան **ձկունս** (իր մեջ մանր ձկններ
ունի), **ի ձեսս ա ն կ ա ս է ր** **թշնամեաց** (թշնամիների ձեռքն էր ընկնում) եւ այլն:
Հմմտ. **ձեր է բարեշնորհութիւն** (ԺԶ.), **գայլոց դիւցազանց զարմից բ ա ն ց ա լ**
զկենդանութիւն (ԻԴ.), **զանձին հ ա տ ա ն է լ գոյս** (ԼԶ.):

Յկանել այնոցիկ - Ինչպե՞ս պետք է բարգձմանել:
Մինչ յատակն - **Մինչ** (= մինչեւ) նախադրոթյունը սովորաբար է կամ Յ նախդրի եւ
հայցականի հետ է գործածվում, բայց քանի որ **յատակն** բառը Յ-ով է սկսվում, է
չի ստացել:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հետեւյալ նախադասութիւններն աշխարհաբար թարգմանեցէր.

ա) * Ոչխարք իմ ձայնի իմում լսեն, եւ ես ճանաչեմ զնոսա, եւ զկնի խմ գան եւ մի՛ որ յափշտակեցէր ի ձեռաց իմոց: Ոչ ուտեմ զմիս զուարակաց, եւ ոչ զարիւն նոխագաց քոց ընպիցեմ: Արտաքս պեղէին զհաղն ի բլրէն (= ի բլրոյն) եւ գտանէին զգեղեցկաշէն եկեղեցիւն լի աստուածային գանձի (= գանձու) եւ հոտ **անուշուքեան** (ԻԷ., ԺԱՄՆ ԳԱՌՆՈՒԹԵԱՆ) բուրեալ:

բ) Մտեալ յաշխարհս մեր՝ ահ եւ երկխլ հասուցանէր հեռաւորաց եւ մերձաւորաց: * Ջիւա՞րս դժուարին է որ զինչո՞ղ ունին, մտանել յարքայութիւն: Խորտակեցին զամենայն ոսկերս նորա, զի ի տուրջեցնէ (տիւ) մինչէն ի զիշեր մատնեցաւ ի ձեռս քնամեաց: Բազում ձմերաց հալեցան սառնամանիք. եհաս գարուն, եւ եկին ծիծեռունք. տեսին եւ խնդացին կենցաղասէր մարդիկ, եւ նոքա ոչ երբէք կարացին տեսանել զանձկալիսն իւրեանց: Արդարացուցանեն զամպարիշտն վասն կաշառաց, եւ զիրատունս գողանան զարդարքն:

Կ ար եւ ո ր .- Այս վարժութեան նախադասութիւնների միջից բազում ու ն է ր **շաւեղ**-ի պէս կառուցված 2 արտահայտությունները գտեր:

2. Հետեւյալ բառերի ո՛ր հոլովման պատկանելը որոշեցէր.

հարսին - հարսանց, երկրի - երկրաց, աւագակի - աւագակաց, ամբուքեան - ամբուքեանց, դժուրելանելոյ - դժուրելանելեաց, ոստուցելոյ - ոստուցելոց, ամբարձելոյ - ամբարձելոց, շաղի - շաղաց, ոտին - ոտից, գաւազանի - գաւազանաց, որոյ - որոց, բնակչի - բնակչաց, ամենայնի - ամենայնիւ, հանգստեան - հանգստեամբ, մարտի - մարտից, կայսեր - կայսերոց, աստեղ - աստեղ:

Եւ մ ու շ՝ թագաւորի - թագաւորաց (Ի-Ա, արտաքին):

Խ. դ աս

ԱՆԱՌԱԿ ՈՐՈՒ

Առն միոջ էին երկու որդիք: Ասէ կրտսերն ի նոցանէ ցհայրն.

«Հա՛յր, տո՛ւր ինձ բաժին, որ անկանի յընչիցդ... եւ նա բաժանեաց նոցա զկեանսն: Եւ յետ ոչ բազում աւուրց ժողովեալ զամենայն կրտսեր որդւոյն՝ զնաց յաշխարհ Հեոթ. եւ անդ վատնեաց զինչս իւր, զի կեայր անատակութեամբ: Եւ իբրեւ սպառնեաց զամենայն, եղև սով սաստիկ յաշխարհին յայնմիկ, եւ սկսաւ ինքն չբաւորել: Եւ զնացեալ յարեցաւ ի մի ոմն ի քաղաքացւոց աշխարհին այնորիկ. եւ յղեաց զնա յազարակ իւր արածել (= յարածել, առ յարածել) խոզս: Եւ ցանկայր լնուլ զորովայն իւր յեղջերէն զոր խոզքն ուտէին, եւ ոչ որ տայր նմա (= ցնա): Եւ եկեալ ի միտս իւր ասէ. «Քանի՛ վարձկանք իցեն ի տան հօր իմոյ հացալիցք, եւ ես աստ սովամահ կորնչիմ: Յարուցեալ զնացից առ հայր իմ եւ ասացից ցնա. «Հա՛յր, մեղայ յերկինս եւ առաջի քո: Եւ ոչ եւս եմ արժանի կոչել որդի քո, արա՛ զիս զմի ի վարձկանաց քոց»:

Եւ յարուցեալ եկն առ հայր իւր. եւ մինչդեռ Հեոագոյն էր, ետես զնա հայրն եւ զթացաւ. յարեաւ եւ ընթացաւ ընդ առաջ, անկաւ զպարանոցաւն նորա, եւ համբուրեաց զնա: Եւ ասէ ցնա որդին.

«Հա՛յր, մեղայ յերկինս եւ առաջի քո. ոչ եւս եմ արժանի կոչել որդի քո»:

Ասէ հայրն ցճառայս իւր.

«Վաղվաղակի հանէ՛ք զպատմութեանն առաջին եւ ազուցէ՛ք նմա, եւ տո՛ւք զմատանին ի ձեռս նորա, եւ կօշիկս յոտս նորա: Եւ ածէ՛ք զեզն պարարակ, զենէ՛ք, կերիցուք եւ ուրախ լիցուք: Զի այս որդի իմ մեռեալ էր եւ եկեաց, կորուսեալ էր եւ գտաւ»:

(Դուկ. ԺԵ 11-32)

Բ ա ո ա Ր ա ն

կիանք - այստեղ՝ ունեցվածք. ապրուստ կիամ - ապրել, այստեղ՝ մատի (վերա)կենդանանալ. եկեաց - յարիմ - դիմել
եղջիր - եղջյուր, եղջերենու (կտտոշածու) պտուղ

զամ ի միտս - հասկանալ. կռահել. գիտակցել
առաջին - տես ԻԲ.
ազանիմ - հազնել. ազուցանեմ - հացցնել
պարարակ - պարարտ

Բ ա գ ա ս ր ու թ յ ու ն ն Ե ր

Առն միոջ էին երկու որդիք - Տե՛ս Լ.է.:

Անկանի յընչից - «Ընկնում է (այսինքն՝ հասնում է) քո ունեցվածքից»:

Ժողովեալ...կրտսեր որդայն - Ինչպե՞ս պետք է բարգձմանել:

Մեղայ յերկինս - Տե՛ս ԻԲ.:

Կոչել - Այստեղ կրավորական՝ «կոչվելու»:

Անկառ զպարանոցան - Հմմտ. ԻԶ., ԶԳ-ԼԽՈՎ...ԱՐԿԻ:

Գտաւ - Ինչպե՞ս պետք է բարգձմանել: Հմմտ. Դ., ՏԵՄԱԻ, ՄԱՏԱԿԵՑԱԻ:

= Ուշադրություն դարձրէք. այս բնագրում եւ-ը մի բանի անգամ «իսկ» կամ «բայց» իմաստով է օգտագործվել:

Ի Ե Ի Ե ՀՈՐՎՈՒԹՅՆԵՐ

Ի պարզ հորովման ժամանակ ս կ զ ք ի ց մ ի ն չ ե ՚ ւ վ ե ը զ Ի հորովիչն է ավելանում, բառի վ ե ը զ ի ց (միայն թե բացառականի է-ից առաջ այն ընկնում է):

Ն մ ո շ ն ե ր՝

Ն-ը	Գ-ը	Ի-ը	Հ-ը
Ո- բան	բանք	քրիստոնեայ	քրիստոնեայք
Ս. բանի	բանից	քրիստոնէի	քրիստոնէից
Տ. բանի	բանից	քրիստոնէի	քրիստոնէից
Հ. (զ)բան	(զ)բանս	(զ)քրիստոնեայ	(զ)քրիստոնեայս
Բ. ի բանէ	ի բանից	ի քրիստոնէէ	ի քրիստոնէից
Գ. բանիւ	բանիք	քրիստոնէիւ	քրիստոնէիք

Ծ ա ն . - Բանիք եւ մնան ձեւերը տարբեր մասնագետներ սովորեցնում են «բանիք» կամ «բանյութ» կարգալ: **Չքրիստոնեայս** պետք է «ըզքրիստոնյայրս» կարգալ:

Այսպէս հորովվում են՝ **այծ, բարծ, ծայր, ոստայն, որովայն, սաղաւարտ, սիրտ, վտանգ, փայտ, արքայ, քահանայ, սկայ, պաշտօնեայ, շրքայ, առեան** (եգ. սեռ. **առեանի**), **Մամիկոնեան** (եգ. սեռ. **Մամիկոնեանի**), **համեստ, զգաստ, անէծք** (սեռ. **անիծից**), **ասք, անցք արեւելք, արեւմուտք** (սեռ. **արեւմտից**), **խօսք, կուրծք, Պարսք, Աղուանք:**

Ե պարզ հորովման ժամանակ Ե հորովիչն ս կ զ ք ի ց մ ի ն չ ե ՚ ւ վ ե ը զ Ի ավելանում, միայն թե բառի (արմատի) ն ե ը ս ո ռ ՚ մ վերջին բաղաձայնից առաջ Դ-րա համար էլ **ներքին հորովում** է կոչվում:

Ն մ ո շ ն ե ր .

Ն-ը	Գ-ը	Ի-ը	Հ-ը
Ո- կայսր	կայսերք	անգղ	անգղերք
Ս. կայսեր	կայսերց	անգեղ	անգեղց
	(կայսերԱց)		(անգեղԱց)

Տ. կայսեր	կայսերց	անգեղ	անգեղց
	(կայսերԱց)		(անգեղԱց)
Հ. (զ)կայսր	(զ)կայսերս	(զ)անգղ	(զ)անգղոս
Բ. ի կայսերէ	ի կայսերց	յանգեղէ	յանգեղց
	(ի կայսերԱց)		(յանգեղԱց)
Գ. կայսերք	կայսերքք	անգեղք	անգեղքք
	(կայսերԱք = կայսերօք)		(անգեղԱք = անգեղօք)

Ինչպէս հեշտությամբ նկատվում է, այս հորովման պատկանող բառերը **հ ո գ - ն ա կ ի սեռական-տրականում, բացառականում եւ գործիականում, բացի Ե հորովիչից, զուգահեռաբար նաեւ Ա հորովիչ են ստանում, հավելյալ ձեւեր կազմում:**

Քանի որ այս բառերի ե զ ա կ ի ս ե տ ա կ ա մ ը ր բ ա դ ա ճ ա յ ն ո վ (Բ կամ Դ) է վերջանում, գ ո թ ի ա կ ա ն ո ՚ մ Բ վերջավորությունն են ստանում. կայսեր - կայսերքք, անգեղ - անգեղք: (Գործիականի Բ-ի համար հմմտ. նաեւ Ա ներքին հորովման բառերը - Լ. դաս):

Այսպէս են հորովվում՝ **ազոր, եզր, վազր, տարր, ոսկր. արկղ, կոճը, անգղ. եղջիւր** (եգ. սեռ. **եղջեր**), **աղբիւր** (եգ. սեռ. **աղբեր**) եւ այլն, մի խոսքով՝ **հիմնականում այն բառերը, որոնք Բ-ով կամ Դ-ով եւ սրանց նախորդող բաղաձայնով են վերջանում:**

ՎԱՐՇՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հետեյալ նախադասություններն աշխարհաբար բարգձմանեցր.
ա) * Որ գործէ զերկիր իւր՝ լցցէ հացիւ: Տեարք տոնից եւ իշխանք ամենայն երկիրիւի եւ սիրով հնազանդէին մնա: Յայնժամ Հերովդէս գալտ կոչեաց զմոզսն, եւ ստուգեաց ի նոցանէ զժամանակ աստեղն երեւելոյ: Խորշեալ ոսխխին յառաջարկութենէ արքային, Հայն արծակեալ էր անդատապարտ:

բ) * Ով ազգ անհաւատ, մինչեւ ցե՞րք իցեն ընդ ձեզ, մինչեւ յե՞րք անսայցեն (յսել) ձեզ: Եւ տարաւ զմա առ մայր իւր, եւ մնջեաց ի վերայ ծնգաց նորա մինչեւ ցմիջօրեայ, եւ մեաւ: * Որդեալ, ի մանկութենէ բումմէ խնդրեալ զխրատ, եւ մինչեւ ցծերոյք գտցես զիմաստութիւն: Խորտակեցին զամենայն ոսկերս նորա: Երթայր տո՛ւք զԿայսերն Կայսեր եւ զԱստուծոյն Աստուծոյ:

գ) * Մեծ է մարդ եւ պատուական այր ողորմած, բայց զայր հաւատարիմ գործ է գտանել: * Իլորքանչիւր ի հօրէ եւ ի մօրէ երկնչիցիք: Ահա եկեսցէ ժամ եւ եկեալ իսկ է, զի ցրուեսցիք յիւրաքանչիւր տեղիս, եւ զիս միայն (մնակ) բողբուցալ: Եւ յովք հեղձնուին ի ջուրն՝ եւ մեռանէին: Առին իրեանց կանայս յամենեցունց զորս ընտրեցին:

Կ ա Ր Ե Ռ Ր. - Գրաբարում իրաքանչիւր բառը սովորաբար «յուրաքանչյուրն իր» իմաստով է գործածվում:

դ) Ե՞րբ տեսաք զքեզ քաղցեալ, եւ կերակրեցաք. կամ ծարախ՝ եւ արքուցաք: Ե՞րբ տեսաք զքեզ օտար, եւ ժողովեցաք, կամ մերկ՝ եւ զգեցուցաք: Ե՞րբ տեսաք զքեզ հիւանդ կամ ի բանտի, եւ եկաք առ քեզ: Այլ մեք ոչ կարեմք գոր տեսաքն եւ լուար՝ չխօսիլ: Փողս հարաք եւ ոչ կաքանեցէր (չաբրեցիր), ողբացաք, եւ ոչ լացէք: Ամենայն եղբարք կոտորեցան, ամենայն կանիւ եւ կարասեալ իւրեանց առ հասարակ կորեան նոքա: Որպէս լուար եւ ծանեաք (ճանաչել) զայս, եւ հարքն մեր պատմեցին մեզ:

ե) Ուրախ լերուք ընդ իս, զի գտի գորամն իմ գոր կորուսի: Յումն՝ զանգիտեալ զարիւրեցար, զի ստեցեր ինձ եւ ոչ յիշեցեր զիս, եւ ես տեսի զքեզ եւ անտես արարի: Ջոյ աչօք մերովք տեսաք եւ ընդ փորձ չարեաց (չարիքների փորձութեան միջով) անցաք, զայն միայն գրեցաք: Ես առաքելի զքեզ հնձել գոր ոչ դուք վաստակեցէք. այլք վաստակեցին եւ դուք ի վաստակս նոցա մտէք (նրանց վաստակը յուրացրիք): Այս այր սկսաւ շինել եւ ոչ կարաց կատարել: Նա մարդասպան էր ի սկզբանէ եւ ի ճշմարտութեան ոչ եկաց, զի ոչ գոյ ճշմարտութիւն ի նմա:

2. Հոլովեցէք՝

- ա) այծ, ատեան, պաշտօնեայ, անէծք.
- բ) ինչք (ընչից), երկինք, աղբիւր, վագր, ոստղ.
- գ) կողմն, մուկն, ձմեռն (եզ. սեռ. ձմեռան, հոգն. ուղղ. ձմերունք).
- դ) եզր, տարր, եղջիւր, աստղ, Պարսք:

3. Հետեւյալ բառերի եզակի եւ հոգնակի սեռականները կազմեցէք. արքայ, քահանայ, փայտ, մատեան, սիրտ, համեստ, ոսկր, արկղ, աղբիւր, վագր, կոճղ:

4. Նույն բառերի եզակի եւ հոգնակի բացառականները կազմեցէք:

5. Նույն բառերի եզակի եւ հոգնակի գործիականները կազմեցէք:

ԽԱ. դ ա ս

ԲԱՐԻՆ ՍԱՍԱՐԱՅԻ

Այր մի իջանէր յերուսաղեմէ յերիբով, եւ անկաւ ի ձեռս աւազակաց, որք մերկացան զնա եւ վէրս ի վերայ եղին, թողին կիսամահ եւ զնացին: Դէպ եղև քահանայի միոջ իջանել ընդ նոյն ճանապարհ, եւ տեսեալ զնա՝ զանց արար: Նոյնպէս եւ Ղեւտացի մի եկեալ ընդ նոյն տեղի, ետես եւ զանց արար: Սամարացի ոմն ճանապարհորդեալ՝ եկն ընդ նոյն ճանապարհ՝ առ նովա, եւ տեսեալ զնա՝ զթացաւ: Եւ մատուցեալ պատեաց զվէրս նորա՝ արկեալ ի վերայ ձէթ եւ զինի. եւ եղեալ ի վերայ գրաստու իւրոյ՝ ած (= էած) զնա ի պանդոկ մի (= ի պանդոկ ուրեք), եւ դարձանեաց զնա: Եւ ի վաղիւ անդր իբրև ելանէր անտի, հանեալ ետ ցպանդոկապետն երկուս դահեկանս եւ ասէ.

«Դարձան տա՛ր դմա, եւ զոր ինչ ծախեսցես ի դա՛ ի միւսանգամ զպլստեան իմում հատուցից քեզ»:

(Ղուկ. Ժ 30-36)

Ք ա ո ա Ր ա ն

վէրս ի վերայ դնեմ - վիրավորել, վերք(եր) հասցնել	մատչիմ - մոտենալ. մատուցեալ - ղարման տանիմ - հոգ տանել. խնամել
զանց առնեմ - զանց առնել, անտեսել. ուշադրութիւն չդարձնել	ծախեմ - 1. ծախսել 2. վատնել 3. սպանել

Ք ա գ ա Տ Ր Ո Ւ Ք Յ Ո Ն Ն Ե Ր

Բարի՛ն Սամարացի - Բարի բառի վերջում Ն հոդի կիրառութիւնը բացատրեցէք: Դէպ եղև քահանայի միոջ իջանել - ինչպե՞ս պետք է բարձրանել (իմաստ. Ի՛հ., ԴԷՊ ԵՂԵԻ ԴԻՈՆԻՍԵԱՅ ԲՈՆԱՒՈՐԻ... ԴԱՏԱՊԱՐՏԵԼ):

Ընդ...ճանապարհ, ընդ...տեղի - ՏԵՆ ԼԶ., ԸՆԴ ՓՈՇԻ գնայ: Առ նովա - Այստեղ՝ «նրա մոտով»: Նախդրի այս կիրառութեան մասին տես ԼԲ., ԱՌ ՃԱՆԱՊԱՐՀԱԻ: Ի դա - Այստեղ՝ «դրա վրա»: Ի...զալստեան իմում - ՏԵՆ ԺԹ., Ի ԿԵՆԴԱՆՈՒԹԵԱՆՆ:

Դմա - Դա դերանվան եզակի տր ա կ ա ն ն է - «դրան»: Գրաբարի դերանունների մեծ մասի ե գ ա կ ի տր ա կ ա ն ն ի նշանը Մ-ն կամ -ՈՒՄ-ն են, որոնցից Մ-ն սովորաբար հանդես է գալիս հոլովածեի ն եր ս ու մ, -ՈՒՄ-ը՝ նրա վ եր ք ու մ: Նույն դերանունների ե գ ա կ ի ս ե ն ա կ ա ն ն ի նշանն է Բ-ն, որ նույնպես սովորաբար հանդես է գալիս հոլովածեի ն եր ս ու մ: Համեմատեցէք.

	Էդուկե սեռական	Էդուկե արական
դա (սա, նա)	դո՛րա...	դ՛Մա
այս (այոյ, այն)	այսո՛ր, այսո՛րհիկ...	այս՛Մ, ահս՛Միկ...
սոյն (դոյն, նոյն)	սո՛րհին կամ սո՛րում...	ս՛Մին
իմն, ինչ	ի՛րիք	ի՛Միք
ոք	ու՛րուք	ու՛Մեք
ոմն	ու՛րումն	ու՛Մեմն
ո՞ (ո՞վ)	ո՞՛յր [«ո՞ւյր»]	ո՞՛Մ
այլ	(այլոյ)	այլո՛ՒՄ
միւս	(միւսոյ)	միւսո՛ՒՄ
մեր	(մերոյ)	մերո՛ՒՄ
որ	(որոյ)	որո՛ՒՄ

Դերանունների հոլովման մյուս առանձնահատկությունն էլ այն է, որ յուրաքանչյուր հոլովի նշանը (հոլովակազմիչը) սովորաբար ոչ թե վերջում է դրվում, այլ հ ո լ Վ ա ծ է ի ն եր ս ու մ: Համեմատեցեք. նո՛Քա (հոգն. ուղղ.), նո՛Ցա (հոգն. սեռ.-տր.), զնո՛Մա (հոգն. հայց.), նո՛Վախ (եզ. գործ., որ Վ ունի ներսում, Ի՛ վերջում. երկուսն էլ գործիականի նշան են), ամենե՛Քին, ամենե՛Ցուն, զամենե՛Մին..., ամենե՛Քեան, ամենե՛ՑունՅ, յամենե՛ՑունՅ... (այս վերջիններում Ց-ն իբրև հոլովի նշան եւ ներսում կա, եւ վերջում):

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հետեւյալ նախադասություններն աշխարհաբար քարզանեցեք.

ա) **Ո՞յր** են կապուտակ ականողիք, ո՞չ ապաքէն այնոցիկ՝ որ յամենն ի զինաջ: * Որ չար է **իւրում** անձին՝ **ո՞ւմ** լիցի բարի: Ունիմ ընդ ինեւ (ԺԷ., ԸՆԴ-ԱՅԼՈՎ...ԹԱԳԱԻՌՈՒԹԵԱՄԻ) զինուորս. ասեմ **սմա՛** ե՛րք, եւ երթայ. եւ **այլում** թե՛ եկ, եւ զայ. եւ ծառայի **իմում** թե՛ արա՛ զայս, եւ առնէ: **Ումեմն** ետ հինգ քանքար, **ումեմն** երկուս, եւ **ումեմն** մի, յւրաքանչիւր (Խ., վարծ. 1գ) ըստ իւրում կարի, եւ զնազ:

Կ ա ր ե ո ղ . **Քանքար**-ը հին ժամանակներում գործածվող ծանրության (ու փողի) չափ էր, որ հավասար էր 20 կգ 400 գ-ի (եւ 10.000 ոսկի դահեկանի):

բ) * **Որում** շատ տուտա, շատ խնդրեցի ի նմանէ: Չարնացան ճնողն **նորա**, եւ պատուիրէր մի՛ **ումեք** ասել որ ինչ եղեմ: Այս ծով մեծ եւ անդորր, ի **սմա** զազանք մեծամեծք եւ՛ մանունք, եւ վիշապն զոր ստեղծեր (ԻԴ., ՅԱՂԹԵՑԵՐ) խաղալ **նովա**: Չայո ամենայն պահեցի ի մանկութեմէ, արդ **ի՞ւ իիք** (ինչո՞վ) պակաս իցեմ:

գ) Հերովդես իբրև կալաւ զՊետրոս՝ եղ ի բանտի: Իբրև հովի մի հովուեսցէ զխաշինս իւր, եւ բազկաւ իւրով ժողովեսցէ զգառինս, եւ ի ծոցի **իւրում** կրեսցէ **զնոսա**: * Կին յորժամ ծնանիցի, տրամութիւն է **նմա**, զի հասեալ է ժամ **նորա**. այլ յորժամ ծնցի զմանուկն, ոչ եւս յիշէ զնեւորթիւն վասն խնդութեանն, զի ծնաւ մարդ յաշխարհ:

2. **Հոլովեցեք՝** Ղեւտացի, արկեալ, զինի (միայն եզակի), Երուսաղէմ (միայն եզակի):

3. **ԳՄԱ** արտահայտության կապակցությամբ տրված բացատրությունները հաշվի առնելով սա, այո, այն, դոյն, ձեր, իմ, իւր դերանունների եզակի սեռական ու տրականները, հոգնակի սեռական-տրականները, հոգնակի հայցականները կազմեցեք:

4. **Գասի բնագրից** այն զույգ բառերն արտագրեցեք, որոնք հոլովով ու քվով համաձայնվել են:



ԽԲ. դ ա ս

ՀԻՄՆ ՀԱՍՏԱՏՈՒՆ

Այր իմաստուն շինեաց զտուն իւր ի վերայ վիմի: Իջին անձրեւք եւ խաղացին գետք, շնչեցին հողմք եւ բախեցին զտունն, եւ ոչ կործանեցաւ, քանզի ի վերայ վիմի հաստատեալ էր: Եւ այր յիմար շինեաց զտուն իւր ի վերայ աւազոյ: Իջին անձրեւք, յարեան գետք, շնչեցին հողմք, հարին զտունն, եւ անկաւ. եւ էր կործանուան նորա մեծ յոյժ:

(Մատթ. Է 24-27)

Ք ա ռ ա ր ա ն

խաղամ - շարժել

| շնչեմ - փչել

ՎԱՐՃՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Աշխարհաբար քարգմանեցեք.

ա) * Որում բազում աւանդեցաւ, առաւել եւս պահանջեցեն ի մնանէ: Եւ ձեզ դիպելոց է այս ամենայն: * Ծնունդք իժից, ո՞ ցոյց (= եցոյց) ձեզ փախչել ի բարկութենէն որ գալոց է: Դո՞ւղ ես որ գալոցն ես, եթէ այլում ակն կալցոյր (սպասել): Մի ոմն ի ձեռք մատնելոց է զիս:

ՍԵՐՄՆ ՍԵՐՄԱՆԵԱԼ

Սերմանող ոմն սերմանեաց յագարակի իւրում. եւ ի բուսանելն փոխեցաւ ի գարի, ի կորեակ եւ յորոմն եւ ի ցորեան:

(Մխիթար Գոշ, Առակ ԸՁԹ.)

բ) Չտայր թոյլ մտանել ի տուն իւր: * Յամենայնի իմաստասերն խոստովան լինի գգիտութիւն եւ ուրացեալ՝ զանգիտութիւն: Յայնժամ հրաման ետ, եւ ածին գՏրդատիոս յանդիման քազատրին: Եւ ինձ արժանի է նոր երկրպագութեամբ երկիր պազանել ձեզ: Ապա ի մէջ արարեալ զամենեսեան զնոսա՝ այսօր ձերբակալս առնեմք:

ՓԱԽՈՒՑԵԱԼՆ Ի ԼԾՈՅ

Փախուցեալ երբեմն ի լծոյ հերկանց (հերկ) եզն, ածաւ ի մշակէն ի կալն, եւ յայնմանէ փախուցեալ՝ ի սալլ ածաւ եւ յայնմանէ՝ ի բազում ինչ, մինչեւ անհնար ետես զփախուստն. եւ հաւանեալ (տես ԻԴ.) մոռացաւ:

(Մխիթար Գոշ, Առակ ՀԸ.)

2. Գրաբար քարգմանեցեք.

3 2 6 5 4 1
Մի երիտասարդ իր հոր տնից էր վերադառնում:

1 3 2 4 7 6 5

Երբ տուն մտավ, բոլորը զարմացած իրեն նայեցին: (Ընդգծվածը 2 լղանակով քարգմանել՝ նախորդի օգնությամբ եւ նախադասության ձեով)

1 2 4 3
Փախչելով չկարողացավ թշնամուց ազատվել (ապրել, գերծանել):

3 2 1 5 4
Հոր մոտ եկավ՝ նրան տեսնելու համար: (Ընդգծվածը՝ 3 եղանակով)

3 2 1 5
Տղան (տղայն) շատ էր սիրում մորաքրոջ (ԼԷ., քերականական բաժին)

4 6 7
այգին, որ Էջմիածնում է (ԻԹ., ՈՐ ԸՆԴ ՉԵՌԱՄԲ ՆՈՐԱ):

Կ ա Ր Ե Ի Ո Ր.- Մի երիտասարդ, բոլորը ուղղական են, նրան, այգին՝ հայցական:



բառին: Նախորի կրկնության պատճառը նույնն է, ինչ որ բացատրվեց վերելում (Ի ՊԱՐՄԻԿ Ի ՀՈՂՈՅՆ Ի ՎԵՐԱՅ):

Մեծամեծս - Ս-ի դերի մասին տես ԽԹ., ՈՂՋՍ ԵՒ ԱՆԱՐԱՍՍ:

Ձի այժմիկ ձեր... (մինչև վերջ) - «Որովհետև հիմա դուք՝ ծառաներդ, մեր՝ ձեր տերերի բարձն եք գրավել: Բայց չե՛մ բողոնի, մինչև որ մեր այդ տեղը մեզ չզա՛լ վերադառնա»: Ձեր ծառայից...կալեալ է - Կալեալ է բայի կողքին սեռականով ենթակա (չէր ծառայից) գործածելու կապակցությամբ հմմտ. Ժ., ԷՐ ՈՒՐՈՒՄ, ՏՆԿԵԱԼ:

ՎԱՐՃՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հետևյալ նախադասություններն աշխարհաբար քարգմանեցեք.

ա) * Խրատեա՛ գորդի քո, եւ հանգուսցէ գրեգ: Հեռի արա՛ ի նմանէ զճանապարհս քո, եւ մի՛ մերձենար ի դյուսն տանց նորա: * Որդեա՛կ, զգործս քո հեզութեամբ վարեսջի՛ր, եւ յարանց ընտրելոց սիրեսցիս: * Ա՛րք, սիրեցէ՛ր զկանայս ձեր եւ մի՛ դառնացուցանէք զնոսա: * Տնանկին կարկառեա՛ զձեռն քո, զի կատարեալ եղիցի օրհնութիւն քո: * Արդեամբք եւ բանիւք պատուեա՛ զհայր քո, զի եկեսցէ ի վերայ քո օրհնութիւն ի նմանէ: Լո՛ւր, որպեա՛կ, իրատու հօր քո, եւ մի՛ մերժեր զօրէնս մօր քո, զի պսակ շնորհաց ընկալցի զլուխ քո: Կալարո՛ւք աղուխսունս մանրկունս՝ զապականիչս այգեաց, եւ որքք մեր ծաղկեսցին:

բ) Ասէ հայրն ցաղջիկն. «Հաստատեա՛ զսիրտ քո հացիւ. եւ զքօսիյի մինչեւ շրջեսցի օրն»: * Լո՛ւր, որդեա՛կ, հօրն՝ որ ծնաւ զքեզ, եւ մի՛ արհամարհեր զձերութիւն մօր քո: Արք Իսրայելացիք, լուարո՛ւք զբանսս զայստակ: Հա՛յր, ապրեցո՛՛ զիս ի ժամէ աստի իմմէ (ԼԳ., ՅՈՐԴ-ԻՈՅՆ ԱՍՏԻ ԻՍՄԷ): Մի՛ յիշեր զմեղս մեր, եւ մի՛ վասն մեղաց մերոց դարձուցաներ զերեսս քո ի մեճ: Մի՛ յալիտեան բարկանար մեզ, եւ ի ժամանակի մի՛ յիշեր զմեղս մեր: Արծակեաց զնա հանդերձ կանամբ նորին եւ ամենայն զերութեամբ եւ զանձիւք: Եւ որ ոչ ընկալցին զձեզ եւ ոչ լուիցեն ձեզ, յորժամ ելանիցէք անտի, քօբափեսջիք (քափ տալ) զփռշի ոտից ձերոց ի վկայութիւն (ԼԶ., Ի ՄՆԻԹԱՐՈՒԹԻՒՆ) նոցա:

2. Գրաբար քարգմանեցեք.

3 2 6 5 4 1
Ինձ հետ մեր լեռներում շրջելու պիտի գնա: (Նախորդով, 2 ձեռով)

5 6 3 2 4 1 8 7 11
Բոլոր կողմերից մեզ մոտ մարդիկ պիտի գան, իրենց աչքերով պանծալի


10 9 12 15 14
գործեր (իրս) պիտի տեսնեն ու դրանց վրա (ԸՆԴ + հայցական

13
գործածեցեք) պիտի զարմանան:

7 6 5 2 4 3
Մեր աշխատանքների (գործ) փոխարեն քեզնից արժանի պարգևներ ենք ակնկալում:

2 4 3 1
Դուք ձեր հայրենիքին եք ծառայել (սպասարտել):

Կ ա ր ե ո ռ ք . Մարդիկ ուղղական է, գործեր, պարգևներ՝ հայցական: Այս վերջինը պետք է տրական քարգմանել:



ԽԳ. դ ա ս

ՔԱՂԱՔ ՀԵՌԻ ԵՒ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԳՔ

Քաղաք էր հերի թագաւորի ումեմն, յոյժ հռչակեալ գեղեցկութեամբ, եւ բազում ունէր առ ինքն ճանապարհ, եւ ըստ իւրաքանչիւր ճանապարհի փութացան մարդիկ երթալ ի նա, եւ պատահեաց ոմանց յերկար եւ դժուար, եւ ոմանց՝ գաղանուտ, եւ ոմանց՝ զառ ի վեր, եւ ոմանց՝ Հարթ եւ կարճ, սակայն հուպ ի քաղաքն ամենեքեան ի Հարթն խառնէին ճանապարհ, եւ ի քաղաքն մտեալ ի զանազանս Հանգչէին օթեանս, եւ բնաւքն տեսողք լինէին յոգնօրինակ գեղեցկութեան, յոյժ ուրախացեալք:

(Մխիթար Գոշ, Առակ ՃՁԳ.)

Ք ա ճ ա ր ա ն

յերկար = երկար. յերկարիմ = երկարիմ | յոգնօրինակ - բազմատեսակ, բազմա- (ԻԷ.) գան

Ք ա գ ա ս ռ ո թ յ ո ն ն Ե Ր

Քաղաք էր...քազաորի ումեմն (= ուրումն) - Ինչպե՞ս պետք է քարգմանել:
Քազում ունէր առ ինքն ճանապարհ, ի հարթն խառնէին ճանապարհ, ի գանազանս հանգչէին օթեանս - Ոճական ի՞նչ կառուցի հետ գործ ունէր այստեղ (հմմտ. ԼԹ., ԲԱԶՈՒՄՈՒՆԵՐ ՇԱԽԵՂ):
Իւրաքանչիւր - Ինչպե՞ս պետք է քարգմանել:
Հուպ ի քաղաքն - Հուպ նախադրութիւնն է եւ «մոտ, շատ մոտ» է նշանակում, հոմանիչ է մերձ նախադրության եւ, նրա նման, Ի կամ ԱՌ. նախորի ու հայցակամի (քաղաքն) հետ է գործածվում - «քաղաքին (շատ) մոտ»: Այս նույն իմաստով կարող էր եւ հուպ առ քաղաքն լինել: Այսպես նաեւ՝ հուպ ի նա կամ հուպ առ նա - «նրան (շատ) մոտ, այսինքն՝ կիպ կպած», հուպ ի տունն կամ հուպ առ տունն - «տանը (շատ) մոտ՝ կիպ կպած»:
Բնաւքն տեսողք լինէին - «Բոլորն էլ ականատես էին լինում կամ տեսնում էին»:

Ի-Ա ԽԵԱՆՆ ՀՈՒՂՎՈՐԾ

Գրաբարի բառերն ամենից շատ այն հոլովման են պատկանում, ուր սկզբում (մինչեւ եզակի բացառական ներառչայ) Ի հոլովիչն է հանդես գալիս, իսկ հետո (գործիականից սկսած)՝ Ա:

Ն մ ո շ ն ե ր .

Ե-չափ	Հ-գնակի	Ե-չափ	Հ-գնակի
Ո- բաղաք	բաղաքք	ագատ	ագատք
Ս. բաղաքի	բաղաքԱց	ագատի	ագատԱց
Տ. բաղաքի	բաղաքԱց	ագատի	ագատԱց
Հ. (գ)բաղաք	(գ)բաղաքս	(գ)ագատ	(գ)ագատս
Բ. ի բաղաքէ	ի բաղաքԱց	յագատէ	յագատԱց
Գ. բաղաքԱ	բաղաքԱր	ագատԱ	ագատԱր
	(= բաղաքօք)		(= ագատօք)

Ինչպես կարելի է հեշտությամբ նկատել, եզակի բացառականում, Է (կերչավորութիւնից առաջ, Ի հոլովիչն ընկնում է (ինչպես Ի պարզ հոլովման ժամանակ): Հոգնակի գործիականում, Գ-ից առաջ, նախնական ԱԻ-ն Օ է դարձել:

Ե-չափ	Հ-գնակի	Ե-չափ	Հ-գնակի
Ո- լեանն	լերինք	ափն	ափունք
Ս. լերին	լերԱնց	ափին	ափԱնց
Տ. լերին	լերԱնց	ափին	ափԱնց
Հ. (գ)լեանն	(գ)լերինս	(գ)ափն	(գ)ափունս
Բ. ի լեանէ	ի լերԱնց	յափնէ	յափԱնց
Գ. լերԱնք	լերԱնքք	ափԱնք	ափԱնքք

Ծ ա ն . 1. - Լեանն բառի Ռ-ն, հոլովման ժամանակ Ն-ից հեռանալով, փոխարինվում է Բ-ով (իսկ հենց որ նորից մոտենում է, ինչպես բացառականում, կրկին Ռ է մտնում): Այսպես է նաեւ մի բանի այլ բառերի հոլովման ժամանակ. դՐան, դՐունք..., ձմեռն - ձմեռան (բայց՝ զանն - զանին..., ձմեռն - ձմեռամբ, սակայն՝ ձմեռբակալեմ, որ բառացի «ձեռքով բռնել» է նշանակում):

Ծ ա ն . 2. - Հոգնակի ուղղականում վերջին բաղաձայնից առաջ ավելացած Ի (լերինք) կամ Ռ (ափինք) ձայնավորները հոլովիչներ չեն, թեկուզ հենց այն պատճառով, որ ուղղականը հոլովիչ չի ունենում: Այդ ձայնավորները հիմքի մեջ են մտել, որպեսզի բաղաձայնների կուտակում չլինի: Նաեւ Ա ներքին եւ Ե ներքին հոլովումների ժամանակ այդպես է: Հմմտ. կողմն - կողմԱնք, դուտար - դուտէրք եւ այլն:

Ծ ա ն . 3. - Գործիականում, որպես կանոն, հիմքի Ն-ն Բ-ից առաջ Մ է դառնում. լերիՆ - լերաՄԲ, ափիՆ - ափաՄԲ(ք) եւ այլն:

Առաջին գույզի (քաղաք, ագատ) պես են հոլովվում՝ ագարակ, ամ, գուսան, չար, պայծառ, օտար, աշտարակ, աշխարհ, երկիր, շինական, յարքանակ, բազում, արծաթեղէն, գործիչ, փառոց, աղմուկ, ընթերցող, պարտիզպան, այգեստան, կամք, միաք, կեանք, փառք, աչք, ձեռք...:

Կ ա ռ ե լ ո թ .- Չայնը, մկանը, քեզ, կյանքդ հայցական են, զիրքը, բույրը, քազավորը՝ ուղղական:

2 1 3 5 4 7 6
բ) Չինվորը խույս տվեց, որպեսզի արձակված նիզակն իրեն չսպանի:

2 3 1 4 6 5 7
Ես շատ լավ (քաջ) զիտեմ, քե դու ի՛նչ ես հասկացնում: (Ջ.)

4 3 2 5 6 1 7 8
Այս տան մեջ շատ երիտասարդներ են բնակվում, որոնք ուսանում են (ուսանիմ):

6 5 4 3 2 1
Մեր քաղաքում նրանց պես շատեր կան:

2 3 1 6 5 4 8
Մեկ ամիս հետո բոլորին էլ նվերներ պիտի տամ, յուրաքանչյուրին իր արժանիքի համաձայն:

Կ ա ռ ե լ ո թ .- Չինվորը, նիզակը, երիտասարդներ, շատեր ուղղական են, իրեն, ի՛նչ, նվերներ՝ հայցական:

4. Գ-առի բնագրից հունաբան ոճերը (էլլինիզմները) գտեք: Ուշադիր լինելու դեպքում կարող եք մինչև 9 ոճ դուրս գրել: Հմմտ. ԼԹ., ԲԱԶՈՒՄ ՈՒՆԵՐ ՇԱԿԵՂ:



ԽԾ. դ ա ս

ՃԱՌ-ՎԱՐՂԱՆԱՅ ՄԱՍԻԿՈՆԵՆԻ

Արդ աղաչեմ դձեզ, ո՛վ քաջ նիզակակիցք իմ, մանաւանդ զի բազումք ի ձէնջ լաւագոյնք էք քան զիս արութեամբ, եւ զահու ի վեր ըստ հայրենի պատուոյն. բայց յորժամ ձերով կամօք եւ յօժարութեամբ առաջնորդ եւ զօրագլուխ ձեզ կացուցէք, հեշտ եւ բաղձալի թուեսցին բանք իմ ի լսելիս մեծամեծաց եւ ի փոքունց: Մի՛ երկուցեալ զանգիտեսցուք ի բազմութենէ հեթանոսացն, եւ մի՛ յահագին սրոյ առն մահկանացաւի զթիկանա դարձուցուք. զի եթէ տացէ Տէր յաղթութիւն ի ձեռս մեր, սատակեսցուք զգօրութիւն նոցա, զի բարձրացի կողմն ճշմարտութեան. եւ եթէ հասեալ իցէ ժամանակ կենաց մերոց սուրբ մահուամբ պատերազմիս, ընկալցուք լանդութեամբ սրտիւ. բայց միայն յարութիւնս քաջութեան՝ վատութիւն մի՛ խառնեսցուք:

(Եղիշէ, Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին)

Բ ա ռ ա Ր ա ն

գահ - այստեղ՝ դիրք
կացուցանեմ - կարգել
հեշտ - հաճելի (հմմտ. հեշտանք - հաճույք, հեշտագին - հաճելի) | լսելիք - ականջ(ներ)
գրկիւնս դարձուցանեմ - քիկուներ դարձնել, փախչել

Բ ա գ ա Տ Ր Ո Ւ Թ յ Ո Ւ Ն Ն Ե Ր

Արդ - Տե՛ս ԻԵ., ԲԱՆԶԻ:
Ի լսելիս մեծամեծաց եւ ի փոքունց - «Մեծերի ու փոքրերի ականջներին (լսելիքներին)»: Երկրորդ դեպքում պետք է ի ԼՍԵԼԻՍ փոքունց լիներ, բայց քառը չի կրկնվել, միայն Ի նախդիրն է պահպանվել:
Մի՛ երկուցեալ զանգիտեսցուք - «Չվախենանք, չսարսափենք»: Երկուցեալ երկնչիմ բայից է, իսկ զանգիտեմ նույնպես «վախենայ, սարսափել» է նշանակում: Ուրեմն այստեղ հոմանիշ բայերը (երկնչիմ, զանգիտեմ) համատեղ են գործածվել, որպեսզի միտքը զորացնեն: Նման դեպքերում առաջին բայը -ԵԱԼ վերջավորությամբ (անցյալ դերբայի ձեռով) է դրվում: Այսպես նաեւ՝ զանգիտեալ զարհուրեցար (Ի., վարժ. Իե) - «վախենալով զարհուրեցիր, սաստիկ վախեցար», փափագեալ տենչայր - «տենչալով տենչում էր, սաստիկ փափագում էր», մարտ եղեալ կռուիմ - «սաստիկ կռվում են» (բառացի՝ «մարտնչելով կռվում են»): Սա գրաբարի ոճական մի նախասիրության՝ հ ո ճ ա ն ի շ ճ ե թ ի կ ու ա կ մ ա ն դրսետումներից մեկն է (բայական հավելադրություն): Տե՛ս նաեւ ներքեւում, ՅԱՐՈՒԹԻԻՆՍ ԲԱԶՈՒԹԵԱՆ:

ՊատերազմիՍ - Ինչպե՞ս է թարգմանվում (ակնկալելի էր, որ **ի** պատերազմիս լիներ): Կարեի է 2 լուծում գտնել:

Խնդրվեամբ սրտի - «Սրտի խնդրքամբ, ուրախ սրտով»: Գրաբարում քիչ չի պատահում, երբ լրացումն ակնկալվող *ս ե ո ա կ ա ն* ձևի փոխարեն լրացյալի հոլովածեով է դրվում. **խնդրվեամբ**-ը գործիական է, **սրտի**-ն էլ (փոխանակ **սրտի**): Հմմտ. **ի յալեաց ճՈՎԷ** (Ը. - «ծովի ալիքներից»), **ի խորոց ՍՐՏԻՅ** խօսք ընդ Աստուծոյ (*Նարեկացի* - «սրտի խորքերից Աստուծո հետ խոսք»):

Յարուքինս քաջութան - «Մեր քաջությանը կամ արիությանը»: Հոմանիշների հավելադրման այս դրսետրման մասին տե՛ս ԼԱ., ՉՄԱՐՄԻՆՍ ԳԻԱԿԱՆՑՆ: Ս-ն այստեղ *ս տ ա ց ա կ ա ն* հոդ է. **յարուքինս** - «ՄԵՐ քաջությանը...»:

ՎԱՐՃՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Աշխարհաբար թարգմանեցեք.

ա) Եւ գահի հարեալ (Թ.) երկնչէին: Իբրեւ տեսին զաստղն, խնայցին յոյժ ուրախութիւն մեծ: Արդ՝ դարձեալք անդրէն (Լ.) յառաջին դրուագն՝ գրեսցուք (ՍԱՏԱԿԵՍՅՈՒԹ) ի կարգին: Ասա դու ինձ՝ թէ ա՞յլչափ գնոց (այսբանի՞, այսբանո՞վ) զգեալն վաճառեցէք (ԿԱՐԳԵՑԷՔ): Արժանատրապէս իսկ (հենց) են ուրախութեան սրբոյ եկեղեցւոյ Ալքամարայ եւ վերագոյն քան զամենայն սուրբս (ԼԱԲԱԳՈՅՆԹ ԷՔ ՔԱՆ ՉԻՍ): **Մի՛ կանգնիցեք** ձեզ արձան, եւ մի՛ քար կոթող **դնիցեք** յերկրի ձերում՝ երկիր պագանել նմա: (Մի՛...ՉԱՆԳԻՏԵՍՅՈՒԹ...): Մի՛ արգելուք. ածէ՞ք գորդիս իմ յերկրէ հեռաստանէ, եւ զդասերս իմ **ի ծագաց երկրէ** (ԽՆԴՈՒԹԵԱՄՐ ՍՐՏԻԻ):

բ) **ԹՈՉՈՒՆ ԹԱԳԱՌՈՐԻՆ ԵՒ ՉԻ ԿԱՅՍԵՐ**

Թագաւորին Հնդկաց էր թռչուն ինչ, որ արկանէր մարգարիտ եւ ականս իբրեւ զձու. եւ լուեալ արքային Յունաց՝ այնմ ցանկացաւ, եւ առաքեաց հրեշտակ (ԻԶ.) եւ խնդրեաց. եւ նա ետ: Սակայն եւ նա հայցեաց զձի նորս, որ երագութեամբ անցանէր ըստ թռչունս: Եւ թէպէտ ծանր էին միմեանց խնդիրքն, անյապաղ երկաքանչիւրքն կատարէին: Եւ ի գալ հատուն ի Յոյնս՝ ըստ օրինակի այլոց ածէր ձու. եւ ձիոյն երթեալ ի Հնդկիս՝ կաղալր, եւ ոչ բնաւ արշաւէր: Գարծուցանէ թագաւորն Հնդկաց գերիվարն, մեղադրելով յոյժ. եւ նա նմանապէս՝ ամբաստանելով գրոչուն: Եւ իւրաքանչիւրքն յինքեանց երթեալ տեղիս՝ լինէին ըստ առաջին օրինակին:

(Միսիբար Գոչ, Առակ ԾԿԱ.)

Կ ա ր ե ո ր. **Անցանէր ըստ թռչունս** - «թռչուններից անցնում էր, թռչուններից գերազանցում էր». **ի Յոյնս, ի Հնդկիս** - այստեղ երկրի իմաստով են՝ «Հունաստան», «Հնդկաստան» (այսպիսի հոգնակի ձեւերը թե՛ երկրի եւ թե՛ տվյալ ժողովրդի իմաստներով կարող են գործածվել):

գ) **Չորից կենդանեաց էին** վեշտասան ուրբ: Ականջօք իրեանց ծանունս լուսն, եւ գաչս խրեանց կափուցին, զի մի՛ երբէք տեսցեն աչօք եւ ականջօք լուիցեն եւ սրտիւք իմասցին եւ դարձցին: Ի քա՛ց կացեք յինէն, ամենայն

մշակբղ անիրաւութեան: Խնդրեցի (պահանջել) արիւն ամենայն մարգարէից, ինդեալ ի սկզբանէ աշխարհի՛ յազգեյ յայդմանէ: Եթէ ոչ հատն ցորենոյ անկեալ յերկիր մեռանիցի, ինքն միայն կայ. ապա եթէ մեռանիցի, բազում արախնս առնէ:

2. **Գասի բնագրում ընդգծված բառերից յուրաքանչյուրի հոլովն ու քիվը որոշեցեք:** Փորձեցեք ցույց տալ նաեւ, թե ո՞ր հոլովման են պատկանում:

3. **Հետեւյալ ածականների բաղդատականները կազմեցեք (3-ական հղանակով).** գորաւոր, ճշմարիտ, անբիծ, սրատես, բարի:

4. **Հետեւյալ արտահայտությունների գրաբար ձեւերը կազմեցեք.**
գրենք - չգրենք, կազմենք - չկազմենք, կարգենք - չկարգենք, շարժենք - չշարժենք, խոսենք - չխոսենք, զգանք - չզգանք, ասենք - չասենք, մերժենք - չմերժենք, հոգանք - չհոգանք, ուղարկենք - չուղարկենք: (ՄԻ՛... ՉԱՆԳԻՏԵՍՅՈՒԹ...)

5. Գրաբար թարգմանեցեք.

2 1 5 4 3
Մի իմաստուն մի ձի ուներ:

2 1 4 6 5 3 7 10
Իր աչքերով շատ քանկազիւ քարեր տեսավ (վարժ. 1թ), որոնք արեգակի ճառագայթներից շուրւմ էին:

4 3 2 1
Աղբյուրի (Խ., քերականական բաժին) ակունքից (յականց) ջուր խմեց (եարբ):

2 4 3 5 1
Նա իր իմաստությամբ ուրիշներին գերազանցում էր (= ուրիշներից անցնում էր): (Վարժ. 1թ)

3 2 5 4 1
Ամենքի հետ էլ իր եղբայրների պես էր խոսում:

Կ ա ր ե ո ր.- **Մի իմաստուն ուղղական է, մի ձի, քարեր, ջուր՝** հայցական: **Քար-**ի հոգնակի ուղղականը **քարինք է:**

ԽԵ. Ղ Կ Ա Ս

ԿՈՅՐՆ ԱՉՕՔ ԵՒ ԿՈՅՐՆ ՄՏՕՔ

Որոց ոգիքն թուլացեալ են յերկնաւոր առաքինութենէն, յոյժ ընդ ահիւ անկեալ է բնութիւն մարմնոյ. յամենայն հողմոյ շարժի եւ յամենայն բանէ խռովի եւ յամենայն իրաց դողայ. երազագէտ է այնպիսին ի կեանս իւրում եւ յանգիւտ կորուստն յուղարկի ի մահուան իւրում: Որպէս եւ ասաց ոմն Ի հնումն. * «Մահ ոչ իմացեալ՝ մահ է, մահ իմացեալ՝ անմահութիւն է»: Որ զմահ ոչ գիտէ, երկնչի ի մահուանէ. իսկ որ գիտէ զմահ, ոչ երկնչի ի նմանէ:]

Եւ այս ամենայն չարիք մտանեն ի միտս մարդոյ յանուսումնութենէ: Կոյր զրկի ի ճտազայլից արեզական, եւ տգիտութիւն զրկի ի կատարեալ կենաց. * լաւ է կոյր աչօք քան կոյր մտօք: Որպէս մեծ է հոգի քան զմարմին, այսպէս մեծ է տեսաւորութիւն մտաց քան զմարմնոց: Եթէ ոք կարի առաւելեալ իցէ աշխարհական մեծութեամբ՝ եւ մտօքն աղքատագոյն՝ այնպիսին ողորմելի է քան զբազումս. որպէս եւ տեսանեմք իսկ, ոչ միայն ի չափաւոր մարդիկ, այլ եւ յոր մեծն է քան զամենայն: * Թաղաւոր եթէ ոչ ունի զիմաստութիւն աթոռակից իւր, ոչ կարէ ի վիճակի իւրում վայելուչ գոյ: Իսկ եթէ առ մարմնաւորս այսպէս, ո՞րչափ առաւել առ հոգեւորն:

(Եղիշէ. Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին)

Ք ա ռ ա ր ա ն

ընդ ահիւ անկանիւմ - սարսափել, գարհուրել
 իր - տե՛ս ԻԷ.
 երազագէտ - երազագետ, երազներով՝ փուչ բաներով ապրող՝ զբաղվող
 անգիտ - այստեղ՝ անդարձ
 յուղարկեմ (= յուղի արկանեմ - ճանապարհ գցել) - ուղարկել

իմանամ (= գիտեմ) - այստեղ՝ գիտակցել
 տեսաւորութիւն - տեսողութիւն, տեսնելու կարողութիւն
 առաւելեալ եմ - (մեծապես) օժտված լինել
 իսկ - այստեղ՝ հենց

Ք ա գ ա ռ օ թ յ ո ՛ Ն ն Ե ր

Որոց ոգիքն թուլացեալ են - «Նրանց, որոնց ոգիները՝ հոգիները թուլացել՝ թուլացած են»:
Ի կեանս իւրում, ի մահուան իւրում - Ինչպե՛ս են թարգմանվում (ԺԹ., Ի ԿԵՆԴԱՆՈՒԹԵԱՆՆ):

Այսպէս մեծ է տեսաւորութիւն մտաց քան զմարմնոց - Քան գ-ից հետո տեսաւորութիւն բառը չի կրկնվել. բուն մեծ է տեսաւորութիւն մտաց քան զՏԵՄԱԻՈՐՈՒԹԻՒՆ մարմնոց կիցեր: Հմմտ. ԽԶ., Ի ԼՍԵԼԻՍ ՄԵՇԱՍՆՅԱՅ ԵՒ Ի ՓՈՔՈՒՆՑ:

Ի չափաւոր մարդիկ, յոր - Ի (Յ) (նախդիր) + հայցական (*մարդիկ, որ*) = այստեղ՝ «նկատմամբ, վերաբերյալ» - «(չափավոր) մարդկանց նկատմամբ՝ վերաբերյալ», «նրա՝ նկատմամբ՝ վերաբերյալ, ով»:

Առ մարմնաւորս, առ հոգեւորն - Առ (նախդիր) + հայցական (*մարմնաւորս, հոգեւորն*) = այստեղ՝ «նկատմամբ, վերաբերմամբ» - «մարմնավորների նկատմամբ՝ վերաբերմամբ», «հոգեւորի նկատմամբ՝ վերաբերմամբ» (հմմտ. աշխ. հարգանք առ Չեգ):

Հ Ա Ն Չ Ն Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Դասի բնագրում ընդգծված հատվածներն անգիր սովորեցեք:

Ն Ա Մ Տ Գ Ի Բ Ն Ե Բ ԵՒ Ն Ա Մ Տ Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն Ե Բ

Գրաբարի նախդիրներն են՝ Առ, Զ, ԸՆԴ, ԸՍՏ, Ի (Յ), Յ: Սրանցից Զ-ն, Յ-ն (այլև Յ-ն) բառին կից են գրվում, մյուսները՝ առանձին: Յուրաքանչյուրը, զանազան հոլովների հետ գործածվելով, բազմազան իմաստներ է արտահայտում: Անգամ միեւնոյն հոլովի հետ՝ միեւնոյն նախդիրը կարող է մեկից ավելի իմաստներ արտահայտել: Օր.՝ Ի նախդիրը հ ա յ ց ա կ ա ն ի հետ. ա) շարժման ուղղություն («ղեպի») - Ի ԲԱՆԱԿՆ (Գ.), բ) տրական - Ի ՄԱՀ (Ա.), Ի ՄԵԱՐՆ (Գ.), ՅՕԳՆՈՒԹԻԲՆ (Թ.), գ) գործիական - Ի ՉԵՈՆ նախարարացն (ԻԵ.), դ) «որպես» - Ի ՄՆԻԹԱՐՈՒԹԻԲՆ (ԼԶ.), ե) «նկատմամբ, վերաբերյալ» - Ի չափաւոր ՄԱՐԴԻԿ, ՅՈՐ, գ) «ներգոյական» (հոգնակի հայցականի հետ) - ՅԱՉՍ (ԻԹ.), Ի...ԽԵԼԱՊԱՍԱԿՍ (ԼԷ.) եւ այլն (*նախդիրների կիրառություններն ավելի մանրամասն կարելի է դասագրքիս կցված «Բառարանում» րեսնել, համապարտախաճ այբբենական կարգով*):

Նախդիրների մասին պետք է նաեւ իմանալ, որ սրանց մյուս առանձնահատկությունը տարբեր հոլովների հետ գործածվելու հնարավորությունն է. մեկ նախդիրը կարող է սեռականից մինչեւ գործիական բոլոր հոլովների հետ օգտագործվել: Այդպէս է, օրինակ, ԸՆԴ նախդիրը: ԸՍՏ նախդիրն է, որ սահմանափակ կիրառություն ունի. հիմնականում մեկ՝ տրական հոլովի հետ է դրվում: Մեկ էլ Յ նախդիրը, որ բացառապէս հայցականի հետ է գործածվում:

Այլ են **նախադրությունները**, որոնք նույնպէս զանազան հոլովների հետ են գործածվում, բայց նրանցից յուրաքանչյուրը միայն մեկ հոլովի հետ է կապվում, ըստ որում մեծ մասը՝ ս ե ո ա կ ա ն ի հետ:

Գրաբարի նախադրություններից են՝ ԱՈԱԶԻ, ԶԱՈԱԶԵԱԻ, ՅԱՆԴԻՄԱՆ (ներքն էլ նշանակում են «առաջ, առջեւ. դիմաց»), Ի ՎԵՐԱՅ («վրա», «մասին»), Ի

ՄԷՋ, Ի ՄԻՋԻ («մեջ» . «միջեւ»), ԲԱՅ («բացի» . բ ա գ ա ռ ա կ ա ն ի հետ է գործածվում), ՄԵՐՁ («մոտ» . Ի կամ ԱՌ- նախդրի եւ հ ա յ գ ա կ ա ն ի հետ է գործածվում), ՀՈՒՊ («ճիշտ՝ հենց մտը» . դարձյալ ԱՌ- կամ Ի նախդրի եւ հ ա յ - գ ա կ ա ն ի հետ), ԸՆԴ ԴԷՄ = ԸՆԴԴԷՄ («ընդդեմ . դեմ»), ԸՆԴ ՄԷՋ («միջից . մեջտեղից»), ԸՆԴ ԱՌԱՋ («դիմաց» . «ընդառաջ»), ՋԿԻԻ («ետեւից» . «հետո»), ՋՀԵՏ («հետ» . «ետեւից»), ՅԵՏ («հետո»), ՎԱՄՆ («համար» . «մասին» . «նկատմամբ»), ՅԱՂԱԳՍ («մասին» . «համար» . «նկատմամբ»), ԲԱՆ («բան» . Ջ նախդրի եւ հ ա յ գ ա կ ա ն ի հետ), ՈՐՊԷՍ, ԻԲԻԵԻ («իներչես, պես, մման» . Ջ նախդրի եւ հ ա յ գ ա կ ա ն ի հետ) եւ այլն, եւ այլն:

Ծ ա ն . Նախադրություններից ՄԱԿՍ-ը կարող է նաեւ իբրեւ ետադրություն գործածվել, այսինքն՝ իր հետ կապվող բառից հետո դրվել, օր.՝ **Է՞ր սակս** արտահայտության մեջ - «ինչո՞ւ, ինչի՞ համար»: Իսկ ԱՂԱԳԱԻ, ՉԱՓ նախադրությունները գրեթե միշտ ետադրաս են գործածվում (առաջինը՝ ս ե ռ ա կ ա ն ի , երկրորդը՝ գ ո թ ի ա կ ա ն ի հետ): Օր.՝ **Է՞ր աղազս** «ինչո՞ւ, ինչի՞ համար», **այսորիկ աղագաս** (= աղագաս այսորիկ) «այս պատճառով. սրա պատճառով», **հինգ հարիւրով չափ** «հինգ հարյուրի չափ» (իմմտ. աշխ. կիսով չափ):

ՎԱՐՇՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Աշխարհաբար քարգմանեցեք.

ա) **ԿՈՉԵՑԵԱԼԸՆ ՅԸՆԹՐԻՍ**

Այր ոմն գործեաց ընթրիս եւ հրաւիրեաց զբազումս: Եւ առաքեաց զծառայ իւր ի ժամոյ ընթրեացն կոչել զհրաւիրեալսն քէ «Եկա՛յք, զի ահաասիկ պատրաստ է ամենայն ինչ»: Եւ սկսան մի ըստ միոջէ ամենեքեան հրաժարել. առաջինն ասէ. «Ազարակ գնեցի, եւ հարկ է երանել տեսանել զնա. աղաչեմ զքեզ, կա՛լ զիս հրաժարեալ»: Եւ միւսն ասէ. «Լուծս հինգ եզանց (հինգ լծկան եզներ) գնեցի եւ երբան փորձել զնոսա. աղաչեմ զքեզ, կա՛լ զիս հրաժարեալ»: Եւ միւսն ասէ. «Կիմ ամի, եւ վասն այնորիկ ոչ կարեմ գալ»: Եւ եկեալ ծառայն (= ծառային) պատմեաց զայն տեսոն իւրում. յայնժամ քարկացեալ տանուպերն (= տանուտեսառն՝) ասէ ցծառայն իւր. «Ե՛լ վաղվաղակի ի հրապարակս եւ ի փողոցս քաղաքի՛ր, եւ գաղքատս եւ զխեղս եւ զկաղս եւ զկոյրս մո՛յժ (մտցորս) այսր»: Եւ ասէ ծառայն. «Տէ՛ր, եղբի գոր հրամայեցերն եւ կայ ես տեղի»: Եւ ասէ տերն ցծառայն. «Ե՛լ ի ճանապարհս եւ ի ցանգս (Լ՛ր.), եւ ասա՛ այսր մտանել զի լցցի տունս իմ: Ասեմ ձեզ, զի ոչ ոք յայնց կոչեցելոց ճաշակեսցէ յընթրեաց իմոց»:

(Ղուկ. ԺԳ 16-24)

բ) Թո՛յլ տուք մանկատուդ եւ մի՛ արգելուք զդոսս զալ ան իս: Ամբարձէք զաչս ձեր եւ տեսէ՛ք զարտորայսն, զի սպիտակացեալ են եւ ի հունձս հասեալ: Մի՛ տայք զսրբութիւն շանց, եւ մի՛ արկանէք զմարգարիտս ձեր

առաջի խոզաց, զի մի՛ առ ոտս կոխիցեն զնոսա: * Որ խնդրէ ի քէն՝ տո՛ւր. եւ որ կամի փոխ առնուլ ի քէն՝ մի՛ դարձուցաներ զերեսս: Երբեալ նստէր մօտ ան դիմ: Եւ զօրն Պարսից եկեալ բնակեցան (ԻԵ., ՏԻՐԵՅԻՆ...ԱՋԳՆ) մերձ ան նոսա, ի քիկանց կողմանէ:

գ) Եւ երթային զհետ նորա կանայք, որք եկեալ էին ընդ մնա ի Գալիլէ: Եւ ոչխարքն զհետ նորա երթան, զի ճանաչեն զձայն նորա: Երթիջիք զհետ նորա ի տունն, յոր մտանիցէ: Յաղագս որոյ անուն գատարին կոչեցաւ Վայոց ձոր: Հայեցարո՛ւք ի թռչունս երկնից, զի ոչ վարեն եւ ոչ հնձեն եւ ոչ ժողովեն ի շտեմարանս: Հայեցարո՛ւք ընդ շուշանս, ո՛րպէս աճէ. ոչ ջանայ եւ ոչ նիւթ:

2. Գասի բնագրից բոլոր բ ա գ ա ռ ա կ ա ն ն ե ր ը դուրս գրեցեք եւ դրանցից եզակիները հոգնակի դարձրեք, հոգնակիները՝ եզակի:

Ն մ ու շ՝ յամենայն բանէ (եզ.) - յամենայն բանից (հոգն.):

3. Գրաբար քարգմանեցեք.

2 4 3 1
Գիշերը տան մոտերքը կանգնեցին: (Երկուսն էլ նախորով)

1 3 2
Վաղ առափնտյան պարտեզին նայեցի (հայեցայ): (Նախորով)

6 5 4 3 2 1
Մի տան մեջ շատ զարդեր կային:

2 1 3 6 5 4
Ողորմություն տվեք եւ օգնության հասեք աղքատներին: (Նախորով)

3 2 5 4 1
Դրա ճյուղերը երկրի վրա են տարածվում (տարածանին):

Կ ա ր ե ո թ ը . - Չարդեր, ճյուղերը ուղղական են:

4. Նախորդ 5 դասերի բնագրերից նախդիրներն ու նախադրությունները դուրս գրեցեք՝ իրենց հետ գործածված բառերով (զոյականներ, դերանուններ): Դրանցից յուրաքանչյուրը բանավոր քարգմանեցեք:

ԽԲ. դ ա ս

ՅԱՂԱԳՍ ՊԱՏԵՐԱԶՍԻՆ ԵՒ ՍԱՀՈՒԱՆՆ ԲԵԼԱՅ

Եւ հասեալ երկոցունց կողմանց սկայիցն ի միմեանս, ահազին դղրդին ի վերայ երկրի առնէին շահատակելովն, եւ ահա պակուցանողս տարազուք յարձակմանցն զմիմեամբք արկանէին: Անդ ոչ սակաւք յերկոցունց կողմանց սկայիցն արք յաղթանդամք բերանոյ սրոյ դիպեալք, տապալ յերկիր կործանէին. եւ մարտն յերկոցունց կողմանց մնայր անպարտելի: Ջայսպիսի անակնունելի դիպուած տարակուսանաց տեսեալ արքայն (= արքային) Տիտանեան՝ զպրհուրեցաւ, եւ ի նոյն բլուր ուստի էջն՝ վերջոտնեալ ելանէ. քանզի խորհէր ի միջոցի ամրանալ ամբոխին, մինչև հասցէ բովանդակ դօրն, զի միւսանգամ ճակատ յօրինեսցէ: Ջայս իմացեալ ազեղնաւորին Հայկայ, յառաջ վարէ զինքն, մօտ հասանէ յարքայն, լի քարչէ պինդ զլայնալիճն, դիպեցուցանէ զերեքթեւեանն կրծից տախտակին, եւ շէշտ ընդ մէջ թիկանցն թափանցիկ լեալ՝ յերկիր հարստի սլաքն. եւ այսպէս ճոխացեալն Տիտանեան կործանի՝ յերկիր զարկուցեալ, եւ փչէ զօգին: Իսկ ամբոխն (= ամբոխին) տեսեալ զայսպիսի ահազին գործ քաջութեանն, փախեան իւրաքանչիւր դէպ երեսաց իւրեանց: Եւ վասն այսորիկ այսչափ բաւական լիցի սանել:

(Մովսէս Խորենացի, Պատմութիւն Հայոց)

Բ ա ղ ա ռ ա ն

սկայ = հսկայ
շահատակեմ - այստեղ՝ ասպատակել
պակնում - 1. խրտնել 2. վախենալ, զարհուրել, պակուցանեմ - 1. խրտնեցնել 2. վախեցնել, սարսափեցնել
տարազ - այստեղ՝ ձեւ
անակնունելի - անակնկալ, անսպասելի

վերջոտնեալ - ետ-ետ զնալով, նահանջելով, ընկրկելով
միւսանգամ - նորից
ճակատ յօրինեմ - ճակատ կազմել կամ սալ
երեքթեւան, սլաք - նետ
թափանցիկ լինիմ - թափանցել
հարստիմ - հարվածվել, խփվել

Բ ա գ ա Տ Ր Ո Ւ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

Հասեալ երկոցունց կողմանց սկայիցն, սկայիցն...բերանոյ սրոյ դիպեալք - Ինչպե՞ս են քարզմանվում: Բնագրի՝ նույն կառուցվածքի մյուս 3 կապակցությունները գտեք եւ առանձին քարզմանեցեք:

Ասա պակուցանողս - Հոմանիշների համատեղ գործածություն է, որի նպատակը միտքը սաստկացնելն է - «սարսափ» (բառացի՝ «վախեցնող սարսափ»):

Ձմիմեամբք արկանէին - Ինչպե՞ս պետք է քարզմանել (հմմտ. ԻԶ, ԶԳԱՆՈՎ...ԱՐԿԻ):

Ուստի էջն - «Որտեղից իջել էր»:

Ի միջոցի ամրանալ ամբոխին - Ի՞նչ ոճ է:

Ընդ մէջ թիկանցն - ԸՆԴ ՄԷՋ այստեղ նախադրություն է եւ «միջից կամ միջով» է նշանակում - «թիկունքի միջով՝ միջից»:

Գործ քաջութեանն - Ինչպե՞ս պետք է քարզմանել (հմմտ. ԺԷ., ԻԷ., ԺԱՄՆ ԴԱՌՆՈՒԹԵԱՆ):

ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԻ ՆԵՐԿԱ ԺԱՄԱՆԱԿ

Ն մ ո լ շ ն եր.

Եղանակ	Հոգնակ	Եղանակ	Հոգնակ
Ը.դ. յարգեմ	յարգեմք	խօսիմ	խօսիմք
Բ.դ. յարգես	յարգէք	խօսիս	խօսիք
Գ.դ. յարգէ	յարգեն	խօսի	խօսին
Ը.դ. հոգւմ	հոգւմք	բողոմիմ	բողոմիմք
Բ.դ. հոգւս	հոգւյք	բողոմիս	բողոմիք
Գ.դ. հոգւյ	հոգւն	բողոմի	բողոմին

Եղանակ Հոգնակ
Գ.դ. գոյ գոն

Ծ ա ն. 1.- Յարգեմ բայի մեջ Ե-ն է խոնարհիչը, խօսիմ-ի մեջ Ի-ն, հոգւմ-ի մեջ՝ Ա-ն, իսկ բողոմիմ-ի մեջ՝ ՈՒ-ն (զրաբարում կա նաեւ Ո խոնարհիչ, սակայն միայն զՈՒ բայի մեջ, որ քիչ է գործածվում: Տե՛ս ԼԲ., ՈՉ ԳՈՅՐ, ԽԷ., վալեյուչ ԳՈՒ): Ըստ այսմ, ուրեմն, զրաբարում 4 հիմնական խ ո ն մ եր - հ ո լ շ ն եր (լծորդություններ) ունենք՝ Ե, Ի, Ա եւ ՈՒ:

Ծ ա ն. 2.- Յարգեմ բայը եթե Ի խոնարհիչով խոնարհենք, արդեն կ ր ա վ ո - ր ա կ ա ն կ քարզմանվի՝ «հարզվում եմ, հարզվում ես» եւ այլն.

Եղանակ	Հոգնակ
Ը.դ. յարգիմ	յարգիմք
Բ.դ. յարգիս	յարգիք
Գ.դ. յարգի	յարգին

Նման ձեւերի գործածության եւ քարզմանության համար հմմտ. դասի բնագրում հանդիպած՝ հարստի - «խփվում է», կործանի - «կործանվում է» (տե՛ս նաեւ ԺԲ., ՃԱՆԱՉԻ):

Սա առիպարակ է խոնարհման ներգործական բառերին է վերաբերում:

ՎԱՐՇՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Աշխարհաբար քարզմանեցեք.

ա) **ՄԻ ԲԱՐՉԸՆՏԻՐ ԼԻՆԵԼ Ի ԿՈՉՈՒՆՍ**

Յորժամ կոչիցէ որ զքեզ ի հարսանիս կամ ի կոչումս, մի՛ բազմիցիս յառաջին բարձին. գուցէ պատուականագոյն եւս քան զքեզ իցէ կոչեցեալ ի նմանէ: Եւ եկեալ որ (նա, ու) զքեզ եւ զնա կոչեաց ասիցէ ցքեզ. «Տո՛ւր սմա (= ցսա) տեղի». եւ ապա սկսանիցիս ամօրով զյետին տեղին ունել: Այլ յորժամ կոչիցիս, երթիջի՛ր բազմեսջի՛ր ի յետին տեղուջ, զի յորժամ գայցէ որ կոչեացն (Ա.Ա., ՋՈՐ ՈՒՏԷՆ) զքեզ, ասիցէ ցքեզ. «Բարեկամ, ի վեր մատի՛ր». յայնժամ եղիցին քեզ փառք առաջի բարձակցացն քոց: Զի ամենայն որ բարձրացուցանէ զանձն՝ խոնարհեսցի. եւ որ խոնարհեցուցանէ զանձն՝ բարձրացցի:

(Ղուկ. ԺԳ. 8-11)

բ) * Օրհնութիւն հօր հաստատէ զտունս որդուց, եւ **անէծք** մօր **խլէն** (խարխլել) զհիմունս նոցա: * Բերան խոնարհաց խոկայ զիմաստութիւն: * Ակն ազակի ոչ յազի մասամբ, եւ անօրէնութիւն չար գօսացուցանէ զանձն: * Ի նմին բերանոյ ելանեն օրհնութիւնք եւ անէծք: Իսկ այժմ զնորին (նույնի) հակառակն տեսանէք: * Ճանասպարհք Սիւլմի սգան, զի ոչ որ է որ մտանէ: Նորա յաշխարհէ են, վասն այնորիկ զաշխարհէ (աշխարհի մասին) խօսին եւ աշխարհ լսէ նոցա:

գ) Որքան կարեն, զայն **առնեն**: Ես եմ հովիւն քաջ. * հովիւ քաջ զանձն իւր ղնէ ի վերայ ոչխարաց: Եւ ոչ ճանաչէ զնա, քայց ես զիտեմ զնա, եւ եթէ ասեմ թէ ոչ զիտեմ զնա, ձեզ նման սուտ լինիւմ. այլ զիտեմ զնա եւ զբան նորա պահեմ: Եւ մեք ոչ անարգեմք զնա, եւ ոչ պաշտօն մատուցանեմք նոցա. այլ հայեցեալ ընդ նոսա՝ փառաստրեմք զկարգիչն նոցա եւ զյօրինիչ:

2. Ներկա ժամանակով խոնարհեցեք՝

ա) բաժանեմ, խոնարհեցուցանեմ, երթամ, շնորհեմ (ղրական եւ ժխտական).

բ) բնակիմ, ծնանիմ, զբօսնում, արգելում, առնեմ (ղրական եւ ժխտական).

գ) մտանեմ, ուսանիմ, դատիմ, ամբառնամ, խաղամ, առնում, պակնում:

5. Հետեւյալ արտահայտութիւնների դիմաց գրաբարները գրեցեք.

բնակվում եք (բնակիմ), զգում ենք, կոչում եք, տաքանում է (ջեռնում), գտնում է, գտնում ենք, բարձրանում եք, ելնում ենք, հազնում ես (զգենում), կանգնեցնում եք (կացուցանեմ), ծնվում է (ծնանիմ), կարդում ենք (ընթեռնում), զայրանում եք, գտնվում ենք:

6. Գրաբար քարզմանեցեք.

5 4 1 3 2
Հիվանդութեան պատճառով (= համար) չէր կարող տնից ելնել:

3 2 5 4 1
Հոր խոսքերն իրենց արածներին (արարածոց) հարմար են գալիս (պատշաճիմ):

6 5 4 3 2 1
Նրա մարմնի վրա շատ վերքեր կան (են):

2 4 3 1
Իշխանը թագավորի մոտ է ելել գնացել:

2 3 1 6 5 4
Մայրը որդուն ասում է. «Անմեղ կենդանիներին մի՛ սպանի (սպանանեմ)»:

Կ ա ռ ե ի ո ռ. Խոսքերն, վերքեր, իշխանը, մայրը ուղղական են, կենդանիներին՝ հայցական:

ԽՅԹ. դ ա ս

ՃԵՐՄԱԿԱՉԻՆ ՄՈՒՇԵՂ

Եւ զամենայն մաշկաւարդան ի բունն արկանէր Մուշեղ սպարապետն, եւ զամենայն աւագանին՝ արս իբրեւ վեց հարիւր՝ հրամայէր մորթել զօրավարն Հայոց Մուշեղ, եւ ընուլ խոտով. եւ տայր բերել առ Պապ արքայն Հայոց: Առնէր զայս ի վրէժս հօրն իւրոյ Վասակայ:

Բայց զկանայսն Շապուհոյ թագաւորին Պարսից ոչ ումեք ինչ թոյլ տայր Մուշեղ զօրավարն Հայոց անարգել զնոսա ումեք, այլ ժանուարս տայր նոցա կազմել ամենեցուն, եւ հանեալ արձակէր զամենեսեսան զհետ առն նոցա Շապուհոյ արքայի: Եւ ի Պարսկացն ընդ նոսա արձակէր, զի երթիցեն առ Շապուհ թագաւորն Պարսից ողջս եւ անարատս: Իսկ թագաւորն Պարսից զարմացեալ ընդ բարերարութիւնն Մուշեղի եւ ընդ քաջութիւնն եւ ընդ աղատութիւնն, զի ոչ արար ինչ նմա յաղագս կանանցն թշնամանս:

Եւ էր ի ժամանակին յայնմիկ երիվարն Մուշեղի, ճերմակ ձի մի. իսկ թագաւորն Պարսից Շապուհ յորժամ առնոյր զինի ի մատուռնսն ըմպել, յորժամ ուրախութեանն իւրոյ խրախութիւնս առնէր զօրացն իւրոց, սասէր. «Ճերմակաձին զինի արբցէ»:

Եւ ետ նկարել զտաշտ ի պատկեր զՄուշեղ ճերմակաւն. եւ ի ժամ ուրախութեանն իւրոյ զնէր զտաշտն առաջի իւր, եւ յիչէր հանապաղ զնոյն բանս արելով՝ թէ «Ճերմակաձին զինի արբցէ»:

(Փասարոս Բուզանդ, Պատմութիւն Հայոց)

Բ ա ռ ա ր ա ն

մաշկաւարդան - վրանախումբ
ի բունն արկանէմ - ձեռքը գցել
մորթեմ - այստեղ՝ մորթագերծ անել
ժանուար - (ձիու, փղի կամ կառքի վրա հարմարեցված) գահավորակ, բազմոց
ագատ - ազնվական. ագատութիւն - ազնվականություն, այստեղ՝

ազնվական կեցվածք, վեհանձնություն, ազնվահոգություն, մեծահոգություն
խրախութիւն(ս) առնեմ - խրախճանք կազմակերպել՝ տարբել
տաշտ - այստեղ՝ կոնք, մեծ քաս

Բ ա գ ա ս ր ո յ յ ո յ ն ն Ե ր

Արս իբրեւ վեց հարիւր - Ինչպե՞ս պետք է թարգմանել (հմմտ. Բ., ԻԲԲԵԻ ԶԱՐԸՆԿԵՅ ՄԻ):

Ի վրէժս - Տե՛ս ԼՁ., Ի ՄԽԻԹԱՐՈՒԹԻՒՆ:

Ոչ ումեք ինչ թոյլ տայր...անարգել ինչ զնոսա ումեք - Այս նախադասության մեջ ումեք բառը կրկնված է. աշխարհաբարի տեսակետից ավելորդ է նաեւ զնոսա բառը (քանի որ սկզբում հիշվում է զկանայս): Պետք է թարգմանել՝ «Ոչ որի թոյլ չէր տալիս...անարգել» (ոչ ումեք՝ ոչ որ դերանվան եզակի տրականն է): Գրաբարի ոճի մեջ այսպիսի կրկնությունները եզակի երեւոյթ չեն:

Տայր նոցա կազմել ամենեցուն - Ինչպե՞ս պետք է թարգմանել (հեշտացնելու համար նոցա եւ ամենեցուն կարելի է իրար կողք բերել: Ոճի համար հմմտ. ԺԳ. ՈՂՋԱՆԳԱՄ ՉԵՐԾՈՒՅԵՐ...ԵՒ ԱՈՒՆՅ ԻՐԻԷ ՎՆԱՍՈՒ):

Ողջ եւ անարատ - Ողջ եւ անարատ ամականներ են, իսկ Ս մասնիկը դրանք մակբայ է դարձրել: Հմմտ. ՀԶՕՐԱԳՈՅՆՍ Կոռոյն, նաեւ աշխարհաբարի լավագույնս (օգտագործել), առավելագույնս (ցավել) արտահայտությունները:

Չարմացեալ ընդ բարերարութիւնն...ընդ քաջութիւնն եւ ընդ ազատութիւնն - Չարմանամ (այլեւ գայրանամ ու նման մի քանի բայեր) ԸՆԳ + հայցական (բարերարութիւնն, քաջութիւնն, ազատութիւնն) է պահանջում. հարմար է «վրաս» թարգմանել - «բարերարության, քաջության, վեհանձնության վրաս զարմացավ» (ինչո՞ւ «զարմացավ» եւ ոչ թե «զարմանաՄԱՂՎ»):

Յաղագս կանանցն - ՅԱՂԱԳՍ (նախադրություն) + սեռական (կանանցն) = այստեղ՝ «նկատմամբ» - «կանանց նկատմամբ»:

Էր...երիվարն Մուշեղի - Ինչպե՞ս կարելի է թարգմանել:

Ի պատկեր - Ինչպե՞ս պետք է թարգմանել:

Ճերմակաւն - «ԱՅՆ ճերմակով (այսինքն՝ ճերմակ ձիով)»:

ՄԱՏՏԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԻ ԱՆՅՅԱԼ ԱՆԿԱՏԱՐ

Ն մ ո շ ն Ե ր.	Եղակի	Հոգնակի	Եղակի	Հոգնակի
Ը . Գ .	յարգելի	յարգեալ	խօսելի	խօսեալ
Բ . Գ .	յարգելիր	յարգելիք	խօսելիր	խօսելիք
Գ . Գ .	յարգելք	յարգելին	խօսելք	խօսելին
Ը . Գ .	հոգԱյի	հոգԱյալ	թողՌի	թողՌալ
Բ . Գ .	հոգԱյիր	հոգԱյիք	թողՌիր	թողՌիք
Գ . Գ .	հոգԱյր	հոգԱյին	թողրյր	թողՌին
		Եղակի	Հոգնակի	
Գ . Գ .	գոյր	գոյր	գոյին	

Ծ ա ն . - Ներգործական բայերը (օր.՝ **յարգեմ, հոգամ**) այս ժամանակածելում կարող են ըստ նախադասության մտքի ներգործական կամ կրավորական իմաստով հասկացվել, քանի որ կրավորականի հատուկ ձեւ չկա: Հմմտ. կոչէր զնա - «նրան կանչում էր» եւ կոչէր ի մնանէ - «նրա կողմից կանչվում էր» (հմմտ. ԻԹ., ՊԱՐԾԻԻՐ...):

ՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Աշխարհաբար քարզմանեցեք.

ա) **ՅԱՂԱԳՍ ՇԻՆՈՒԱԾՈՅ ԵՐՈՒՄՆԴԱՇԱՏ ԱՂԱԲԻՆ**

Պարսպէ գրչորն, եւ ի ներքսագոյն քան զպարիսպն ընդ բազում տեղիս կտրեալ զբարինսն մինչեւ յատակս բլրոյն հաւասար գետոյն, մինչեւ դիմել (մինչեւ որ դիմեն) ջուրց գետոյն ի փորուածն, յըմպելեաց պատրաստութիւն (Ի ՎԻԷԺՍ): Ջմիջնաբերդն ամրացուցանէր բարձր պարսպօք, եւ դրոմս պղնձիս կանգնէր ի միջոցի պարսպին, եւ ելանելիս երկաթիս ի ներքուստ ի վեր մինչեւ ցրդտնն. եւ ի նմա որոգայքս իմն ծածուկս ընդ մէջ աստիճանացն, որպէս զի ըմբռնեսցի՝ թէ ոք գաղտ ելանելով (= ելեալ) դաւել կամիցի զարքայն: Եւ էր, ասեն, երկդիմի [աստիճանն]. որպէս զի միմն լիցի սպասաւորացն արքունի եւ ամենայն ելեւմտից ճանապարհ տուրմջենային, իսկ մեւսն զիշերային եւ մարդարասաց:

(Մովսէս Խորենացի, Պատմութիւն Հայոց)

բ) * Ի խորհրդոց իւրոց ուղղեսցի այր բարերար: Եւ զամենայն գործս իւրեանց առնեն ի ցոյցս (ցուցադրելու համար) մարդկան. լայնեն զգրասպանակս իւրեանց, եւ երկայնեն զբրանցս հանդերձից իւրեանց: * Սիրեն գլառաջապահս յընթրիս, եւ զնախաթռս ի ժողովուրդս, եւ զուջոյնս ի հրապարակս: Դուք էք լոյս աշխարհի. * ոչ կարէ քաղաք թաքել որ ի վերայ լերին կայցէ: Եւ ոչ լուցանեն ճրագ եւ դենն ընդ գրուանսս, այլ՝ ի վերայ աշտանակի, եւ լոյս տայ ամենեցուն որ ի տանն իցեն:

գ) Եւ զարմացեալ եւ ապշեալ էր ընդ ահաւոր աներկիւղ ոյժն (ՋԱՐՄԱՅԵԱԼ ԸՆԴ ԲԱՐԵՐԱՐՈՒԹԻՒՆ...) զօրավարին Հայոց Վահանայ: Եւ յորժամ զիւրսն ամենայն հանիցէ, առաջի նոցա երթայ, եւ ոչխարքն զհետ նորս երթան, զի ճանաչեն զձայն նորս: Օտարի զհետ ոչ երթիցեն, այլ փախիցեն ի նմանէ: Երկնչէի ի թէն, զի այր ստամբակ (դաժան. ստոր) ես. բառնաս զոր ոչ եղեր, եւ հնձես զոր ոչ սերմանեցեր: Անկցին ի կողմանէ քումմէ հազարք՝ եւ բիրք ընդ աջմէ քումմէ (քո աջ կողմում) եւ առ թեզ ինչ ոչ մերձեսցի: Եւ ժողովեսցին առաջի նորս ամենայն ազգք, եւ մեկնեսցէ (բաժանէ, գատել) զնոսս յայժեաց (= յայժից): Եւ կացուցէ զօղիսն ընդ աջմէ իւրմէ, եւ զայժիսն՝ ի ձախմէ:

2. Դասի բնագրից անցյալ անկատարով դոված բայերը դուրս գրեցեք: Դրանցից յուրաքանչյուրի մյուս դիմային ձեւերը բանավոր կազմեցեք:

Ն մ ո լ շ՝ ամրացուցանէր (եզակի Գ. դեմքն է. մյուսները կլինեն՝ ամրացուցանէի, ամրացուցանէիր, ամրացուցանէաք, ամրացուցանէիք, ամրացուցանէին):

3. Անցյալ անկատար ժամանակաձեւով խոնարհեցեք՝

ա) բաժանեն, անկանին, խոնարհեցուցանեն, երթան, հեղում.

բ) բնակին, ծնանին, զբռնում, արգելում, զգան, կոչեն.

գ) մտանեն, հասանեն, դատին, ամբառնամ, խաղամ, առնում, ցասում:

4. Առաքեն, բուսանին, գամ, զգեճում բայերը սահմանական եղանակի ներկա եւ անցյալ անկատար ժամանակաձեւերով խոնարհեցեք:

5. Հետեւյալ արտահայտութիւնների դիմաց գրաբարները գրեցեք.

զբաղվում էիք, գնում ենք, գնում էինք, կոչում էիք, տարանում էր (չեռնում), գտնում էր, բարձրանում էիք, գտնում էինք, ելնում էինք, հագնում էիք (զգեճում), կանգնեցնում էիք (կանգնեմ), կարողանում էր (կարեմ), ծնվում էիր (ծնանիմ), չէիր կարդում (ընթեճում), զայրանում էիք, չէիր գտնում:

6. Գրաբար քարզմանեցեք.

Անհնարին աշխատությանը նոր կալվածներ ձեռք գցեց եւ այնտեղ տներ շինեց:

Հայոց Պսպ թագավորը կաթողիկոսին իր մոտ պիտի կանչի՝ խորհրդի: (Նախդրով)

Անդրադար նրան էր նայում (հային), որովհետեւ նրա ուժի ու խելքի վրա զարմացած էր: (Նախդրով)

Այն ժամանակ մեկը ճանապարհ (ուղի) էր ընկել եւ ամբողջ (ողջոյն) երկրով (ընդ + հայցական) շրջում էր:

Կ ա ռ ե ո թ ռ. Պսպ թագավորը, մեկը ուղղական են, կալվածներ, տներ, կաթողիկոսին՝ հայցական:



Ծ. դ ա ս

ՄԱՍԻԿՈՆԵԱՆՆ ՎԱՍԱԿ

Եւ եղեւ ի վաղիւ անդր ետ Հրաման Շապուհ արքայ՝ անել զառաջեալ իւր զՎասակ Մամիկոնեան զգորակարն սպարապետն Հայոց Մեծաց. սկսաւ պատուհասել զնա, քանզի էր Վասակ անձամբ փոքրիկ, ասէ ցնա արքայն Պարսից Շապուհ.

«Ազուէ՛ս, դո՛ւ էիր խանգարիչ՝ որ այսչափ աշխատ արարեր զմեզ. դո՛ւ ես այն՝ որ կոտորեցեր զԱրիս այսչափ ամս, եւ զի՞ գործես. զմահ ազուեսու սպանից զքեզ»:

Իսկ Վասակ (= Վասակայ) տուեալ պատասխանի ասէ.

«Այժմ քո տեսեալ զիս անձամբս փոքրիկ, ոչ առեր զչափ մեծութեան իմոյ. զի ցայժմ ես քեզ առեւծ էի, եւ արդ ազուէս: Բայց մինչ ես Վասակն էի, ես սկայ էի. մի ոտնս իմ ի միոյ (= միում) լերին կայր, եւ միւս ոտնս իմ ի միոյ (= միում) լերին կայր. յորժամ յաջ ոտնս յենուի, զաջ լեառն ընդ գետին տանէի. յորժամ ի ձախ ոտնն յենուի, զձախ լեառն ընդ գետին տանէի»:

Ապա Հարցանէր Թագաւորն Պարսից Շապուհ եւ ասէ.

«Աղէ՛՛ տո՛ւր ինձ գիտել, ո՞վ էին լերինքն այնքրիկ՝ զորս զու ընդ ունջ տանէիր»:

Եւ ասէ Վասակ.

«Լերինքն երկուք, մի դո՛ւ էիր, եւ մի Թագաւորն Յունաց»:

(Փաարոս Բուզանդ, Պատմութիւն Հայոց)

Բ ա ռ ա ր ա ն

Հայք Մեծք - Մեծ Հայք

պատուիասեմ - 1. պատժել 2. սաստել. հանդիմանել. ծաղրել 3. պատուիաս՝ աղետ՝ փորձանք հասցնել

զի՞ գործես - (հը՛) ինչպե՞ս ես (միջանկյալ արքայահայրություն) անձն - այստեղ՝ մարմին. կազմվածք ունջ - հատակ. գետին աղէ՛ - հապա՛, դե՛

Բ ա գ ա ս ռ ո թ յ ո Ւ Ն Ն Ե ր

Եւ եղեւ - Ինչպե՞ս պետք է քարգմանել (հմտ. ԼԲ.):

Զմահ : Զ (նախդիր) + հայցական (մահ) = գործիական - «մահով»: Սա այնքան էլ հաճախադէպ է:

Յայժմ - Յ (նախդիր) + հայցական (այժմ) = «մինչեւ» - «մինչեւ այժմ»: Այս կիրառությամբ հաճախ մինչեւ, մինչ նախադրություններին է կցվում. մինչեւ ցայժմ կամ մինչ ցայժմ: (Յ նախդիրն այս կիրառությամբ մնացել է աշխարհաբարում: Հմտ. Յարդ - «մինչեւ արդ՝ այժմ», Յայսօր - «մինչեւ այսօր», Յպահանջ - «մինչեւ պահանջելը» եւ այլն):

Յաջ ոտնս, ի ձախ ոտնն - Ինչպե՞ս պետք է քարգմանել (Ի նախդրի ո՞ր կիրառությունն են):

Ընդ գետին, ընդ ունջ - ԸՆԴ (նախդիր) + հայցական (գեպին, ունջ) = «դեպի» - «գետին (էի տանում)»: Այս իմաստով սովորաբար Ի նախդիրն է հայցականի հետ գործածվում (հմտ. Գ., Ի ԲԱՆԱԿՆ):

Տո՛ւր ինձ գիտել - «Ինձ իմա՞ց տուր կամ հասկացրո՛ւ» (բառացի՝ «գիտեմա՛լ տուր): Հմտ. Զ., ՏԱՅԻ ցոցա ԻՄԱՆԱԼ:

ՍՏՈՐԱՍՄԱԿԱՆ ԵՂԱՆԿԻ ԱՌԱՋԻՆ ԱՊԱՌՆԻ

Ն մ ո շ ն ե ր.

	Ե Ղ Ա Կ Ի	Հ Պ Զ Ն Ա Կ Ի	Ե Ղ Ա Կ Ի	Հ Պ Զ Ն Ա Կ Ի
Ը . Կ .	յարգիցեմ	յարգիցեմք	յսօիցիմ	յսօիցիմք
Բ . Կ .	յարգիցես	յարգիցեք	յսօիցիս	յսօիցիք
Գ . Կ .	յարգիցէ	յարգիցեն	յսօիցի	յսօիցին

Ը . Կ .	հոգայցեմ	հոգայցեմք	բողուցում	բողուցումք
Բ . Կ .	հոգայցես	հոգայցեք	բողուցուս	բողուցուք
Գ . Կ .	հոգայցէ	հոգայցեն	բողուցու	բողուցուն

Ծ ա ն . 1. - Յարգիցեմ... եւ հոգայցեմ... ձեւերը եթե վերջում Ի-ով խոնարհենք, կ ր ա վ ո ր ա կ ա ն կ ր արգմանվեն՝ «կհարգվեմ կամ պիտի հարգվեմ կամ հարգվեմ կամ հարգվելու եմ..., կհոգացվեմ...»:

	Ե Ղ Ա Կ Ի	Հ Պ Զ Ն Ա Կ Ի	Ե Ղ Ա Կ Ի	Հ Պ Զ Ն Ա Կ Ի
Ը . Կ .	յարգիցիմ	յարգիցիմք	հոգայցիմ	հոգայցիմք
Բ . Կ .	յարգիցիս	յարգիցիք	հոգայցիս	հոգայցիք
Գ . Կ .	յարգիցի	յարգիցին	հոգայցի	հոգայցին

Ծ ա ն . 2. - Գ-ոմ բայն ապառնիի մեկ ձեւ ունի՝ Գ. դեմքի եզակի եւ հոգնակի՝ գուցէ (ժխտ. մի՛ գուցէ), գուցեն (քիչ գործածական):

ՎԱՐՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Աշխարհաբար քարգմանեցեր.

ա) ՅԱՂԱԳՍ ՏՐԴՍԱՅ

...Իսկ ի միւսում ատրն ընդ այգն ընդ առաւօտն հրամայեաց արկանել ծիրանիս. եւ զարդարեցին զՏրդատիոս ի զարդ կայսերական, արկեալ զնովստ զգնչան քագաւորութեանն. եւ ոչ ոք գիտէր վասն նորա. հրաման էլ ամենեցուն թէ ինքն իսկ կայսրն իցէ: Եւ նորա առեալ զգունդն զօրաց

բազմութեան՝ ի ձայն փողոյ տազնապալա յառաջ մատուցանէր մինչեւ յանդիման թշնամեացն: Իբրեւ յանդիման եղեն կայսերակերպն եւ թագաւորն՝ մտրակ ի կուշտ արարեալ երկվարացն ի միմեանս հասանէին. անդ յաղթահարէր կայսերակերպն զթագաւորն. եւ ձերբակալ արարեալ՝ ածեալ յանդիման առաջի կայսերն կացուցանէր:

Յայնժամ մեծացոյց յոյժ թագաւորն զՏրդատիոս, եւ մեծամեծ պարզես ետ մնա. թագ կապեաց ի գլուխ նորա, եւ ծիրանեօք զարդարեալ մեծացոյց զնա. եւ կայսերակերպն **գարդու** շքեղացուցեալ մեծարեաց զնա. եւ գումարեաց ի ձեռս նորա զօրս բազումս յօգնականութիւն մնա, եւ արծակեաց յիւրական աշխարհն Հայոց:

(Ագաթանգեղոս, Պատմութիւն Հայոց)

բ) Արդ ասա՛, ո՞վ առաւել սիրեսցէ զնա: * Երկինք եւ երկիր անցցեն, եւ բանք իմ ոչ անցանիցեն: Պարարտասցին գեղեկութիւնք անապատի, եւ բլուրք ցնծութիւն զգեցցին: Ո՞ պատմեսցէ յանդիման նորա զճանապարհս նորա եւ զայ ինչ ինքն գործեաց՝ ո՞ հատուցէ մնա: * Արքուն կացէք, զի մի՛ մտջիք ի փորձութիւն: Նա զիս փառաւորեսցէ, զի յիմնէ անտի (հենց) առնուցու եւ պատմեսցէ ձեզ: * Յորժամ առնիցես ողորմութիւն, մի՛ հարկաներ փաղ առաջի՛քս, որպէս կեղծաւորքն **առնեն** ի ժողովուրդս եւ ի հրապարակս, որպէս զի փառաւորեսցին ի մարդկանէ: Չի՞նչ ինչ առնել էր (պետք էր անել) այգոյ իմում, եւ ես ոչ արարի մնա. մնացի զի բերցէ խաղող՝ եւ եբեր փուշ:

գ) * Ի միջոց(է) բարբառոյ հազարք փախիցեն, ի բարբառոյ հնգից բազումք փախիցեն: Յարեայց (պիտի վեր կենամ) ի վերայ նոցա եւ կորուսից զանուն նոցա՝ զգարն եւ զգաւակ, եւ արարից զԲարբելոն ատերակ: Չօտարի զհետ ոչ երթիցեն, այլ փախիցեն ի մնանէ, զի ոչ ճանաչեն զձայն օտարաց: * Որ լուիցէ ինձ՝ ոչ անաչեսցէ, եւ ոչք գործիցեն ինեւ (ինձնով, իմ ձեռով) ոչ մեղիցեն: Կերիցեն միս եւ արբցեն զինի եւ ասասցեն. «Կերիցուք, արբցուք, քանզի վաղիս մեռանիմք (= մեռանիցիմք)»: Չիա՞րդ բուի ձեզ. եթէ լինիցի մարդոյ հարիւր ոչխար եւ մոլորիցի մի ի նոցանէ, ո՞չ բողբուցու զյննսուն եւ զինն ոչխարն ի լերինս, եւ երթիցէ ինդրել զմոլորեալն:

դ) Չոր աչօք տեսանէին, անհնար էր մնա ի ձեռաց նոցա պրծանիլ: * Չի գործով, քան (քան. ոչ թե) բանի ի դէպ է լինել խրատուն: Եւ ասէ ցնոսա. «Չի՞ խնդրէիք զիս, ո՞չ զիտէիք եթէ ի տան հօր իմոյ պարտ է ինձ լինել»: Պարտ է ձեզ ծնանել (ծնվել) վերստին: Նա եւ ա՛յլ ես ոչխարք եմ իմ, որ ոչ եմ յայսմ գաթէ, եւ զայնս ես պարտ է ինձ ածել այսր, եւ ձայնի իմում լուիցեն, եւ եղիցին մի հօտ եւ մի հովիւ: Քաղցր է ինձ ասել եւ յաղագս գեղեցիկ դաստակերտին, զոր յօրինեաց նոյն ինքն Երուսաղ: Ե՛րբ լինիցի մեզ տեսանել զսիրելիսն մեր: * Դիւրին է ուղտու մտանել ընդ ծակ ասղան, քան մեծատան յարքայութիւն մտանել:

Կ ա ռ ե ո թ .- Անհնար էր նոցա...պրծանիլ յուրահատուկ կառույց է, ուր ենթական տրաւ կանոն վէարտահայտվում (lingua): Այսպէս թարգմանելն է աշխարհաբար լավ հնչում՝ «անհնար էր, որ ՆՐԱՆԶ ազատվեին»: Ուշադիր լինելու դեպքում այս նույն վարժութեան մեջ մնան գոնե 3 դէպք եւս կարող եք գտնել:

2. Ապառնի ժամանակով խոնարհեցէք՝

ա) բաժանեն, ծնանիմ, զբօսնում, խոնարհեցուցանեն, երթան.

բ) բնակիմ, անկանիմ, հեղում, արգելում, զգամ, կոչեն.

գ) մտանեն, հասանեն, դատիմ, ամբառնամ, խաղամ, առնում, ցասնում:

3. Առաքեն, ուսանիմ, գամ, զգենում բայերը սահմանական եղանակի ներկա, անցյալ անկատար եւ ստորադասական եղանակի առաջին ապառնի ժամանակաձեւերով խոնարհեցէք:

4. Հետեւյալ արտահայտությունների դիմաց գրաբարները գրեցէք.

զբաղվելու եք, գնալու ենք, գնում ենք, կոչելու եք, կոչում էիք, տաքանալու է (չեռնում), գտնելու է, բարձրանալու եք, գտնում է, գտնում էր, ելնելու ենք, հագնելու է, կանգնեցնելու են (կացուցանեն, կանգնեմ), կարողանալու ես (կարեմ), ծնվելու ես (ծնանիմ), չի կարողալու (ընթեռնում), զայրանալու ենք, չենք զայրանալու, գտնելու ես, չես գտնվելու:

5. Իդ վարժության նախադասություններից, առանձին սյունակներով, անցյալ անկատար եւ ապառնի ժամանակաձեւերով դրված բայերը դուրս գրեցէք: Յուրաքանչյուր ձեւը բանավոր թարգմանեցէք:



ԱՈՍԻՆՈՒՄՆԵՐ

(ուր հիշվում են գրարարի այն կարևորագույն օրինաչափությունների բացարձակությունները, որոնք ափոված են դասագրքով մեկ)

ՆՆՉՅՈՒՆԱՓՈԽԱԿԱՆ ՕՐԵՆՔՆԵՐ

Ի-ի հնչյունափոխությունը Ի(ւ)-ի եւ Ե-ի - ԼԳ., քերականական բաժին, Ծան.:
Է-ի հնչյունափոխությունը Է-ի կամ Ե-ի - ԼԶ., քերականական բաժին:
Բաղաձայնից առաջ ԱԻ-ի հնչյունափոխությունը Օ-ի - ԼԳ., քերականական բաժին, Ծան.:

Մի շարք բառերում ԻԻ || ԵԻ լծորությունը - ԼԱ., ԱՈՒԵԻԾ:
Հոլովման ժամանակ Ռ || Բ հերթագայության մասին - ԽԳ., քերականական բաժին, Ծան. 1:
Բ-ից առաջ Ն > Մ հնչյունափոխության մասին - նույն տեղում, Ծան. 3:

ԲԱՌԵՐԻ ՅՈՒՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Արժուի, պատասխանի... - Գ.:
Ամենեքին || ամենեքեան, երկօրին... բառերի յուրահատուկ քարգմանությունը («ամենքն ԷԼ»...) - ԱՄԵՆԵՅՈՒՆ (ԻԱ.):

Իւրաքանչիւր բառի յուրահատուկ քարգմանությունը («յուրաքանչյուրն ԻԲ») - Խ., վարժ. 1գ, «Կարետուր»:

Այլ դերանվան «ուրիշ» իմաստով գործածության մասին - ԱՅԼ (ԽԵ.):
Տեղանունները, հոգնակի ձեւով, երկրի ու ժողովրդի գույգ իմաստներով - Ի ՅՈՅՆՍ, Ի ՀՆԴԻԿՄ (ԽԶ., վարժ. 1բ, «Կարետուր»):

Հարադրական կազմություններում առնեմ, ածեմ եւ նման բայերի նոր իմաստավորումը - ԱՐԱՍՅԷ ՊՏՈՒՂ (Ժ.):

«Մի» (անորոշ) իմաստի արտահայտությունները - ԾԵՐ ՈՍՆ (Թ.):

Իմն անորոշ դերանունը «ձեռով, մի տեսակ» իմաստով - ...եւ ՅԱՓՇՏԱԿԵԼՈՎ ԻՄՆ (ԻԷ.):

Անձն գոյականն ինքն դերանվան իմաստով - քազատը ՉԱՆՉՆ կոչեր (ԼԳ.), ոչ ՅԱՆՉՆԷ ինչ արարեր (ԽԵ.):

ՉԵՒԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հոլովիչներ եւ հոլովումներ - ԻԳ.:
Պարզ եւ խառն հոլովում - ԻԹ.:
Ա պարզ հոլովում (արտաքին ու ներքին) - Լ.:
Ո պարզ հոլովում - ԼԲ.:
ՈԻ պարզ հոլովում - ԼԶ.:
Ի եւ Ե պարզ հոլովումներ - Խ.:
Ի-Ա խառն հոլովում (արտաքին ու ներքին) - ԽԳ.:

Ո-Ա խառն հոլովում - ԼԳ.:

Մի քանի բառերի (զարտուղի) հոլովումը - ԼԷ.:

Հոգնակիում մարդ բառի յուրահատուկ հոլովումը - ԽԳ., վարժ. 1բ, «Կարետուր»:

Ներքին հոլովման ժամանակ հոգնակի ուղղականի հիմքում ձայնավորների հավելման մասին - ԽԳ., քերականական բաժին, Ծան. 2:

Հոգնակի հայցականի կազմությունը - Չ...ԿԱԶԱԽՍ, ՉՄԻՐԵԼԻՍ, ՉԱԶ-ԳԱԿԱՆՍ (Ա.):

Բացառականի կազմությունը.

ե գ ա կ ի - ՅԱՆՏԱՌԷ (Թ.),

ի ո գ ն ա կ ի - ՅՈՍԿԵԳՈՐԾԱՅ (ԺԱ.):

Գործիականի կազմության յուրահատկությունը - Խ., քերականական բաժին: Անեզական բառեր - ԵՐԿԻՆԸ, ԿԱՄԶ, ՓԱՌՔ (Ե.), ՅԱՐՔՈՒՆԻՍ (ԻԵ.):

Որակական ածականների համեմատության աստիճանները - ՅԱՆԴԳՆԱ-ԳՈՅՆՔ (ԺԳ., այլեւ նույն դասի վարժ. 1բ, «Կարետուր»):

Ս մասնիկի օգնությամբ ածականից մակբայի կազմությունը - ՈՂՁՍ եւ ԱՆԱՐԱՏՍ (ԽԹ.):

Դերանունների հոլովման յուրահատկությունը - ԴՄԱ (ԽԱ.):

Խոնարհումներ - ԽԸ., քերականական բաժին, Ծան. 1:

Սահմանական եղանակի ներկա ժամանակ - ԽԸ.:

Ներկայի (եւ ապառնիների) կրավորականը - ՃԱՆԱՉԻ (ԺԲ., այլեւ ԽԸ., քերականական բաժին, Ծան. 2, Ծ., քերականական բաժին, Ծան. 1):

Սահմանական եղանակի անցյալ անկատար - ԽԹ.:

Անցյալ անկատար ձեւերի կրավորական իմաստը - նույն տեղում, Ծան.:

Անցյալ անկատարի Գ. դեմքի եզակիի յուրահատուկ վերջավորություններ՝ -ԷՐ եւ -ԻՐ - ՊԱՐԾԻՐ, ՊԱՐԾԷՐ (ԻԹ.):

Ներկա եւ անցյալ անկատար ժամանակաձեւերի՝ ապառնիի եւ անցյալ ապառնիի իմաստով գործածությունը - ՄԵՌԱՆԻՍ, ՏԵՍԱՆԵՍ (Է.), ԿՈՒՐԱՅՈՒՅԱՆԵՍ (ԻԹ.), ՆԱԽԱՏ ԼԻՆԷԻ, Ի ԳԷՊ ԷՐ (ԺԱ.), ԷՐ ԱՏՈՔ, ՈՉ...ԱՄԲԱՌՆԱՅԻՐ (ԼԷ.):

Ապառնիի ձեւերի՝ ներկայի իմաստով գործածությունը - ԴԱԼԱԿԻՑԻ, ԱՌՆԻՑԷ... (ԼԶ.):

Անցյալ կատարյալի եզակին - ԻԳ., վարժ. 2:

Անցյալ կատարյալի կրավորականը - ՄԵՂԱԴՐԵՅԱՆ (ԺԳ.), ԽԵՂԴԵՅԱԻ (ԺԹ.):

Անցյալ կատարյալի Գ. դեմքի եզակիում վանկային աճեցումը - ԵՀԱՐ, ԵՀԱՐՑ (Է.):

Որոշ բայերի հրամայական ձեւերը - ԿՏՐԵԱ՛, ԹՈ՛Ղ (Ժ.), ՈՂՈՐՍԵԱ՛..., ԸՆԿԱԼ, ՉԳԵՅՈ՛ (ԻԲ.):

Ստորադասական եղանակի ապառնիքներ.

ա ո ա ջ ի ն ապառնի - Ծ.,

ե ր կ ր ո ր դ ապառնիի ձևեր - ԽԱԲԵՑԻՑ, ԱԾԻՑ (Ա.), ԵԿԵՍՑԷ (ԵԿԵՍՑԵՆ), ԵՂԻՑԻ(Ն) (Ե.), ԲՐԵՑԻՑ, ՀԱՏՑԵՍ, ԱՐԱՍՑԷ (Ժ., այլև վարժ. 1ա), ՇԻՆԵՍՑՈՒՔ (ԺԸ.), ՊԱՀԵՍՑՈՒՔ, ՇՐՁԵՍՁԻՔ (ԻՁ., այլև վարժ. 2):

Ապառնիի ձևերի հետ ՄԻ՝ արգելականի գործածությունը (ե իմաստը) - ՄԻ՝ ՀԱՐԿԱՆԻՑԵՍ (Է.), ՄԻ՝ ԵԿԵՍՑԷ (ԻԱ.):

«-Ելոց || -ալոց + օժ. բայ» ապառնիս - ԽԲ., վարժ. 1ա:

Ունիմ եւ ընդունիմ անկանոն բայերը - ԸՆԿԱԼ (ԻԲ.):

Կամ, լինիմ, գտանիմ իբրև օժանդակ բայեր (անցյալ դերբայի հետ կրավորական իմաստի ձևավորումը) - ՄԻՆԵՄԱԼ ԿԱՅՐ (ԺԳ.), ՏԱՐԵԱԼՔ...ԵՂԵՆ (ԼԸ.), ԳՏԱՆԻՆ ԳՈՐԾԵԱԼ (ԺԷ.):

ՈՉ, ՈՉ ԻՆՉ = ՈՉԻՆՉ, ինչպես նաև ՄԻ՝ մասնիկներով ժխտականի կազմությունը - ՈՉ ՄԵՂԻՑԷՔ, ՈՉԻՆՉ ՎՆԱՍԵՑԻՑ (ԻՁ.), ՄԻ՝ ՀԱՐԿԱՆԻՑԵՍ (Է.), ՄԻ՝ ԵԿԵՍՑԷ (ԻԱ.), ՄԻ՝...ՉԱՐՀՈՒՐԵՑՈՒՑԵՍ (ԻԺ.):

ՇԱՐԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ

Բնագրերում ենթակաների փոփոխությունը՝ գեղջմամբ - Է. (առաջին բացատրությունը), այլև ՅՈՐԺԱՄ ԱՆԿԱԻ Ի ԳԵՏ... (ԺԹ.), ԵՒ ԴԱՐՉԱԻ... (Լ.):

Հավարական գոյականների հետ հոգնակիի գործածությունը (բակառություն) - ՏԻՐԵՑԻՆ...ԱՁԳՆ (ԻԵ.), ՁՕՐՆ Պարսից...ԲՆԱԿԵՑԱՆ (ԻԷ., վարժ. 1բ):

Ոչ ոք, ոչ ինչ ժխտական դերանունների հետ բայի դրական ձևի գործածությունը - ՈՉ ՈՔ ՈՒՆԻ (ԻԷ.):

-ԵՄԱ-ով վերջացող (անցյալ) դերբայի գործառական իմաստները.
= անորոշ դերբայի գործիական՝ «-ԵԼՈՎ || -ԱԼՈՎ» - ՀԱՆԵԱԼ... (Գ.),
= հարակատար դերբայ՝ «-(Վ)ԱԾ» - ԳԱՆՉ ԾԱԾԿԵԱԼ (Ձ.),
= ղիմավոր բայ - ԵՒ ԽՈՐՀԵԱԼ...ՆԱՍ ՀԵՐՔԵԼ ՉԱՐԵԳԱԿՆ (ԻԳ.), եւ ՄԿԱՆՑՆ ՀԱՄԱՐՉԱԿԵԱԼ (ԻՁ.), ԵԿԵԱԼ ԲԱՁՄԱՑ (ԺԴ.):

Անցյալ դերբայի, ինչպես նաև նրանով կազմված ժամանակաձեռի հետ սեռականով ենթական - ԳԱՅԼՈՅ ԾԵՐԱՑԵԱԼ (Դ.), ԷՐ ՈՒՐՈՒՄՆ ՏՆԿԵԱԼ (Ժ.):

Անորոշ դերբայի գործիականի՝ ղիմավոր բայի նշանակությամբ գործածությունը - ...եւ ՅԱՓՇՏԱԿԵԼՈՎ իմն... (ԻԷ.):

Համաձայնություն - Ի.

Այս... ցուցական դերանունների՝ գոյականի հետ յուրահատուկ համաձայնությունը - Ի ՇԱՍՈՒՄ ՅԱՅՄԱԿ (ԻԲ.),

Հատկացուցիչի՝ սեռականի փոխարեն հատկացյալի հոլովով դրվելը - ԽՆԴՈՒԹՅԱՄ ՍՐՏԻԻ (ԽՁ., այլև վարժ. 1ա), Ի ՅԱԼԵԱՑ ԾՈՎԷ (Ը.):

Աստի, այտի, ամտի մակբայների առանձին եւ բացառականով գոյականների հետ գործածությունն ու առումները - ՅՈՐԴԻՈՅՆ ԱՍՏԻ ԻՍՄԷ (ԼԴ., այլև վարժ. 1բ):

Լրացյալից նույնական լրացումների հեռացումը - ՈՂՁԱՆԴԱՄ գերծուցեր... ԱՌԱՆՑ ԻՐԻՔ ՎՆԱՍՈՒ (ԺԳ., այլև վարժ. 1), փրկեա՛ Ի ՎՏԱՆԳԷ...Ի ՅԱԼԵԱՑ ԾՈՎԷ (Ը.), ԱՆՏԻ...Ի ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՏՈՀՄԷՆ (Ժ., վարժ. 5):

Հոդերի կիրառությունը.
Ս-ն՝ ցուցական հոդ - ՑՈՒՑԱՆԷ ԱՈՒԿՍ (Թ.), Դ-ն՝ ցուցական - Ի ԹՁԵՆ-ԻՈՁԴ (Ժ.), 3 հոդերը՝ ցուցական - ՋՐՈՅՍ, ՋՐՈՅԴ, ՋՐՈՅՆ (ԺԹ.), հոլովաձևերի որոշյալ առման կազմությունը. հատուկ անունները, ինչպես նաև վերնագրերի գոյականները՝ ավորաբար անորոշ առումով - Ձ ... ԿԱՔԱԻՄ... (Ա.),

Ն որոշիչ հոդը՝ հատուկ անուններից առաջ - ԱՐՔԱՅՆ ԱՐՏԱՇԷՍ (Գ.), ղիմորոշ հոդը՝ ղիմավոր բայերի վերջում - ՋՈՐ ՈՒՏԷՆ (ԼԱ.):

«Միաղիմի բայ + տրականով ենթակա + անորոշ դերբայ» կառույցը - ԴԷՊ ԵՂԵԻ ԴԻՈՆԻՍԵԱՑ ԲՈՆԱԻՈՐԻ...ԴԱՏԱՊԱՐՏԵԼ (ԻԷ.), ԴԷՊ ՏԱՑԷ ԱՉԱՑ ՑԱԻԵԼ (ԼՁ.), ԱՆՀՆԱՐԻՆ ԷՐ ՆՈՅԱ...ՊՐԾԱՆԻԼ... (Ծ., վարժ. 1դ, «Կարեւոր»):

Եմ, նաև չիք, զոմ, լինիմ բայերն «ունենալ» իմաստով՝ յուրահատուկ կառույցում - ԱՈՆ ՄԻՈՁ ԷԻՆ ԵՐԿՈՒ ՈՐԿԻՔ (ԼԷ., այլև վարժ. 1բ), ՉԻՔ ՄԵՐ ՔԱՂԱՌՐ (Ժ., վարժ. 5), ՈՉ ԳՈՅՐ ԻԽԻՔ ԵՐԿԻՐԻՆ (ԼԲ.), ԼԻՆԻՑԻ ՄԱՐԴՈՅ ԽԱՐԽԱՐ ՆՅԽԱՐ (Ծ., վարժ. 1գ):

Համադասական ԵՒ շաղկապը՝ «Էլ» իմաստով - ԵՒ ՈՉ Ի մորենայ կրթն խաղող (ԺԲ.), ներիակական իմաստով (= «խկ». «բայց», «սակայն») - ԵՒ ըզ գտանեմ (Ժ., նաև Խ.):

Նախադասության անդամների շարադասությունը - ՅԱՄԱՑՆ ԱՐՇԱԿԱՅ ԱՐՔԱՅԻ ՈՐԴԻՈՅՆ ՏԻՐԱՆԱՑ (ԻԵ.):

Նախադասության սկզբում ՈՐ հարաբերականի յուրահատուկ իմաստային առումը (իբրև ցուցական կամ անձնական դերանուններին հոմանիշ) - ՈՐՈՑ (ԺԵ.):

ՈՐ հարաբերականով կապված նախադասություններում եմ էական բայի զեղչումը - ...ՈՐ ԸՆԴ ԶԵՈՒՄԲ ՆՈՐԱ (ԻԺ.):

Հատուկ անուններից հետո անուն բառի յուրահատուկ գործածությունը - ԱՆԱՏՈՒ ԱՆՈՒՆ (Լ.):

Մի շարք բայերի յուրահատուկ խնդրատարբությունը.

ասեմ, հարցանեմ, պատասխանի տամ, տամ + Յ + հայցական - ԱՍԷ ՅԵՐԵՍԻՆ ՈՐԴԻՍ խր (Ձ.),

արկանեմ, անկանիմ + Չ + գործիական - ՉԳԼԽՈՎ...ԱՐԿԻ (ԻՁ.), ԱՆԿԱԻ ՉՊԱՐԱՆՈՑԱԻՆ (Խ.),

առնում, բուն հարկանեմ + Չ + բացառական - ՉՉԵՈՒՆԷ ԱՌԵԱԼ (ԽԳ.),

մերձենամ + ԱՌ. կամ Ի + հայցական - ՄԵՐՉԵՑԱԻ...ԱՌ. ԱՌ.ԱՁԻՆՆ (Ի.), հմմտ. ՄԵՐՉ եմ ՅԸՆԿԿՍԻԼ (Ը.),

նայիմ (հայիմ), գրամ, յուսամ + Ի + հայցական - ՀԱՅԵՑԱՆ ՅԱՆՇԱՆՈԹՍ (Լ., վարժ. 2), Ո՞Չ ԳԹԱՍՅԻ Ի ԾՆՈՒՆԴԻՍ (ԻԹ., վարժ. 1ա), ՅՈՒՍԱՆ Ի ԼԵՁՈՒԱՆՈՒԹԻՒՆ (ԼԸ., այլևս վարժ. 1ա),

նայիմ (հայիմ), զարմանամ + ԸՆԴ + հայցական - ՆԱՅԵՍՅԻ ԸՆԴ ԾԻՇԱՌՆ (ԼՁ.), ՁԱՐՄԱՑԱԻ ԸՆԴ ԲԱՐԵՐԱՐՈՒԹԻՒՆ... (ԽԹ.),

հաճիմ + ԸՆԴ + հայցական - ՀԱՃԵԱԼ ԸՆԴ ԲԱՆՍ (ԺԶ.),

տեղաշարժ ցույց տվող բայեր + Ի + (տեղ ցույց տվող բառերի) հայցական եւ + ԱՌ. + (անձնանիշ բառերի) հայցական (= ուղեւորման հայցական) - Ի ՏՈՒՆ (Թ.), ԱՌ. ՀՕՏՆ (Գ.),

ապախնիմ + ԱՌ. կամ Ի + հայցական - ԱՌ. (= Ի) ԶԵՁ...ԱՊԱԻԻՆԵԱԼ (ԻԵ., վարժ. 1գ):

Անորոշ դերբայի նպատակային իմաստով գործածությունը (= «համար») - ԽՆԴԻՐԵԼ (Ի.), ԱՂՕԹԵԼ (ԻԲ.):

Մինչեւ + անորոշ դերբայ + սեռականով ենթակա - ՄԻՆՉԵՒ ԴԻՍԵԼ ՋՈՒՐՅ (ԽԹ., վարժ. 1ա):

Թէ, եթէ ստորադասական շաղկապներն ուղղակի խոսքից առաջ - ԵՀԱՐՅ, ԹԷ (Է.):

ՆԱԽԴԻՐՆԵՐ ԵՒ ՆԱԽԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (ԽԷ.)

Նախդիրը՝ նախադաս լրացման վրա - Ջկարմրիկն ԵԳԵԳՆԻԿ (Բ.):

Ձ նախդիրը՝ հայցականի որոշյալ առման կազմիչ - Ջբազում ԿԱԸԱՌՍ... (Ա.):

Լրացյալի զեղչման պատճառով նախդիր անցումը լրացմանը - այսպես մեծ Է ՏԵՍԱԻՈՐՈՒԹԻՒՆ ՄՏԱՑ ԶԱՆ ՋՄԱՐՄՆՈՑ (ԽԷ.), այլևս՝ հեշտ եւ բաղձալի թունցին բանք իմ Ի ԼՍԵԼԻՍ ՄԵՇԱՍԵՇԱՑ ԵՒ Ի ՓՈՔՈՒՆՅ (ԽՁ.):

Նախդիրը որպես կապակցության «սահմանների» ցուցիչ - Ի ՀԱՅԱԿՈՂՄՆ Ի ՀՈՂՆ ՀԱՐԵԱԼ ՅԱՏԱԿՆ, Ի ՊԱՐՍԻԿ Ի ՀՈՂՈՅՆ Ի ՎԵՐԱՅ

(ԽԳ.), այլևս՝ ՋԱՅԼՈՑ դիցազանց զարմից բառնալ ՋԿԵՆԴԱՆՈՒԹԻՒՆ (ԻԴ.), ՋԻՐԱԻՌՆՍ գողանան ՋԱՐԴԱՐՈՅՆ (ԼԹ., վարժ. 1բ): Սովորաբար ետադաս գործածվող նախադրություններ՝ ՍԱԿՍ, ԱՂԱԳԱԻ, ՉԱՓ - ԽԷ., քերականական բաժին, Ճան.:

Մի քանի նախադրությունների յուրահատուկ գործածությունը.

ՇՈՒՐՁ + Չ + գործիական - ՇՈՒՐՁ ՋՆՈՎԱԻ (Ձ.),

ՈՐՊԷՍ + Չ + հայցական - ՈՐՊԷՍ ՋԱՐՇՈՒԻ (Գ.),

ԶԱՆ + Չ + հայցական - ՅԱՆԴԳՆԱԳՈՅՆՔ (ԺԴ.),

ՄԵՐՉ + Ի կամ ԱՌ + հայցական - ՄԵՐՉ եմ ՅԸՆԿԿՍԻԼ (Ը.),

ՄՕՏ + Ի կամ ԱՌ + հայցական - ՄՕՏ ԱՌ. ԴԻՆ (ԽԷ., վարժ. 1բ),

ՀՈՒՊ + Ի կամ ԱՌ + հայցական - ՀՈՒՊ Ի ԶԱՂԱՔՆ (ԽԴ.),

ՄԻՆՉԵՒ, ՄԻՆՉ + Ի կամ Յ + հայցական - ՄԻՆՉԵՒ ՅԱՄՆ (ԻԵ.), Խ., վարժ. 1բ, ՅԱՅԺՄ (Ծ.), ՄԻՆՉ ՅԱՏԱԿՆ (ԼԹ.),

ՓՈՒՄԱՆԱԿ + ԸՆԴ (դչ պարբայիչ) + սեռական - ՓՈՒՄԱՆԱԿ ՆՈՐԱ, ԸՆԴ ՍԻՐԵԼԻՌՅՆ (ԻԷ.):

Ծ ա ն. - Նախդիրներից ու նախադրություններից յուրաքանչյուրի իմաստային առումները տե՛ս «Բառարանում», ըստ այբբենական կարգի:

Յ նախածանցն ունեցող բառերից առաջ Ի նախդրի զեղչումը - ՄԻՆՉ ՅԱՏԱԿՆ (ԼԹ.):

ՈՃԱԿԱՆ ՅՈՒՐԱՏԱՍԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Պատումի մեջ բայի ժամանակաձևերի «անհամապատասխանություն» - որսորդն ԿԱԼԱԻ...եւ ԱՍԷ կարան (Ա.), նախ ԾԻՇԱՂԵՑԱԻ..., ապա...ԱՍԷ (ԺԳ.):

Հոմանիշ բառերի (կամ ձևերի) կուտակման նախասիրությունը.

սեռական հոլովով հավելադրություն - ՋՄԱՐՄԻՆՍ ԴԻԱԿԱՆՅՆ (ԼԱ.),

անցյալ դերբայով հավելադրություն - Մյ՝ ԵՐԿՈՒՅԵԱԼ ՋԱՆԳԻՏԵՍՅՈՒՔ (ԽՁ.), ԳՆԱՅԵԱԼ ՄԵԿՆԵՑԱՆ (ԺԷ., վարժ. 1բ),

ստացական դերանվան հետ ստացական հոլի գործածությունը - Ի ՄԵՐՈՒՄ ԱՇԽԱՐՀԻՍ (ԺԷ.), ՋԻՄՍ (ԽԵ.),

այլ դրսեւորումներ - ՅԱՆԴԳՆԱԳՈՅՆՔ (ԺԴ.), ՇՈՒՐՁ ՋՆՈՎԱԻ (Ձ.), ԸՆԴ ՍԻՐԵԼԻՌՅՆ (ԻԷ.), ԵԿՆ ԵԼ ԵՐԵԻՑՅԱԻ (Թ.), ԱՐԻ ԵԿ (ԺԷ., վարժ. 1բ):

Բառակրկնություն - ՈՉ ՈՒՄԵՔ ԻՆՉ թոյլ տայր...անարգել ԻՆՉ գնոսս ՈՒՄԵՔ (ԽԹ.):

Վերացական գոյականի սեռականի (-ՈՒԹԵԱՆ) գործածությունն անականի իմաստով, նույն արժեքով (իբրև որոշիչ) - ԺԱՄՆ ԴԱՌՆՈՒԹԵԱՆ, ՍԷՐ ԲԱՐԵԿԱՍՏՈՒԹԵԱՆ (ԻԷ.):

Քանգի, արդ, զի, այլ բառերի ոճավորող դերը - ՔԱՆՁԻ (ԻԵ.), ԼԳ., վարժ. 1ա:

Եւ եղև կապակցությունը եղանակավորող դերով - ԼԲ.:

Նոյն ցուցական դերանվան՝ նա անձնականի «փոխարեն» գործածությունը - ՆՈՐԻՆ (ԺՁ.), ՆՈՐԻՆ ՆՄԱՆԵԱՅ (ԼԸ.):

Նա եւ ինքն անձնական դերանունների կիրառության յուրահատկությունը - եթէ առ ի՞նչ կոչէր ՁՆԱ (Թ.), կինն ԻԻՐ (ԺՁ.):

Հունարան ոճ (էլլիսիզմ) - ԲԱՁՈՒՄ ունէր ՇԱԻԵՂ (ԼԹ. եւ վարժ. 1բ), այլե՛ ԲԱՁՈՒՄ ունէր առ ինքն ՃԱՆԱՊԱՐՀ... (ԽԴ.), ԲՈՅ ունէր ՍՕՐՈՒՄ (Բ.), ԸՆԴ ԱՅԼՈՎ յորով անգամ նուաճեալ ԹԱԳԱՌՈՐՈՒԹԵԱՍԲ (ԺԷ.), Ի ՄԻՁՈՅԻ ամրանալ ԱՄԲՈՒԽԻՆ (ԽԸ.), ՉԵՐ է ԲԱՐԵՇՆՆՈՐ-ՀՈՒԹԻՒՆ (ԺՁ.), ԽԵ., վարժ. 4, հմմտ. ԻՐԱՁԵԿ անցիցն ԼԻՆԻ (ԺՁ.):



Հ Ա Վ Ե Լ Վ Ա Օ

Տարգարաններ

1

(Է. դասից հետո)

1. Հետևյալ հատվածներն աշխարհաբար թարգմանեցեք.

Դարձեալ առնու աժէ զնա Մատանայ ի լեառն մի բարձր յոյժ, եւ ցուցանէ մնա զամենայն թագաւորութիւնս աշխարհի եւ զփառս նոցա: Եւ աւէ ցնա. «Չայս ամենայն ցթեզ տաց, եթէ անկեալ (ընկնել) երկիր պագանիցես ինձ»:

Յայնժամ աւէ ցնա Յիսուս. «Երբ յետս (ետեւ) իմ, Մատանայ»: Չի գրեալ է. «Տեառն Աստուծոյ քում երկիր պագցես եւ զնա միայն պաշտեսցես»: Ապա երող զնա Մատանայ, եւ ահա հրեշտակք մատեան (մոտենալ) եւ պաշտէին զնա: (Մատթ. Գ 8-11)

2. Հետևյալ նախադասություններն աշխարհաբար թարգմանեցեք.

ա) Եւ որպէս կամիք թէ արասցեն ձեզ մարդիկ, այնպէս արասջի՛ք եւ դուք նոցա:

բ) Դատաւոր մի էր ի քաղաքի ուրեմն (մի), յԱստուծոյ ոչ երկնչէր եւ ի մարդկանէ ոչ ամաչէր:

գ) Երկինք եւ երկիր անցցեն, եւ բանք իմ ոչ անցանիցեն:

դ) Յայնժամ ետ զնա ի ձեռս նոցա, զի ի խաչ ելանիցէ:

3. Հետևյալ արտահայտություններն աշխարհաբար թարգմանեցեք.

ա) ի ծերութիւն հասեալ, եհարց ցոլատր իւր, զնայցէ առ եղբայր.

բ) Էանց ընդ զիւր, մի՛ գնասցես, իմ տեսեալ, ետես զիայր.

գ) յեկանելն ի տանէ, ի ծնողաց իւրոց, բնակեցուցանէր զքաղաքաւ:

4. Չեր սովորած գրաբար ասույթներից 3-ը գրեցեք:

5. Հետևյալ արտահայտությունները գրաբար թարգմանեցեք.

ա) քաղաքից, քաղաքներից, անվան մեջ, գյուղ էր մտնում.

բ) փողոցների միջով, նրանց է տալիս, բնակվում էր տանը (տան մեջ).

գ) փնտրելով չի գտնում, ինչպե՞ս է ասում, նա հասնելով:

2

(ԺՁ. դասից հետո)

1. Հետեւյալ հատվածն աշխարհաբար քարզմանեցեր.

«Ես ահա անտեղեակ էի անբակտ ուխտի եկեղեցույի ի միմեանց. զի ա՛յլ է՝ գոր լսէ մարդ, եւ այլ է՝ գոր տեսանէ հաստատուն իւրովք աշօք: Դու որ ի մանկութենէ քունմէ յայդմ օրէնս սնեալ էիր (դաստիարակել), եւ ճշմարտեալ զիտէիր զպնդութիւն մարդկան, եթէ առանց բազում արիւն հեղոյ դոքա մեզ ոչ տան ձեռն արկանել (զցել) յեկեղեցիսդ, ընդէ՞ր զայդ ամենայն յանդիման չասացեր ցրագաւորն: Քանզի ամենայն նախարարացն աւագ դու էիր, եւ զբոլոր աշխարհս քեզ յանձն արարեալ էր մարգպանութեամբ. ընդէ՞ր ոչ մեծապէս հոգ տարայ: Ձի յայլ ժամանակս իմաստուն էիր, եւ ես զիտէի. զայս գործ իմաստութեամբ գործեցեր: Ապա եթէ ոչ, յայտ (հայտնի, պարզ) է եթէ եւ դու ի նոցա բանի ես, եւ քոյով խորհրդով անցուցին զայս անցս ընդ իս եւ ընդ զօրս»: (Եղիշէ)

2. Հետեւյալ նախադասություններն աշխարհաբար քարզմանեցեր.

- ա) Եւ դողումն ի քեզ ոչ մերձեցի:
- բ) Եւ բարձցի (վերանալ) ուրախութիւն եւ ցնծութիւն յայգեաց, եւ յայգեստանի քում ուրախութիւն մի՛ լիցի:
- գ) Տայցեն պատերազմ այր ընդ եղբօր եւ այր ընդ ընկերի:
- դ) Ջօրացաւ մահ եւ եկով. եւ դարձեալ եհատ Աստուած զամենայն արտօսը յամենայն երեսաց:
- ե) Եւ եթէ անցանիցես ընդ ջուրս, ընդ քեզ եմ, եւ գետք գրեզ մի՛ ողողեցեն:

3. Հետեւյալ արտահայտություններն աշխարհաբար քարզմանեցեր.

- ա) զգետով, ընդ գետ, ի գետ, յեղեզնուտս (3 *դարբեր իմաստներով*).
- բ) վատահ է ի սուսեր, գտանին ի տան, երթայցեն առ մտերիմս.
- գ) ունին ընդ ինքեանս, կապեցէ՛ք ի խրճուսն, բնակեալ էր նոցա.
- դ) ի նա մի՛ մերձեցի, կարդայր առ Աստուած, ի կարդալն առ Աստուած:

4. Ձեր նոր սովորած գրաբար ասույթներից 3-ը գրեցեր:

5. Հետեւյալ արտահայտությունները գրաբար քարզմանեցեր.

- ա) հեռանում ես զորքերից, մոր մեջ, մայրերի հետ.
- բ) եկեղեցու մոտ (*մեքո*-ով), եկեղեցիների մոտ, երկրի շուրջ, քեզ նման:

3

(Լ. դասից հետո)

1. Հետեւյալ հատվածն աշխարհաբար քարզմանեցեր.

Ամենայն որ հայի ի կին մարդ առ ի ցանկանալոյ նմա՝ անդէն շնացաւ ընդ նմա ի սրտի իւրում: Եթէ ակն քո աջ զայթակեցուցանէ զքեզ, իսկեա՛ զնա եւ ընկեա՛ ի քէն. զի լաւ է քեզ եթէ մի յանդամոց քոց կորիցէ, եւ մի՛ ամենայն մարմինդ քո անկանիցի ի գեհեն: Եւ եթէ աջ ձեռն քո զայթակեցուցանէ զքեզ, հա՛տ զնա եւ ընկեա՛ ի քէն. զի լաւ է քեզ եթէ մի յանդամոց քոց կորիցէ, եւ մի՛ ամենայն մարմինդ քո արկանիցի ի գեհեն:... Ամենայն որ արձակէ զկին իւր առանց բանի պտռնկութեան՝ նա տայ նմա շնալ, եւ որ զարձակեալն առնու՛ շնայ: (Մարք. Ե 27-32)

2. Հետեւյալ նախադասություններն աշխարհաբար քարզմանեցեր.

- ա) Բազում մարգարէք եւ արդարք ցանկացան տեսանել զոր տեսանէրդ՝ եւ ոչ տեսին, եւ լսել զոր լսէրդ եւ ոչ լուան:
- բ) Դարձո՛ւ զսուր քո ի տեղի իւր. զի ամենեքեան որ սուր առնուցում՝ ի սուր անկանիցին:
- գ) Քանզի խորհէր ի մտի թէ «Միայն մերձեցայց ի հանդերձս նորա, փրկեցայց»:
- դ) Եւ յելանելն նորա ի տաճարէն անտի, ասէ ցնա մի յաշակերտաց նորա:
- ե) Հա՛յր, ապրեցո՛ զիս ի ժամէս աստի յայսմանէ, այլ վասն այնորիկ եկի ի ժամս յայս: .

զ) Արդ զի տեսերդ զիս եւ հաւատացեր. երանի որոց ոչ իցէ տեսեալ եւ հաւատացեն:

3. Հետեւյալ բառերի եզակի եւ հոգնակի սեռականները գրեցեր. գործ, զարդ, աշխարհ, աստղ, եկեղեցի, կողմն: Հոլովիչներն ընդգծեցեր ու գրեցեր՝ ներքին կամ արտաքին: Ն մ ո շ՝ քաղաք-քաղաքի, քաղաքաց (արտ.):

4. Հետեւյալ արտահայտությունները գրաբար քարզմանեցեր.

- ա) եղբոր փոխարեն (3 *չեռով*), եղբայրների հետ, կգրենք, կգրեր.
- բ) նամակը, որ սեղանի տակ է. չգրեն, գրելիս.
- գ) ուսերի վրա (ուսերին) է գցում, իր հայրը եկել է:

(Գասընթացի վերջում)

1. Հետեւյալ հատվածն աշխարհաբար քարգմանեցեր.

Կարծէին զնմանէ թէ ընդ ուղեկիցսն իցէ. եկին իբրեւ ատուր միտյ ճանապարհ եւ խնդրէին զնա ընդ դրացիսն եւ ընդ ծանօթս: Եւ իբրեւ ոչ գտին, դարձան անդրէն յԵրուսաղէմ խնդրել զնա: Եւ եղև յետ երկց ատուրց գտին զնա ի տաճարին, զի նստէր ընդ վարդապետսն, լսէր ի նոցանէ եւ հարցանէր (հարցուփորձ անել) զնոսա: Չարմանային ամենեքեան որ լսէին ի նմանէ՝ ընդ իմաստութիւնն եւ ընդ պատասխանիս նորա: Եւ իբրեւ տեսին զնա, սքանչացան. եւ ասէ ցնա մայրն իւր, «Որդեա՛կ, զի՞նչ գործ գործեցեր դու ընդ մեզ, ահաւասիկ հայր քո եւ ես տառապէաք, խնդրէաք զքեզ»: (Գուկ. Է 44-48)

2. Հետեւյալ նախադասութիւններն աշխարհաբար քարգմանեցեր.

- ա) Երկու պարտապանք էին ուրումն փոխատուի:
- բ) Ոչի՞նչ տաս պատասխանի, տես քանի՞ ամբաստանեն զքէն:
- գ) Երանի աչաց որ տեսանիցեն զոր տեսանէք:
- դ) Վասն սրտմտութեան բարկութեան տեսոն հրձիգ լիցի երկիրն ամե-նայն:
- ե) Եթէ տեսանիցես զներկն՝ զզեցուցանիջի՛ր, եւ յընտանեաց գաւակի քո զակն մի՛ արկանիցես:
- զ) Կերայ զհաց իմ մեղու իմով, արբի զգինի իմ կարամք իմով:

3. Հետեւյալ արտահայտութիւններն աշխարհաբար քարգմանեցեր.

- ա) բարձցին փառք, ի բարձանց, շրջէր զեկեղեցեաւ, անկանէր զճանապարհաւ.
- բ) ընդ իշխանութեամբ, բան իմաստութեան, զուարճացեալ բերկրեցան.
- գ) յըմբռնել տեսոն զնա, նորա տուեալ էր ցիս, էառ ընդ պարտուց.
- դ) ստութեամբ եւ մասամբք նորին, ընկալաւ ի վարձս, յուսամ ի քեզ:

4. Այս առաջադրանքներից մեկը կատարեցեր.

- ա) հոլովեցեր՝ աստղ, մայր, մանր, պատանի.
- բ) ներկա, անցյալ անկատար եւ առաջին ապառնի ժամանակաձեւերով խոնարհեցեր՝ առնեմ, առնում, ընթանամ:

5. Հետեւյալ արտահայտութիւնները գրաբար քարգմանեցեր.

- ա) որպես չարչարանք, ավելի գորեղ (3 չեւոյ), զորանալու համար (3 չեւոյ).
- բ) զլիսի տակ, զլիսի շուրջ (2 չեւոյ), զլիսին (նախդրոյ), զլիսից.
- գ) մարդը, որ ապարանքում է. այդ խոսքերը (հայց., երադաս ցուցական դերանվանք):

Բ Ա Ո Ա Ր Ա Ն

«Բառարան» այս դասագրքի բառերի ցանկն է, խիստ հա-մառոտ, ուր այն բառերը, դարձվածքներն ու արտահայտութիւնները, իմաստները կամ գործածութիւններն են ընդգրկված, որոնք գրաբարի համար բնորոշ են, այսինքն՝ աշխարհաբարից բավական տարբերվում են: Ուստի մնում է, որ այս «Բառարանից» դուրս գտնվող բառերն ու արտահայտութիւնները, որ հանդիպում են այլ բնագրերում, հետաքրքրվող գրաբարի բառազանձը պարունակող հանրաձայնոք բառարաններում փնտրի (Հայկագեան, Առձեռն, ինչպես նաեւ Մալխասյանցի. այս վերջինում՝ © նշանի տակ):

Քերականական նշումներ միայն անհրաժեշտ դեպքերում են կատարվում: Գոյականների, ինչպես նաեւ հոլովված ձեւով հաճախ գործածվող անականների կողքին եզակի եւ հոգնակի սեռականի նշաններն են գրվում, որոնք էլ դրանց հոլովման համակարգն են հուշում: Այն դերանունների հոլովումն է տրվում, որ դարձյալ աշ-խարհաբարից որոշակիորեն տարբերվում է: Նույնը նաեւ մի շարք բայերի խոնարհման կարեւոր ձեւերին է վերաբերում (բայերն այս-տեղ, ինչպես եւ դասերի բացատրութիւններում, բերվում են՝ իբրեւ ուղիղ . ձեւ ընդունելով ներկայի Ա. դեմքը, մի բան, որ ընկալալ սկզբունք է դասական լեզուների քերականութեան եւ բառարա-նագրութեան մեջ):

Մնացածը, ինչպես որ դասագրքի որդեգրած մեթոդն է թելադրում, պետք է որ բնագրերի եւ վարժութիւնների քարգմանութեան ընթացքում յուրացվի:

Համառոտագրութիւններ

ած. - ամական	կեր. - ենթակա
ակե. - անկատար	եւե. - եւ այլն
ակեշ. - անձնական	թվ. - թվական
ակց. - անցյալ	կար. - կատարյալ
ատակ. - ատավելաբար	հայց. - հայցական
բացատ. - բացառական	հարար. - հարաբերական
գ. - գոյական	հեւեր. - համեմատիչ
գործ. - գործիական	հոգն. - հոգնակի
դեր. - դերանուն	հոմ. - հոմանիշ
դերբ. - դերբայ	չայիարկ. - ձայնարկություն
եզ. - եզակի	միգ. - միջանկյալ
եր. - եղանակավորող	մկբ. - մակբայ

հախապր. - նախադրություն

կիպր. - նախդիր

շվիպ. - շաղկապ

սեռ. - սեռական

սրբայ. - ստացական

Տ. - տե՛ն

պր. - տրական

սպր. - ուղղական

վիպր. - վոխաբերական (իմաստ)

Դասերի բնագրերից կամ վարժություններից բաղկած նմուշները գլխագրերով են տրվում ու չեն քարգանձվում:



Ա

- ԱԳԱՆԻՄ - հազնել
- ԱԳՈՒՑԱՆԵՄ - 1. հազգնել 2. հազգնել-ամրացնել
- ԱԶԱՏ ի, սյ - 1. գ. ազնվական 2. սծ. ազատ
- ԱԶԱՏՈՒԹԻՒՆ - 1. ազնվականություն 2. վեհանձնություն, մեծահոգություն
- ԱԶԳ ի, սյ - 1. ազգ, ժողովուրդ. ցեղ 2. տոհմ 3. հարստություն (թագավորություն) 4. տեսակ
- ԱԶԳԻ ԱԶԳԻ - տեսակ-տեսակ
- ԱԶԴ ԱՈՆԵՄ (սեկ. կար. ազդ արարի) - ազդարարել հայտնել
- ԱԶՆ ին, սեկ (հոգև. սպր. ազինք) - 1. սերունդ 2. ժողովուրդ, ազգ
- ԱԽՏԱՅԵԱԼ ոյ, ոյ - ախտավոր, հիվանդոտ
- ԱԾԵՄ - 1. բերել 2. տեղավոխել 3. լցնել. քափել 4. նվազել
- ԱԻԵԼ ԱԾԵՄ - ավել
- ԿԻՆ ԱԾԵՄ - կին բերել, ամուսնանալ
- ՁԱՅՆ ԱԾԵՄ ԲԱՈՆԱՄ (սեկ. կար. ձայն...բարձի) - ձայն հանել կանչել
- ԱԾԵՄ ՁՄՏԱԻ (զմտաւ ածեմ) - մտածել
- ԱԾՈՒ ոյ, ոյ - 1. տնկարան 2. վիպր. ժողովուրդ
- ԱԿԱՆԱՏ ի, կյ - բակարդ, ծուղակ
- ԱԿԱՆՈՂԻՔ հոյ - աչք(եր)
- ԱԿԱՆՋՔ - Տ. ՈՒՆԻՆ
- ԱԿՆ¹ սն (հոգև. սպր. աչք սյ) - աչք
- ԸՆԴ ԱԿԱՄԲ ՀԱՅԻՄ - ծուռ՝ խեթ աչքով նայել
- ՋԱԶՄ ԿԱՓՈՒՑԱՆԵՄ - աչք(ը) փակել
- ԱԿՆ² սե, սեկ (հոգև. սպր. ախանք) - ակ, քանկազին քար
- ԱԿՆ³ սն, սեկ (հոգև. սպր. ախունք) - ակունք, աղբյուր
- ԱԿՆ ՈՒՆԻՄ (սեկ. կար. ախն կալայ) - 1. ակնկալել, հույս ունենալ 2. սպասել, աչք պահել

- ԱՂԱԳԱԻ (հախապր. + սեռ.) - պատճառով, համար. աղագաւ այսորիկ = այսորիկ աղագաւ - այս պատճառով, սրա համար
- Է՞Ր ԱՂԱԳԱԻ - ինչո՞ւ, ինչի՞ համար, ի՞նչ պատճառով
- ԱՂԱԽԻՆ ՔՈ - ես, քո ծառան: Հով. ԾԱՌԱՅ ՔՈ
- ԱՂԱՂԱԿ ի, սյ - 1. աղաղակ 2. աղմուկ, իրարանցում
- ԱՂԲԵԻՐ = ԱՂԲԻԻՐ կր, կրց (կրսյ) (հոգև. սպր. աղբերք)
- ԱՂԷ՛ (ջայնազի) - հապա՛ղ, դե՛
- ԱՂՄՈՒԿ վիկ, վրսյ - 1. աղմուկ 2. աղմուկ, իրարանցում
- ԱՄ ի, սյ - տարի
- ԱՄԲԱՈՆԱՄ (սեկ. կար. ամբարձի) - 1. բարձրացնել 2. (ամբարձայ) բարձրանալ
- ԱՄԲԱՐՏԱԻԱՆԻՄ - գոռոզանալ. հոխորտալ
- ԱՄԲՈՒՆ ի, կյ - 1. ամբոխ, բազմություն 2. աղմուկ, աղաղակ. իրարանցում
- ԱՄԵՆԱՅՆ ի - 1. ամեն. բոլոր 2. ամեն բան՝ ինչ
- ԱՄԵՆԱՅՆ ԻՆՉ - ամեն ինչ՝ բան
- ԱՄԵՆԱՅՆ ՈՐ - ամեն որ՝ մարդ. ամեն մեկը
- ԱՄԵՆԵԻՄԲ - ամբողջովին. բոլորովին
- ԱՄԵՆԵՔԵԱՆ } (սեռ. ամենեցունց)
- ԱՄԵՆԵՔԻՆ } (սեռ. ամենեցունց) - ամենքն էլ. ամենքը
- ԱՄՅԱՄԷ - տարեցտարի
- ԱՄՊԱՐԻՇՏ ի, սյ = ամբարիշտ
- ԱՅԼ - 1. շվիպ. այլ [նչ քե... այլ] 2. շվիպ. բայց, սակայն. իսկ 3. ցնոր. ոյ, ոյ (կյ. կր. այլում, բացառ. յայլմէ) ուրիշ. մյուս 4. վիպր. այլեւս 5. եր. (ԼԳ., վարժ. Լա) 6. եթե ոչ
- ԱՅԼԱՄԵՆ } ի, կյ - 1. այլազգի, ուրիշ
- ԱՅԼԱՄԵՐ } 2. ուրիշ տեսակի

ԱՅԼ ԵՒ = այլև
 ԱՅԼ ՉԱՅՆ ՇՐՋԵՄ - երգը փոխել, ուրիշ կերպ սկսել խոսել
 ԱՅՅԻ *ոյ, հոյ* = ԱՅՅ *ի, իյ*
 ԱՅՅ (*չկր.*) - *Վ ք սեռ. այսք = այտորիկ, քրք. այսմ = այսմիկ, հայք գայս, բայքսո. այսմ = այսմանէ, գործ. այսու = այսուփիկ. հ ս գ հ. ուրր այսք = այտորիկ, սեռ-քրք. այսք = այտոցիկ, հայք. գայսս = գայտսիկ, բայքսո. այսք = այսքանէ, գործ. այտորիք (այսպէս են հոլով վում նաեւ՝ ԱՅԴ, ԱՅՆ)*
 ԱՅՅՐ - այստեղ
 ԱՅՅԻ - 1. *Վքք. այդտեղից 2. բացատրական հոլովով դրված բառերից հետո՝* այդ (*Տ. ԼԴ., ՅՈՐԴԻՌՅՆ ԱՍՏԻ ԻՄՄԷ*)
 ԱՅՐ¹ *ի, իյ* - քարայր
 ԱՅՐ² (*հոլովումը S. ԼԷ.*) - 1. մարդ 2. աղամարդ 3. ամուսին 4. մարտիկ
 ԱՅՐՈՒՉԻ = ԱՅՐԵՒՉԻ *ոյ* - հեծելագոր
 ԱՆԿՆՈՒՄԵՆԻ *ոյ, հոյ* - 1. անսպասելի 2. անհույս. անհուսալի
 ԱՆԳԻՏ - 1. անգտանելի 2. անդարձ [*կորուստ*]
 ԱՆԳՈՒՄՆԵՄ - 1. նախատել, անպատվել 2. արհամարհել
 ԱՆԴ, ԱՆԴԵՆ - այնտեղ
 ԱՆԴՈՐԻ - 1. *գ. ու* հանգստություն, անդորություն 2. *ած.* խաղաղ, անդորր, հանգիստ 3. *ած.* ընդարձակ
 ԱՆԴՈՒՄՆԵՄ *ոյ* - 1. անդունդ 2. դժոխք
 ԱՆԴՈՒՍ (*անդուստ ուրեմն՝ ուստեմն*) - այնտեղից
 ԱՆԴԻ - այնտեղ. *հանախ րեղ ցույց րպիղ բառերին է կցվում. ի քաղաք անդր* - այն քաղաքը
 ԱՆԴԻԵՆ - նորից, դարձյալ
 ԱՆԹԱՓ - չլվացված
 ԱՆԿԱՆԻՄ - 1. ընկնել 2. դիմել [*դեպի մի րեղ*] 3. բովանդակ, տկարամայ 4. ընկնել, հասնել [*բաժին*]
 ԱՆԱՋԻ ԱՆԿԱՆԻՄ - առաջն ընկնել
 ԸՆԴ ԱՋԻՒՄ ԱՆԿԱՆԻՄ - սարսափելի
 Ի ԲՈՒՌՆ ԱՆԿԱՆԻՄ - ձեռքն ընկնել, բռնկել. նվաճվել

ԱՆԿԱՆԻՄ Ի ՉԵՈՍ - ձեռքն ընկնել, բռնկվել
 ԱՆԿԱՆԻՄ ՅՈՒՐԻ (*յուրի անկանին*) - ճանապարհ ընկնել
 ԱՆՀՆԱՐԻՆ - 1. անկարելի 2. շատ, սաստիկ, չափազանց (*որակական ածականի գերադրականն է կազմում*): Հոմ. ԿԱՐԻ, ՅՈՅԺ, ՍԱՍԻԿ
 ԱՆՉՆ ին, ախ (*հոգև. ուրր. անձինք*) - 1. անձ 2. մարմին. կազմվածք 3. ինքը. գանձն - ինքն իրեց
 ԱՆՉԱՄՔ - 1. ինքը, անձամբ 2. մարմնով. կազմվածքով
 ԱՆՉԱՄՔ ԻՐԻՈՎ - 1. անձամբ ինքը 2. իր կազմվածքով
 ՉԱՆՉՆ ԴՆԵՄ Ի ՎԵՐԱՅ... - անձը նվիրել. անձը գոհել (*մեկի՝ մի բանի համար*)
 ՅԱՆՉՆ ԱՈՒՆԵՄ (*ախ կարք. յանձն արարի*) - 1. հանձնել. ավանդել 2. հանձնարարել
 ՅԱՆՉՆ ԱՈՒՆՈՒՄ - 1. հանձն առնել, վրան առնել 2. համաձայնվել
 ՈՒՆԻՄ ՅԱՆՉՆ (*յանձն ունիմ. ախ կարք. կալայ յանձն...*) - 1. հանձն առնել, վրան առնել 2. համաձայնվել
 ԱՆՏԵՄ ԱՈՒՆԵՄ (*ախ կարք. անտես արարի*) - 1. անտեսել. զանց առնել. անգիտանալ
 ԱՆՏԻ - 1. *Վքք.* այնտեղից 2. *բացատրական հոլովով դրված բառերից հետո՝* այն (*Տ. ԼԴ., ՅՈՐԴԻՌՅՆ ԱՍՏԻ ԻՄՄԷ*) 3. հեմց. ՅԻՄՄԷ ԱՆՏԻ (*Ծ., վարժ. 1ք*)
 ԱՆՅԱՆԵՄ ԸՍՏ + հայք. - անցնել, գնրազանցել
 ԱՆՅԱՆԵՄ ԸՍՏ ԲԱՆՍ - խոսքից անցնել, խոսք(եր)ը չկատարել
 ԱՆՅՔ *իյ* - անցք, դեպք. իրադարձություն. եղելություն
 ԱՇԽԱՍ ԱՈՒՆԵՄ (*ախ կարք. աշխատ արարի*) - 1. չարչարել 2. նեղություն տալ՝ պատճառել. նեղացնել
 ԱՇԽԱՍ ԼԻՆԻՄ (*ախ կարք. աշխատ եղի*) - 1. չարչարվել 2. նեղություն կրել. նեղվել

ԱՇԽԱՍՈՒԹԻՒՆ - չարչարանք. նեղություն
 ԱՊԱԲԷՆ - արդյոք
 Ո՞Չ ԱՊԱԲԷՆ - չե՞ որ. մի՞թե չ... Ո՞Չ ԱՊԱԲԷՆ ԽՈՍՍԱՅԱՐ (*ԻՋ.*)
 ԱՊՐԻՄ - 1. ազատվել 2. ապրել 3. բնակվել
 ԱՊՐԵՅՈՒՅԱՆԵՄ - 1. ազատել 2. ապրեցնել, կյանք տալ 3. բնակեցնել
 ԱՈ (*կիրք.*) + *սեռ.* - պատճառով (ԱՈՆԱԽԱՆՉՈՒԼ - ԼՋ., վարժ. 1ք) + *եզ. քրք. կամ հոգև. հայք.* - մոտ, կողքին (*առ արմին* - արմատի՝ բնի մոտ) + *հայք.* - 1. դեպի, մոտ (*անչ կամ անչնալորված առարկա ցույց րպիղ բառերի հետք.*) ԱՈ ՀՕՏՆ (*Դ.*) 2. նկատմամբ. ԱՈ ՄԱՐՄՆԱԲՈՐՍ (*ԽԷ.*) 3. = տրական. ԱՈ ԻՆՔՆ (*ԼԱ.*), **քուրք առ Կորնթացիս** - քուրք՝ նամակ կորնթացիներին + *գործ.* - մոտերքը. ԱՈ ՃԱՆԱՊԱՐՀԱԲ (*ԼԲ.*), ԱՈ ՆՈՎԱԲ (*ԽԱ.*), ԱՈ ՊԱՏՈՒԱՐԱԲ (*ԺԷ., վարժ. 1ք*)
 ԱՈ ԱԹՈՒՐ ՀԱՐԿԱՆԵՄ ԿՈՒՆԵՄ (*ախ կարք. առ արուր հարի*) - ոտնակոխ անել. ոտքերի տակ կոխկրտել՝ տրորել
 ԱՈԱՋԻ¹ (*Վքք.*) - առաջ
 ԱՈԱՋԻ² (*առաջայրք. + սեռ.*) - առաջ, առջեւ. դիմաց
 ԱՈԱՋԻ ԱՆԿԱՆԻՄ - առաջ(ն) ընկնել
 ԱՈԱՋԻ ԳԱՄ (*ախ կարք. առաջի եկի*) - առաջը գալ. առաջը ելնել
 ԱՈԱՋԻՆ *ոյ, ոյ* (*եզ. քրք. առաջում, բայքսո. յառաջմե*) - 1. առաջին 2. նախկին
 ԱՈԱՍ *ի, աջ* - 1. առատ 2. առատածեղ 3. պարզ. բարի
 ԱՈԱԲԵԼԵԱԼ ԵՄ - (*մեծապես*) օժտված լինել
 ԱՈԱԲԵԼ ԶԱՆ ՉԱՈԱԲԵԼ - ավելի ու ավելի
 ԱՈԱԲԵՄ - ուղարկել
 ԱՈ ԵՐԵՍՍ - առերես, երեսանց

ԱՈԵՒԾ = ԱՈԻԻԾ *ոյ, ոյ*
 ԱՈԺԱՍԱՅՆ - խկլոյն. անմիջապես
 ԱՈ ԺԱՄՆ - առժամապես, ժամանակափոքապես
 ԱՈ Ի (*կիրք.*) + *ան. դերք. ի հայք.* - համար, նպատակով. ԱՈ Ի ԼՍԵԼ (*ԺԸ., վարժ. ք*), **առ յայրել** - այրելու համար՝ նպատակով
 ԱՈ ԻՄԷ՞ - Տ. ՉԻՆՉ
 ԱՈ ԻՆՉ - ինչո՞ւ, ինչի՞ համար
 ԱՈ Ի ՉԳՈՅԷ - չլինելու պատճառով
 ԱՈ ՅԱՊԱ (**առյապա**) - հետո
 ԱՈՆԵՄ (*ախ կարք. արարի*) - 1. անել 2. կատարել. գործել 3. շինել, սարքել 4. դարձնել
 ԱՋԻ ԱՈՆԵՄ - ազդարարել. հայտնել
 ԱՆՏԵՄ ԱՈՆԵՄ - անտեսել. զանց առնել. անգիտանալ
 ԱՇԽԱՍ ԱՈՆԵՄ - 1. չարչարել 2. նեղություն տալ՝ պատճառել. նեղացնել
 ԱՐԴԻՆԱՄ ԱՈՆԵՄ - արդյունավորել, բերք՝ բարիք տալ
 ԴԱՍ ԱՈՆԵՄ - 1. դատ անել, դատել 2. հօգուտ մեկի դատ անել
 ԴԱՐՉ ԱՈՆԵՄ - վերադառնալ
 ԵՐԹԵԿԵՎՍ ԱՈՆԵՄ ԱՈՆՈՒՄ - երթեկել. անցուդարձ անել
 ՉԱՆՑ ԱՈՆԵՄ - զանց առնել, անտեսել
 Ի ՄԷՉ ԱՈՆԵՄ - շրջապատել
 ԽՐԱԽՈՒԹԻՒՆ(Ս) ԱՈՆԵՄ խրախճանք սարքել
 ԾԱՂՐ ԱՈՆԵՄ - ծաղրել
 ՀԵՌԻ ԱՈՆԵՄ - 1. հեռացնել. հեռու պահել 2. զերծ՝ հեռու պահել
 ՉԵՌՆՀԱՍ ԱՈՆԵՄ - ձեռք հասցնել, օգնել
 ՉԵՐԲԱԿԱԼ ԱՈՆԵՄ - ձեռքակալել
 ՄՏՐԱԿ Ի ԿՈՒՇՏ ԱՈՆԵՄ [ձիոյ, երկվարի] - մտրակել
 ՅԱՅՏ ԱՈՆԵՄ - 1. հայտարարել. հայտնել 2. ցույց տալ
 ՅԱՆՉՆ ԱՈՆԵՄ - 1. հանձնել. ավանդել 2. հանձնարարել

ՉՈՒ ԱՌՆԵՄ (չուեմ) - 1. ճանապարհ ընկնել 2. չվել տեղափոխվել, գաղթել
 ՊԱՏԱՄԱՆԱՆԻ ԱՌՆԵՄ ՏԱՄ (սակ. կրթ. պատասխանի ... ետու) - պատասխանել
 ՍԿԻԶԲՆ՝ ԶՍԿԻԶԲՆ ԱՌՆԵՄ - սկսել ՎՆԱՍ(Մ) ԱՌՆԵՄ - վնասել, վնաս հասցնել՝ պատճառել
 ՓԱԽՍԱԿԱՆ՝ ՓԱԽՍԵԱՅ ԱՌՆԵՄ - փայտոստի մատնել
 ԱՌՆԵՄ ԹՇՆԱՄԱՆՍ (թշնամանս առնեմ) - թշնամություն անել
 ԱՌՆԵՄ ՈՂՈՐՄՈՒԹԻԻՆ - ողորմություն անել, ողորմել
 ԱՌՆԵՄ ՊՏՈՒԴ (պտուղ առնեմ) - պտուղ տալ, պտղաբերել
 ԱՌՆՈՒՄ - 1. առնել, վերցնել 2. ստանալ 3. գնել, առնել 4. ընդունել
 ԵՐԹԵԻԵԿԿՍ ԱՌՆՈՒՄ ԱՌՆԵՄ (սակ. կրթ. երթելեկս...արարի) - երթելեկել, անցողարձ անել
 Ի ՄԻՏ ԱՌՆՈՒՄ - 1. հասկանալ 2. կռահել, գլխի ընկնել, գուշակել 3. զիտակցության գալ
 Ի ԶՔՄԵՂՍ ԱՌՆՈՒՄ - անմեղ ձեռանակ կամ ձեռացնել
 ԱՌՆՈՒՄ ԶԱՌԱԶՍ - առաջն առնել, կանխել
 ԱՌՆՈՒՄ ԶՓՈՐԶ - փորձառություն ձեռք բերել
 ԱՌՆՈՒՄ ՅԱՆՉՆ (յանձն առնում) - 1. հանձն առնել, վրան առնել 2. համաձայնվել
 ԱՌ ՈՏՍ ԿՈՒԵՄ - ոտնակոխ անել, ոտքերի տակ կոխկրտել
 ԱՌ ՍԱԿԱԻ ՍԱԿԱԻ - քիչ-քիչ, աստիճանաբար
 ԱՍՈՐԵՍԱՆԵԱՅՔ խայր - ասորեստանցիք
 ԱՍՊԱՐԷՍ = ԱՍՊԱՐԷԶ ի, սոյ - տարածության հնագույն չափ (230.112 մ)
 ԱՍՏԻ - 1. սկր. այստեղից 2. բացառականով դրված բառից հետո՝ այս (Տ. Լ.Գ., ՅՈՐԴԱՆՅՆ ԱՍՏԻ ԻՍՄԷ)

ԱՏԱՄՆԱՅԻ - ատամներով (սկր.)
 ԱՏՈՔ - լեցուն [հասկի մասին, եւ փխր.], հասած, հուռի
 ԱՐԱՄԲԻ ոյ, հայ - ամուսնացած կին
 ԱՐԱՐ ոյ, սոյ - ինչք, ունեցվածք
 ԱՐԱՐԱԾ ոյ, սոյ 1. արարած 2. գործարարք
 ԱՐԲ - Տ. ԸՄՊԵՄ
 ԱՐԳԵԼՈՒՄ - 1. արգելել 2. արգելափակել, պահել, բանտարկել 3. զսպել, մեղմել, կանխել, ետ պահել
 ԱՐԴ - 1. հիմա, այժմ 2. ուրեմն 3. եր (ԽԶ., ԻԵ., ՔԱՆԶԻ)
 ԱՐԴԻԻՆՍ ԱՌՆԵՄ (սակ. կրթ. արդիւնս արարի) - արդյունավորել, բերք՝ բարիք տալ
 ԱՐԴԻԻՆ(Ք) խակոյ - 1. արդյունք 2. բերք 3. բարիք 4. գործ 5. միջոց
 ԱՐԺԱՆ Է - արժանի է (որ). վայել է (որ): Տր. ուլ ենթակայի եւ անորոշ դերբայի հետ է գործածվում. արժան է մեա մարտ դնել - արժանի է՝ վայել է, որ մա մարտնչի
 ԱՐԻ(Ք) խայ - արիներ, պարսիկներ
 ԱՐԾԱԹ ոյ, սոյ - 1. արծաթ 2. փող 3. հարստություն
 ԱՐՇՈՒԻ ոյ, հայ = արծիվ
 ԱՐԿԱՆԵՄ - 1. զգել, նետել 2. փռել, ցանել 3. վրան գցել: Չ + գործիականի հետ. ՉԳԼԽՈՎ...ԱՐԿԻ (ԻԶ.)
 ԱՐԿԱՆԵՄ ԱՌԱԿ (առակ արկանեմ) - առակ բերել՝ պատմել
 ԱՐԿԱՆԵՄ ԵՐԿԻԴՈՒԿՍ - վախ գցել՝ ներշնչել, վախեցնել
 ԱՐԿԱՆԵՄ (Զ)ՉԵՆՆ - ձեռք(ը) գցել
 ԱՐԿԱՆԵՄ Ի ԲԱՆՏ - բանտ գցել՝ մատնել
 ԱՐԿԱՆԵՄ ՉՈՒ - ծու ածել
 ԱՐՏԱՔՈՅ իլր. (+ քան գ...) - 1. դուրս 2. հեռու 3. նախադր. գատ, բացի 4. նախադր. (+ սեռ.) - դուրս. ԱՐՏԱՔՈՅ ԴՐԱՆՆ (ԺԹ., վարձ. 1ա)
 ԱՐՏԱՔՍ (+ քան գ...) - դուրս
 ԱՐՏՈՐԱՅ ի, սոյ - 1. արտ(եր) 2. վար ու ցանք

ԱՐՔՈՒՆՈՒՍ - Տ. ՅԱՐՔՈՒՆՈՒՍ
 ԱՌԱՂԵՄ - 1. ափսոսալ 2. խղճալ մեղքանալ, մեղք գալ
 ԱՌԱՂԵՄ (Զ)ՉՈԳԻՆ՝ ՉՈԳԻՆ - հոգին ազանդել, մեռնել
 ԱՌԱՍԻԿ = ահավասիկ
 ԱՌԵԼ ԱԾԵՄ - ավել, ավել անել

Բ

ԲԱԲԱԽԵՄ - 1. բախել, բակել 2. ծնծել, իրար խփել 3. բարբախել
 ԲԱԲԷ՝ (չարխոփ) - ավա՛ղ. վա՛յ
 ԲԱԶՄԱԿԱՆ ի, սոյ } 1. սեղանակից
 ԲԱԶՄԵԱԼ ոյ, սոյ } 2. հրավիրյալ
 ԲԱԶՈՒՄ ի, սոյ - շատ (գոյականների հետ է գործածվում)
 ԲԱԺԻՆ ի, իյ - 1. բաժին. մաս 2. բաժանում, բաժանություն
 ԲԱՆ ի, իյ - 1. խոսք 2. միտք. գաղափար 3. գործ 4. բան
 ԱՆՑԱՆԵՄ ԸՍՏ ԲԱՆՍ - խոսքից անցնել, խոսք(եր)ը չկատարել
 ԲԱՆԱՄ ԶԱՉՍ - աչքերը բաց անել, զիտակցության գալ կամ բերել
 ԲԱՆԻԻ ԵՒ ԳՈՐՇՈՎ - խոսքով ու գործով
 ԲԱՌՆԱՄ (սակ. կրթ. բարձի, հյուս. բարձ) - 1. վերցնել 2. բարձել 3. շարակել 4. հավաքել 5. վերացնել
 ԶԱՅՆ ԲԱՌՆԱՄ ԱԾԵՄ - ձայն հանել, կանչել
 ԲԱՌՆԱՄ ԶԿԵՆԴԱՆՈՒԹԻՆ - սպանել
 ԲԱՐԲԱՌ ոյ, սոյ - 1. խոսք 2. լեզու 3. ձայն
 ԲԱՐԻ ոյ, հայ - 1. բարի 2. բարի բան 3. ստալ, հոգի. բարիք(ներ)
 ԲԱՐԶ ի, իյ - 1. բազմելու՝ մատելու տեղ 2. դիրք. պատիվ 3. բարձ
 ԲԱՐԶԱԿԻՑ ի, սոյ - 1. արոճակից 2. սեղանակից
 ԲԱՐԶՆՏԻՐ ԼԻՆԻՄ (սակ. կրթ. բարձընտիր եղէ) - բազմելու՝ մատելու տեղ ընտրել
 ԲԱՐՈՒԹԻՆ - 1. բարություն 2. բարիք(ներ)

ԲԱՐԻՈՔ (բարիոք) - 1. բարի. բարություն 2. բարեբեր. պարարտ 3. լավ 4. հարմար 5. արժանի. վայել
 ԲԱՑ¹ (սծ.) ի, սոյ - 1. հեռու 2. բաց
 ԲԱՑ² (նախադր. + բացառ.) - բացի. բաց ի մէջ երկոցունց - բացի մեր երկուսից
 ԲԱՒԱԿԱՆ ի, սոյ - 1. բավական, բավաբար 2. արժանի
 ԲԵԿԱՆԻՄ - 1. կոտրվել. բեկվել 2. հուսահատվել
 ԲԵՐԱՆԱՅԻ - բերանով (սկր.)
 ԲԻԻՐ ու, սոյ - 1. 10.000 2. անրիվ, անհամար
 ԲԻԻՐՔ (Ի) ԲԻԻՐՈՒՑ - բյուրբյուր(եր), բյուրավոր(ներ)
 ԲԳԽԵՄ - 1. բխեցնել 2. նույնն է՝ ԲԳԽԻՄ
 ԲԳԽԻՄ - բխել
 ԲՆԱԿ - բուն
 ԲՆԱԿՈՒԹԻՆ - 1. գ. բնակություն 2. սծ. բնիկ
 ԲՆԱԻ - համայն, բոլոր. եղած-չեղածը
 ԲՆԱԻՔՆ - բոլորովին
 ԲՆԱԻՆՆ - բոլորովին
 ԲՆԱԻՐԻՄ -1. սովորել, վարժվել 2. բուսնել
 ԲՆՈՒԹԻՆ - 1. Լուրյուն 2. բնավորություն
 ԲՆՈՒԹԵԱՄԲ - 1. Լուրյանք 2. բնավորությանք 3. ի բնն, բնությունից
 ԲՈԼՈՐԵՔԵԱՆ } (հոլովումը՝ ԱՄԵՆԵՔԵԱՆ-ի նման)
 ԲՈԼՈՐԵՔԻՆ } - բոլորն էլ, բոլորը (հոլովումը՝ ԱՄԵՆԵՔԻՆ-ի նման)
 ԲՈՒՆ ի, իյ - 1. բուն 2. բնիկ
 ԲՈՒՆՆ ՎԱՐԿԱՆԵՄ (սակ. կրթ. բուռն հարի) - ձեռք(ը) գցել: Չ + բացառականի հետ է գործածվում. բուռն հարկաներ զհերաց - ձեռքը մազեփին էր գցում. մազերից էր բռնում
 ԲՐԵՄ - փորել

ԵՐԱԳ ի (*հոգև. ուրբ. երագունք, սեռ. երագանց*) = ԱՐԱԳ
 ԵՐԱԳՈՒԹԻՒՆ = ԱՐԱԳՈՒԹԻՒՆ
 ԵՐԱԶԱԳԷՏ ի, *ոյ* - 1. երագահան, երագաներ բացատրող՝ մեկնող՝ գուշակող
 2. երագներով՝ փուչ բաներով ապրող՝ զբաղվող
 ԵՐԲԵՄՆ - 1. երբեմն 2. մի անգամ 3. մի ժամանակ
 ԷՐ ԵՐԲԵՄՆ - 1. մի ժամանակ 2. կար ժամանակ, որ՝ երբ
 ԵՐԲԷՔ (*երբեք*) - 1. երբեմն 2. մի ժամանակ 3. երբեւէ, որեւէ ժամանակ
 ԵՐԵՍՔ *ոյ* = երես
 ԱՌ ԵՐԵՍՍ - առերես, երեսանց
 ԳՐԱԶՈՒՑԱՆԵՄ ԶԵՐԵՍՍ - երես դարձնել
 ՀԱՏԱՆԻ ԳՈՅՆ ԵՐԵՍԱՑ - երեսի գույնը թոչնէ՛ զնալ [վախից]
 ՅԵՐԵՍԱՑ - 1. կողմից 2. երեսից, պատճառով 3. ընդդեմ, դեմ
 ԵՐԵՔ - *Սեռ.-ուրբ. երից*
 ԵՐԵՔԵԱՆ (*հոլովումը՝ ԱՄԵՆԵՔԵԱՆ-ի նման*) } երեքն էլ երեք(ը)
 ԵՐԵՔԻՆ (*հոլովումը՝ ԱՄԵՆԵՔԻՆ-ի նման*)
 ԵՐԵՔԹԵԻՄԱՆ - նետ, սլաք
 ԵՐԵՔՏԱՍԱՆ ի, *ից* - տասներեք
 ԵՐԷՑ *ու, սեկ* (*հոգև. ուրբ. երիցունք*) - 1. սծ. ավագ, մեծ 2. գ. քահանա
 ԵՐԹԱՄ - *Սեկ, կապ. չոզայ, չոզար, չոզա...* *ուրբ. երբայց, երբիցես, երբիցէ...* *կրտ.* *երբ, երբայք, սեկ, զկրք. երբեալ*
 ԵՐԹԵԻԿԿԱ ԱՌՆԵՄ ԱՌՆՈՒՄ (*սեկ, կապ. երբեւեկս արարի...*) - երբեւեկէ. անցողարձ անել
 ԵՐԿԱՔԱՆՉԻՒՐ(Ք) *ոյ* - երկուսն էլ երկուսը
 ԵՐԿԻՐ ի, *ոյ* - 1. երկիր 2. աշխարհ 3. գետին 4. հող
 ՅԵՐԿԻՐ ԿՈՐԾԱՆԵՄ - գետին խփել, տապալել, զգետնել
 ԵՐԿԻՐ ՊԱԳԱՆԵՄ - երկրպագել
 ԵՐԿՆ ին, *սեկ* - երկունք

ԵՐԱՆԵՄ - երկնել: երկունքի ցավերով բռնվել
 ԵՐԿՆՏԱՍԱՆ ի, *ից* - տասներկու
 ԵՐԿՈՒ - *Սեռ.-ուրբ. երկուց, գրք. երկուք = երկուքումբբ*
 ԵՐԿՈՔԵԱՆ (*հոլովումը՝ ԱՄԵՆԵՔԵԱՆ-ի նման*) } -երկուսն էլ երկու(սը)
 ԵՐԿՈՔԻՆ (*հոլովումը՝ ԱՄԵՆԵՔԻՆ-ի նման*)
 ԵՒ - 1. եւ, ու 2. նաեւ. ինչպես նաեւ 3. էլ 4. իսկ 5. բայց, սակայն
 ԵՒՄ - 1. *չփոյ* եւս, էլ 2. *միք*. այլեւս 3. *կոյ* - էլ [ավելի]
 ԵՕԹՆ = ԵԻԹՆ - *բիւ = բուս, բուսկ* (*հոգև. ուրբ. կարանք*)

Զ

Զ (*կիսուր.*) + *հայց.* - 1. որոշյալ առում. Զկարմրիկն ԵՂԵԳՆԻԿ (Բ.) 2. = գործիական. ԶԱՎԷ աղուեսու (Ծ.) + *բացառ.* - 1. մասին. ԶԶՕՐԷ, ԶՄՕՐԷ, ԶՏԵՂՈՅՆ (ԼԶ., վարժ. 1ք) 2. առնում, ունիմ (բռնել), բուռն հարկանեմ (ծեռքը զցել), կախեմ բայերի հեւ. առեալ ԶՉԵՆԱՆԷ (ԽԳ.), բուռն հարկանէ զերասանէ - ծեռքը սամծին՝ է զցում, կախէ զծառայ - ծառից է կախում + *գործ.* - 1. շուրջ(ը). (շուրջ) ԶՆՈՎԱԲ (Զ.) 2. ժամանակ. մոտերքը [ժամանակի իմաստով]. զհասարակ գիշերաւ - կես գիշերվա մոտերքը 3. վրա՝ արկանեմ եւ անկանիմ բայերի հեւ. ԶԳԼԻՈՎ ԱՐԿԻ (ԻԶ.), ԱՆԿԱԲ ԶՊԱՐԱՆՅԱՆ (Խ.)
 ԶԱՀԻ ՀԱՐԿԱՆԻՄ (*սեկ, կապ. զահի հարայ*) - վախենալ, զարհուրել
 ԶԱՅՍ ՕՐԻՆԱԿ - 1. այսպիսի 2. այսպես, այս ձևով՝ եղանակով
 ԶԱՆԳԻՏԵՄ - վախենալ, սարսափել
 ԶԱՆՉՆ ԴՆԵՄ Ի ՎԵՐԱՅ... (*սեկ, կապ. զանձն եղի...*) - անձը մկիրել՝ զոնել (մեկի՝ մի բանի համար)
 ԶԱՆՑ ԱՌՆԵՄ (*սեկ, կապ. զանց արարի*) - զանց առնել, անտեսել

ԶԱՉՍ ԿԱՓՈՒՅԱՆԵՄ - աչք(ը) փակել
 ԶԱՌԱԶԵԱՄ¹ (*միք.*) - առաջը. դիմացը
 ԶԱՌԱԶԵԱՄ² = ԶԱՌԱԶԵԻ (*կախապր. + սեռ. կամ գործ.*) - առաջ, առջեւ. դիմաց. ԶԱՌԱԶԵԱԲ ԻԻՐ (Ծ.), ԶԱՌԱԶԵԻ ԻԻՐՈՎ (ԽԳ.)
 ԶԱՐՄ ի, *ից* - 1. զարմ 2. ցեղ 3. սերունդ . ժառանգ
 ԶԳԵՆՈՒՄ - հազմել
 ԶԳԵՑՈՒՑԱՆԵՄ - հազցնել
 ԶԴԷՄ ՈՒՆԻՄ (*սեկ, կապ. զդեմ կալայ*) - դիմակայել. դեմն առնել
 ԶԵՆՈՒՄ - մորթել
 ԶԵՐԵԿՈՐԻՆ - երեկոյան
 ԶԵՐԾԱՆԻՄ } - տգառվել, փրկվել
 ԶԵՐԾՆՈՒՄ }
 ԶԵՐԾՈՒՅԱՆԵՄ - ազատել, փրկել
 ԶԹԿՈՒՆՍ ԳՐԱԶՈՒՑԱՆԵՄ - քիկունք դարձնել, [վախենալով] նահանջել
 ԶԻ (*չփոյ*) - 1. որովհետեւ 2. որպեսզի, որ 3. որ. քե 4. *կոյ* (Տ. ԻԵ., ԲԱՆԶԻ)
 ԶԻ՞ (*հարց. զկր.*) - 1. ինչի՞ համար, ինչո՞ւ. ի՞նչ պատճառով 2. ինչպե՞ս
 ԶԻՄՐՐ - 1. ինչո՞ւ, ինչի՞ համար 2. ինչպե՞ս
 ԶԻ՞ ԳՈՐԾԵՄ - հը՛, ինչպե՛ս ես (*միք.*)
 ԶԻ՛ՆԶ (*միայն եզ.*) - ի՞նչ: *Սեռ. է՞ք, րք. ի՞նչ = հի՞նչ = էրո՞ւն, հայց. զի՞նչ, բացառ. յիմ՞ = առ իմ՞ = զմե՞, գործ. ի՞նչ*
 ԶԿԾԵՑՈՒՑԱՆԵՄ - ցավեցնել. վշտացնել
 ԶԿԾԵՑՈՒՑԱՆԵՄ ԶՄԻՐՏ - սիրտը ցավեցնել. վիշտ պատճառել
 ԶԿՆԻ¹ (*միք.*) - հետո
 ԶԿՆԻ² (*կախապր. + սեռ.*) - 1. ետևից. երթայր ԶԿՆԻ ԶՕՐԱՅՆ (ԺԹ., վարժ. 1) 2. հետո. ԶԿՆԻ ՄԱՀՈՒՄՆՆ (ԺԹ.)
 ԶՀԱՍԱՐԱԿ ԳԻՇԵՐԱԲ - կես գիշերվա մոտերքը
 ԶՀԵՑ (*կախապր. + սեռ.*) - 1. ետևից. ԶՀԵՑ ԱՌՆ...ԸՊԱՀՈՅ ԱՐՔԱՅԻ (ԽԹ.) 2. հետո. զհետ աւտրցն այնոցիկ - այն

օրերից հետո 3. հետ. զհետ զօրացն - զորք(եր)ի հետ
 ԶՀԵՑ ՄՏԱՆԵՄ ՊՆՂԵՄ ; հետամուտ լինել. հետապնդել
 ԶՃԱՆԱՊԱՐՀԱՅՆ - ճանապարհին. ճանապարհի վրա
 ԶՄԷ՞ - ինչո՞ւ. ինչի՞ց
 ԶՄՏԱԲ ԸԾԵՄ (ածեմ զմտաւ) - մտածել
 ԶՈՐ ՕՐԻՆԱԿ - 1. օրինակի համար 2. ինչպես որ
 ԶՈՒԱՐԱԿ ի, *ոյ* - մատողջ ցուլ
 ԶՈՒԳՈՒԹԻՒՆ - համերաշխություն, միաբանություն
 ԶՍԿԻԶԲՆ՝ ՍԿԻԶԲՆ ԱՌՆԵՄ (*սեկ, կապ. (զ)սկիզբն արարի*) - սկսել
 ԶՏԻԻ ԵՒ ԶԳԻՇԵՐ - գիշեր-ցերեկ, օրինքուն
 ԶՐԱԻՄ - 1. վերջանալ. սպառվել 2. մեռնել 3. զրկվել

Է

Է՞Ր - Տ. ԶԻՆԶ
 Է՞Ր ԱՐԱԳԱԲ - ինչո՞ւ, ինչի՞ համար
 ԷՐ ԵՐԲԵՄՆ - 1. մի ժամանակ 2. կար ժամանակ, որ՝ երբ
 ԷՐ ԶՈՐ... ԷՐ ԶՈՐ... - որին..., որին...:
 Զա՛մ. ԶՈՄՆ... ԶՈՄՆ...
 ԷՐՈՒՄ - Տ. ԶԻՆԶ
 Է՞Ր ՍԱԿՄ - ինչո՞ւ, ինչի՞ համար

Ը

ԸՄԲՈՆԵՄ - 1. բռնել 2. ըմբռնել, հասկանալ
 ԸՄՊԵՄ - *Սեկ, կապ. արբի, արբեր, արբ = էարբ... ուրբ. արբից, արբցես, արբցէ...* *կրտ. արբ, արբէք, սեկ, զկրք. արբեալ* - 1. խմելով 2. գ., սծ. հարբած
 ԸՄՊԵՄ ԳԱՆ - ծեծ ոտել. զավագանով ծեծվել
 ԸՆԴ (*կիսուր.*) + *սեռ.* - փոխարեմ, դիմաց, տեղը. ԸՆԴ ՄԻՐԵԼԻՈՅ (ԻԷ.) + *եզ. րք. (եւ հոգև. հայց.)* - 1. հետ. ԸՆԴ ԻՆՔԵԱՆ (ԺԶ.) 2. դեմ, հետ. ԸՆԴ ԱՅՆՈՒԿ (ԻԵ.)

+ *յրր* - պատճառով. շնորհիվ. ԸՆԴ ԱՍՐՈՒԹԵԱՆՆ (ԼԹ.)
 + *հայց*. - 1. միջով, միջից. -ով. ԸՆԴ ... ՓՈՂ (Բ.) 2. վրայով [*մակերեսով*]. ԸՆԴ...ՓՈՇԻ գնայ (ԼԶ.) 3. դեպի [*շարժման ուղղությամբ*]. ԸՆԴ ԳԵՏԻՆ, ԸՆԴ ՈՒՆՁ (Ծ.) 4. (*անորոշ դերք.*-ի *հեպ*) ժամանակ. **ընդ վախճանել շնչոցն** - շունչը փչելու ժամանակ, շունչը փչելիս 5. *երթման* = բացառական. անցաներ ԸՆԴ ԴՈՒՈՆ (ԺԱ.) 6. **հայիմ** = **նայիմ**, **ապշիմ**, **զարմանամ**, **զայրանամ եւ մի շարք այլ բայերի հեպ**. հայեցաւ ընդ իս - ինձ նայեց. ՉԱՐՄԱՅԵԱԼ ԸՆԴ ԲԱՐԵՐԱՐՈՒԹԻՒՆ... (ԽԹ.) 7. *կրկնվելիս*՝ միջեւ. **ընդ սուրն եւ ընդ ձեռնատեղին** - սրի ու բռնատեղի միջեւ 8. *կրկնվելիս*՝ միասին, բոլորը միասին. ԸՆԴ ԱՌԱՋԻՆՆ ԵՒ ԸՆԴ ՎԵՐՋԻՆՆ (ԽԵ.)
 + *բացառ.* - տեղ. ԸՆԴ ԱՋՄԵՔՈՒՄՄԵ (ԽԹ., վարժ. 1գ)
 + *գործ.* - տակ. ԸՆԴ ԱՅԼՈՎ ... ԹԱԳԱՌՈՐՈՒԹԵԱՄԲ (ԺԵ.)
 ԸՆԴ ԱԿԱՄԲ ՀԱՅԻՄ - ծուռ՝ խեթ աչքով նայել
 ԸՆԴ ԱՀԻԻ ԱՆԿԱՆԻՄ - սարսափել, զարհուրել
 ԸՆԴ ԱՅԳՆ ԸՆԴ ԱՌԱԲՕՏՆ - առավոտ շուտ, վաղ առավոտյան
 ԸՆԴ ԱՌԱՋ¹ (*մկր.*) - 1. ընդառաջ 2. առաջը
 ԸՆԴ ԱՌԱՋ² (*հոսիայր.* + սեռ.) - ընդառաջ. առաջը. ԸՆԴ ԱՌԱՋ նորա (Լ.)
 ԸՆԴ ԴԵՄ = ԸՆԴԴԵՄ (*մկր.*) - ընդդեմ. դիմացը
 ԸՆԴ ԴԵՄ = ԸՆԴԴԵՄ² (*հոսիայր.* + սեռ.) - ընդդեմ. հակառակ. դիմացը. **ընդդեմ գորպցն** - գորք(եր)ի դեմ, ընդդեմ գորք(եր)ի: *Հսկր.* ԸՆԴԴԵՄ ՋՐՈՅԴ (ԺԹ.)
 ԸՆԴԴԵՄ ԿԱՄ - 1. ընդդիմանալ. հակառակվել 2. դիմադրել. դիմակալել.

դիմակալել 3. դեմ լինել. ԸՆԴԴԵՄ ԿԱՅ ԱՌԱԿՄ (ԼԸ.)
 ԸՆԴԵԼՈՒՉԱՆԵՄ - իրար հազցնել՝ հյուսել
 ԸՆԴ ԷՐ = ԸՆԴԷՐ - ինչո՞ւ, ինչի՞ համար
 ԸՆԴ ՄԵՋ¹ (*մկր.*) - 1. միջից. միջով 2. մեջտեղից
 ԸՆԴ ՄԵՋ² (*հոսիայր.* + սեռ.) - 1. միջից. միջով. ԸՆԴ ՄԵՋ ԹԻԿԱՆՅՆ (ԽԸ.) 2. մեջտեղից. **ընդ մէջ գետոյն** - գետի մեջտեղից
 ԸՆԴ ՈՐ - որի վրա. դրա վրա
 ԸՆԴ ՈՒՆԻՄ (*սեպ. կար.* **ընկալայ**) - 1. ընդունել 2. ստանալ
 ԸՆԴ ՓՈՔՈՒ ՍԱՀՄԱՆԻՄ - փոքր ծավալի մեջ սահմանվել. փոքրաթիվ լինել
 ԸՆԿԱԼ - ճ. ԸՆԴՈՒՆԻՄ
 ԸՆԿԵՆՈՒՄ (*սեպ. կար.* **ընկեցի, ընկեցեք, ընկեց...**) - զցել, նետել
 ԸՆԿԼՆՈՒՄ - 1. կով տալ 2. սուզել, ընկղմել
 ԸՆԿԼՈՒՉԱՆԵՄ - 1. ընկղմել 2. խեղդել
 ԸՍՏ (*կիպր.*) + *յրր* - ըստ, համաձայն. համապատասխան. համեմատ. ԸՍՏ ՍՈՎՈՐՈՒԹԵԱՆ (ԻԶ.)
 + *հայց.* - **անցանեմ, ելանեմ բայերի հեպ** = բացառական. ԱՆՅԱՆԷՐ ԸՍՏ ԹՈՉՈՒՆՄ (ԽԶ., վարժ. 1բ), **անցո՞ ըստ Պահ դուսն ի ներքս** - Պահ դռնից՝ ճորա պահակից ներս անցկացրու
 ԸՍՏ ԱՅՄՍ - սրան համապատասխան. սրա վրա
 ԸՍՏ ԿԱՐԻ - կարողության համեմատ, ուժերի ներած չափով
 ԸՍՏ ԿՇՈՒԵԼՈՅ ԱԿԱՆ - աչքի չափով
 ԸՍՏ ՕՐԻՆԱԿԻ - օրինակով. նման

Թ

ԹԱՆԱՄ - բրջել
 ԹԱՒԱԼԻՄ - գլորվել
 ԹԱՒԱԼԵՑՈՒՅԱՆԵՄ - գլորել

ԹԱՓ ԱՆՅԱՆԵՄ - 1. շեշտակի անցնել 2. քափանցել
 ԹԱՓԱՆՅԻՎ ԼԻՆԻՄ (*սեպ. կար.* **քափանցիկ եղէ**) - քափանցել
 ԹԱԶՉԻՄ (*սեպ. կար.* **քաքեայ, քաքեար, քաքեա...** սպ. **քաքեայց, քաքիցես, քաքիցե...** հրավ. **քաքի՛ր, քաքեայ՛ք = քաքերո՛ւք, սեպ. դիրք. քաքուցեալ**) - քաքնվել
 ԹԱԶՈՒՅԱՆԵՄ - քաքցնել
 ԹԷՎՆ (**թեկն**) *կռե, կսեպ (հոգև. ոտք. քիկունք)* - քիկունք
 ԶԹԻԿՈՒՆՄ ԴԱՐՉՈՒՅԱՆԵՄ - քիկունք - դարձնել, [*վախենալով*] նահանջել
 ԹՄԿԻ ՀԱՐԿԱՆԵՄ (*սեպ. կար.* **քմբկի հարի**) - քմբուկ զարնել, քմբկահարել
 ԹՇՆԱՄԱՆԵՄ - նախատել, բշնամաքար անարգել
 ԹՈՂՈՒՄ - 1. թողնել 2. թողություն տալ՝ շնորհել 3. շնորհել, զիջել
 ԹՐՈՂՈՍԱՅ ՏՈՒՆ - հայ ազգ, ցեղ հայկական
 ՈՐԴԻ ԹՈՐԳՈՍԱՅ ՏԱՆ - հայրողի, հայ
 ԹՕԹԱՓԵՄ - 1. քափքիել 2. քափ տալ, բոքվել
 ԹՕԹԱՓԵՄ ԶՓՈՇԻ (Յ)ՈՏԻՑ - ոտքերի փոշին քափ տալ [մի տեղ] (*փկր.*)

Ժ

ԺԱՀՀՆՏ - զարշահոտ, ժանախոտ
 ԺԱՄԱՆԵՄ - 1. հասնել, գալ 2. վրա հասնել
 ԺԱՄ ՏԱՄ (*սեպ. կար.* **ժամ ետու**) - ժամ՝ ժամադրություն նշանակել
 ԺԱՆՈՒԱՐ = ԺԱՆԱՒԱՐ *ի, սպ* - (ձիու, փղի կամ կառքի վրա հարմարեցված) գահավորակ, բազմոց

Ի

Ի = Յ (*կիպր.*) + *եզ. յրր (եւ հոգև. հայց.)* - 1. մեջ, -ում. Ի ՇՈՎՈՒՒ, Ի ծովս (Բ.) 2. վրա. Ի ԹՉԵՆԻՈՋԻ (Ժ.), ՅԱՊԱՌԱՄԻ (ԼԲ.) 3. ժամանակ. Ի ԿԵՆ-

ԴԱՆՈՄԹԵԱՆՆ (ժԹ.), Ի ... ԳԱԼՍԵԱՆ ԻՍՈՒՄ (ԽԱ.)
 + *հայց.* - 1. դեպի [*շարժման ուղղությամբ*]. Ի ԲԱՆԱԿՆ (Գ.), Ի ՏՈՒՆ (Թ.) 2. = տրական. Ի ՄԵԱԼՆ (Գ.) 3. որպես. Ի ՄԻՏԻԹԱՐՈՒԹԻՒՆ (ԼԶ.), Ի ՎԷԺՄ (ԽԹ.) 4. = գործիական. Ի ՉԵՆՆ (ԻԵ.) 5. *անորոշ դերբայի հեպ*՝ ժամանակ. Ի ՊԱՐՉԵԼ ՈԳԻՈՅՆ (Զ.) 6. *անորոշ դերբայի հեպ*՝ «-ելու || -ալու (համար)». ՅՕԳՆԵԼ ինձ փութա (Ը.) 7. մասին. նկատմամբ, հանդեպ, վերաբերյալ. դեմ. **ճառ յայլակերպութիւն Տեառն** - Տիրոջ պայծառակերպության մասին ճառ՝ քարոզ, ՄԵՂԱՅ ՅԵՐԿԻՆՄ (ԻԲ.), Ի չափաոր ՄԱՐԴԻԿ ... (ԽԵ.)
 Ի ԲԱՅ - 1. դուրս 2. հեռու
 Ի ԲԱՅԵԱՅ - 1. հեռու. հեռվից 2. դուրս
